
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԻԵՌ ԲՈՒՐԴԻԵ

ԺԱՆ ԲՈԴՐԻԱՐ





ՀՈՂՎԱԾՆԵՐ, ՀԱՐՑԱՔՐՈՒՅՑՆԵՐ, ԷՍՍԵՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԻԵՌ ԲՈՒՐԴԻԵ, ԺԱՆ ԲՈԴՐԻԱՐ

ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ, ԷՍՍԵՆԵՐ

Ֆրանսերենից թարգմանել է Հռիփսիմե Դայանը

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5
Բ 990

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի
գիտական խորհուրդը

Խմբագիր՝ փ. գ. դ., պրոֆեսոր Լյուդմիլա Հ. Հարությունյան

Ֆրանսերենից թարգմանել է Հռիփսիմե Դայանը

Բ 990 **Պիեռ Բուրդիե, Ժան Բոդրիար.** հոդվածներ, հարցազրույցներ, էսսեներ: Ե., ԵՊՀ հրատ., 2018, 322 էջ:

Սույն աշխատանքը պատրաստվել է ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի շրջանավարտներից մեկի՝ Հռիփսիմե Դայանի նախաձեռնությամբ, ով, հետաքրքրված լինելով ֆրանսիական սոցիոլոգիական մտքի պատմությամբ և ազատ տիրապետելով ֆրանսերենին, ընտրեց և հայերեն թարգմանեց ֆրանսիական սոցիոլոգիական մտքի երկու դասականների՝ Պիեռ Բուրդիեի և Ժան Բոդրիարի մի շարք հոդվածներ, հարցազրույցներ և էսսեներ: Լինելով քիչ հայտնի և հայերենով մինչ այդ չտպագրված՝ այս նյութերն էապես լրացնում են սոցիոլոգիական տեսությունն ու ներկայացնում սոցիոլոգիայի դասականների մոտեցումները ժամանակակից հասարակությունների արդի հիմնախնդիրներին: Որպես ուսումնական նյութերի ժողովածու՝ գիրքը հետաքրքիր և օգտակար կլինի սոցիոլոգիայի և գիտության հարակից ճյուղերի ներկայացուցիչների համար:

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5

ISBN 978-5-8084-2303-9

© ԵՊՀ հրատ., 2018
© Դայան Հ., 2018

Բովանդակություն

Ներածություն 5

Պիեռ Բուրդիե

Հանրային կարծիք գոյություն չունի 11
Այն, ինչ ասել կուզի 30
«Երիտասարդությունը» լոկ մի բառ է 52
Ինչի՞ն է ծառայում սոցիոլոգը 69
Հարցազրույց «Պետական արքունիքը» գրքի վերաբերյալ 102
«Անհրաժեշտ է, որպեսզի մտավորականը խոսքի
հնարավորություն տա նրանց, ովքեր դա չունեն» 114
Մեր թշվառության պետությունը 125
«Ընդդեմ նեոլիբերալ չարիքի» 139
Հարցեր Պիեռ Բուրդիեին 143
«Տեսնել այնպես, ինչպես դեռ երբեք չեն տեսել» 151
Հոսանքին հակառակ հարցազրույց Պիեռ Բուրդիեի հետ 163

Ժան Բոդրիար

Հելոտները և էլիտան 200
Disneyworld company 207
Համաշխարհայինն ու համընդհանուրը 213
Արվեստի դավադրությունը 219
Ժան Բոդրիարն ու «Իշխանության հարցը» 1977-ին 227
Ահաբեկչության ոգին 263
Կույրերի թագավորությունում 284
Հանդիսանքի ինքնասպանությունը 289
Պատերազմի պոռնոգրաֆիան 293
Անիծվես դու 298
Աստվածային Եվրոպան 304
Խաղեր 309

Ներածություն

Ժամանակակից սոցիոլոգիայի զարգացումները, ուղղություններն ու միտումները հասկանալու և ընկալելու համար անհրաժեշտ է ծանոթանալ և ուսումնասիրել ֆրանսիական սոցիոլոգիայի այնպիսի մեծությունների աշխատանքները, ինչպիսիք են Պիեռ Բուրդիեն և Ժան Բոդրիարը:

Ժողովածուի նպատակն է առաջին անգամ հայերեն լեզվով ներկայացնել 20-րդ դարի երկրորդ կեսի երկու խոշորագույն ֆրանսիացի սոցիոլոգների՝ Պիեռ Բուրդիեի ու Ժան Բոդրիարի հարցազրույցները, էսսեներն ու հոդվածները: Ինչպես Բուրդիեն, այնպես էլ Բոդրիարը թողել են հարուստ մտավոր ժառանգություն, ծավալել ակտիվ մտավոր ու հասարակական գործունեություն: Նրանց աշխատանքները ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ դրա սահմաններից դուրս ընկալվել են ոչ միանշանակ, ակտիվորեն քննադատվել ու արժանացել ամենատարբեր արձագանքների: Պիեռ Բուրդիեն (1930-2002) անցյալ դարի ամենաշատ մեկնաբանված, քննադատված և հղված մտավորականներից մեկն է: Նրա առաջ քաշած տեսությունները ու հասկացությունները, հարուստ ժառանգությունը դեռևս շարունակում են լինել քննարկումների առարկա և հիմք՝ հետագա ուսումնասիրությունների համար: Շուրջ 25 գրքերի, մի շարք հոդվածների հեղինակ-մտավորականը համագործակցում էր իր ժամանակաշրջանի մշակույթի ու գիտության ամենաճանաչելի ներկայացուցիչների հետ:

Ժողովածուում ներառված Պիեռ Բուրդիեի աշխատանքները ներկայացնում են հեղինակի՝ արվեստի, կրթության, երիտասարդության և քաղաքականության վերաբերյալ ամենահայտնի ու նշանակալի հարցազրույցներն ու հոդվածները, որոնք ժամանակին մեծ արձագանք են գտել ու քննադատության արժանացել:

Իր սոցիոլոգի կարիերան սկսել է Ալժիրում զինվորական ծառայության ժամանակ: Սոցիալական հարցերին նա առաջին անգամ առնչվեց ազգաբանության տեսանկյունից, երբ սկսեց ուսումնասիրել կաբիլների բնակչությունը: Ալժիրյան շրջանին (1958-1960) են պատկանում Աբդելմալեկ Սայադի հետ համատեղ ստեղծված գործերը[1]: Վերադառնալով Ալժիրից՝ Բուրդիեն սկսեց դասավանդել Լիլում ու Փարիզում: Կոլեժ դը Ֆրանսի պրոֆեսոր (1981 թ.) Պիեռ Բուրդիեն 1960-ից մինչ իր մահը իրականացրեց ժամանակակից հասարակության ամենատարբեր ոլորտներին վերաբերող մի շարք լայնածավալ հետազոտություններ:

1966-1988 թթ. Պիեռ Բուրդիեն հարյուրի հասնող հաստատությունների աշակերտների հետ իրականացրեց անհատական և ֆոկուս խմբային հարցազրույցներ, փաստաթղթային ուսումնասիրություններ: Մինչ այդ Ֆրանսիայի բուհերի, կրթական համակարգի ու էլիտայի վերարտադրման վերաբերյալ նման ծավալի (վիճակագրական ուսումնասիրություններ, աշակերտների կողմից շարադրված տեքստեր, նախկին ուսանողների, աշակերտների ու դասախոսների հետ անցկացրած հարցազրույցներ) հետազոտություն դեռևս չէր արվել: Այս ծավալուն ուսումնասիրության արդյունքում 1989 թ. Պիեռ Բուրդիեն հրապարակեց «Պետական արքունիքը» գիրքը, որն իրենից ներկայացնում է գիտելիքի ու իշխանական համակարգի վերլուծություն: Ժուռնալիստ Դիդիե Էրիբոնը վերոհիշյալ գրքի մասին հարցազրույց[2] է ունենում հեղինակի հետ, որը ներկայացված է սույն ժողովածուում: Պ. Բուրդիեն քողազերծում է ժամանակակից հասարա-

[1] «Ալժիրի սոցիոլոգիան» (Sociologie de l'Algérie (1958)), «Աշխատանքն ու աշխատողները Ալժիրում» (Travail et travailleurs en Algérie (1963)), «Քնաջնջում. գյուղատնտեսության ավանդական տեսակների ճգնաժամը Ալժիրում» (Déracinement, la crise de l'agriculture traditionnelle en Algérie (1964)) (թարգմ.):

[2] Դիդիե Էրիբոնի հարցազրույցը Պիեռ Բուրդիեի հետ հրապարակվել է 1989 թ. մարտի 9-15-ը *«Le Nouvel Observateur»* ամսագրի 80-82 էջերում (թարգմ.):

կության իշխանավորների, մտավորականների, քաղաքական գործիչների, բյուրոկրատների, տնտեսագետների առաջնայնության գաղտնիքները: Պետության էլիտայի ներկայացուցիչներն ունեն դպրոցի, սեփականության կամ էլ արքունիքին բնորոշ տիտղոսներ. այն ամենը, ինչ հանգեցնում է սոցիոլոգին ուսումնասիրել իշխանության դաշտն ու նրա տրանսֆորմացիաները: Հարցազրույցում Բուրդիեն շեշտում է, որ բարձրաստիճան մարդկանց ու ավելի խոշոր հաստատությունների ղեկավարների զավակներն ուսանում են հատուկ ուսումնական հաստատություններում[3], գիտական ու իշխանական բարձր դիրքեր զբաղեցնելու համար, մինչդեռ ուսանողներ հավաքելու առումով ավելի հայտնի հաստատությունները պատրաստում են կադրեր ամենաքիչ հեղինակավոր ու ամենաքիչ բազմարժեքայնություն ունեցող հաստիքների համար:

1992 թ. Պիեռ Բուրդիեն տվել է մի հարցազրույց[4] «Արվեստի կանոնները» գրքի լույս տեսնելու կապակցությամբ: Այստեղ վերլուծում է Գուստավ Ֆլոբերի «Զգացմունքների դաստիարակություն» վեպը՝ ցույց տալով, որ հենց ինքը՝ Ֆլոբերը, հանդես է գալիս որպես լավագույն սոցիոլոգ, քանի որ վեպում նա իրականացնում է մի հրաշալի օբյեկտիվացում, ինքնավերլուծություն և սոցիալական վերլուծություն: Ըստ Բուրդիեի՝ վեպի յուրաքանչյուր կերպար հրաշալի սոցիոլոգիական տիպար է: Վեպը ճշգրտորեն վոխանցում է տվյալ շրջանի սոցիալական պատկերը ու հարաբերությունները, իսկ կերպարների միջև հարաբերությունները ոչ միայն զգացական են, այլև՝ սոցիալական: Բուրդիեն ցույց է տալիս, որ Ֆլոբերը գրականության մեջ արեց այն,

[3] Ինչպիսիք են՝ l'ENA, ENS d'Ulm, Polytechnique, HEC (թարգմ.):

[4] Խոսքը գնում է Ֆիլիպ Փըթիի հետ անցկացված «L'Événement du jeudi» հանդեսի 1992 թ. համարի 114-116 էջերում ներկայացված «Պետք է, որպեսզի մտավորականը խոսքի հնարավորություն տա նրանց, ովքեր դա չունեն» (Il faut que l'intellectuel donne la parole à ceux qui ne l'ont pas) հարցազրույցի մասին (թարգմ.):

ինչ Մանեն՝ գեղանկարչության մեջ՝ ընդդիմանալով իր ժամանակի ակադեմիականությանը: Հարցազրույցի երկրորդ մասում Բուրդիեն անդրադառնում է մտավորականի դերին, նշանակությանը ու ֆունկցիաներին: Ժողովածուում ներկայացված մյուս առանցքային թեման երիտասարդությունն է:

«Երիտասարդությունը լոկ մի բառ է» հոդվածում Բուրդիեն հիշեցնում է, որ երիտասարդությունն ու ծերությունը տրված բաներ չեն, այլ կառուցակցվում են սոցիալապես, երիտասարդների ու մեծերի միջև ընթացող պայքարում: Բուրդիեն նկատում է, որ այս պայքարն առկա է սոցիալական բոլոր շերտերում: Բուրժուազիայի ներսում առկա կոնֆլիկտների մի մասը բացատրվում է երիտասարդներն ընդդեմ ծերերի բախման մեջ: Հարցազրույցից երևում է, որ Բուրդիեն երիտասարդությունը դարձնում է իր հիմնական հասկացություններից մեկի՝ հաբիթուսի կարևոր մասը: Եվ վերջապես, հաջորդ թեման, ընդդեմ որի Բուրդիեն միշտ պայքարում ու արտահայտվում էր, նեոլիբերալիզմն է, որը նա դիտարկում է որպես սոցիալական կապերի խզում:

Ժողովածուի երկրորդ մասը ներառում է պոստմոդեռնիզմի «կնքահոր», ֆրանսիացի փիլիսոփա, ժամանակակից հասարակության, պոստմոդեռն մեդիայի տեսաբան Ժան Բոդրիարի (1929-2007) աշխատանքները: Մինչ սոցիոլոգիայի ու պոստմոդեռնիզմի ամենավառ ներկայացուցիչ դառնալը նա գերմաներենից թարգմանում էր Բերտոլդ Բրեխտ, Պետեր Վայս, Կարլ Մարքս: Նրա լայնածավալ թարգմանչական գործունեությունն ընդգրկում էր Ֆրիդրիխ Հյոլդերլինի բանաստեղծությունները: 1962-1963 թթ. համաշխարհային գրականության վերաբերյալ Բոդրիարի քննադատական հոդվածները տպագրվում էին ձախակողմյան “Le temps modernes” ամսագրում: Դեռևս 1960-ական թթ. սոցիալական գիտությունների բարձրագույն դպրոցում Ռոլան Բարտի ու Անրի Լըֆեվրի ազդեցությամբ նրա հետաքրքրությունների շրջանակը սկսեց ընդգրկել նաև սոցիոլոգիան: Առաջին տեսական աշխատանքը՝ «Իրերի համակարգը»,

լույս տեսավ 1968 թ., այնուհետև՝ «Սպառման հասարակություն» (1970) գիրքը: Բողրիարը նաև ձախակողմյան ամսագրերի[5] խմբագրական կազմի անդամ էր: 1970-ական թթ. նա ճանապարհորդում է Արևմտյան Եվրոպայի երկրներում, Լատինական Ամերիկայում, Միացյալ Նահանգներում: ԱՄՆ ճամփորդելու ընթացքում ծանոթանում է այդ ժամանակվա խոշոր մտավորականների ու գրականագետների հետ և ավելի ուշ գրում ամենաընթերցված գործերից մեկը՝ «Ամերիկա»-ն (1997): 1970-ական թթ. կեսերից նրա ուշադրությունը սկսում են գրավել ՋԼՄ-ներն ու պոստմոդեռն շրջանի հաղորդակցման միջոցները: Սիմուլյակր և սիմուլյացիա հասկացության հեղինակը, հիպերիրականության լավագույն ներկայացուցիչներից մեկը բավական կոշտ դիրքորոշում է ունեցել ինչպես Ֆրանսիայի որդեգրած քաղաքականության, այնպես էլ գլոբալիզացիայի, խոշորագույն զվարճանքի վայրերի ու իշխանության դերի, նշանակության վերաբերյալ: Բողրիարի պրովոկացիոն, քննադատական հոդվածները, էսսեներն ու աշխատություններն ունեն սոցիոլոգիական ու քաղաքագիտական բավական մեծ ընդգրկվածություն: Գի Դեբորի, Միշել Ֆուկոյի, Ժակ Լականի, Ռոլան Բարտի, Ժիլ Դելյոզի և 1970-ական թթ. այլ մտածողների ժամանակակիցը հեռանում է հոգեվերլուծությունից ու մարքսիզմից և տարբերվում ստրուկտուրալիզմից՝ շեշտը դնելով հատկապես նշանաբանության վրա: Վերջինիս միջոցով նա վերլուծեց սեպտեմբերի 11-ի իրադարձությունները «Տարտարոսի ուժը» (Power Inferno, 2002) գրքում, որը մասնավորապես վերաբերում է ահաբեկչությանը և արևմտյան իմպերիալիզմի քննադատմանը: Ըստ Բողրիարի՝ այսօր ահաբեկչությունն ավելի մեծ բռնություն է պարունակում, քան ինքնին բռնությունը:

Ժողովածուում առաջին անգամ հայերեն թարգմանությամբ ներկայացվում են նրա լավագույն հոդվածներից մի քանիսը՝

[5] “Utopie” և “Traverses” (թարգմ.):

«Արվեստի դավադրությունը», «Ահաբեկչության ոգին», «Պատերազմի պոռնոգրաֆիան»: Չնայած «Արվեստի դավադրությունը» էսսեում (1997) հեղինակը շատ կենդանի ձևով քննադատում է ժամանակակից արվեստը, վերջինիս «զրո» լինելը, այնուամենայնիվ Բոդրիարը արվեստի շատ մեծ սիրահար էր, ինչի վառ վկայությունն է Ուիթնիի[6] թանգարանում պահվող նրա լուսանկարների արխիվը: Ըստ Բոդրիարի՝ «Ժամանակակից արվեստի ողջ երկերեսանիությունը կայանում է նրանում, որ այն պահանջում է անիրականը, աննշանակալին, իմաստ չունեցողը. ձգտում է դեպի անիրականը, մինչդեռ արդեն ոչինչ գոյություն չունի», այսինքն՝ ժամանակակից արվեստի մեծ մասը ձգտում է համապատասխանեցնել պարզունակությունը, մնացորդը, անմիջականությունը՝ որպես արժեք ու որպես գաղափարախոսություն: Ունենալով անհայտ նպատակ՝ ժամանակակից արվեստը նավարկում է անհայտ ուղղությամբ՝ ամբողջովին ստիպելով հավատալ, որ նա հանճարեղ է: Բոդրիարը նաև վերլուծում է 2002 թ. ապրիլի 21-ին Ֆրանսիայում տեղի ունեցած նախագահական ընտրությունները, CPE[7]-ի դեմ ցույցերը, «Ոչ»-ի ռեֆերենդումը: Հոդվածը գրվել էր ռեֆերենդումից առաջ և արդարացիորեն գուշակում էր քվեարկության արդյունքները:

Վերոհիշյալ հեղինակների կողմից վեր հանված թեմաները բոլոր դարերում եղել են ինչպես փիլիսոփաների, այնպես էլ պատմաբանների, մշակութաբանների ու հետագայում արդեն սոցիոլոգների ուշադրության կենտրոնում: Սրանք հավերժական հարցեր են, թեմաներ, և, թերևս, յուրաքանչյուրն իր ժամանակաշրջանի յուրահատկություններին համապատասխան լուծումներ պահանջող:

---

[6] Խոսքը գնում է Նյու Յորքում տեղակայված Ուիթնիի ամերիկյան արվեստի թանգարանի մասին (Whitney Museum of American Art) (թարգմ.):

[7] Համաձայն առաջին անգամ աշխատանքի ընդունման օրենքի՝ առաջին երկու տարիների ընթացքում գործատուն իրավունք ունի աշխատանքից ազատել երիտասարդ աշխատողին առանց որևէ պարզաբանման, առանց որևէ վճարի, եթե չի լրացել աշխատողի 26 տարեկանը: Ենթադրվում էր, որ այդ նոր օրենքը պետք է նպաստեր աշխատաշուկայի մոբիլության աճին (թարգմ.):

Պիեռ Բուրդիե
(1930-2002)

Հանրային կարծիք գոյություն չունի[8]

Նախ և առաջ կցանկանայի հստակեցնել, որ որևէ մտադրություն չունեմ մեխանիկական ու դյուրին կերպով անվավեր ճանաչել հասարակական կարծիքի ուսումնասիրության արդյունքները, այլ ընդհակառակը, անողոք վերլուծության ենթարկելով՝ քննել նրանց աշխատանքն ու գործառույթները: Սա ենթադրում է, որ հարցականի տակ ենք դնում երեք ոչ բացահայտ կանխադրույթ:

Առաջին կանխադրույթի համաձայն՝ ողջ հարցաթերթը ենթադրում է, որ բոլորը կարող են ունենալ կարծիք, կամ այլ կերպ ասած՝ բոլորին մատչելի է կարծիք հայտնել: Կասկածի տակ առնելով սույն կանխադրույթը՝ վտանգում եմ դիպչել ինչ-որ մեկի միամիտ ժողովրդավարական զգացմունքներին:

Երկրորդ կանխադրույթը ենթադրում է, որ բոլոր կարծիքներն իրար արժեն: Հնարավոր եմ համարում ապացուցել, որ դա այդպես չէ, և կարծիքների համատեղման փաստը, որոնք բացարձակապես միևնույն իրական ուժը չունեն, տանում է անիմաստ արտեֆակտների առաջացմանը:

Երրորդ ոչ ակնհայտ կանխադրույթն այն է, որ բոլորին նույն հարցն ուղղելու պարզ փաստում ենթադրվում է խնդիրների շուրջ համաձայնության հիպոթեզի առկայությունը, այլ կերպ

[8] Սույն զեկույցն ընթերցվել է Noroit (Arras) մշակութային կենտրոնում 1972 թ. հունվարին, լույս է տեսել “Le temps modernes” գրական-քաղաքական ամսագրի 318-րդ համարում, 1973 թ. հունվարին, էջ 1292-1309: Վերատպվել է Պիեռ Բուրդիեի “Questions de sociologie” աշխատության մեջ, Փարիզ, Minuit հրատարակություն, 1984 թ., էջ 222-235: Աղբյուրը՝ http://www.homme-moderne.org/societe/socio/bourdieu/questions/opinionpub.html, այցելվել է 20.04.2017 (թարգմ.):

ասած՝ կա համախոհություն, որ մի շարք հարցեր արժանի են առաջադրված լինելու:

Այս երեք ոչ բացահայտ կանխադրույթները, ըստ իս, շեղումների շարքից են, որոնք բացահայտվում են նույնիսկ հավաքագրման և տվյալների վերլուծության ընթացքում մեթոդաբանական բոլոր պայմանների խստորեն պահպանման դեպքում:

Հասարակական կարծիքի ուսումնասիրության ժամանակ շատ հաճախ ներկայացնում են տեխնիկական բնույթի կշտամբանքներ: Օրինակ՝ հարցականի տակ են դնում ընտրանքի ներկայանալիությունը: Գտնում եմ, որ հանրային կարծիք ուսումնասիրող կենտրոնների կողմից ներկայումս օգտագործվող գործիքներն այդ առարկությունն անհիմն են դարձնում: Նրանց հանդիմանում են նաև խորամանկ հարցեր առաջ քաշելու կամ, ավելի շուտ, խորամանկորեն ձևակերպված հարցերի համար: Դա ավելի ճիշտ է, ու հաճախ է պատահում, որ հարցը տալու ձևից արդեն իսկ եզրակացնում են հարցի պատասխանը: Այսպես, օրինակ, խախտելով հարցաթերթի կառուցվածքի այն պարզ կանոնը, որը պահանջում է «տալ նրանց հնարավորություն» բոլոր հնարավոր պատասխանների համար, առաջարկված հարցերում կամ պատասխաններում հաճախակի մոռանում են տեղ թողնել հնարավոր մեկ ընտրության համար կամ էլ առաջարկում են բազմաթիվ ձևերով փոփոխված միևնույն տարբերակը: Կան նմանատիպ ամեն տեսակ խորամանկություններ, ու հետաքրքիր կլիներ հարցում իրականացնել դրանց ի հայտ գալու սոցիալական պայմանների մասին: Գերազանցապես դրանք պայմանավորված են այն պայմաններով, որոնցում գտնվում են հարցաթերթ կազմողները: Մեծ մասամբ խորամանկություններն ի հայտ են գալիս, որովհետև պրոբլեմների ամբողջությունը, որի շուրջ աշխատում են հանրային կարծիք ուսումնասիրող ինստիտուտները, ենթարկվում է հատուկ տիպի պահանջներին: Այդպիսով՝ ֆրանսիացիների շրջանում նախաձեռնելով կրթության

վերաբերյալ մեծ հարցում՝ այդ խնդրով զբաղվող ծառայություն մատուցող մի շարք բյուրոների արխիվներում մենք հավաքեցինք կրթությանը վերաբերող բոլոր հարցերը: Սա մեզ ստիպեց տեսնել, որ կրթական համակարգին վերաբերող 200-ից ավելի հարցեր տրվել են 1968 թ. մայիսին տեղի ունեցած դեպքերից հետո, և միայն 20-ը՝ 1960 և 1980 թվականների միջև ընկած շրջանում, ինչը նշանակում է, որ պրոբլեմների ամբողջությունը, որի ուսումնասիրումը ձեռնարկում են նման կազմակերպությունները, խորապես կապված է կոնյուկտուրայից և ենթարկվում է սոցիալական պատվերի որոշակի տիպին:

Հանրային կարծիքն ուսումնասիրող ինստիտուտների կողմից կրթության վերաբերյալ խնդիրը, օրինակ, կարող է առաջադրվել միայն այն դեպքում, երբ այն դառնում է քաղաքական հարց:

Միանգամից երևում է այն տարբերությունը, որը բաժանում է նման ինստիտուտները հետազոտական կենտրոններից, որոնք էլ իրենց հերթին ստեղծում են իրենց խնդիրների ամբողջությունը, եթե ոչ դատարկ տեղը, ապա, ամեն դեպքում, շատ ավելի մեծ հեռավորությամբ ուղիղ և անմիջական ձևով արտահայտված սոցիալական պահանջի նկատմամբ: Վիճակագրական մի վերլուծություն, որը հակիճ կերպով ներկայացնում է մի շարք առաջադրված հարցեր, մեզ ստիպում է տեսնել, որ այդ հարցերի գերակշիռ մասն ուղիղ կապ ունի «քաղաքական ծառայակազմի» քաղաքական մտահոգությունների հետ: Եթե այս երեկո մենք մեզ զվարճացնենք՝ խաղալով փոքրիկ ինքնակպչող թղթերով, ու եթե ձեզ ասեի գրել հինգ հարց, որոնք, ըստ ձեզ, ամենակարևորն են կրթության հարցում, ապա կստանանք հարցման համար մեր ունեցած ցանկից, վստահաբար, շատ տարբերվող մեկ այլ ցանկ: «Պե՞տք է լիցեյում ներառել քաղաքագիտություն առարկան» (կամ այլ տարբերակներ) հարցը շատ հաճախ էր տրվում, մինչդեռ «Պե՞տք է փոփոխել լիցեյի կրթական ծրագիրը» կամ

«Պե՞տք է փոփոխել բովանդակության փոխանցման ձևը» հարցերը շատ հազվադեպ են առաջ քաշվում: Նույնը՝ «Պե՞տք է վերարտադրել դասավանդողներին» հարցի դեպքում: Նույնչափ հույժ կարևոր հարցեր, համենայն դեպս, մեկ այլ հեռանկարում:

Պրոբլեմների այն ամբողջությունը, որն առաջ է քաշվում հասարակական կարծիքի ուսումնասիրմամբ, ենթարկվում է քաղաքական շահերին, ու դա միաժամանակ ազդում է և՛ պատասխանների, և՛ արդյունքների հրապարակման ճշանակության վրա: Ներկա պահին հանրային կարծիքի ուսումնասիրումը քաղաքական գործունեության գործիք է: Նրա ամենակարևոր գործառույթն է, հավանաբար, թողնել այնպիսի տպավորություն, թե իբր գոյություն ունի հանրային կարծիք՝ որպես անհատների կարծիքների լրացուցիչ հանրագումար, ներշնչել այն միտքը, որ կա մի բան, որը կկազմեր կարծիքների միջին թիվ կամ միջին կարգի կարծիք: «Հանրային կարծիքը» ցուցադրված ամսագրի առաջին էջերին տոկոսային հարաբերությամբ (ֆրանսիացիների 60%-ը բարյացակամ է տրամադրված…) ընդամենը ***մարդկային միջամտության*** արդյունք է, որի ճշանակությունն է տվյալ պահին հանդես եկող կարծիքի բովանդակության քողարկումը՝ որպես ուժերի, լարվածությունների համակարգ, և չկա ավելի անմիտ բան, քան հանրային կարծիքը ներկայացնել տոկոսային հարաբերակցությամբ:

Հայտնի է, որ ուժի ողջ օգտագործումն ուղեկցվում է ակներև դիսկուրսով, ինչն ուղղված է լեգիտիմացնելու այն ուժը, որը նրան օգտագործում է, կարող ենք անգամ ասել, որ ցանկացած ուժի փոխադարձ հարաբերակցությանը բնորոշ է իր ողջ ուժի արտահայտումը, այն չափով, ինչ չափով որ այդ հարաբերակցությունը մնում է թաքնված: Կարճ ասած՝ քաղաքական գործիչը նա է, ով ասում է. «Աստված մեզ հետ», իսկ այսօր դա հավասարազոր է. «Հանրային կարծիքը մեզ հետ է»: Այսպիսին է հան-

րային հարցման խորքային հետևանքը՝ արձանագրել գոյություն ունեցող միտքը՝ որպես միանձնյա հանրային կարծիք, հետևաբար լեգիտիմացնել մի քաղաքականություն ու ամրապնդել ուժի վոխադարձ կապերը, որն այն ստեղծում կամ դարձնում է հնարավոր:

Վերջում կցանկանայի կրկնել այն, ինչ նշեցի սկզբում: Կփորձեմ շատ արագ ընդգծել այն հնարքները, որոնցով ձեռք են բերում թվացյալ *համաչափության պատկերություն:* Մեր ուսեցած այն կանխադրույթի համաձայն, որ բոլորը պետք է կարծիք ունենան, առաջին հնարքով չպատասխանած հարցերի անտեսելն է: Օրինակ՝ դուք հարցնում եք. «Դրակա՞ն եք տրամադրված Պոմպիդուի կառավարության նկատմամբ»: Գրանցել եք 30% տոկոս չպատասխանած, 20%՝ այո, 50%՝ ոչ արդյունք: Կարող եք ասել, որ դրական չտրամադրված պատասխանողները գերակշռում են դրական տրամադրվածների նկատմամբ, և մնացորդն էլ 30% է: Կարող եք նաև վերահաշվարկել դրական տրամադրվածների և չտրամադրվածների տոկոսները՝ բացառելով չպատասխանածները: Այս պարզ ընտրանքը ֆանտաստիկ նշանակություն ունեցող տեսական հնարք է, որի շուրջ կցանկանայի խորհրդածել ձեզ հետ միասին:

Հաշվի առնել չպատասխանածները նշանակում է վարվել ինչպես համապետական ընտրություններում, որտեղ կան չլրացված կամ անվավեր ընտրաթերթիկներ, ինչը նշանակում է քվեարկության գաղտնի փիլիսոփայությունը պարտադրել հանրային կարծիքի ուսումնասիրմանը: Եթե ավելի ուշադիր նայենք, ապա կնկատենք, որ ընդհանրացված ձևով կին չպատասխանածների տոկոսն ավելի բարձր է, քան տղամարդկանցը, և որ կանանց ու տղամարդկանց միջև տարբերությունը նույնքան նշանակալից է, որքան զուտ քաղաքական նշանակությամբ առաջադրվող հարցերը: Մեկ այլ նկատառում՝ որքան հարցը իմացաբանական խնդիրներին է վերաբերում, այնքան տարբե-

րությունը մեծ է իրազեկ չպատասխանածների և պակաս իրազեկվածների միջև: Եվ հակառակը, երբ հարցերը վերաբերում են բարոյագիտական խնդիրներին, ապա ըստ կրթական մակարդակի՝ չպատասխանածների տարբերությունն ավելի թույլ է արտահայտված (օրինակ՝ «Պե՞տք է խիստ լինել երեխաների հետ»): Եվս մեկ նկատառում՝ որքան հարցը առաջ է քաշում կոնֆլիկտային խնդիրներ, կրում հակասական կապեր (օրինակ՝ Չեխոսլովակիայում տիրող իրավիճակի վերաբերյալ հարցը կոմունիզմի օգտին քվեարկող մարդկանց համար), այնքան հարցը լարվածություն է ծնում որոշակի կատեգորիայի համար: Հետևաբար, վիճակագրական վերլուծությունը տեղեկություն է տալիս ներկայացված հարցին չպատասխանածների, ինչպես նաև դիտարկվող հարցվողների կատեգորիայի մասին, ընդ որում, այդ կատեգորիայի նկատմամբ տեղեկույթը սահմանվում է որպես ենթադրելի հավանականություն ունեցող կարծիք և որպես պայմանական հավանականություն ունեցող նպաստավոր կամ անբնպաստ տեսակետ:

Հասարակական կարծիքի գիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ պրակտիկորեն դաննդաղընթաց խնդիր գոյություն չունի, գոյություն չունի և ոչ մի հարց, որը չի վերամեկնաբանվի՝ մարդկանց շահերից կախված, որոնց այն տրվեց: Առաջին հրամայականն է պարզել, թե տարբեր կատեգորիաների պատկանող հարցվածները ո՞ր հարցին կարծեցին, թե պատասխանել են: Հարցման ամենավտանգավոր հետևանքներից մեկն է պահանջել մարդկանցից պատասխանել այն հարցերին, որոնք իրենց չեն ուղղվել: Հարցեր, որոնք վերաբերում են բարոյագիտության խնդիրներին, օրինակ՝ ծնողների խստությանը, ուսուցիչների ու աշակերտների հարաբերություններին, դիրեկտիվ կամ ոչ դիրեկտիվ մանկավարժությանը և այլ խնդիրներին, և ավելի շատ ընկալվում են որպես էթիկական բնույթի խնդիրներ, ավելի ու ավելի են իջնում սոցիալական հիերարխիայում: Միաժամանակ բարձր

դասի ներկայացուցիչների համար այդ հարցերը կարող են հանդես գալ որպես քաղաքական խնդիրներ, և հարցման արդյունքներից մեկն է բարոյագիտական բնույթի պատասխանները վերավոխել քաղաքական պատասխանների:

Փաստորեն, կան բազմաթիվ սկզբունքներ, որոնցից սկսած՝ կարելի է ձևավորել պատասխաններ: Վկայակոչելով ***քաղաքական կոմպետենտության*** կամայական և միևնույն ժամանակ լեգիտիմ նշանակությունը՝ փաստում ենք քաղաքականությունից դոմինանտ և քողարկված լինելը: Այդ քաղաքական կոմպետենտությունը լայնորեն տարածված չէ: Մեծ հաշվով այն փոփոխվում է, ինչպես կրթական նոր մակարդակը: Այլ կերպ ասած՝ բոլոր հարցերի շուրջ կարծիք ունենալու հավանականությունը ենթադրում է, որ քաղաքական գիտելիքը բավականաչափ համեմատելի է թանգարան գնալու հավանականության հետ: Նկատվում է ֆանտաստիկ շեղում այնտեղ, ուր ձախակողմյան շարժումներից մեկին պատկանող ուսանողը Միացյալ սոցիալիստական կուսակցությունից (PSU[9]) տարբերում է ավելի ձախակողմյան 15 քաղաքական ուղղություն ևս, իսկ միջին օղակի ներկայացուցչի համար ոչինչ չկա: Քաղաքական սանդղակում (ծայրահեղ ձախակողմյան, ձախակողմյան, կենտրոն-ձախակողմյան, աջակողմյան, ծայրահեղ աջակողմյան և այլն) «քաղաքագիտության» հարցաթերթերն օգտագործվում են որպես ինքնին տրամաբանական մի բան: Որոշ սոցիալական կատեգորիաներ ինտենսիվորեն օգտագործում են ծայրահեղ ձախակողմյանների մի փոքրիկ հատվածը, մյուսները՝ միայն կենտրոնը, մնացածը՝ ողջ սանդղակը: Վերջապես, ընտրությունը միանգամայն տարբեր տարածությունների միավորումն է: Սանտիմետրերով չափող մարդկանց խառնում են կիլոմետրերով չափող մարդկանց հետ, կամ, ավելի ճիշտ, մարդիկ, որոնք նշում են 0-ից 20-ն ըն-

[9] Parti Socialiste Unifié - Միացյալ սոցիալիստական կուսակցություն (թարգմ.):

կած կետերը, ու մարդիկ, որոնք ձշում են 9-ի ու 11-ի միջև: Ի թիվս այլ բաների՝ կոմպետենտությունը չափվում է ընկալման խորաթափանցությամբ (նույնը և էսթետիկայի պարագայում՝ ոմանք կարողանում են տարբերել մի նկարչի հինգ կամ վեց ստեղծագործությունների կատարման հաջորդական ոճերը):

Այս համեմատությունը կարող է ավելի հեռուն տանել: Որպես էսթետիկ ընկալման առարկա՝ առաջին հերթին կա մի թույլատրելի պայման՝ պետք է, որպեսզի մարդիկ արվեստի գործի շուրջ խորհրդածեն որպես արվեստի գործ, այնուհետև պետք է, որպեսզի իրենց տրամադրության տակ ունենան կոմպոզիցիայի, կառուցվածքի և այլնի ընկալման կատեգորիաներ: Ենթադրենք այսպիսի հարց. «Դուք դիրեկտիվ, թե՞ ոչ դիրեկտիվ կրթության կողմնակիցն եք»: Ոմանց համար այն կարող է քաղաքական հարց թվալ: Ծնող-երեխա փոխհարաբերությունների վերարտադրումը հասարակության համակարգային պատկերացման բաղկացուցիչ մասն է կազմում, մյուսների համար դա զուտ բարոյականության հարց է: Այսպիսով՝ մեր մշակած հարցաթերթը, համաձայն որի՝ արդյո՞ք նրանց համար գործադուլ անելը, երկար մազեր ունենալը, փոփ երաժշտության փառատոներին մասնակցելը և այլն քաղաքականություն են, թե ոչ, ապա ստացված պատասխաններից կարող ենք եզրակացնել, որ սոցիալական խմբերից կախված՝ նկատվում է շատ մեծ շեղում: Քաղաքական հարցին համապատասխան կերպով պատասխանելու առաջին պայմանն է ի վիճակի լինել այն ձևակերպել որպես քաղաքական հարց: Դրանից հետո երկրորդ պայմանը՝ կարողանալ նրա նկատմամբ կիրառել ճշգրիտ քաղաքական կատեգորիաներ, որոնք կլինեն քիչ թե շատ համարժեք, քիչ թե շատ կատարելագործված և այլն: Այսպիսին են կարծիքների մշակման առանձնահատուկ պայմանները, և հանրային կարծիքի ուսումնասիրումը ենթադրում է, որ առաջին կանխադրույթից ել-

ելով, համաձայն որի՝ մարդիկ կարող են կարծիք հայտնել, այդ պայմաններն ամենուրեք ու միանման իրականացվում են:

Երկրորդ սկզբունքը, որից ելնելով՝ մարդիկ կարող են կարծիք հայտնել, այն է, ինչը ես անվանում եմ «դասերի էթոս» (չշփոթելու համար «դասի էթիկայի» հետ), այսինքն՝ լատենտ արժեհամակարգ, որը, մանկությունից սկսած, մարդիկ յուրացնում են և որին համապատասխան տալիս ամենատարբեր խնդիրներին ուղղված պատասխաններ: Հասկանալի ու տրամաբանական տեսակետները, որոնք, մարզադաշտից դուրս գալով, մարդիկ կարողանում են փոխանակել Ռուբեի ու Վալանսիենի ֆուտբոլային թիմերի միջև տեղի ունեցած խաղի վերջում, գերազանցապես պարտական են դասի էթոսին: Բազում պատասխաններ, որոնք համարվում են քաղաքական պատասխաններ, իրականում սերում են դասի էթոսից ու միևնույն ժամանակ կարող են ստանալ միանգամայն այլ իմաստ, երբ ենթարկվում են քաղաքական մեկնաբանման: Այստեղ ես պարտավոր եմ անդրադառնալ հատկապես Միացյալ Նահանգներում քաղաքականության սոցիոլոգիայով զբաղվող որոշ գիտնականների շրջանում տարածված սոցիոլոգիական ավանդույթին, որոնք առհասարակ շատ են խոսում պահպանողականությունից և բանվոր դասակարգի ներկայացուցիչների բռնապետությունից: Այս թեզերը հիմնված են միջազգային հարցումների կամ ընտրությունների համեմատության վրա, որոնք ձգտում են ցույց տալ, որ ամեն անգամ, որ երկրում էլ ուզում է լինի, երբ հարցում են անցկացնում հասարակ ժողովրդի շրջանում իշխանության հետ փոխհարաբերությունների, անձնական ու մամուլի ազատությունների և այլ խնդիրների շուրջ, նրանք ավելի «բռնապետական» պատասխաններ են տալիս, քան մյուս դասակարգերի ներկայացուցիչները, ու դրանից ընդհանրացված եզրակացություն են անում, համաձայն որի՝ առկա է կոնֆլիկտ ժողովրդա-

վար արժեքների (Լիպսետին[10] նկատի ունեմ. խոսքը գնում է ամերիկյան ժողովրդավարական արժեքների մասին) և այն արժեքների միջև, որոնք յուրացնում են արդի դասակարգերը՝ պատժիչ և բռնապետական տիպի արժեքներ: Այդտեղից էլ վախճանաբանական պատկերացում են կազմում, համաձայն որի՝ քանի որ հակումը ճնշման, ավտորիտարիզմի և այլնի հանդեպ կապված է ցածր եկամուտների, կրթական ցածր մակարդակի և այլնի հետ, պետք է բարձրացնել կյանքի, կրթության մակարդակը, այդպիսով կձևավորենք ամերիկյան ժողովրդավարությանը հարիր քաղաքացիներ: Ինձ թվում է՝ հարցականի տակ է դրված որոշ հարցերի պատասխանների իմաստը: Պատկերացնենք հետևյալ հարցերի պատասխանների նշանակությունն ու ամբողջությունը՝ «Կողմնակի՞ց եք արդյոք սեռերի հավասարությանը», «Կողմնակի՞ց եք ամուսնացած զույգերի սեռական ազատությանը», «Կողմնակի՞ց եք ոչ պատժիչ կրթությանը», «Հավանություն տալի՞ս եք նոր հասարակությանը» և այլն: Մեկ այլ հարցախումբ՝ «Պե՞տք է դասախոսները գործադուլ անեն, երբ նրանց վիճակը վտանգված է», «Պե՞տք է արդյոք սոցիալական կոնֆլիկտների ժամանակ դասավանդողներն այլ պետական ծառայողների հետ միասնական լինեն» և այլն: Իրենց տեղաբաշխման կառուցվածքից ելնելով՝ այս երկու հարցախմբերին, կախված սոցիալական այս կամ այն դասակարգի պատկանելիությունից, տրվում են ուղիղ հակառակ պատասխաններ: Հարցերի առաջին համախումբը, որը վերաբերում է սոցիալական փոխհարաբերություններում փոփոխության նոր տիպին, սոցիալական հարաբերության սիմվոլիկ ձևին, առաջ է բերում այնչափ բարենպաստ պատասխաններ, որչափ բարձր է հարցվողի դիրքը սոցիալական և կրթական մակարդակի հիերարխիայում: Եվ ընդ-

[10] Սեյմուր Մարտին Լիպսետ (1922-2006) - ամերիկացի սոցիոլոգ և քաղաքագետ, մոդեռնիզացիայի տեսության հիմնադիրներից: Համարվում է 20-րդ դարի երկրորդ կեսի ԱՄՆ խոշորագույն սոցիոլոգներից մեկը (թարգմ.):

հակառակը, որչափ սոցիալական հիերարխիայում բարձր դիրք է զբաղեցնում հարցվողը, այնչափ այն հարցերը, որոնք վերաբերում են դասակարգերի միջև ուժերի փոխհարաբերությունների իրական վերափոխմանը, ստանում են ավելի անբարենպաստ պատասխաններ:

Կարճ ասած՝ «Բանվորական դասակարգի ներկայացուցիչները հակված են բռնության» արտահայտությունը ոչ ճիշտ է, ոչ էլ սխալ: Դա ճիշտ է հարցերի այնպիսի համախմբում, որտեղ շոշափված են ներքին բարոյականության, սերունդների կամ սեռերի միջև հարաբերություններին վերաբերող հարցեր, որտեղ բանվոր դասակարգի ներկայացուցիչները հակված են իրենց դրսևորել որպես ավելի խստաբարո անձինք, քան սոցիալական այլ դասակարգի ներկայացուցիչները: Եվ հակառակը, քաղաքական կառուցվածքին վերաբերող այն հարցերը, որոնք վերաբերում են պահպանողականությանը կամ սոցիալական կարգի վերափոխմանը և ոչ թե միայն պահպանմանը կամ անհատների միջև առկա հարաբերության ձևերի տրանսֆորմացիային, բանվոր դասակարգի ներկայացուցիչներն ավելի շատ են հավանություն տալիս փոփոխությանը, այսինքն՝ սոցիալական կառուցվածքների տրանսֆորմացիաներին: Տեսնում եք, թե ինչպես 1968 թ. մայիսին կոմունիստական կուսակցության և գոշիստների միջև առկա կոնֆլիկտի շուրջ առաջ քաշված որոշ խնդիրներ, և հաճախ վատ առաջ քաշված, անմիջականորեն կապված են գլխավոր հարցի հետ, որը փորձեցի բարձրաձայնել այս երեկո, պատասխանների բնույթի, այսինքն՝ այն սկզբունքի, որից դրանք բխում են: Վերը ներկայացված երկու հարցախմբերի միջև իմ կողմից իրականացրած հակադրումը, իրականում, հանգեցնում է տեսակետների առաջացման վերաբերյալ երկու սկզբունքների միջև առկա հակադրմանը, այն է՝ զուտ քաղաքական սկզբունք և էթիկական սկզբունք, իսկ բանվոր դասակարգի

ներկայացուցիչների պահպանողականության խնդիրն այդ տարբերության անտեսման արդյունքն է:

Պրոբլեմների ամբողջության պարտադրման հետևանքը պայմանավորված է ցանկացած հանրային ու ցանկացած քաղաքական կարծիքի ուսումնասիրմամբ (ընտրականից սկսած) և այն բանի արդյունքն է, որ հարցաթերթում տեղ գտած հարցերն իրականում հարցման բոլոր մասնակիցներին ուղղված հարցեր չեն, ու պատասխաններն էլ կախված չեն պրոբլեմների ամբողջությունից, որոնց համեմատ տարբեր կատեգորիայի հարցվողներն իրոք պատասխանել են: Ուստի, այն ***գերիշխող պրոբլեմատիկան***, որով երկու տարի շարունակ հանրային կարծիքն ուսումնասիրող ինստիտուտի կողմից առաջադրված հարցերի շարքը ներկայացնում է մի պատկեր, այսինքն՝ պրոբլեմների ամբողջություն, որը գլխավորապես հետաքրքրում է բարձրագույն իշխանության տեր մարդկանց, որոնք իրենց քաղաքական գործունեության կազմակերպման միջոցով ցանկանում են լինել լսելի, խիստ անհամաչափորեն է յուրացված տարբեր սոցիալական դասակարգերի կողմից: Եվս մեկ կարևոր բան՝ շատ թե քիչ դրանք ունակ են ստեղծել հակակշիռ պրոբլեմների ամբողջություն: Սերվեն Շրեյբերի ու Գիսկար Դ'Էստենի միջև տեղի ունեցած հեռուստաբանավեճի առումով հանրային կարծիքն ուսումնասիրող ինստիտուտը հետևյալ հարցն ուղղեց. «Արդյո՞ք ուսման մեջ ունեցած հաջողությունը կախված է ընդունակություններից, խելացիությունից, աշխատասիրությունից, հաջողության համար ստացած պարգևներից»:

Ստացված պատասխանները, փաստացի, տալիս են տեղեկություն (չհաշված այդ պատասխանները տվողներին) սոցիալական տարբեր դասակարգի ներկայացուցիչների կողմից մշակութային ժառանգականության փոխանցման օրենքների գիտակցման աստիճանի մասին: Նվերի միֆի գաղափարները և դպրոցի միջոցով առաջ գնալու, դպրոցական արդարության,

պաշտոնների բաժանման կապվածությունը կոչումներից և այլ մտքեր աշխատավոր դասի մոտ շատ ուժեղ են արտահայտված: Հակառակ պրոբլեմատիկան կարող է գոյություն ունենալ մի քանի մտավորականների համար, բայց դա պարտադրված սոցիալական բնույթ չի կրում, չնայած որ պարսավանքի ենթարկվեց որոշակի քանակի կուսակցությունների և խմբավորումների կողմից: Գիտական ճշմարտությունը ենթակա է տարածման այն նույն օրենքներին, ինչ և գաղափարախոսությունը: Գիտական դատողությունը, ինչպես ծնունդները կարգավորող պապի կոնդակ, հավատքի է դարձնում միայն արդեն դարձածներին:

Հասարակական կարծիքի ուսումնասիրման օբյեկտիվության գաղափարը, ամենաչեզոք տերմիններով, կապում են առաջադրվող հարցերի փաստին, որպեսզի հավասարեցնեն բոլոր հնարավոր պատասխանների հավանականությունը: Փաստորեն, հասարակական կարծիքի ուսումնասիրումը, անկասկած, շատ ավելի մոտ կլիներ իրականությունում տեղի ունեցածին, եթե «օբյեկտիվության» կանոնների ամբողջական խախտումը մարդկանց տրամադրեր միջոցներ հայտնվելու այնպիսի պայմաններում, որոնք, փաստացի, գտնվում էին իրականությունում, այսինքն՝ կղիմեր արդեն իսկ ձևավորված կարծիքներին: Եթե, օրինակ, «Կան ծնունդները կարգավորելուն հավանություն տվող մարդիկ, մյուսները հավանություն չեն տալիս, իսկ դո՞ւք...» հարցի փոխարեն առաջարկվեին խմբերի կողմից վառ արտահայտված, կարծիքների ձևավորման ու տարածման վստահությամբ օժտված մի շարք դիրքորոշումներ, ապա այդ դեպքում մարդիկ կկարողանային կողմնորոշվել արդեն իսկ ձևավորված պատասխանների շուրջ: Ընդհանուր առմամբ խոսում են «դիրքորոշումներ բռնելու» մասին. վերջիններս արդեն կանխատեսված են. ու դրանց ընտրում են, միևչդեռ, ոչ պատահականորեն: Իրենց ընտրությունը կանգ է առնում այնպիսի դիրքորոշումների վրա, որոնք, կախված որոշակի դաշտում իրենց զբաղեցրած դիրքից,

հակված են ընտրել: Հենց ճշգրիտ վերլուծությունն է ուղղված բացատրելու իմաստային դիրքորոշումների կառուցվածքի և օբյեկտիվորեն զբաղեցրած դիրքորոշումների դաշտի միջև եղած փոխհարաբերությունները:

Եթե հասարակական կարծիքի ուսումնասիրման հարցումները վատ են ըմբռնում կարծիքի պոտենցիալ վիճակը, իսկ ավելի ճիշտ՝ նրա շարժումը, դա, ի թիվս այլոց, լիովին արհեստական վիճակ է, որտեղ մարդկանց կարծիքները արձանագրվում են հարցումների միջոցով: Այնպիսի իրավիճակներում, որում ձևավորվում է կարծիքը, մասնավորապես՝ *ճգնաժամային*, մարդիկ արդեն իսկ գտնվում են ձևավորված, խմբերի կողմից պաշտպանվող կարծիքների առջև, այնպես, որ վերջիններիս միջև ընտրությունն ակներևաբար ընտրություն է նաև խմբերի միջև: Այդպիսին է ***քաղաքականացման ազդեցությունը***, որը ծնում է ճգնաժամ: Խմբերի միջից պետք է ընտրել նրանց, որոնք հանդես են գալիս քաղաքականապես պարզորոշ ձևով, և ավելի հստակորեն որոշակիացնել քաղաքական սկզբունքների ընտրությունը: Իսկապես, ինձ կարևոր է թվում, որ հասարակական կարծիքի ուսումնասիրությունն այս կարծիքը մեկնաբանում է որպես պարզապես անհատական տեսակետների ամբողջություն, որոնց հավաքումը տեղի է ունենում մի իրավիճակում, ինչը նման է գաղտնի քվեարկության գործընթացին, երբ անհատը քվեախցիկում գաղտնաբար արտահայտում է իր տեսակետը: Փաստացի իրավիճակներում ինչպես տեսակետները, այնպես էլ կարծիքներն իրենցից ուժ են ներկայացնում, և խմբերի միջև առկա կարծիքների փոխհարաբերությունն ուժերի կոնֆլիկտների արտահայտումն է:

Այս վերլուծության ընթացքում մեկ այլ օրինաչափություն էլ է ի հայտ գալիս. մի խնդրի շուրջ առկա է այնքան կարծիք, որքան գոյություն ունի հետաքրքրություն տվյալ խնդրի վերաբերյալ, այսինքն՝ կրթական համակարգի վերաբերյալ ստացված

պատասխաններն անմիջականորեն կապ ունեն հարցվողների՝ այդ համակարգին կապված լինելու մակարդակի հետ, իսկ տեսակետ ունենալու հավանականությունը տատանվում է՝ կախված այն բանից, թե արդյոք հարցվողը կարող է իր տրամադրության տակ ունենալ այն, ինչի մասին որ կարծիք է հայտնում: Օրինակ՝ դասավանդման համակարգում պատասխանների տոկոսային հարաբերությունն անմիջականորեն կապված է դասավանդմանը տրված գնահատականից, և կարծիք ունենալու հավանականությունը փոփոխվում է՝ կախված իրենց արտահայտած այս կամ այն տեսակետի նկատմամբ ազդեցություն ունենալուց: Նման հանկարծակի ճնով հանդես եկող կարծիքը պատկանում է նրանց, որոնց կարծիքը, ինչպես ասում են, կշիռ ունի: Եթե կրթության նախարարը գործեր հասարակական կարծիքի ուսումնասիրությունից ստացված արդյունքներին համապատասխան (կամ էլ գոնե հարցման արդյունքների մակերեսային ընթերցումից ելնելով), ապա նա չէր անի այն, ինչ անում է, երբ իրապես գործում է որպես քաղաքական գործիչ, այսինքն՝ ստացված հեռախոսային զանգերից մինչև արհմիության ոմն պատկան մարմնի կամ էլ դեկանի այցելությունից ելնելով: Գործում նա վարվում է հասարակական կարծիքի կողմից ուժերի տեղաբաշխման վիճակից կախված, որոնք նրա վրա ազդում են այն չափով, ինչ չափով որ ուժ ունեն, և ուժ ունեն, որովհետև մոբիլիզացված են:

Կանխատեսել, թե ինչպիսին կդառնա համալսարանը առաջիկա տասը տարիների ընթացքում, կարծում եմ՝ դրա համար լավագույն հիմքն ստեղծում է հասարակական **մոբիլիզացված կարծիքը**: Այնուհանդերձ, փաստը, որի մասին վկայում են «չպատասխանածները», այն փաստը, որ որոշ կատեգորիաների հակումներ չեն հասնում հանրային կարծիքի կարգավիճակին, այլ կերպ ասած՝ ձևավորված կարծիքը, որը հավակնում է ունենալ արտահայտման կապակցվածություն, հանրային ար-

ձագանք, ընդունում և այլն, չպետք է ստիպի եզրահանգել, թե իբր ճգնաժամի պայմաններում կարծիք չունեցող մարդիկ կընտրեն ինչպես պատահի: Եթե հարցը նրանց համար քաղաքականապես է ձևակերպված (աշխատավարձի խնդիրը, աշխատողների համար աշխատանքի պարբերականության խնդիրները), ապա նրանք ընտրություն կկատարեն՝ քաղաքական իրազեկության տերմիններից ելնելով: Եթե խոսքը գնում է մի խնդրի մասին, որը նրանց համար քաղաքականապես սահմանված չէ (ներձեռնարկատիրական հարաբերությունների ճնշողականությունը), կամ եթե այն ձևավորման ճանապարհին է, ապա նրանք խորապես ուղղորդված կլինեն ենթագիտակցական համակարգի կարգաղրմամբ, որն ամենատարբեր ոլորտներում կողմնորոշում է նրանց ընտրությունը՝ գեղագիտականից կամ սպորտից սկսած մինչև տնտեսագիտական: Միևնույն ժամանակ հասարակական կարծիքի ուսումնասիրության ավանդական ձևն անտեսում է ճնշման խմբերն ու հնարավոր նախատրամադրվածությունները, որոնք կարող են չարտահայտվել բացահայտ դիսկուրսի ձևով: Ահա թե ինչու այն ի վիճակի չէ ստեղծելու նվազագույն ողջամիտ կանխատեսում այն մասին, թե ինչ տեղի կունենա ճգնաժամային իրավիճակում:

Պատկերացնենք կրթական համակարգին վերաբերող մի այսպիսի խնդիր. «Ի՞նչ կարող եք ասել Էդգար Ֆորի քաղաքականության մասին»: Սա շատ մոտ է ընտրական կարծիքի ուսումնասիրման ժամանակ տրվող հարցին, այն իմաստով, որ գիշերը բոլոր կատուներն էլ սև են երևում. մեծ հաշվով, չիմանալով ինչի հետ, բոլորն էլ համաձայն են: Տեղյակ են, թե ինչ էր նշանակում Ազգային ասամբլեայում Ֆորեի օրենքին միաձայն քվեարկություն ասվածը: Այնուհետև հարցնում են. «Կո՞ղմ եք լիցեյում քաղաքագիտություն առարկայի ներմուծմանը»: Այստեղ նկատում ենք մի պարզորոշ տարակարծություն: Նույնը՝ «Կարո՞ղ են դասախոսները գործադուլ անել» հարցի ժամանակ: Այդ

դեպքում աշխատավոր դասի ներկայացուցիչներն իրենց յուրահատուկ քաղաքական իրազեկության փոխանցմամբ գիտեն ինչ պատասխանել: Կարող ենք շարունակել հարցնել. «Պե՞տք է փոփոխեն ծրագրերը: Կո՞ղմ եք շարունակական բնույթ կրող վերահսկմանը: Կո՞ղմ եք ուսուցիչների խորհրդում աշակերտների ծնողների ներկայացմանը: Հավանություն տալի՞ս եք քննության վերացմանը» և այլն: «Հավանություն տալի՞ս եք Էդգար Ֆորեին» հարցի ներքո տեղավորելով վերը նշված բոլոր հարցերը՝ մարդիկ միանգամից դիրքորոշում բռնեցին խնդիրների ամբողջության վերաբերյալ, որոնց առաջադրման համար լավ կազմած հարցաթերթը պետք է բաղկացած լիներ վաթսունից ոչ պակաս հարցից, և դրանցից յուրաքանչյուրի դեպքում կգտնվեին բոլոր ուղղություններով պատասխանների փոփոխական դրսևորումներ: Մի դեպքում կարծիքների բաշխման մեջ, սոցիալական հիերարխիայում կգրանցվեր դրական կապ, մյուսում՝ բացասական, որոշ դեպքերում կապը շատ ուժեղ է, մյուսներում՝ թույլ, կամ էլ ոչ մի կապ չէր լինի: Բավական է մտածել, որ ընտրությունները ներկայացնում են այնպիսի հարցերի սահմանային դեպքը, ինչպես, օրինակ, «Հավանություն տալի՞ս եք Էդգար Ֆորեին» հարցը՝ հասկանալու համար, որ քաղաքական սոցիոլոգիայի մասնագետները կարող էին նշել հետևյալը՝ սոցիալական պրակտիկայի գրեթե բոլոր բնագավառներում, սոցիալական դասակարգի և պրակտիկաների կամ կարծիքների միջև դիտարկվող կապը շատ թույլ է, երբ խոսքը գնում է ընտրական վարքի մասին: Ընդ որում, այդ կապն այնքան թույլ է, որ առանց տատանվելու եզրակացնում են սոցիալական դասի և աջակողմյան կամ ձախակողմյան թևի օգտին քվեարկելու փաստի միջև կապի բացակայության մասին: Եթե մտածում եք, որ ընտրությունների ժամանակ մեկ սինկրետիկ հարցով ընդգրկում են այն, ինչ տանելի կերպով կարելի է ըմբռնել միայն երկու հարյուրի հասնող հարցերով, ընդ որում, պատասխաններում ոմանք կչափեն սանտիմետ-

րերով, մյուսները՝ կիլոմետրերով, որ թեկնածուների ռազմավարությունը կառուցվում է հարցերի ոչ հստակ տրման վրա և տարբերությունների առավելագույնս քողարկման միջոցով տատանվողների ձայները շահելու նպատակով, ինչպես նաև բազում այլ պատճառներով, ապա կեզրակացնեք, որ միգուցե քվեարկության և սոցիալական դասի միջև առկա կապի ավանդական հարց պետք է հակառակ կողմից դնել: Հավանաբար պետք է ինքդ քեզ հարցնես, թե ինչպես է պատահում, որ այդ, թեկուզ և թույլ, կապը, չնայած ամեն ինչի, արձանագրում են: Ինչպես նաև հարցնել ընտրական համակարգի նշանակության մասին, մի գործիքի, որն իր տրամաբանությամբ ձգտում է հարթեցնել կոնֆլիկտներն ու տարակարծությունը: Միանշանակ է, որ վերլուծելով հանրային կարծիքի ուսումնասիրմանն ուղղված աշխատանքը՝ կարող ենք գաղափար կազմել կոնկրետ այս տիպի հասարակական կարծիքի ուսումնասիրման գործառնման եղանակի, ընտրությունների վերաբերյալ, ինչպես նաև իրենց թողած արդյունքի մասին:

Կարճ ասած՝ հանրային կարծիք գոյություն չունի, համենայն դեպս այնպես, ինչպես որ պատկերացնում են բոլոր այն մարդիկ, որոնք շահագրգռված են հաստատելու դրա գոյությունը: Ես նշեցի, որ մի կողմից կան հստակորեն ձևակերպված, մոբիլիզացված կարծիքներ և ճնշող խմբեր, որոնք մոբիլիզացված են բացահայտորեն բանաձևված *շահերի* համակարգի շուրջ, և մյուս կողմից՝ հակվածություններ, որոնք, ըստ սահմանման, կարծիքներ չեն, եթե դրա տակ հասկանում ենք, ինչպես արեցի այս ողջ վերլուծության ընթացքում, այն ամենը, ինչ կարող է ձևակերպվել կապվածության նկատմամբ որոշակի պահանջով: Կարծիքի այդ սահմանումը կարծիքի վերաբերյալ իմ կարծիքը չէ: Սա ընդամենը սահմանման պարզաբանումն է, որն օգտագործվում է հանրային կարծիքի ուսումնասիրման ժամանակ, երբ ձևակերպված կարծիքների շուրջ մարդկանցից պահանջում

են ունենալ դիրքորոշում ու երբ վիճակագրական պարզ միավորման (agrégation) ճանապարհով ստեղծված կարծիքի շնորհիվ ստեղծում են արտեֆակտ, ինչպիսին հանրային կարծիքն է: Վերջինս այն իմաստով, ինչ թաքնված ձևով հաղորդվում է նրանց կողմից, որոնք հարցումներ են իրականացնում, կամ էլ որոնք օգտագործում են դրանցից ստացված արդյունքները, պարզապես ասում եմ, որ այդ իմաստով հանրային կարծիք գոյություն չունի:

Այն, ինչ ասել կուզի[11]

Սոցիոլոգի դերը, եթե անգամ նա դա ունի, կայանում է ավելի շուտ զենքեր, քան թե դասեր տրամադրելու մեջ:

Եկա մասնակիցը դառնալու մի մտորման ու փորձելու սատարել նրանց, ովքեր իրենց պրակտիկայում բախվել են որոշակի քանակի մանկավարժական խնդիրների, և տրամադրել գործիքներ, որոնք հետազոտությունն առաջարկում է այդ խնդիրները մեկնաբանելու ու հասկանալու համար:

Ուստի, եթե իմ ելույթը հիասթափեցնող է, երբեմն անգամ ընկճող, ապա դա նրանից չէ, որ հուսալքելուց ես ինչ-որ հաճույք եմ ստանում, այլ ընդհակառակը: Հենց սա է իրականության դրսևորումների վերաբերյալ ունեցած գիտելիքը հանձնում ռեալիզմին: Սոցիոլոգի մասնագիտության գայթակղություններից մեկն այն է, որ հենց իրենք՝ սոցիոլոգներն իրենց անվանեցին սոցիոլոգիզմ, այսինքն՝ օրենքներն ու պատմական օրինաչափությունները ձևափոխել հավերժական օրենքների, որտեղից էլ և սոցիոլոգիական հետազոտության արդյունքների ներկայացման բարդությունը: Մշտապես պետք է տեղավորվել երկու դերերի միջև՝ մի կողմից փնթփնթան անձի և մյուս կողմից՝ ուտոպիստ հանցակցի:

Այսօր, այստեղ, որպես մտորմանս մեկնակետ կցանկանայի ստանալ մեր հանդիպման առթիվ ձեր կողմից պատրաստված հարցաշարը: Եվ սա նպատակ ունի ելույթիս տալ հնարավորինս կոնկրետ հիմնավորում և խուսափել (ինչն ինձ իսկական հաղոր-

[11] Լիոժում 1977 թ. հոկտեմբերի 30-ին կայացած AFEF (Association française des professeurs de français (Ֆրանսերեն լեզվի դասավանդողների ֆրանսիական ասոցիացիայի)) համագումարում մտքերի փոխանակության արձանագրությունը: Լույս է տեսել “Le français aujourd'hui” ամսագրի 41-րդ համարում, մարտ, 1978 թ., էջ 4-20, և 41-րդ հավելվածի 51-57 էջերում: Վերահրատարակվել է “Questions de sociologie” գրքում, “Minuit” հրատարակություն, 1980 թ., էջ 95-112: Աղբյուրը՝ http://www.homme-moderne.org/societe/socio/bourdieu/varia/cequep.html, այցելվել է 27.04.2017 թ. (թարգմ.):

դակցության պրակտիկ պայմաններից մեկն է թվում) խոսքի մենաշնորհ ունեցողի, ամբողջովին իր հարցերի, շահերի կամայականությունը պարտադրողի տպավորություն թողնելուց: Խոսքի պարտադրման կամայականության գիտակցումն այսօր ավելի ու ավելի հաճախ ստիպված ընդունում է նա, ով խոսքի մենաշնորհ ունի, քան թե նրանք, ովքեր դրան ենթարկվում են: Ինչո՞ւ ենք որոշակի պատմական հանգամանքներում, որոշակի սոցիալական իրավիճակներում, վերստին սրտնեղությամբ կամ դժվարությամբ, զգում բռնության այդ գործողությունը, որը մշտապես ներգրավված է իշխանական դիրքում ելույթ ունենալու մեջ կամ, եթե ուզում եք, լիազորված իրավիճակում՝ որպես վերջինիս մոդել հանդես գալով մանկավարժական աշխատանքը:

Այսպիսով՝ սեփական աչքերում այս անհանգստությունը փարատելու համար, որպես սկիզբ, ընդունում եմ ձեր միջից, մի խումբ մարդկանց կողմից իրապես առաջադրված հարցերը, որոնք կարող են հնչեցվել մյուսներիդ կողմից նույնպես:

Հարցերը վերաբերում են գրավորի և բանավորի փոխհարաբերություններին ու կարող են ձևակերպվել հետևյալ կերպ. «Կարո՞ղ է բանավորը դասավանդվել»: Սա հին հարցի նորովի ձևակերպումն է, որը հանդիպում ենք Պլատոնի մոտ. «Կարո՞ղ է արդյոք վարպետությունը դասավանդվել»: Սա լիովին առանցքային հարց է: Կարո՞ղ են սովորեցնել ինչ-որ բան: Կարո՞ղ են սովորեցնել մի բան, ինչը չի սովորեցվում: Կարո՞ղ են արդյոք դա սովորեցնել նրանով, ինչով սովորում են, այսինքն՝ լեզվով: Նմանատիպ հարցադրումները ժամանակ չեն ճանաչում: Եթե, օրինակ, դա առաջ է քաշվում Պլատոնի դիալոգում, ապա կարծում եմ՝ այո, որովհետև դասավանդման հարցը տրվում է հենց դասավանդմանը, երբ վերջինս ենթակա է քննարկման: Դասավանդումը ճգնաժամի մեջ է, այդ իսկ պատճառով առաջ է քաշվում դասավանդման հարցը: Նորմալ ժամանակ, օրգանական կոչվող փուլերում, դասավանդումն ինքն իրեն հարցեր չի ուղղում: Դա-

սավանդման չափազանց լավ կամ չափազանց վատ աշխատող առանձնահատկություններից է նրանում վստահ լինելը, ունենալ այնպիսի երաշխիք (պատահական չէ, որ լեզվի առումով ենք խոսում «երաշխիքի» մասին), ինչը բխում է ոչ միայն լսված, այլև հասկացված լինելու համոզվածությունից. համոզվածություն, որը ցանկացած իշխանական կամ լիազորված լեզվի առանձնահատկությունն է: Այս հարցը ոչ թե ժամանակավրեպ է, այլ պատմական: Հենց այս պատմական իրավիճակի վերաբերյալ էլ կցանկանայի խորհրդածել: Այս վիճակը կապված է մանկավարժական գնահատականի, կրթական համակարգի ու, ինչպես դրան անվանում են, գլոբալ հասարակության փոխհարաբերությունների, այսինքն՝ սոցիալական դասերի, լեզվի, կրթական ինստիտուտի վիճակի հետ: Կցանկանայի փորձել ցույց տալ, որ լեզվի դպրոցական կիրառման հարցերից սկսած՝ կարող են միևնույն ժամանակ առաջադրել նաև լեզվի սոցիոլոգիային (կամ հասարակալեզվաբանությանը), ինչպես նաև կրթական հաստատություններին վերաբերող ավելի ֆունդամենտալ հարցեր: Ինձ իսկապես թվում է, որ հասարակալեզվաբանականն ավելի արագ խույս կտար վերացարկումից, եթե նա խորհրդածեր շատ որոշակի, բայց և շատ օրինակելի կրթական տարածքի մասին, որը տրվեց խիստ յուրահատուկ օբյեկտի՝ լեզվի կրթական օգտագործման համար:

Սկսեմ հարցերի առաջին խմբից՝ մտադի՞ր եք սովորեցնել բանավորը, ինչպիսի՞ դժվարությունների հանդիպեցիք, հանդիպեցի՞ք արդյոք խոչընդոտների, վիրավորվո՞ւմ եք աշակերտների պասիվությունից... Միանգամից ցանկացա հարցնել՝ դասավանդել բանավո՞ր: Բայց *ինչպիսի՞* բանավոր:

Ինչպես բոլոր բանավոր, այնպես էլ գրավոր դիսկուրսներում կա ենթադրելի մի բան: Գոյություն ունի կանխադրույթների ամբողջություն, որը յուրաքանչյուրն առաջ է քաշում՝ այդ հարցադրումն անելով: Հաշվի առնելով, որ մտավոր կառուցվածքները

խորապես յուրացված սոցիալական կառուցվածքներ են, բանավորի ու գրավորի հակադրման մեջ ունեն ներթափանցման բոլոր հնարավորությունները, լիովին դասական հակադրություն անկեղծի ու վուլգարի, իմաստունի ու հայտնիի միջև, այնպես որ բանավորն ունի նշանակալի հնարավորություններ համապատասխանելու ողջ պոպուլիստական մթնոլորտին: Դասավանդել բանավորը կնշանակեր սովորեցնել այդ լեզուն այնպես, ինչպես սովորեցնում է փողոցը, ինչն արդեն պարադոքսի է տանում: Այլ կերպ ասած՝ արդյո՞ք դասավանդված լեզվի բնույթն ինքնին հարց չի առաջացնում: Կամ էլ՝ արդյո՞ք այն բանավորը, որը ցանկանում են դասավանդել, պարզապես արդեն իսկ սովորեցրած բան չէ, ընդ որում, շատ անհավասար ձևով, ըստ կրթական հաստատությունների: Գիտենք, որ, օրինակ, բարձրագույն կրթության տարբեր ատյաններ բանավորը շատ անհավասար կերպ են դասավանդում. քաղաքականության համար ուսանողներ պատրաստող “Science Po”-ի[12], “l'ENA”-ի[13] նման հաստատությունները բանավոր ավելի շատ են դասավանդում և գնահատման մեջ նրան ավելի մեծ կարևորություն են տալիս, քան այնպիսինները, որոնք պատրաստում են ուսանողներ դասավանդելու կամ էլ տեխնիկական գիտելիքներ տալու նպատակով: Օրինակ՝ Պոլիտեխնիկում հակիրճ շարադրանքներ են գրում, “l’ENA”-ում անում են «մեծ պատում» ասվածը, որը լիովին աշխարհիկ խոսակցությունն է՝ պահանջելով լեզվի հետ հարաբերության մի տիպ, մշակույթի որոշակի տիպ: Պարզապես ասել ոչ ավելին, քան «դասավանդել բանավորը», իրենից որևէ նոր բան չի ներկայացնում, սակայն արդեն իսկ մեծ բան է արվում: Այդ պատումը կարող է լինել աշխարհիկ թեմաներով ինչ-որ զրույց, միջազգային համաժողովի պատում և այլն:

[12] Science Po (Institut d'études politiques) - Քաղաքական ուսումնասիրությունների կենտրոն (թարգմ.):
[13] l'ENA (École nationale d'administration) - Պետական կառավարման բարձրագույն դպրոց (թարգմ.):

Հետևաբար «Դասավանդե՞լ պատում» կամ «Դասավանդել ո՞ր մի պատումը» հարցը բավարար չէ: Պետք է նաև ինքդ քեզ հարցնես՝ ո՞վ է հստակեցնելու, թե որ մի պատումն է դասավանդվելու: Սոցիալ-լեզվաբանական օրենքներից մեկն այն է, որ տվյալ իրավիճակում օգտագործվող լեզուն ոչ միայն կախված է, ինչպես կարծում են լեզվագետները, չոմսկյան[14] տերմինաբանության իմաստով խոսողի իրազեկությունից, այլև, ինչպես ես եմ այն անվանում, լեզվաբանական շուկայից: Իմ առաջարկած մոդելի համաձայն՝ մեր ծավալած զրույցը խոսողի իրազեկության և համագործակցության «արդյունքն» է, որի շուրջ էլ տեղի է ունենում դիսկուրսը, իսկ վերջինս մասնակիորեն կախված է (որը պետք էր գնահատված լիներ ավելի խստորեն) ընդունման պայմաններից: Հետևապես ցանկացած լեզվաբանական իրավիճակ գործում է ինչպես շուկա, համաձայն որի՝ խոսողը վաճառում է իր արտադրանքը և այն ապրանքը, որը նա արտադրում է այդ շուկայի համար, ինչն էլ իր հերթին կախված է այն կանխատեսումից, որ իր ունեցած ապրանքները կստանան համապատասխան գներ: Կրթական շուկայի առումով, ուզենք թե չուզենք, հանդես ենք գալիս շահերի ու պատժամիջոցների կանխատեսումից ելնելով, որոնք վաղ թե ուշ ձեռք ենք բերելու: Սոցիալ-լեզվաբանական ամենամեծ հանելուկներից մեկն այդ տեսակ իմաստի ընդունումն է, որը պետք է իր լուծումը գտնի: Մենք երբեք լեզուն չենք սովորի առանց այն սերտելու, միևնույն ժամանակ սերտելով այդ լեզվի ընդունման պայմանները: Ասել է թե՝ սովորել որևէ լեզու նշանակում է միաժամանակ նաև սովորել, որ այդ լեզուն այս կամ այն իրավիճակում կլինի վճարովի:

Անբաժան կերպով սովորում ենք խոսել և աչքաչափով սահմանել կանխատեսելի այն գինը, որը կունենա մեր լեզուն կրթա-

[14] Ավրամ Նոամ Չոմսկի (ծնվ. 1928 թ.) - ամերիկացի լեզվաբան, փիլիսոփա, քաղաքական ակտիվիստ, գրող և դասախոս: Առաջ է քաշել գեներատիվ քերականության տեսությունը (թարգմ.):

կան շուկայում, ու այս առումով վերջինս տալիս է վերլուծություն իրականացնելու համար իդեալական վիճակ, այդ գինը գնահատականն է, որը շատ հաճախ ներառում է նաև նյութական արժեք (եթե Պոլիտեխնիկի ձեր ամփոփաթերթում լավ գնահատական չունեք, ապա կլինեք աղմինիստրատոր "INSEE"[15]-ում և երեք անգամ քիչ կվաստակեք...): Այսպիսով՝ ողջ լեզվաբանական իրավիճակը գործառնում է ինչպես շուկա, որում մշտապես ինչ-որ բան է փոխանակվում: Եվ անշուշտ դրանք բառերն են, բայց վերջիններս ստեղծված չեն միայն հասկացված լինելու համար, հաղորդակցման գնահատականը զուտ հաղորդակցման գնահատական չէ, այն նաև տնտեսական հարաբերություն է, որտեղ խաղարկվում է խոսողի արժեքը՝ նա լավ, թե՞ վատ խոսեց, վա՞ռ անձնավորություն է, թե ոչ, կարո՞ղ են հետն ամուսնանալ, թե ոչ...

Կրթական շուկա ոտք դրած աշակերտներն ունեն պարգևատրված լինելու հնարավորությունների կամ էլ այս կամ այն տիպի լեզվին ուղղված խոստացված պատժամիջոցների կանխատեսման հնարավորություն: Այլ կերպ ասած՝ կրթական, որչափ և լեզվաբանական իրավիճակը, որոշակի ձևով իրականացնում է մի հոյակապ գրաքննություն այն բոլորի նկատմամբ, որոնք կանխատեսում են գործից շահույթ ստանալու ու վնաս կրելու հնարավորությունների իմացությունը՝ հաշվի առնելով իրենց տիրապետության տակ ունեցած լեզվաբանական իրազեկվածությունը: Եվ որոշների լռությունը միմիայն շատ լավ հասկացված շահի դրսևորումն է:

Առաջադրված պրոբլեմներից մեկը հենց դա է, որովհետև հարցաթերթիկն ուղղված է իմանալու, թե ով է կառավարում կրթական լեզվաբանության վիճակը: Արդյո՞ք դա դասախոսի

[15] INSEE (Institut national de la statistique et des études économiques) - Վիճակագրության ու տնտեսագիտական ուսումնասիրությունների ազգային ինստիտուտ (թարգ.):

ձեռքին է: Արդյո՞ք իրապես գոյություն ունի նախաձեռնություն ընդունելության սահմանման մեջ: Կա՞ արդյոք շուկայի օրենքների տիրապետում ասվածը:

Այն բոլոր հակասությունները, որոնց մարդիկ կհանդիպեն բանավոր դասավանդման փորձառության ժամանակ, բխում են հետևյալ դրույթից՝ դասախոսի ազատությունը, սահմանելով իր դասարանում շուկայի յուրահատուկ օրենքներ, ինչը սահմանափակ է, որովհետև այն միշտ ստեղծում «կայսրություն կայսրության մեջ», մի ընդհատակյա տարածք է, որում շուկայի գերիշխող օրենքները ժամանակավորապես դադարեցված են: Ավելի հեռուն գնալուց առաջ պետք է վերհիշել կրթական շուկայի ունեցած շատ յուրահատուկ բնույթը, այն գերիշխում է ֆրանսերեն լեզվի դասախոսի հրամայական պահանջների միջոցով, ով լեգիտիմացված է ուսուցանել այն, ինչը չպետք է ուսուցանվեր, եթե բոլորն ունեին հավասար հնարավորություններ ձեռք բերելու այդ ծավալը, և ով շտկման իրավունք ունի, տերմինի կրկնակի իմաստով՝ լեզվաբանական շտկումը («հղկված լեզուն») շտկման արդյունքն է: Լեզվաբանական առարկայում երեխաների համար ուսուցիչը դատավորի պես մեկն է, ով իր երեխաների կիրառվող լեզվի նկատմամբ ունի շտկելու և պատժելու իրավունք:

Պատկերացնենք, օրինակ, մի պոպուլիստ ուսուցչի, ով հրաժարվում է շտկելու իր իրավունքից և ասում. «Ով ցանկանում է խոսել, թող խոսի, լեզուներից ամենահաճոն արվարձանային լեզուն է»: Փաստացի, այդ դասախոսը, ինչպիսին էլ որ լինեն նրա մղումները, մնում է մի տարածությունում, որն այս տրամաբանության մեջ նորմալ ձևով չի տեղավորվում, որովհետև կա շատ հաջող հնարավորություն, որ կողքիդ լավ ուսուցիչ կա, ով պահանջում է կարգապահություն, շտկում, ուղղագրություն… Բայց ենթադրենք, որ անգամ եթե բոլոր կրթական հաստատությունները վերափոխված լինեին, ապա աշակերտների, շուկայի վերաբերյալ կրած բոլոր հնարավորությունների կանխատեսումները

նրանց կներքաշեր իրականացնելու նախնական գրաքննություն, և զգալի ժամանակ կպահանջվեր, որպեսզի նրանք հրաժարվեն իրենց շտկումից և իրենց հիպերշտկումից, որը երևան է գալիս լեզվաբանական բոլոր իրավիճակներում, այսինքն՝ սոցիալապես, անհամաչափորեն (և մասնավորապես հարցման ժամանակ): Լաբովի[16] ողջ աշխատանքը հնարավոր եղավ իրականացնել միայն մի շարք խորամանկությունների գնով՝ ճգտելով ոչնչացնել լեզվաբանական արտեֆակտը, որի միակ փաստն էր «իրազեկի» և «ոչ իրազեկի», լիազորված խոսողի ու իրեն լիազորված չզգացող խոսողի հարաբերությունները: Միևնույն է, մշակույթի ոլորտում մեր իրականացրած ողջ աշխատանքն էր փորձել հաղթահարել լեգիտիմության պարտադրանքի ունեցած ազդեցությունը, որն իրականացնում է մշակույթի մասին հարցեր առաջադրելու փաստով: Վերջինիս վերաբերող հարցաթերթիկում առաջադրվում են հարցեր (որը նման է ուսումնական իրավիճակին) այնպիսի մարդկանց, որոնք զարգացած չեն մտածում, բացառում են իրենց դիսկուրսից, որը նրանց իսկապես հետաքրքրում է, և ուրեմն նրանք փնտրում են այն ամենը, ինչը կարող է նման լինել մշակույթին: Ուստի երբ հարցնում են. «Երաժշտություն սիրո՞ւմ եք», երբեք չեք լսի «Ես սիրում եմ Դալիդա» պատասխանը, այլ՝ «Սիրում եմ Շտրաուսի վալսերը», որովհետև արդի իրազեկվածությունը սա է, որն ամենից շատ նման է և ելնում է այն մտքից, ինչ սիրում են բուրժուաները: Բոլոր հանգամանքներում հեղափոխական պոպուլիստները մշտապես բախվում են շուկայի օրենքների այս տեսակ ռևանշի հետ, ովքեր, թվում է, երբեք այդքան չեն ինքնահաստատվում, որքան երբ մտածում են դրանք խախտելու մասին:

[16] Ուիլյամ Լաբով (ծնվ. 1927 թ.) - ամերիկացի լեզվաբան, համարվում է սոցիալ-լեզվաբանության հիմնադիրներից մեկը, ով նաև ստեղծել է այդ դիսցիպլինի մեթոդաբանության գերակշիռ մասը (թարգմ.):

Վերադառնալով թեմայի շեղման սկզբնակետին՝ ո՞վ է սահմանում թույլատրելիությունը: Դասախոսն ազատ է հրաժարվել «խոսելու վարպետի» իր դերից, ինչը լեզվական որոշակի տիպի իրավիճակ է ստեղծում, կամ թույլ է տալիս գործել նույնիսկ իրերի տրամաբանությանը (էստրադան, աթոռը, խոսափողը, հեռավորությունը, աշակերտների հաբիթուսը), կամ թույլ է տալիս իրականացնել օրենքներ, որոնք ոչ միայն իր, այլև իր զրուցակիցների համար ստեղծում են դիսկուրսի, լեզվի որոշակի տեսակ: Բայց ո՞ր չափով դասախոսը կարող է մանիպուլյացիայի ենթարկել թույլատրելի օրենքները՝ նույնչափ երկար ժամանակ չմտնելով արտառոց հակադրությունների աշխարհ, որչափ և թույլատրելի ընդհանուր օրենքները չփոխվեցին: Ահա թե ինչու բանավորի փորձառությունը միանգամայն հրապուրիչ է: Առաջ չքաշելով կրթական համակարգին վերաբերող ամենահեղափոխական հարցերը՝ չեն կարող այս երևույթը շոշափել այդքան կենտրոնացված ու միևնույն ժամանակ այդքան ակնհայտ ձևով: Կարո՞ղ են արդյոք կրթական համակարգում փոխել լեզուն՝չփոխելով բոլոր այն օրենքները, որոնք շուկայի վերաբերյալ որոշակիացնում են տարբեր դասակարգերի լեզվաբանական ապրանքների արժեքը՝ չփոխելով լեզվաբանական կարգում առկա տիրապետման փոխհարաբերությունները, ասել է թե՝ չփոխե՞լ տիրապետման փոխհարաբերությունները:

Հասնում եմ մի զուգադրության, որը վարանում եմ սահմանել, չնայած, որ այն ինձ անհրաժեշտ է թվում, զուգադրություն ֆրանսերեն լեզվի ուսուցման ճգնաժամի և պատարագի ճգնաժամի միջև: Վերջինս ծիսականացված լեզու է, որն ամբողջովին կողավորված է (խոսքը գնում է ժեստերի և բառերի մասին), և ուրեմն հաջորդականությունը լիովին կանխատեսելի է: Լատիներենով տեղի ունեցող պատարագը սահմանափակ ձևն է այն լեզվի, որը, չլինելով հասկացված, բայց *լինելով լիազորված,* այնուամենայնիվ, որոշակի պայմանների ներքո, գործածվում է որ-

պես լեզու՝ ի բավարարումն հաղորդողների ու ընդունողների: Գտնվելով ճգնաժամային իրավիճակում՝ այդ լեզուն դադարում է գործել ու այլևս չի թողնում իր այն հիմնական ազդեցությունը՝ *ստիպել հավատալ,* ստիպել ակնածել, ստիպել ընդունել: Ստիպված լինել ընդունել, եթե անգամ դա չենք հասկանում:

Պատարագի ճգնաժամի կողմից այլևս չգործառնող լեզվի շուրջ առաջ քաշած հարցը ցույց է տալիս, որ այլևս չեն հասկանում, որին այլևս չեն հավատում: Սա է ինստիտուտի ու խոսքի միջև առկա կապի խնդիրը: Երբ որևէ լեզու ճգնաժամի մեջ է, և երբ առաջ է քաշվում որ լեզվով խոսելու հարցը, ահա հենց սա էլ ցույց է տալիս, որ ինստիտուտը ճգնաժամի մեջ է, ու որ առաջադրվում է լիազորված հեղինակության հարցը, որն իր հերթին ասում է ինչպես խոսել և տալիս է խոսելու լիազորություն:

Վերադառնալով եկեղեցու օրինակին՝ կցանկանայի հետևյալ հարցն ուղղել՝ անջա՞տ է արդյոք լեզվաբանական ճգնաժամը կրթական ինստիտուտից: Լեզվաբանական ինստիտուտի ճգնաժամը արդյո՞ք կրթական ինստիտուտի ճգնաժամի սովորական դրսևորումը չէ: Ավանդական սահմանմամբ՝ ֆրանսերենի ուսուցման համակարգն իր օրգանական փուլում, ֆրանսերեն լեզվի դասավանդումն իրենից խնդիր չէր ներկայացնում, այդ առարկան դասավանդող դասախոսը վստահ էր, նա գիտեր, թե ինչ պետք է դասավանդել ու ինչպես է պետք ուսուցանել, ծանոթացնել աշակերտներին պատրաստ լինելու լսել, այն հասկանալ, նաև հասկացող ծնողներ՝ դա հասկանալու համար: Նման իրավիճակում ֆրանսերեն լեզվի դասախոսը պատարագիչ էր, նա խորհրդանշում էր ֆրանսերեն լեզվի պաշտամունքը, պաշտպանում և պատկերում ֆրանսերեն լեզուն և դրանով սուրբ արժեքներն ավելի զորեղ դարձնում: Այդպես նա պաշտպանում էր իր սրբացված արժեքը, ինչը շատ կարևոր է, քանի որ բարոյականությունն ու հավատն իրենցից ենթադրում են իրենց իսկ սեփական հետաքրքրություններով քողարկված ենթագիտակցություն:

Եթե ֆրանսերեն լեզվի դասավանդման ճգնաժամը հրահրում է նույնատիպ անձնական դրամաներ, այնպիսի մեծ բռնություն, ինչպիսին տեսանք 1968 թ. մայիսին և դրանից հետո, այն, որ շուկայի այդ արդյունքի միջոցով, որը հենց ֆրանսերեն լեզուն է, անշուշտ որոշ մարդիկ անձնազոհաբար պաշտպանում են իրենց սեփական արժեքը, իրենց սեփական կապիտալը:

Նրանք պատրաստ են իրենց կյանքը տալ ֆրանսերենի համար... կամ դրա ուղղագրության: Ինչպես և այն մարդիկ, որոնք իրենց կյանքի տասնհինգ տարիները նվիրել են լատիներենի սերտմանը, երբ իրենց լեզուն հանկարծակի հայտնվում է արժեզրկված վիճակում, ինչպես ռուսական վոխառության սեփականատերերը…

Ճգնաժամի հետևանքներից մեկն անխոս պայմանների, համակարգի աշխատանքի կանխադրույթների շուրջ հարցում անցկացնելն է: Երբ ճգնաժամը ձեռք է բերում որոշակի քանակի կանխադրույթներ, կարող են առաջ քաշել կանխադրույթների համակարգային հարց ու իրենք իրենց հարցնել, թե որը պետք է լինի լեզվաբանական իրավիճակ, որպեսզի ճգնաժամային իրավիճակում բարձրաձայնված խնդիրները չբարձրաձայնվեն: Ներկայումս առավել առաջադեմ լեզվաբանությունը նման է սոցիոլոգիային այն տեսանկյունից, որ լեզվի վերաբերյալ հետազոտության առաջնային օբյեկտը հաղորդակցման ենթադրությունների մեկնությունն է: Հաղորդակցման մեջ էականը հաղորդակցությունում չի կայանում. օրինակ՝ մանկավարժական հաղորդակցության դեպքում էականը տեղի է ունենում հաղորդակցման պայմաններում: Կրոնի դեպքում, որպեսզի ռոմանական պատարագն աշխատի, պետք է ի հայտ գան որոշակի տիպի հաղորդիչներ և որոշակի տիպի ընդունիչներ: Պետք է, որպեսզի ընդունիչները նախատրամադրված լինեն ճանաչելու հաղորդիչների իշխանությունը, որպեսզի հաղորդիչներն էլ նրանց հաշվին չխոսեն, այլ միշտ հանդես գան որպես պատվիրակ, որպես կարգված հոգևորական, և երբեք իրենց իրավունք չվերապահեն որոշել, թե

ինչ է պետք կամ չպետք է ասվի: Նույնն է նաև դասավանդման դեպքում. որպեսզի սովորական դասախոսական խոսքն ընկալվի, գործի որպես ինքնին հասկանալի խոսք, պետք է կապ լինի իշխանության-հավատի, լիազորված հաղորդչի և ընդունիչի միջև, պատրաստ ստանալ այն, ինչն ասվում է, և կարծել, որ այն, ինչը պայմանավորված է, արժանի է, որպեսզի դրա մասին խոսվի: Անհրաժեշտ է, որպեսզի ստեղծվի ընդունելու պատրաստ մի ընդունիչ, և, ի դեպ, մանկավարժական աշխատանքը չէ, որ դա պետք է ստեղծի:

Աբստրակտ ու արագ կերպով ամփոփելով՝ ասեմ հետևյալը՝ մանկավարժական իշխանության պայմաններում հաղորդակցությունը ենթադրում է լեգիտիմ հաղորդիչներ, լեգիտիմ ընդունողներ, լեգիտիմ իրավիճակ, լեգիտիմ խոսք:

Անհրաժեշտ է մի լեգիտիմ հաղորդիչ, այսինքն՝ մեկը, ով կիմանա համակարգի ենթադրելի օրենքները, և որն այս պաշտոնում ճանաչելի է ու ինքնահամալրված (coopté): Պետք է լինեն հաղորդիչների կողմից ճանաչելի ստացողներ՝ արժանի ստանալու այն, ինչը ենթադրում է, որ հաղորդիչը կունենա ոչնչացման իշխանություն, որ կկարողանա բացառել «նրանց, որոնք չպետք է այդտեղ լինեին», բայց դա էլ ամբողջը չէ: Հարկավոր են այնպիսի աշակերտներ, որոնք պատրաստ կլինեն ընդունելու ուսուցչին որպես ուսուցիչ, և ծնողներ, որոնք ուսուցչին կտան վստահության կրեդիտի չլրացված, մաքուր չեկ: Իդեալական տարբերակում պետք է նաև, որպեսզի ընդունողները հարաբերականորեն լեզվաբանորեն միատարր լինեն (ասել է թե՝ սոցիալապես), միատարր լեզվի իմացության և լեզվի ճանաչման մեջ, ու որպեսզի խմբի կառուցվածքը չգործի ինչպես գրաքննության համակարգ՝ արգելել այն լեզուն, որը պետք է օգտագործված լինի:

Ժողովրդականություն վայելող որոշ կրթական խմբերում աշխատավոր դասի ներկայացուցիչ երեխաները ունակ են թելադրել իրենց շրջապատի լեզվաբանական նորմը ու հարգանքից զրկել նրանց, որոնց Լաբովն անվանում էր խեղճեր, և որոնք

ունեն դասախոսների հետ հաղորդակցվելու համար մի լեզու, որը «ճիշտ է», այսինքն՝ կնանման ու մի քիչ էլ քծնող: Ուստի այսպես է պատահում, որ որոշակի սոցիալական կառուցվածքներում կրթական լեզվական նորմը բախվում է հականորմին (ընդհակառակը, բուրժուական գերիշխող կառուցվածքներում կողմերի հավասարության խմբի գրաքննությունը կիրառվում է այն նույն իմաստով, ինչ և դասախոսականը, «չհղկված» լեզուն ինքնաքննադատված է ու չի կարող ստեղծվել կրթական իրավիճակում):

Լեգիտիմ իրավիճակը միաժամանակ ստիպված է ներխուժել և՛ խմբի կառուցվածք, և՛ ներքինի ինստիտուցիոնալ տարածություն, որում այդ խումբը գործում է: Օրինակ՝ առկա է ինստիտուցիոնալ կարևորություն ունեցող նշանների ամբողջությունը, մասնավորապես՝ կարևոր լեզուն (վերջինիս բնորոշ է հատուկ հռետորություն, որի գործառույթն է ասել, թե հնչածներից քանիսն են կարևոր): Այդ կարևոր լեզուն իրեն այնքան լավ է դրսևորում, որ հայտնվում է ավելի շահեկան դիրքում՝ ամբիոնում, մի որևէ ընդունված վայրում և այլն: Խմբի մանիպուլյացիայի ռազմավարության շրջանակներում գոյություն ունի նաև կառուցվածքների տարածության և ինստիտուցիոնալ կարևորություն ներկայացնող նշանների մանիպուլյացիա:

Լեգիտիմ է շարահյուսական ու հնչակարգության ձևերի լեզուն, այսինքն՝ ավանդական քերականական պահանջներին համապատասխանող լեզուն, որը, բացի նրանից, ինչի մասին որ ասում է, նաև կանոնավորապես հիշեցնում, որ նա դա լավ է ասում, ու այստեղ, թույլ տվեք հավատալ, որ այն, ինչ պայմանական է, ճիշտ է, ինչը ճշմարտության փոխարեն սխալին տեղ տալու հիմնային ձևերից մեկն է: Տիրապետող լեզվի քաղաքական հետևանքներից մեկն է «Նա դա լավ է ասում, ուրեմն ճիշտ լինելու հնարավորություններ կան» խոսքը:

Կրթական համակարգի օրգանական վիճակում *միավորված համակարգ կազմող* հատկանիշների այս ամբողջությունը սահմանում է սոցիալական ընդունելությունը, այն վիճակը, որում լեզուն փոխանցվում է, այն լսելի է (այսինքն՝ հողավորված), ենթարկվելի, հասկացված (հասկանալի): Հաղորդակցությունը տեղի է ունենում սահմանին, ակնարկներով: Օրգանական իրավիճակների առանձնահատկություններից մեկն այն է, որ լեզուն ինքնին, հաղորդակցման զուտ լեզվական մասը, ձգտում է դառնալ երկրորդական...

Հանդես գալով պատարագչի դերում, որը հաճախ բաժին էր ընկնում արվեստի կամ գրականության դասախոսներին, լեզուն գրեթե ոչ այլ ինչ է, քան ձայնարկություն: Մեծարման ելույթը, օրինակ՝ արվեստի քննադատների դեպքում, իրենից մի մեծ բան չի ներկայացնում, քան լոկ «բացականչություն»: Բացականչությունը կրոնական հիմնային վորձառություն է:

Ճգնաժամային իրավիճակում այդ փոխադարձ վստահության համակարգը փլուզվում է: Այս տեսակ ճգնաժամը նման է դրամային ճգնաժամի՝ պահանջվում են բոլոր շրջանառվող արժեթղթերը, եթե դրանք հին չեն:

Այդ տարօրինակ ազատությունը ոչինչ ավելի լավ չի պատկերում, քան այն, ինչը հաղորդչին տրամադրում է համակրելի գործոնների միացում, որն է *հիպերշտկման* (*hypercorrection*) ֆենոմենը: Հակառակ *հիպերշտկմանը*, քաղքենու մասին խոսելիս բնորոշ ֆենոմեն, հիպերշտկումը հնարավոր է միայն, որովհետև նա, ով խախտում է կանոնը (օրինակ՝ Գիսկարը, ով համաձայն չէր «ունենալ» բայի անցյալ ժամանակի հետ), դրան գումարած՝ հանդես է բերում, իր լեզվի այլ ասպեկտներով հանդերձ, օրինակ, արտասանությունը, ու նաև այն ամենով, ինչ որ է, ինչ-որ անում է, որ կարող էր քաղաքավարի խոսել:

Լեզվաբանական իրավիճակը երբեք ինչպես պետք է լեզվաբանական չէ, և հարցաթերթի միջոցով առաջադրված բոլոր հարցերի մեկնման կետ էին հանդիսանում միաժամանակ սոցիալա-

կան լեզվաբանության (ի՞նչ խոսել իշխանության հետ, ինչպիսի՞ն են հաղորդակցման հնարավորությունների սոցիալական պայմանները) ու կրթական համակարգի սոցիոլոգիայի ամենահիմնական հարցերը, որոնք ամբողջությամբ կազմվում են պատվիրակության վերջին հարցի շուրջ:

Ուսուցիչը, ուզենա, թե չուզենա, իմանա, թե ոչ, և լիովին յուրահատուկ կերպով, երբ հավատում է հայտարարման խզմանը, մնում է որպես մի լիազոր, մի պատվիրակ, ով, հակադրություններ մեջ չմտնելով, չի կարող վերաասիմանել իր խնդիրը, ոչ էլ չի կարող իր ընդունողներին հակադրության մեջ չդնել այնքան երկար ժամանակ, քանի դեռ փոփոխված չեն շուկայի օրենքները, որոնց փոխհարաբերություններով պայմանավորված, բացասականորեն կամ թե դրականորեն, սահմանեց փոքր գործարքի հարաբերականորեն ինքնավար օրենքները, որոնք կարգուկանոն են մտցնում իր դասարանում: Օրինակ՝ այն ուսուցիչը, ով հրաժարվում է գնահատել կամ ուղղել իր աշակերտների լեզուն, դրա իրավունքը ունի, սակայն այդպես վարվելով՝ նա կարող է վարկաբեկել իր աշակերտների հնարավորությունները ամուսնական կամ էլ թե տնտեսական շուկայի տեսանկյունից, որտեղ շարունակվում են պարտադրվել գերիշխող լեզվաբանական շուկայի օրենքները: Մի բան, ինչը, այնուամենայնիվ, չպետք է բերի հեռացման:

Երկարաժամկետ կտրվածքով շուկայի օրենքներից բխած ինքնավար տարածք ստեղծելու միտքը նույնպես վտանգավոր ուտոպիա է, որը միանգամից չի առաջադրում այդ ուտոպիայի ընդհանրացման քաղաքական հնարավորության պայմանների հարցը:

Հարց. Անկասկած, հետաքրքիր է պրպտել լեզվաբական իրազեկություն հասկացությունը՝ գերազանցելու Չոմսկու հաղորդչի ու կատարյալ խոսողի մոդելը, միևչդեռ իրազեկման վերաբերյալ Ձեր արած վերլուծություններն այն ողջ իմաստով, ինչ

ստանում է խոսքը, երբեմն բավական հեղհեղուկ են, մասնավորապես շուկայի առումով. քիչ առաջ շուկա տերմինն օգտագործեցիք տնտեսական իմաստով, մակրո իրավիճակում, ինչպես նաև շուկան նույնականացրիք փոխանակման հետ, ու ինձ թվում է, որ այստեղ երկիմաստության պես մի բան կա: Բացի դրանից՝ բավարար չափով չեք արտացոլում այն փաստը, որ ճգնաժամը, որի մասին խոսում եք, ավելի շուտ նման է անդրճգնաժամի, որն ավելի շատ կապված է համակարգի ճգնաժամի հետ, ինչը, վերջին հաշվով, մեզ բոլորիս միավորում է: Լայն իմաստով դպրոցական տարածության կամ կրթական տարածության մեջ լեզվաբանական փոխանակման բոլոր պայմանները վերլուծելու համար պետք կլիներ նրբությունների մեջ խորամուխ լինել:

Պիեռ Բուրդիե. Վարանումից հետո նշեցի իրազեկության ու շուկայի մոդելի մասին, որովհետև ակներև է՝ ինձ լիովին պաշտպանելու համար պետք կլիներ ավելի շատ ժամանակ, ու որպեսզի ես ուղղորդված լինեի զարգացնելու շատ վերացական վերլուծություններ, ինչն այնքան էլ շատ չէր հետաքրքրի մարդկանց: Շատ ուրախ եմ, որ Ձեր հարցն ինձ թույլ է տալիս որոշ ճշտումներ մտցնել:

Շուկա բառին ես շատ լայն իմաստ եմ տալիս: Կարծում եմ՝ լիովին լեգիտիմ է օգտագործել *լեզվաբանական շուկա* արտահայտությունը՝ ներկայացնելու երկու տնային տնտեսուհիների հարաբերությունները, որոնք զրուցում են փողոցում, ինչպես և կրթական տարածությունը, հարցազրույցի ժամանակ, որի միջոցով նոր կաղապեր են հավաքում:

Հարցն այն է, որ երբ երկու հոգի խոսում են, դա նրանց իրազեկության օբյեկտիվ հարաբերությունն է, ոչ միայն լեզվաբանական իրազեկությունը (նրանց ճարտարությունը քիչ թե շատ իրականացված է օրինական լեզվով), այլև սոցիալական բանիմացության ամբողջությունը, նրանց խոսելու իրավունքը, որն օբյեկտիվորեն կախված է նրանց սեռից, տարիքից, կրոնական պատ-

կանելիությունից, նրանց տնտեսական ու սոցիալական կարգավիճակից՝ ինչպես նաև տեղեկություններից այնքան, որքան հնարավոր էր նախապես հայտնի կամ անշոշափելի տվյալներով կանխագուշակված լինեին (նա քաղաքավարի է, ունի փոքր վարդ և այլն): Այս հարաբերությունն իր կառուցվածքն է թելադրում շուկային և սահմանում գնագոյացման օրենքի որոշակի տեսակ: Գոյություն ունեն լեզվաբանական արդյունքների միկրոտնտեսություն ու մակրոտնտեսություն, ակնհայտ լինելով, որ մակրոտնտեսական օրենքների հետ հարաբերվելով՝ միկրոտնտեսությունը երբեք ինքնավար չէ: Օրինակ՝ երկլեզվի տիրապետման պարագայում նկատում են, որ խոսողը փոխում է լեզուն այնպես, կարծես դրանում ոչ մի պատահական բան չկա: Ալժիրում նկատեցի, որ մի բեարնյան գյուղում մարդիկ փոխում են լեզուն ոչ միայն ըստ քննարկվող թեմայի, այլ նաև ըստ շուկայի, ըստ զրուցակիցների միջև առկա հարաբերության: Հակվածություն ունենալով ընդունել աճող տիրապետող լեզուն այն դիրքի հետ միասին, որին լեզվական բանիմացության նախնական հիերարխիայում դիմում ենք, նրան, ում կարևոր ենք համարում, ջանում ենք հնարավորինս լավ ֆրանսերենով դիմել: Գերիշխող լեզուն էլ ավելի է գերիշխում, և գերիշխողներն էլ իրենց հերթին ավելի ամբողջական են գերիշխում շուկայի նկատմամբ: Հավանականությունը, որ խոսողն արտահայտվելու համար ընդունում է ֆրանսերենը, այնքան մեծ է, որքան և գերիշխողների կողմից տիրապետվող լեզվական շուկան, օրինակ՝ պաշտոնական իրավիճակներում: Եվ կրթական իրավիճակը պաշտոնական համաձայնությունների շարքի միայն մի մասն է կազմում: Այս վերլուծության մեջ տնտեսագիտություն չկա: Խոսքն այն մասին չէ, որ տնտեսական իմաստով ողջ շուկան շուկա է: Բայց և չպետք է այլևս ասել, որ չկա այնպիսի լեզվաբանական շուկա, որն ուսուցանում է միայն, շատ, թե քիչ հեռու, տնտեսական իմաստներ:

Ինչ վերաբերում է հարցի երկրորդ մասին, ապա նա առաջադրում է գիտության իրավունքի խնդիրն առ վերացարկում: Հաշվի չեն առնվում մի շարք բաներ, ու աշխատում ենք մի տարածության մեջ, որն այդպես ձևակերպվեց:

Հարց. Ձեր կողմից սահմանված առանձնահատկությունների ամբողջությամբ պայմանավորված կրթական համակարգում, կարծում եք, ուսուցումն այնուամենայնիվ պահպանո՞ւմ է շահույթ ստանալուն ուղղված գործելակերպը, թե ոչ: Եվ ինչպիսի՞ն այն կլիներ:

Պիեռ Բուրդիե. Դա շատ բարդ հարց է, բայց կարծում եմ՝ այո: Եթե համոզված չլինեի, որ գոյություն ունի շահույթ ստանալուն ուղղված գործելակերպ, այստեղ չէի լինի: Իսկ եթե ավելի լուրջ, ապա վերլուծության մակարդակում կարծում եմ, որ նշածս պրակտիկ արդյունքներն իրենցից ենթադրում են գիտակցում, լեզվաբանական շուկայի յուրատեսակ օրենքների իմացություն, որի առանձնահատուկ սոցիալական դասի տեղն է, կարող են, ինչպիսին էլ որ լինի հետապնդվող նպատակը (պատրաստվել ընդունվելու բակալավր, նվիրվել ժամանակակից գրականությանը կամ լեզվաբանությանը), լիովին վերափոխել դասավանդման եղանակը:

Կարևոր է իմանալ, որ իր հատկությունների մի մասի կապիտալով լեզվաբանական արդյունքը պարտական է ընդունիչների հանրային կառուցվածքին: Նկատելու համար այդ կառուցվածքը բավական է աչքի անցկացնել դասարանում աշակերտների օրագրերը: Մի դասարանում, ուր աշակերտների երեք քառորդը աշխատավորների երեխաներ են, պետք է գիտակցել կանխադրույթ արտահայտելու անհրաժեշտությունը: Ողջ հաղորդակցությունը, որը հավակնում է լինել արդյունավետ, ենթադրում է նաև այն բանի գիտակցումը, ինչը սոցիոլոգներն անվանում են կողմերի հավասարություն, ուսուցիչը դա գիտի, իր մանկավարժությունը «հաջողում է» դասարանում բախվել հակամանկավարժության, մի հակամշակույթի, վերջինս, և դա ևս ընտրություն

է, հաշվի առնելով այն, ինչ նա ցանկանում է փոխանցել, կարող է պայքարել նրա հետ որոշակի սահմաններում, ինչը ենթադրում է, որ նա դրա մասին կիմանա: Այս ամենը իմանալ նշանակում է, օրինակ, իմանալ իրազեկության տարբեր ձևերի հարաբերական կշիռը: Ի թիվս ֆրանսիական կրթական համակարգում անսպասելիորեն ի հայտ եկած խորը փոփոխությունների՝ առկա են նաև որակականից քանակական ձևափոխման հետևանքներ: Որոշակի վիճակագրական շեմից սկսած՝ դասարանի ներսում աշխատավոր դասի ներկայացուցիչ երեխաների ներկայությունից դասարանի ընդհանուր մթնոլորտը փոխվում է, աղմուկի ձևերն ու դասախոսի հետ հարաբերությունները էլ են փոխվում: Այնքան բան կա, որ կարելի է ուսումնասիրել և պրակտիկորեն հաշվի առնել: Սակայն այս ամենը միայն վերաբերում է միջոցներին: Եվ փաստացի սոցիոլոգիան չի կարող վերջնական պատասխան տալ (թե ի՞նչ է պետք սովորեցնել), դրանք տարբերակված են դասարանների միջև փոխհարաբերությունների կառուցվածքով: Դասավանդման բովանդակության սահմանման մեջ առկա փոփոխությունները և անգամ ազատությունը, որը թողնված է դասավանդողներին ճգնաժամը հնարավորինս երկար պահելու համար, թանկ են գնահատում այն փաստը, որ գոյություն ունի ճգնաժամ նաև լեգիտիմ բովանդակությանը տիրապետող սահմանման մեջ, ու որ գերիշխող դասը ներկայումս կոնֆլիկտների հարթակ է այն առումով, որ արժանի է ուսուցանված լինելու:

Ես չեմ կարող (դա կլիներ զավթում, ինձ մարգարեի պես կպահեի) սահմանել դասավանդման ծրագիրը, կարող եմ պարզապես ասել՝ դասախոսները պետք է իմանան, որ պատվիրակներ են, նրանց լիազորում են, ու որ իրենց մարգարեական արդյունքները դեռևս ենթադրում են ստանալ հաստատության աջակցությունը: Այն, ինչ ասել չուզե հետևյալն է՝ նրանք չպետք է պայքարեն, որպեսզի մասնակցություն ունենան այն ձևակերպման մեջ, համաձայն որի՝ նրանք պետք է դասավանդեն:

Հարց. Դուք ֆրանսերենի դասախոսին ներկայացրիք որպես լեգիտիմ դիսկուրսի մի փոխանցչի, որը գերիշխող գաղափարախոսության ու սոցիալական դասերի արտացոլումն է՝ շատ ուժեղ «ներծծված» այդ գերիշխող գաղափարախոսության գործիքով՝ լեզվով: Չե՞ք կարծում, որ այդ սահմանումը նույնպես շատ փոքրացնող է: Բացի դրանից՝ Ձեր ներկայացրածի սկզբի ու վերջի միջև առկա է հակասություն, երբ ասում էիք, որ ֆրանսերեն լեզվի դասարանն ու բանավոր վարժությունները կարող էին նաև հասկացման վայր լինել, ու որ այդ նույն լեզուն, որը կարողանում էր լինել գերիշխող դասերի մոդելների հաղորդիչ, կարողանում էր նաև մեզ և նրանց, որոնք մեր աչքի առաջ են, տրամադրել ինչ-որ բան, որը գործիքների օգտագործման միջոցն է, որոնք էլ իրենց հերթին անհրաժեշտ գործիքներ են: Եթե ես այստեղ եմ՝ “AFEF”-ում, ապա դա լավ է, որովհետև կարծում եմ, որ լեզուն նույնպես գործիք է, որն ունի իր օգտագործման ձևը, և որը չի աշխատի, եթե ձեռք չբերենք նրա օգտագործման ուղեցույցը: Ու դա այդպես է, որովհետև մենք ի վերջո համոզված ենք, որ մեր դիսցիպլինում ավելի շատ գիտականություն ենք պահանջում: Ի՞նչ կասեք այս ամենի վերաբերյալ: Համարո՞ւմ եք, որ խոսքի բանավոր փոխանակումն ընդամենը լեգալության պատկերն է, որը միևնույն ժամանակ կլիներ սոցիալական ու քաղաքական լեգալություն: Մի՞թե դասարանը նույնպես հակադրման այն օբյեկտը չէ, որն առկա է հասարակությունում քաղաքական պայքարի ձևով:

Պիեռ Բուրդիե. Ես որևէ նման բան չեմ ասել, ինչը Դուք ինձ ստիպում եք ասել: Երբեք չեմ ասել, որ լեզուն գերիշխող գաղափարախոսությունն էր: Կարծեմ, անգամ, երբեք էլ այստեղ չեմ օգտագործել «գերիշխող գաղափարախոսություն» արտահայտությունը: Ինձ համար սա շատ տխուր թյուրիմացությունների մի մաս է կազմում, իմ ողջ ջանքն ուղղված է մտավոր ու վերբալ ավտոմատիզմը կործանելու հակառակ կողմին:

Ի՞նչ է նշանակում լեգիտիմ: Վերջինս սոցիոլոգիական բառարանից փոխառնված տեխնիկական բառ է, որը ես օգտագոր-

ծում եմ գիտականորեն, քանզի եզակի տեխնիկական բառեր են թույլ տալիս ասել, հետևաբար և մտածել, ճշգրտորեն բարդ բաներ: Լեգիտիմ է մի ինստիտուտ կամ գործողություն կամ էլ հմտություն, որը տիրապետող է ու որպես այդպիսին՝ չգնահատված, այսինքն՝ լռելյայն ճանաչված: Ուսուցիչների կողմից գործածվող այն լեզուն, որը դուք օգտագործում եք ինձ հետ խոսելիս (Դահլիճից. «Դուք էլ եք այն օգտագործում»: Անշուշտ, ես էլ եմ այն օգտագործում, բայց ժամանակս անց եմ կացնում ասելու, որ դա անում եմ:), այն լեզուն, որն օգտագործում ենք այս տարածության մեջ, գլխավորապես որպես այդպիսին, չգնահատված գերիշխող լեզու է, այսինքն՝ լեգիտիմ հայտնի լռելյայն ճանաչված: Հենց լեզուն է ստեղծում իր ազդեցությունների էական մասը՝ տպավորություն թողնելով, որ նա այն չէ, ինչ որ է: Որտեղից է առաջանում հետևյալ հարցը՝ ճի՞շտ է արդյոք, որ մենք խոսում ենք լեգիտիմ լեզվով, արդյոք այն ամենը, ինչը կարողանում ենք ասել այդ լեզվում, դրանում չի շոշափվում, անգամ եթե մենք ծառայեցնում ենք բովանդակության փոխանցման գործիքը, որը հավակնում է քննադատական լինել:

Մեկ այլ ֆունդամենտալ հարց՝ այդ գերիշխող ու չգնահատված լեզուն՝ որպես այդպիսին, այսինքն՝ լեգիտիմ ճանաչված, նմանություն չունի՞ որոշակի բովանդակության հետ, չի՞ օգտվում կշտամբողի արդյունքներից: Որոշ բաներ ասելու համար դրանք բարդ ու անհնարին չե՞ն դարձնում արդյոք այդ լեզուն: Այդ լեգիտիմ լեզուն, ի թիվս մի շարք այլ բաների, ստեղծված չէ՞ խոչընդոտելու ազատ արտահայտմանը: Ես պարտավոր չէի լինի ասել «անել ինչ-որ բանի համար» (սոցիոլոգիայի սկզբունքներից մեկն է բացառել վատթարագույնի ֆունկցիոնալիզմը. սոցիալական մեխանիզմները մաքիավելիական նախաձեռնության արդյունք չեն, նրանք շատ ավելի խելացի են, քան տիրապետողներից ամենախելացիները):

Վերցնենք կասկածի չենթարկվող մի օրինակ, կրթական համակարգում, կարծում եմ, լեգիտիմ լեզուն նման է տեքստին

տրվող որոշակի գնահատականին, որը մերժում է (տերմինի հոգեվերլուծական իմաստով) սոցիալական իրականության հետ կապը, որի մասին խոսվում է տեքստում: Եթե տեքստերն ընթերցվում են նրանց կողմից, որոնք դրանք կարդում են այնպես, որպեսզի դրանք չընթերցվեն, որովհետև մեծ մասամբ մարդիկ սովորել են խոսել մի լեզվով, որով խոսում են, որպեսզի չասեն այն, ինչ ասում են: Լեգիտիմ լեզվի առանձնահատկություններից մեկը հստակ է՝ նա իրականությունից կտրում է այն, ինչ ասում է: Կես կատակ, կես լուրջ Ժան-Կլոդ Շեվալիեն այս առումով շատ լավ է նկատում. «Բանավոր դասավանդող դպրոցը դեռևս շարունակո՞ւմ է կոչվել դպրոց: Բանավոր լեզուն, որը դասավանդվում է դպրոցում, դեռևս շարունակվո՞ւմ է համարվել բանավոր»:

Մի շատ կոնկրետ օրինակ էլ բերեմ քաղաքական ոլորտից: Ցնցված էի այն փաստից, որ միևնույն զրուցակիցները, որոնք շաղակրատելու ժամանակ քաղաքական ուղղության, աշխատողների, արհմիությունների ու նրանց տեղական մասնաճյուղերի հարաբերությունների մասին շատ բարդ քաղաքական վերլուծություններ էին անում, լիովին անզեն վիճակում էին հայտնվում, երբ պարզունակ բաներից բացի, պրակտիկորեն, ուրիշ ասելիք չունեին: Նրանց տալիս էի իմ՝ հանրային կարծիքն ուսումնասիրող հարցաթերթիկի ու նաև թեկնածուականներում առկա հարցերի պես առաջադրած հարցեր: Այսինքն՝ այնպիսի հարցեր, որոնք պահանջում են, որպեսզի նրանք ընդունեն այն ոճը, որը ենթադրում է խոսել մի մոդելի մասին այնպես, որպեսզի ճշտի կամ սխալի հարց չառաջանա: Դպրոցական համակարգը ոչ միայն սովորեցնում է մի լեզու, այլև ապահովում փոխադարձ կապն այն լեզվով, որը փոխկապակցված է իրերի, երևույթների կապի, իրական աշխարհից լիովին կտրված հաղորդակցման աշխարհում:

«Երիտասարդությունը» լոկ մի բառ է (Զրույց Անն-Մարի Մետեյեի հետ)[17]

Հարց. Ինչպե՞ս է սոցիոլոգիան դիտարկում երիտասարդների խնդիրը:

Պիեռ Բուրդիե. Սոցիոլոգի պրոֆեսիոնալ ռեֆլեքսն է հիշեցնել, որ տարիքային բաժանումները կամայական բնույթ են կրում: Դա է Պարետոյի պարադոքսը, երբ ասում էր, թե չգիտի՝ որ տարիքից է սկսվում ծերությունը, և որտեղից՝ հարստությունը: Երիտասարդության ու ծերության միջև սահմանը, փաստորեն, բոլոր հասարակությունների կռվախնճոռն է: Մի քանի տարի առաջ կարդացի հողված 16-րդ դարում Ֆլորենցիայում երիտասարդների ու պատվելի անճանց միջև առկա փոխհարաբերությունների մասին, որտեղ ցույց է տրված, թե ինչպես են ծերերը երիտասարդներին առաջարկում արիության, տղամարդկայնության (virtú)[18] և բռնության մի գաղափարախոսություն, այն, ինչն

[17] Զրույցը տպագրվել է «Երիտասարդությունը և առաջին աշխատանքը»(«*Les jeunes et le premier emploi*») *ժողովածուում*, Փարիզ, Association des Ages հրատարակություն, 1978, էջ 520-530: Վերահրատարակվել է «*Questions de sociologie*»[17] պարբերականում, Éditions de Minuit հրատարակություն, 1984 թ. (թարգմ.) http://www.homme-moderne.org/societe/socio/bourdieu/questions/jeuness.html, այցելվել է 20.04.2017:

[18] Սկիզբ է առնում դեռևս լատինական vitus բառից: Վերջինս նկարագրում է մարդու համար նախապատվելի այն որակները, որոնք կարող էին չհամընկնել ավանդաբար տրվող արժանապատվության հասկացության սահմանման հետ: Ավելի վաղ Արիստոտելը բարձրացրեց այն հարցը, թե արդյոք առաքինի մարդու արժանապատվությունն ու ողջախոհ քաղաքացու արժանապատվությունը նույն բանն են, թե ոչ: Թոմաս Աքվինացին նշում էր, որ երբեմն «կարգին քաղաքացին նա է, ով չունի լավ մարդուն հատուկ որակներ»: 16-րդ դարում ֆլորենսիացի հանրապետականները, ինչպես օրինակ Ֆրանչեսկո Գվիդոչիոնին, վերաբացահայտեցին ակտիվ քաղաքացու առաքինության դասական կոնցեպտը և այն դիտարկեցին որպես պատասխան իր քաղաք-պետության անկախության պահպանման խնդրի համար: Սակայն այս հասկացությունն ավելի շատ կապվում է Նիկոլլո Մաքիավելիի հետ, ում մոտ այն հանդես է գալիս որպես տեսականացված հղանգք, որը կենտրոնանում է ռազմական ոգու և բնակչության կամ առաջնորդի վրա: Մաքիավելլին ընդարձակեց առաքինության դասական ընկալման սահմանները կարողության, արիության ու առաջ-

իմաստությունը, ասել է թե՝ իշխանությունը պահպանելու մի ձև էր: Այս երևույթը շատ լավ է ցույց տալիս նաև Ջորջ Դուբին. միջին դարերում երիտասարդության սահմանները դարձել էին կալվածատերերի խարդավանքների առարկան, որոնք պարտավոր էին պահպանել երիտասարդ կալվածատերերի երիտասարդ, այսինքն՝ անպատասխանատու վիճակը, ովքեր ցանկանում էին ձգտել հետևողականության:

Լիովին հավասարազոր բաներ կգտնվեին ասույթներում ու թևավոր խոսքերում կամ պարզապես երիտասարդության վերաբերյալ կարծրատիպերում կամ էլ նորից փիլիսոփայությունում՝ Պլատոնից Ալեն[19], ով յուրաքանչյուր տարիքում նշում էր իրեն յուրահատուկ կիրք՝ երիտասարդության շրջանում՝ սերը, հասուն տարիքում՝ նկրտումները: Երիտասարդների ու ծերերի միջև գաղափարական բաժանումը երիտասարդներին շնորհում է որոշակի բաներ, իսկ մի շարք բաներ էլ թողնում է ծերերին: Դա շատ լավ երևում է սպորտի դեպքում, օրինակ՝ ռեգբիում, երբ մենեջերներն ու մեկնաբանողները «բիրտ երիտասարդ խաղացողներ», խելոք, բարի փառաբանման բացականչություններով ոգևորում են խաղացողներին (ուժեղ եղիր և լռիր, մի՛ մտածիր): Այս համակարգը, որն ամենուր կարելի է գտնել (օրինակ՝ սեռերի միջև փոխհարաբերություններում), հիշեցնում է, որ մեծահասակների ու երիտասարդների միջև տրամաբանական բաժանումը զուտ իրավասության հարց է, իրավասությունների (բաժանման իմաստով) կիսում: Դասակարգումն ըստ տարիքի (ինչպես նաև ըստ սեռի կամ էլ ըստ դասակարգի...) մշտապես ի հայտ է գալիս

նորդության առումով՝ արքայազնին կամ ռազմական առաջնորդին զավթելու նպատակով: Մաքիավելու համար "virtù"-ն հավասարազոր չէր բարոյական առաքինությանը, բայց դրա փոխարեն կապված էր ազգային շահին: Այն, ինչ լավ էր պետության ու առաջնորդի համար, կարող էր, քրիստոնեական իմաստով, հակառակը լինել բարոյականության տեսանկյունից (թարգմ.):

[19] Էմիլ-Օգյուստ Շարտիե (կեղծանունը՝ Ալեն, 1868-1951) - ֆրանսիացի փիլիսոփա, էսսեիստ, գրաքննադատ, հրապարակախոս, մանկավարժ: Կեղծանունը վերցրել է XV դարի ֆրանսիացի պոետ Ալենից՝ Ալեն Շարտիե (թարգմ.):

պարտադրելու սահմանափակումներ ու հաստատելու մի կարգ, որին ամեն ոք պետք է հետևի, որում յուրաքանչյուրը պետք է իր տեղը գրավի:

Հարց. Ի՞նչ նկատի ունեք՝ ասելով մեծահասակներ, չափահասներ: Նրանք, ովքեր ինչ-որ բարի՞ք են ստեղծում, թոշակառունե՞րը:

Պիեռ Բուրդիե. Երբ ասում եմ երիտասարդ/մեծահասակ, ապա այդ հարաբերությունները դիտարկում եմ առավելապես ընդհանրացված շրջանակներում: Ինչ որ մեկի նկատմամբ մշտապես մեծ ենք կամ երիտասարդ: Ահա թե ինչու բաժանումները, լինեն դրանք տարիքային խմբերում, թե սերունդների միջև, լիովին փոփոխական են ու մանիպուլյացիայի սուբյեկտ են: Ազգագրագետ Նենսի Մանը, օրինակ, ցույց է տալիս, որ Ավստրալիայի որոշակի հասարակարգերում, երիտասարդացման կախարդանքը, որը կիրառում են տարեց կանայք իրենց երիտասարդությունը վերագտնելու համար, դիտարկվում է որպես միանգամայն սատանայական երևույթ, որովհետև այն շրջանցում է տարիքների միջև առկա սահմանները, ու այդպիսով այլևս չեն իմանում՝ ով է երիտասարդ, և ով՝ մեծահասակ: Ընդամենը ցանկանում եմ հիշեցնել հետևյալը՝ միանգամայն պարզ է, որ երիտասարդությունն ու ծերությունը տրված չեն, այլ սոցիալապես կառուցակցվում են երիտասարդների ու մեծահասակների միջև բախումների արդյունքում: Սոցիալական ու կենսաբանական տարիքի միջև փոխհարաբերությունը շատ բարդ է: Եթե համեմատենք միևնույն տարում, գերիշխող դասակարգի տարբեր խմբերի ներկայացուցիչներին, օրինակ՝ Էկոլ Նորմալ (Ecole Normale), Պետական կառավարման բարձրագույն դպրոց (l'ENA)[20], Պոլիտեխնիկ (Politechnique)[21] և այլուր ընդունվող երիտասարդ ուսանողներին, ապա կտեսնենք, որ որքան մոտ են իշ-

[20] l'ENA - École Nationale d'Administration (թարգմ.).
[21] l'X - Politechnique (թարգմ.).

խաՆության բևեռին, այնքան այդ «երիտասարդները» ունեն չափահասին, մեծահասակին, ազնվականին կամ որևէ պատվավոր դեմքին բնորոշ հատկանիշներ: Երբ մտավորականից դառնում են հիմնադիր տնօրեն (PDG)[22], այն ամենը, ինչ երիտասարդ տեսք էր հաղորդում՝ երկար մազեր, ջինս և այլն, անհետանում է:

Յուրաքանչյուր դաշտ, ինչպես ցույց տվեցի նորաձևության կամ էլ արտիստական ու գրական ոլորտների վերաբերյալ, **ունի ծերության բնորոշ իր օրենքները**: Իմանալու համար, թե ինչպես են *սերունդները* բաժանվում, պետք է ծանոթ լինել դաշտի գործառնման յուրահատուկ օրենքներին, պարգևներին, որոնց համար պայքարում են, և բաժանումներին, որոնք հանդես են գալիս պայքարում («նոր ալիք», «նորավեպ», «նոր փիլիսոփաներ», «նոր դատավորներ» և այլն): Սա պարզից էլ պարզ է, բայց որը, այնուամենայնիվ, ստիպում է տեսնել, որ տարիքը կենսաբանորեն տրված բան է՝ սոցիալապես մանիպուլյացված և մանիպուլյացիայի ենթակա: Խոսել երիտասարդության՝ որպես սոցիալական միավորի, որպես հանրային շահերով առկա խմբի մասին ու փոխանցել այդ շահերը կենսաբանորեն որոշակիացված տարիքում, արդեն իսկ ինքնին ակներև մանիպուլյացիա է: Հարկ կլինի գոնե վերլուծել երիտասարդության տարբեր կատեգորիաների միջև առկա տարբերությունները, կամ ավելի կարճ տարբերակով՝ երիտասարդության *երկու* տեսակը: Օրինակ՝ համակարգայնորեն կարող էին համեմատել «երիտասարդների» կեցության պայմանները, աշխատաշուկան, աշխատաժամանակը և այլն, որոնք արդեն իսկ աշխատում են, և միևնույն տարիքի (կենսաբանական) ուսանող դեռահասներինը: Մի կողմից առկա են հազիվ թե ընտանեկան համերաշխության մեղմացրած տնտեսական աշխարհի պարտադրանքները, մյուս կողմից՝ կախվածության արհեստական աշխարհը՝ հիմնված պետական նպաստների վրա, սննդի ու հանգստի՝ ինքնարժեքից էլ ցածր

[22] PDG - Président-directeur-général (թարգմ.).

գներով, կինոյում ու թատրոնում իջեցված գներով տոմսերի հասանելիությունը և այլն: Կգտնենք համանման տարբերություններ գոյություն ունեցող բոլոր գերակա ոլորտներում, օրինակ՝ վատ հագնված, չափազանց երկար մազերով լակոտներ, որոնք շաբաթ երեկոյան զբոսնում են իրենց ընկերուհու հետ շարքից դուրս եկած մոպեդով, ու որոնց էլ հենց բռնում է ոստիկանությունը:

Այլ կերպ ասած՝ լեզվի ահռելի չարաշահում է միևնույն հայեցակարգի (կոնցեպտի) ներքո կարողանալ ներառել կատեգորիայի մեջ սոցիալական աշխարհներ, որոնք գործնականում որևէ ընդհանուր բան չունեն: Մի դեպքում ունենք, իր բուն իմաստով, դեռահասների աշխարհ, այսինքն՝ ժամանակավոր անպատասխանատվության, այս «երիտասարդները» գտնվում են սոցիալապես չեզոք գոտում (no man's land), նրանք չափահաս են որոշակի բաների համար և երեխա՝ մի շարք այլ բաների, այսինքն՝ երկուսից էլ ունեն: Ահա թե ինչու բուրժուական դասին պատկանող բազմաթիվ չափահասներ երազում են երկարաձգել պատանեկությունը: Դա *«Զգացմունքների դաստիարակություն»* վեպի գլխավոր հերոս Ֆրեդերիկի կոմպլեքսն է, որը հավերժացնում է պատանեկությունը: Այսինքն՝ «երկու երիտասարդությունները» ներկայացնում են ոչ այլ ինչ, քան երկու բևեռներ, «երիտասարդներին» ուղղված երկու ծայրահեղ հնարավորությունների դաշտեր: Տեվենոյի[23] աշխատանքում ցույց են տրված այդ ծայրահեղ դիրքերի միջև՝ բուրժուա ուսանողի և մյուս ծայրում գտնվող երիտասարդ բանվորի, որն առ այսօր անգամ պատանեկություն չունի, առկա բոլոր միջանկյալ դիրքերը:

Հարց. Արդյո՞ք կրթական համակարգի վերափոխումը չէր, որ շարունակականության պես մի բան հաղորդեց այնտեղ, որտեղ սոցիալական դասերի միջև առկա էր առավել հստակ տարբերություն:

[23] Լորան Տեվենո (ծնվ. 1949) - ֆրանսիացի տնտեսագետ և սոցիոլոգ (թարգմ.):

Պիեռ Բուրդիե. Տարբեր դասերին պատկանող երիտասարդների միջև հակադրությունների աստիճանական վերացման ֆակտորներից մեկն այն է, որ տարբեր սոցիալական դասեր համաչափորեն հավանություն տվեցին միջնակարգ կրթությանը, և որ, միևնույն ժամանակ, երիտասարդների (կենսաբանորեն) մի մասը, որը մինչ այդ պահը չգիտեր՝ ինչ ասել է պատանեկություն, բացահայտեց ժամանակավոր կարգավիճակ՝ «կիսաերեխա, կիսաչափահաս», «ոչ երեխա, ոչ չափահաս»: Կարծում եմ, որ սա շատ կարևոր սոցիալական փաստ է: Ըստ երևույթին, անգամ 19-րդ դարի ուսանողական միջավայրից առավելապես հեռացած վայրերում, այսինքն՝ փոքրիկ գյուղում գյուղացիների, արհեստավորների տղաները, ովքեր գնում են տեղի հանրակրթական քոլեջ, անգամ այդ դեպքում հարաբերականորեն երկար ժամանակով դեռահասները աշխատանքի են տեղավորվում մի տարիքում, երբ թվում է, թե նրանք արդեն աշխատել են որևէ տեղ, որը սոցիալական աշխարհի նկատմամբ գրեթե արտաքին դիրքերում սահմանում է դեռահասի վիճակը: Կարծում եմ՝ դեռահասի կացության ամենաուժեղ հետևանքներից մեկը բխում է նման տիպի անջատ գոյությունից, որը նրան *սոցիալապես խաղից դուրս* վիճակում է թողնում: Իշխանության համար կադրեր պատրաստող բարձրագույն ուսումնական հաստատությունները (grande école), մասնավորապես խոշորները, երիտասարդներին տեղավորում են մարդկանցից հեռու ուսումնական հաստատություններում, մենաստանի պես վայրերում, որտեղ նրանք մենակյաց կյանք են վարում, ուր աշխարհից հեռացած՝ նահանջում են՝ ամբողջ ժամանակ նախապատրաստվելով ավելի «բարձր գործառույթների», նրանք այնտեղ զբաղված են շատ անհիմն բաներով, այն ամենով, ինչ անում են բուհում՝ ջուր ծեծելով: Մի քանի տարուց գրեթե բոլոր երիտասարդները հնարավորություն ունեցան հասնելու ավել կամ պակաս ամբողջապես զարգացած և, ամենից առաջ, ավել կամ պակաս երկար ժամանակով այդ

փորձառությանը: Որքան էլ կարճ ու մակերեսային լինի փորձառությունը, միևնույն է, այն որոշիչ է, որովհետև բավարար է ինչ-որ չափով «ակնհայտությունների» հետ խզում առաջացնելու համար: Հայտնի է անչափահաս տղայի հետ կապված մի դեպք, ով ցանկացավ որքան հնարավոր է շուտ իջնել հանքահոր, որովհետև դա է չափահասների աշխարհ տանող նրա ճանապարհը (Դեռ այսօր էլ աշխատավոր դասին պատկանող պատանիները ցանկանում են լքել դպրոցն ու ընդունվել աշխատանքի շատ վաղ տարիքում, որպեսզի հնարավորինս շուտ ստանան չափահասի կարգավիճակ և ձեռք բերեն տնտեսական այն հնարավորությունները, որոնց մասնակիցն է նա դառնում: Փող ունենալու հանգամանքը շատ կարևոր է ընկերների, աղջիկների հետ հարաբերություններում: Կարողանալ դուրս գալ ընկերների և աղջիկների հետ, ասել է թե՝ լինել ճանաչված ու ընդունված որպես «տղամարդ»: Դա աշխատավոր դասի ներկայացուցիչ երեխաների շրջանում անհանգստություն առաջացնող այն գործոններից մեկն է, որն իր հետ բերում է երկարատև դպրոցական ուսուցումը): Այսինքն՝ «ուսանողի» տեղում գտնվելու փաստը դրդում է բազմաթիվ բաների, որոնք կրթական գործընթացի որոշիչ գործոններն են: Նրանք ունեն տոպրակով փաթաթած գրքերի իրենց կապոցը, աղջկա հետ շաղակրատելով՝ նստում են իրենց մոպեդը, աշխատանքից դուրս կապվում են իրենց հասակակից տղաների ու աղջիկների հետ, իսկ տանը, սովորելու պատճառաբանությամբ, ազատված են նյութական հոգսերից (կարևոր գործոն է, որ աշխատավոր դասի ներկայացուցիչները համաձայնվում են նմանատիպ լուռ պայմանավորվածությանը, ինչը բերում է ուսանողների՝ խաղից դուրս վիճակում հայտնվելուն):

Կարծում եմ, որ խաղից դուրս գտնվելու խորհրդանշական վիճակը նույնպես ունի իր կարևորությունը, քանի որ կրկնապատկում է դպրոցի հիմնարար ազդեցություններից մեկը՝

ձգտումների մանիպուլյացիան: Միշտ մոռանում են, որ դպրոցը միայն ուսում, գիտելիք, տեխնիկական հմտություններ ստանալու վայր չէ: Այն նաև կոչումներ տվող հաստատություն է, այսինքն՝ իրավունքները բարձրաձայող և միևնույն ժամանակ ձգտումների մասին վստահեցնող վայր: Նախկին կրթական համակարգը պակաս խոչընդոտներ էր ստեղծում, քան խճճված ձևականություններով ներկայիս համակարգը, որը մարդկանց ստիպում է ունենալ իրենց իրական հնարավորություններին գրեթե անհամապատասխան ձգտումներ: Նախկինում կար ձևականությունների համեմատաբար պարզ շարք: Եթե ձգտում էին ստանալ ավելին, քան սերտիֆիկատը, գնում էին ավագ դպրոց կամ EPS[24], Քոլեջ կամ Լիցեյ, այդ ուղիները պարզորեն աստիճանակարգված էին, ու ոչ ոք որևէ կասկած չուներ դրա շուրջ: Այսօր գոյություն ունեն վատ զանազանված բազում ուղիներ, և պետք է լինել շատ փորձառու՝ խուսափելու մոլորությունից և փակուղիներից, ինչպես նաև ստորգետնյա թակարդներից ու արժեզրկված կոչումներից: Սա օգնում է խթանել իրենց իրական հնարավորություններից ձգտումների առանձնացումը:

Նախկին կրթական համակարգը ստիպում էր խորապես յուրացնել առկա սահմանները, ինչը պարտադրում էր հաշտվել պարտության հետ, կամ սահմանները՝ որպես արդարացի կամ անխուսափելի…

Օրինակ՝ ուսուցիչները և ուսուցչուհիները մարդիկ էին, որոնց ընտրում և սովորեցնում էին, գիտակցաբար թե անգիտակցաբար, այնպես, որ նրանք կտրված լինեին գյուղացիներից ու բանվորներից՝ մնալով լիովին զատված միջնակարգ դպրոցում դասավանդողներից:

Այսօր, երբ համակարգը տալիս է լիցեյում սովորողի կարգավիճակ այն դասի ներկայացուցիչ երեխաներին, որոնց համար նախկինում միջնակարգ կրթությունը լիովին անհասանելի

[24] EPS (École primaire supérieure) - Բարձրագույն նախնական դպրոց (թարգմ.):

էր, այն համակարգը, որը քաջալերում է երեխաներին ու նրանց ընտանիքին, ակնկալում էր այն, ինչը կրթական համակարգը ժամանակին երաշխավորում էր լիցեյի աշակերտներին, երբ նրանց հասանելի չէին այդ հաստատությունները: Մուտք գործել միջնակարգ կրթության դաշտ նշանակում է ոտք դնել այնպիսի ճգտումների դաշտ, որոնք արձանագրվել էին համակարգի նախորդ շրջանում, գնալ լիցեյ նշանակում է հագնել ճտքավոր կոշիկ, ունենալ ճգտում դառնալու լիցեյի դասախոս, բժիշկ, փաստաբան, նոտար, ձեռք բերել այնքան պաշտոններ, որքան կարող էր առաջարկել լիցեյը երկու պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում: Այսպիսով, երբ աշխատավոր դասին պատկանող երեխաները համակարգի մեջ ընդգրկված չէին, համակարգը նույնը չէր: Հետևապես, կա պարզ արժեզրկման արդյունք, ինչպես նաև «սոցիալական որակի» արժեթղթեր պահողների փոփոխության փաստ:

Կրթության արժեզրկման հետևանքներն ավելի բարդ են, որի մասին սովորաբար չեն բարձրաձայնում: Փաստն այն է, որ որակավորումն արժի այնքան, որքան և իր կրողը: Այն որակավորումը, որը երբ հաճախակի է տրվում, արժեզրկվում է, կորցնում է իր արժեքը, որովհետև դառնում է հասանելի «սոցիալական արժեք չունեցող» մարդկանց համար:

Հարց. Որո՞նք են այդ արժեզրկման հետևանքները:

Պիեռ Բուրդիե. Այն երևույթները, որոնք ես հենց նոր նկարագրեցի, ստիպում են, որպեսզի համակարգում օբյեկտիվորեն գրանցված ճգտումները, որոնք գոյություն ունեին նախկին համակարգի պայմաններում, հետընթաց ապրեն: Անհամապատասխանությունը ճգտումների, որոնց կրթական համակարգը հավանություն է տալիս բոլոր արդյունքներով, որոնք ես բարձրաձայնեցի, ու հնարավորությունների միջև, որոնք նա իսկապես երաշխավորում է, հիասթափության ու կոլեկտիվ մերժման սկզբունքի մեջ է, որը նախորդ շրջանում ընդդիմանում էր կոլեկ-

տիվ անդամակցությանը (ինչը ես նշեցի՝ անչափահաս որդու հետ կապված) և ժամանակից շուտ օբյեկտիվ հնարավորությունների ենթարկմանը, որը տնտեսության լավ գործառնման պարտադիր պայմաններից մեկն է:

Դա արատավոր շրջանի խզման պես մի բան է, որը ստիպում էր անչափահաս տղաներին, անգամ առանց մտածելու, ցանկանալ իջնել հանքահոր, ինչը կարող էին և չանել: Ինքնստինքյան հասկանալի է, որ այն, ինչը ես այստեղ նկարագրեցի, չի վերաբերում ողջ երիտասարդությանը, կան դեռևս մի խումբ պատանիներ, հատկապես բուրժուական դասին պատկանող, որոնք, ինչպես նախկինում, գտնվում են շրջանի մեջ, տեսնում այնպես, ինչպես նախկինում, ցանկանում են հաճախել ավագ դպրոց, MIT[25] կամ Հարվարդի բիզնես դպրոց, մասնակցել այն բոլոր մրցումներին, որոնք կարելի է պատկերացնել, ինչպես նախկինում:

Հարց. Աշխատավոր դասի այդ մանկահասակ տղաները հայտնվո՞ւմ են աշխատաշուկայի անհամապատասխանությունների շրջանում:

Պիեռ Բուրդիե. Կարող են բավականին լավը լինել՝ կրթական համակարգում կտրված լինելու համար աշխատանքի կեսից, որպեսզի կարողանան գտնել աշխատանք կրթական հաստատության անվանը համապատասխան (դա 1880 թ. պահպանողական գրականության հին թեմաներից մեկն էր, որը խոսում էր բակալավրի աստիճան ստացած (bacheliers) գործազուրկների մասին և զգուշանում հնարավորությունների ու ձգտումների շրջանի խզման հետևանքներից և կապակցված ակնհայտություններից): Կարող են կրթական համակարգում լինել շատ դժբախտ մեկը, զգալ լիովին օտար ու մասնակիցը դառնալ, չնայած ամեն ինչի, կրթական այդ ենթամշակույթի տեսակին, միա-

[25] MIT (Massachusetts Institute of Technology) - Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ (թարգմ.):

նալ պարերեկույթներում հանդիպող, արդեն իսկ ուսանողի ոճ որդեգրած, և որոնք բավականաչափ ներգրավված են այդ կյանք իրենց ընտանիքներից կտրված լինելու համար (որը նրանց այլևս չի հասկանում, ու որին այլևս չեն հասկանում. «Այն բոլոր հնարավորություններով, որ նրանք ունեն»), աշակերտների խմբին և, մյուս կողմից՝ աշխատանքի նկատմամբ ունենալ անհանգստության, հուսահատության պես մի բան: Փաստորեն, ինչպես շրջանի խզման արդյունքը, չնայած ամեն ինչի, կա նաև այն բարդ գիտակցումը, թե ինչ է կրթական համակարգը խոստանում որոշ մարդկանց, անգամ պարտության միջոցով այն բարդ գիտակցումը, որ կրթական համակարգը նպաստում է արտոնությունների վերարտադրմանը:

Տասը տարի է, ինչ գրել եմ հետևյալի մասին. որպեսզի աշխատավոր դասի ներկայացուցիչները կարողանան բացահայտել կրթական համակարգի՝ որպես վերարտադրման գործիքի գործառնական բնույթը, անհրաժեշտ է, որպեսզի այդ դասի ներկայացուցիչներն անցնեն կրթական համակարգի միջով: Այնքան ժամանակ, որքան նրանք ոչ մի գործ չունեին համակարգի հետ, բացառությամբ տարրական դպրոցի, կարող էին ընդունել, որ ուսուցումը ազատարար ուժ է, ինչ էլ որ ասեն պաշտոնական ներկայացուցիչները, ոչ մի կարծիք չունենալ այդ ամենի շուրջ: Ներկայումս աշխատավոր դասի ինչպես չափահասների, այնպես էլ պատանիների մոտ տեղի է ունենում մի հայտնագործում, որը դեռևս չի գտել իր արտահայտման լեզուն՝ ասելու, որ այդ կրթական համակարգն արտոնությունների մեքենա է:

Հարց. Ուրեմն ինչպե՞ս բացատրել երեք կամ չորս տարի ձգվող ակնհայտորեն շատ ավելի մեծ ապաքաղաքականությունը:

Պիեռ Բուրդիե. Խոռվությունը, լինի դա աշխատանքի, դպրոցի և այլնի հետ կապված, գլոբալ է. այն շոշափում է կրթական համակարգն ամբողջությամբ ու ամբողջապես, ընդդիմանում

նրան, ինչը համակարգի նախկին վիճակում պարտության փորձառություն էր (և որը, անշուշտ, չի անհայտացել, պահպանվել են միայն հարցազրույցները. «Ես չէի սիրում ֆրանսերենը, դպրոցը չէի հավանում և այլն»): Քիչ թե շատ անկանոն, անարխիստական, ընդվզող ձևերի միջոցով տեղի ունեցողն այն չէ, ինչ սովորաբար հասկացվում է որպես քաղաքականացում, այսինքն՝ քաղաքական գործիքները նախապատրաստվեցին այն արձանագրելու և ամրապնդելու համար: Դա հարցի ընդհանուր ու առավել աղոտ վերանայումն է, աշխատանքում հանդիպող անհարմարության պես ինչ-որ բան, որը հաստատուն իմաստով քաղաքական չէ, բայց կարող է լինել մի բան, որը շատ նման է քաղաքական որոշակի ձևերի, բայց և միաժամանակ չափազանց կույր ինքն իր նկատմամբ, քանզի նրանք չգտան դիսկուրսի իրենց թեմաները, և մի տարօրինակ հեղափոխական ուժ, որը կարողանում է գերազանցել այն գործիքները, որոնք վերագտնում են, օրինակ, լյումպեն-պրոլետարիատի ներկայացուցիչները կամ արդյունաբերության մեջ ընդգրկված գյուղացիական ծագման առաջին սերնդի աշխատավորները: Բացատրելու իրենց սեփական պարտությունը, այն տանելու համար՝ այս մարդիկ պարտավոր են զանգվածաբար հարցականի տակ դնել ողջ համակարգը՝ կրթական, ինչպես նաև ընտանիքի, որին նա մասնակիորեն կապված է, ու բոլոր ինստիտուտները՝ դպրոցը զինանոցի, զինանոցը գործարանի հետ նույնականացնելով: Կա ինքնաբուխ գոշիզմի[26] պես մի բան, որը լյումպեն-պրոլետարիատին ձգտում էին ասել ավելի քան մեկ հատկանիշով:

Հարց. Եվ դա ազդեցություն ունեցա՞վ սերունդների կոնֆլիկտների վրա:

---

[26] **Գոշիզմ** (ֆրանս.՝ gauchisme) - 1960-1970 ական թթ. ֆրանսիական ձախ ծայրահեղական շարժումների ընդհանրական անվանումը: Բաժանվում է երկու խոշոր խմբավորումների՝ անարխիստական և տրոցկիստական: Գոշիզմի սոցիալական բազան ֆրանսիացի ուսանողներն էին (թարգմ.):

Պիեռ Բուրդիե. Մի պարզ բան, որի շուրջ չենք մտորում՝ իրար հաջորդող սերունդների, ծնողների ու երեխաների ճգտումները ձևավորվեցին արժեքների բաշխման տարբեր վիճակների ու տարբեր արժեքների ձեռք բերման հնարավորությունների համեմատությամբ: Այն, ինչը ծնողների համար տարօրինակ արտոնություն էր (երբ նրանք քսան տարեկան էին, իրենց հասակակիցներից, իրենց միջավայրում, օրինակ, հազարից մեկը մեքենա ուներ), վիճակագրորեն դարձավ պարզունակ մի բան: Եվ սերունդների միջև առաջացած բազմաթիվ կոնֆլիկտները տարբեր ժամանակաշրջաններում ճգտումների համակարգերի միջև առաջացած կոնֆլիկտներ են: Այն, ինչն առաջին սերնդի համար կյանքի նվաճում էր, ծնված օրվանից միանգամից տրվեց երկրորդ սերնդին: Անհամապատասխանությունը վառ է արտահայտված մասնավորապես դասերի անկման դեպքում, որոնք չունեն անգամ այն, ինչ ունեին քսան տարեկանում, ու այդ շրջանի (օրինակ՝ դահուկներ քշելը կամ ծովում լողալը) բոլոր արտոնությունները դարձան ընդհանուր:

Պատահական չէ, որ հակաերիտասարդական ռասիզմը (շատ ակներև ցույց է տրված վիճակագրական տվյալներում, չնայած որ այն, դժբախտաբար, չունի վերլուծություն ըստ սոցիալական դասերի) դասերի անկման արտահայտումն է (ինչպես մանր արհեստավորները կամ վաճառականները), կամ էլ անկման մեջ գտնվող անհատներն ու տարեցներն ընդհանրապես:

Ակնհայտորեն բոլոր տարեցները չէ, որ հակաերիտ են, բայց և այնպես ծերությունը նույնպես սոցիալական անկում է, սոցիալական ազդեցության կորուստ, ու այդ առումով տարեցները համալրում են երիտասարդների շարքերը, ինչը բնորոշ է նաև անկման մեջ գտնվող դասերին:

Բնականաբար անկման մեջ գտնվող սոցիալական դասերի տարեցները, այսինքն՝ տարեց վաճառականները, տարեց ար-

հեստավորները և այլն, ծայրահեղ ձևով միավորում են բոլոր հատկանիշները՝ նրանք հակաերիտ են, բայց և հակաարիստավոր, հակաինտելեկտուալ, հակավիճարկող, նրանք դեմ են այն ամենին, ինչը փոխվում է, ինչը շարժվում է և այլն, ճիշտ այն պատճառով, որ ապագան մնացել է նրանց հետևում, քանզի նրանք ապագա չունեն, մինչդեռ երիտասարդները բնութագրվում են որպես ապագա ունեցող, ապագան սահմանող:

Հարց. Բայց արդյո՞ք կրթական համակարգը չի հանդիսանում սերունդների միջև կոնֆլիկտի առաջացման պատճառ այն չափով, որչափով որ կարող է մոտեցնել սոցիալական միևնույն դիրքում գտնվող մարդկանց, որոնք ձևավորվել են կրթական համակարգի տարբեր իրավիճակներում:

Պիեռ Բուրդիե. Այս առումով կարող ենք կոնկրետ օրինակ բերել: Մեր օրերում միջին օղակին պատկանող բազմաթիվ պետական պաշտոններ, փորձառություն հավաքելով, կարող են առաջ գնալ: Իրար կողքի՝ միևնույն գրասենյակում, գտնվում են բակալավրում սովորող երիտասարդներ, անգամ դիպլոմավորվածներ, հենց նոր կրթական համակարգը թևակոխած և հիսունից վաթսուն տարեկան անձինք, որոնք ավարտել են երեսուն տարի առաջ, կրթության վկայականով, կրթական համակարգի մի այնպիսի տարիքում, երբ կրթության վկայականը դեռևս հարաբերականորեն հազվադեպ էր հանդիպում, և որն ինքնակրթության ու աշխատանքային ստաժի միջոցով հասել է մի այնպիսի վիճակի, որն այսօր հասանելի է միայն բակալավրում սովորող ուսանողներին *(bacheliers)*: Այս պարագայում դիմադրողները ոչ տարեցներն են, ոչ էլ երիտասարդները. գործնականում դա կրթական համակարգի երկու վիճակ է, որակավորումների երկու հազվագյուտ տարբերակվող վիճակ, և այս դիմադրությունը դասակարգումների նկատմամբ կոնֆլիկտի ձև է ստանում: Քանի որ ծերերը չեն կարող ասել, որ նրանք գլխավորն են, որովհետև ծեր են, փոխարենը կվկայակոչեն փորձառությունը, որը զուգորդված

է աշխատանքային ստաժի հետ, մինչդեռ երիտասարդները կվկայակոչեն կոչումներով երաշխավորված արհեստավարժությունը: Միևնույն ընդդիմությունը կարող է ի հայտ գալ արհմիութենական դաշտում (օրինակ՝ FO[27] արհմիությունը PTT[28]-ում) երկու ձախակողմյան մորուքավոր տրոցկիստների ու SFIO[29]-ի նախկին ակտիվիստների ընդհարման ձևով: Նրանց հնարավոր է հանդիպել կողք կողքի միևնույն գրասենյակում, փոստի բաժանմունքում: Արվեստների ու արհեստների որևէ դպրոցն ավարտած ինժեներները, մյուսները՝ Պոլիտեխնիկը. կարգավիճակի ակնհայտ նույնականացումը թաքցնում է այն, ինչը մի խումբն ունի, ինչպես ասում են՝ ապագան, ու միայն ստիպված են անցնել մի այնպիսի դիրքի, որը մյուսների համար հանգրվան է: Այս դեպքում կոնֆլիկտները սպառնում են ձեռք բերել այլ ձևեր, որովհետև երիտասարդ տարեցները (քանի որ *ապառված են*) ունեն բոլոր հնարավորությունները յուրացնելու կրթական կոչումը՝ որպես բնականից ունեցած տարբերության արձանագրում: Մի շարք դեպքերում թվում է, թե ապրված կոնֆլիկտները՝ որպես սերունդների կոնֆլիկտներ, գործում են մարդկանց կամ տարիքային խմբերից դուրս՝ հիմնված կրթական համակարգի նկատմամբ ունեցած հարաբերությունների վրա: Սերնդին համախմբող սկզբունքներից մեկը (այսօր) պետք է գտնել կրթական համակարգի որոշակի վիճակի հանդեպ ընդհանուր հարաբերության մեջ կրթական համակարգի նկատմամբ, և այդ առանձնահատուկ շահերում, որոնք տարբերվում են այն սերնդի շահերից, որոնք, իրենց հերթին, սահմանվում են համակարգի այլ վիճակի

[27] FO (Force Ouvrière) - Աշխատավորների ուժ, Ֆրանսիայի հինգ ամենագլխավոր արհմիություններից մեկը (թարգմ.):
[28] PTT (Postes, télégraphes et téléphones) - Ֆրանսիայի փոստային ծառայության և հաղորդակցության կառավարման կենտրոն (թարգմ.):
[29] SFIO (Section Française de l'Internationale Ouvrière) - Աշխատավոր ինտերնացիոնալի ֆրանսիական բև, սոցիալիստական քաղաքական կուսակցություն, որն այդ անունով գոյություն ունեցավ 1905-1969 թթ. (թարգմ.):

նկատմամբ հարաբերությամբ: Այն, ինչը համընդհանուր է մի խումբ երիտասարդների համար կամ էլ գոնե այն բոլորի համար, որոնք ցանկացած չափով օգտվեցին կրթական համակարգից, որոնք դրանից ստացան նվազագույն որակավորում, ընդհանուր առմամբ ցույց է տալիս, որ այս սերունդն ավելի որակավորված է, քան նախորդը (իմիջիայլոց, կարող ենք նկատել, որ եթե խտրականության արդյունքում ընտրության գնով հասնում են ինչ-ինչ պաշտոնների, ապա մշտապես գտնվում են այդ իրավիճակում, այսինքն՝ նրանք գրեթե միշտ ավելի որակավորված են, քան թե համարժեք պաշտոն զբաղեցնող մարդիկ…): Միանշանակ է՝ դասային բոլոր տարբերություններից զատ՝ երիտասարդներին ունեն իրենց սերնդին բնորոշ կոլեկտիվ շահերը, որովհետև, անկախ «հակաերիտ» խտրականության ազդեցությունից, այն պարզ փաստը, որ նրանք առնչվեցին կրթական համակարգի տարբեր իրավիճակների հետ, նշանակում է, որ նրանք մշտապես պակաս օգուտ կքաղեն իրենց որակավորումից, քան նախորդ սերունդը: Առկա է սերնդի կառուցվածքային որակազրկում: Սա անկասկած կարևոր է հասկանալու նմանատիպ հիասթափությունը, որը հարաբերականորեն ընդհանուր է ողջ սերնդի համար: Անգամ բուրժուազիայում ներկայիս կոնֆլիկտների մի մասը մեկնաբանվում է դրա միջոցով, այն փաստով, որ հաջորդականության ժամկետը հետաձգվում է, ինչը շատ լավ ցույց է տրված Լը Բրայի «Ժողովուրդ» (*«Population»*)[30] հոդվածում՝ ժառանգականության կամ պաշտոնի փոխանցման տարիքը դառնում է ավելի ու ավելի բարձր, և գերիշխող դասի կրտսեր ներկայացուցիչները ստիպված են անհամբերություն դրսևորել: Սա անկասկած խորթ չէ համալսարաններում լիբերալ մասնագիտությունների պարագայում (ճարտարապետներ, փաստաբաններ, բժիշկներ և այլն) նկատվող մրցակցությանը: Նույնն է,

[30] Էրվե Լը Բրա (ծնվ. 1943 թ.) - ֆրանսիացի ժողովրդագրագետ, հետազոտող: Նշված հոդվածը գրվել է 1987 թ., Hachette-Pluriel հրատարակություն (թարգմ.):

թե տարեցները շահագրգռվեն կրկին վերադարձնել երիտասարդներին դեպի երիտասարդություն, կամ էլ թե երիտասարդները հետաքրքրված լինեն ետ ուղարկել տարեցներին ծերություն:

Կան շրջաններ, երբ «նորի» հետապնդումը, որոնց միջոցով «նորեկները» (որոնք նաև, շատ հաճախ, կենսաբանորեն ավելի երիտասարդ են) «արդեն եկածներին» անցյալ, արդեն դեպի անցած շրջան, սոցիալական մահ են մղում («նա սպառված է»), ուժեղանում է, և միևնույն ժամանակ սերունդների միջև բախումներն ավելի են սաստկանում, դրանք այն պահերն են, երբ ամենաերիտասարդների ու ամենատարեցների հետագծերը բախվում են իրար, ուր «երիտասարդները» «չափազանց վաղ» են ձգտում հաջորդականության: Այդ կոնֆլիկտներից խուսափեցին այնքան երկար ժամանակ, որքան կարող էին տարեցները կարգավորել երիտասարդների վերելքին հասնելու տեմպերը, ուղղորդել նրանց կարիերան ու ուսուցման ժամկետները, կառավարել ուսուցման ընթացքում դասի արագությունը, կանգնեցնել այն երիտասարդներին, որոնք չեն կարող իրենք իրենց արգելակել, հավակնոտներին, որոնք «ինքնամոռաց առաջ են նետվում», «հաջողության հասնում» (փաստորեն, մեծամասամբ, նրանք կարիք չունեն արգելակելու, որովհետև «երիտասարդները», որոնք կարող են հիսուն տարեկան լինել, խորապես յուրացրին սահմանները, մողալային տարիքները, այսինքն՝ այն տարիքը, որում նրանք կարող են «տրամաբանորեն հավակնել» մի պաշտոնի՝ անգամ գաղափար չունենալով դա նախապես պահանջել, նախքան «իրենց ժամանակը գա»): Երբ «սահմանների զգացումը» կորած է, տեսնում ենք, որ կոնֆլիկտները ծագում են տարիքի սահմանների շուրջ ու դրանց միջև, որոնք ունեն սերունդների միջև իշխանության ու արտոնությունների փոխանցման նպատակ:

Ինչի՞ն է ծառայում սոցիոլոգը[31]

1983 թ. Saint-Amand les Eaux[32]-ի թատրոնում **Ռոնալդ Կլապկան** *իր բնագավառի ուսուցիչների հետ հանդիպման համար հյուրընկալեց Պիեռ Բուրդիեին: Վերջինիս, տարանջատման ու պարզության մեջ, հատուկ է առերեսումը, ինչը շարունակվեց մինչև գնացքի մեկնման վերջին վայրկյանը: Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում, ներբեռնման հնարավորություն ունեցող տարբերակով, Բուրդիեի՝ իր իսկ շրկումներով ու ուղղումներով պատրաստված զեկուցման արձանագրությունը՝ ներկաների հետ երկխոսությամբ ու Ռոնալդ Կլապկայի հետ ունեցած քննարկմամբ: Սույն տեքստը տպագրվել է St-Amand les Eaux համայնքի դաստիարակողների "La Marmite" ամսագրում:*

Կփորձեմ հետևյալ կերպ վարվել՝ ստացել եմ հարցեր, որոնք պատրաստվել են իմ նախաձեռնությամբ, և փորձել եմ դրանք համակարգել հնարավորինս կապակցված ու տնտեսող եղանակով, որն ինձ թույլ կտա պատասխանել ավելի ընդհանուր՝ խուսափելով կրկնություններից: Նախ և առաջ կցանկանայի ասել, որ գիտակցում եմ՝ մեր կապը կարող է քիչ արհեստական բնույթ կրել: Հանդիպման ավարտին կուզենայի, որպեսզի այդ արհեստական վիճակը հնարավորինս նվազեր, քան մեկնարկին է, թատերական այն կառուցվածքը, որում տեղավորվել ենք, դատարկ շարքերը, որոնք տեսնում եմ իմ առջև, խոսքի նկատմամբ ստեղծում են մի հեռավորություն, ինչը պատրաստվում եմ ձեզ առաջարկել և ոչ թե պարտադրել ու շատ կցանկանայի, որպեսզի այդ հեռավորությունը վերանար: Այդ նպատա-

[31] Աղբյուրը՝ http://remue.net/cont/bourdieu02.html, այցելվել է 24.04.2017 թ. (թարգմ.):
[32] Ֆրանսիայի Նոո ղեպարտամենտում գտնվող համայնք (թարգմ.):

կով, եթե համարձակվեի, կվերլուծեի այն իրավիճակը, որում մենք գտնվում ենք, որն էլ հենց հանդիսանում է սոցիոլոգիայի առանձնահատկություններից մեկը: Շատ հաճախ «սիրողական» հարթության վրա գտնվող սոցիոլոգները, որոնք սիրողաբար օգտվում են իրենց իմացած մի փոքր սոցիոլոգիայից, վերջինս օգտագործում են ցուցակագրելու, տեսակավորելու, դասակարգելու կամ մի բառով խոցել-ասելու համար. «Դու ընդամենը մի…»: Ըստ իս՝ սոցիոլոգիան բացարձակապես դրա համար չէ նախատեսված: Այն, ավելի շուտ, գործիք է, որով ձգտում են հասկանալ այն, ինչը, իհարկե, հոգեվերլուծաբանության, հոգեբանության, էպիստեմոլոգիայի և այլնի հետ միասին մյուսների շրջանում հանդես է գալիս որպես գործիք: Մեր աչքերում «Հասարակական գիտություններ» կոչվող գիտությունների այս խումբն ունի միևնույն գործառույթը՝ թույլ տալ քիչ ավելի լավ իմանալ այն, ինչն իրականացնում են, այն, ինչը որ են: Եվ դա արդեն իսկ մի շարք հարցերի պատասխանն է:

Կարծում եմ, որ հարցերի մեծ մասի ենթատեքստում նկատվում էր սոցիոլոգիան կասկածի տակ դնելու պես մի բան. քիչ թե շատ մեղմասական ձևով ասացիք. «Ինչի՞ն եք դուք ծառայում: Գոյության մեջ դուք իրապե՞ս գործառույթ ունեք»: Կխոստովանեմ, որ անգամ ես սկսեցի դրանում տարակուսել, և դա է իմ այստեղ գտնվելու պատճառներից մեկն ինքս ինձ մի քիչ արդարացված զգալու համար: Այսպիսով՝ դուք ինձ պետք է օգնեք, ինչը շատ սիրալիր քայլ կլիներ ձեր կողմից օգնելու ինձ անել այն, ինչ փորձում եմ անել: Կաշխատեմ հնարավորինս այնքան արագ պատասխանել ինձ ուղղված հարցերին, որպեսզի իմ ու ձեր միջև առկա այս հարցերի պատվարը տեղ թողնի, միգուցե, ավելի իրական հարցերի համար, որոնք իսկապես ձեզ են ուղղված, կամ, ավելի ճիշտ, այն, ինչ կփորձեմ ասել, հավանաբար թույլ կտա ձեզ առաջադրել նոր հարցեր նույնպես:

Անցնեմ գործի: Եզրափակիչ բանաստեղծությունը բավական լավ է պատկերում այն, թե դուք ինչ պետք է մտածեք: Այն արտահայտում է սոցիալական փաստի այն փորձառությունը, որը մենք ապրում ենք, մանկավարժական զեկուցումը, ինչպես ձեզանից մեկն ասաց. «Չե՞ք պատրաստվում միանալ պատարագին», միավորվում են, զույգեր կազմում, բայց հայտնի է, որ պետք է ներկա գտնվել որոշակի թվով ծեսերի, և ես այդ ծեսի մի մասն եմ կազմում: Ինձ թվում է՝ սոցիոլոգիան քիչ ավելի լավին է արժանի, քան մի պարտավորված ու ծիսական ընդունելության: Հարցնում եք. «Ի՞նչը Ձեզ դրդեց ընդունել պարոն Կլապկայի հրավերը»: Սա իսկապես առաջ քաշված հարց է: Եթե այդտեղից սկսեմ, ապա ես ընդունեցի նրա հրավերը, որովհետև իմ ներկայությունը պատասխանն է ձեր՝ մի շարք առաջ քաշած հարցերի: Ձեզանից շատերը սոցիոլոգիայի նկատմամբ հարաբերականորեն բացասական տրամադրվածություն ունեն:

Սոցիոլոգիան կլիներ մի խումբ մարդկանց կողմից կիրառված տեսական (կարծում եմ՝ դա շատ չի ողջունվում այդ բառն օգտագործողների գրչի ներքո), հեռավոր գիտություն, ովքեր ինքնին մանկավարժությունն արժանահավատորեն չեն կիրառել և եթե այն կիրառեին, ապա չէին պահպանի դիսկուրսի այն ձևը, որին հետևում են: Ինձ թվում է, որ սոցիոլոգիայի շուրջ ստեղծված այս պատկերը լիովին կեղծ է, և ըստ էության, ի թիվս մի շարք այլ բաների, որոնք ես կցանկանայի իմ ներկայությամբ ցույց տալ, հետևյալն է՝ դժբախտաբար չեմ կարող անել այն, ինչ ամեն օր անում եմ, այսօր, բայց եթե մի քանի կյանքեր ունենայի, ապա դա էլ կանեի:

Այսինքն, հետազոտող լինելու չափով, իմ աշխատանքն է փորձել զարգացնել գիտակցությունն ու իմացությունը, սոցիոլոգի գործն է ազդեցություն թողնել բոլորի, առաջին հանդիպածի վրա, տիրապետել այդ բացարձակապես տարօրինակ բանին՝ սոցիալական աշխարհին: Այլ կերպ ասած, ինչպես բնական գի-

տությունները, կասեմ տափակ ու ընդհանրացված թվացող բաներ, բայց որոնք ինձ թվում են շատ կարևոր, մեզ, ըստ Դեկարտի, դարձրեցին բնության տերն ու տիրականը, այնպես էլ ենթադրում եմ, որ սոցիոլոգիան որոշակի նպատակի համար է տրված, և այն ակնհայտորեն շատ հեռու է այդ նպատակին հասնելուց, որն է՝ մեզ դարձնել սոցիալական աշխարհի տերն ու տիրականը: Խոսքը գնում է սոցիալական աշխարհի օրենքներն իմանալու մասին է, թե ինչու ենք անում այն, ինչ անում ենք, ինչու ենք մտածում այն, ինչ մտածում ենք, ու միևնույն ժամանակ որքան ավելի է զարգանում սոցիոլոգիան, այնքան ճգտում է դետերմինիզմի տպավորություն թողնել: Եվ սա հանգեցնում է ինձ ուղղված մի շարք հարցերի, որոնց թույլ տվեք վերադառնալ. «Կա՞ արդյոք ինչ-որ բան, որը պետք է իրագործել, կարո՞ղ է սոցիոլոգիան ծառայել ինչ-որ բանի, արդյո՞ք մենք ինքներս կարող ենք սոցիոլոգիայից ինչ-որ բան ստեղծել, և դուք՝ սոցիոլոգներդ, կարողանո՞ւմ եք մեզ համար ինչ-որ բան ստեղծել կամ ավելի ստույգ՝ արդյո՞ք մեր պրակտիկայում սոցիոլոգիան կարող է հետևանքներ ունենալ»: Հակառակ սոցիոլոգիայի պատկերացման, որպես գիտակցության մի վերացական, հարաբերականորեն հեռավոր գործիքի, այստեղ ներկա գտնվելը ենթադրում է, որ առկա է սոցիալական աշխարհի գիտելիքի տարածման պրակտիկ հետևանք: Սոցիոլոգիան ջանում է սահմանել սոցիալական գործառնման օրենքներ (պատմական), ինչպես, օրինակ, այն մեկը, որը ստիպում է, որպեսզի մշակութային կապիտալը հասնի մշակութային կապիտալին, օրենքին, համաձայն որի՝ որքան շատ մարդ է իր ընտանիքի կամ իր կրթության կամ էլ վերջինս կրկնապատկելով ընտանիքի ազդեցություններով և այլն տիրապետում մշակութային կապիտալի, այնքան ավելի հեշտ է ձեռք բերում մշակութային կապիտալն ու այդ կապիտալով հայթայթված օգուտները: Ահա այն օրենքի օրինակը, որից, ըստ երևույթին, կարող ենք հոռետեսական եզրահանգումներ անել, և ինձ

ուղղված որոշակի քանակությամբ հարցեր այդ իմաստն են պարունակում: Որպես այս դասավանդող մարմնի անդամներ, որի նպատակն է նպաստել նախագո սոցիալական անհավասարությունների վերարտադրմանը, նպաստել արդյունքի պահպանմանը, ինչ-որ չափով պատասխանատո՞ւ ենք վերջինիս համար: Արդյո՞ք այդտեղ սոցիոլոգիան մեզ հուսահատեցնելու համար չէ, այլ կերպ ասած՝ կարծեք նպաստելով պահպանմանը, սոցիոլոգիան այդտեղ չէ՞ միայն մեզ խոցելու համար: Սա մի գաղափար է, որն անգամ, կրկնում եմ, հերքում է իմ ներկայությունը: Ենթադրում եմ, որ սոցիալական օրենքների գիտակցումը հանդիսանում է ողջ սոցիալական աշխարհի տրանսֆորմացիայի պայմանը: Ոչ ոք երբևէ միտք չի ունեցել մոտենալ Գալիլեյին՝ ոչնչացնելու թռչելու երազանքը, ընդհակառակը, Գալիլեյի կողմից ձգողականության օրենքը բացահայտելու շնորհիվ է, որ կարողացանք թռչել: Դա ամեն դեպքում այն չափով, ինչ չափով որ գիտենք այն օրենքները, որոնց համաձայն՝ մշակութային կապիտալն անցնում է մի սերնդից մյուսը, և որ մենք ինչ-որ հնարավորություն ունենք մասնակի կասեցնել այս մեխանիզմի հետևանքները:

Քիչ երկար մնացի այս կետի վրա, որովհետև հարցադրումների մեծ մասը գտնվում է նորմատիվ հարթության վրա. «Պե՞տք է… պարտավո՞ր ենք մենք.... պարտավորվա՞ծ են»: Որպես կանոն, սոցիոլոգի գործը չէ ասել. «Դուք պետք է բանավոր խոսքը ուսուցանեք կամ պարտավոր եք ավելի շուտ այսպես, քան թե այնպես սովորեցնել, կամ՝ ուսուցանեք սովորական կամ ճարտար լեզուն»: Սոցիոլոգն ասում է, որ եթե ցանկանում եք դասավանդել խոսակցական լեզուն, ապա ունեք բոլոր հնարավորությունները դեմ առնելու այսպիսի կամ այնպիսի դժվարություններին, հանդիպել նման խոչընդոտների, և դա անելով՝ նա ձեզ չի տանում դեպի պարտություն, ընդհակառակը, տալիս է հաջողելու քիչ հնարավորություններ, որը դուք ունեք: Նույնչափ երկար ժամանակ, քանի դեռ նա չգիտեր ձգողականության ուժի մասին,

հանդիպում էր մարդկանց, որոնք ցանկանում էին թռչել, ինչը տեղի ունեցավ Icare[33]-ում: Եվ ես կարծում եմ, որ բազմաթիվ մանկավարժական ռեֆորմներ, բազմաթիվ մանկավարժական հեղափոխություններ անհաջողության են մատնվում, քանի որ բարեփոխողները կամ վերափոխողները «ուտոպիստներ» են, ասել է թե՝ անտեսելով սոցիալական հարկադրանքները: Նրանք դրանց նետում են մարտահրավեր, ու հակառակ իրենց՝ այդ սոցիալական պարտադրանքները ճիշտ են դուրս գալիս: Այստեղ առկա է մեկ այլ պրակտիկ սկզբունք ևս, որը կարող ենք դուրս բերել սոցիոլոգիայի իմացությունից, այն է՝ անբարենպաստ պայմաններում մեկնարկած ռեֆորմ, նորարարություն, ինչը ծայրահեղ վտանգավոր է, այն դատապարտվում է պարտության և նվազեցնում հետագա հաջողության հնարավորությունները, որովհետև այդ պարտությունը կարող են ծառայեցնել նախապես կանխարգելելու վերափոխման ցանկացած փորձ, որը կտրամադրեր առաջխաղացման նվազագույն պայմաններ: Այսինքն՝ սոցիոլոգները բացարձակապես իրավացի են, ինչպես և մյուս մասնագետները, այն տարբերությամբ միայն, որ, ակնհայտորեն, մեր իմացությունը շատ ավելի առաջադեմ է, օրինակ՝ կրթական աշխարհի մասին խոսելիս, ճիշտ է, ունենք կանխատեսման զգալի ունակություն: Երեք կամ չորս փոփոխականով, յուրաքանչյուր աշակերտից երեք կամ չորս հատկանիշ վերցնելով, իր հոր, մոր մասնագիտությունը, այսինքն՝ մորից ունեցած ազատ ժամանակը, բնակավայրը, հեռավորությունը քաղաքից, սեռը: Երեք կամ չորս փոփոխականով, հաջողության հասնելու շատ մեծ ճշգրտությամբ կարող են ընդգրկվել այս կամ այն գործունեության մեջ, այս կամ այն կրթական ցանցում և այլն: Անշուշտ այս կանխատեսումը ճակատագրական չէ: Ֆունկցիայի համար այն կարող է ունենալ ինքնաժխտում: Չգողականության օրենքը ձեզ հուշում է, որ եթե թռչեք չորրորդ հարկից, ապա ներքև կիջ-

[33] Գալիլեո Չինիի կտավներից (թարգմ.):

ներ նույն արագությամբ, ու այդ օրենքի գործառույթը հնարավոր է կայանա նրանում, որպեսզի ձեզ առաջարկի փնտրելու միջոցներ դա անարդյունավետ դարձնելու համար: Սոցիալական շահերի փոխանցմանն առնչվող օրենքների դեպքում, որոնք սահմանում է սոցիոլոգը, դա միևնույն բանն է:

Կնշանակի, որ քաղաքականությանը ու սոցիալական ագենտների ամբողջությանը վայել է որոշակիացնել նպատակները: Բայց գոյություն ունի պայմանների իմացություն, որում սահմանվում են նպատակները: Այդպիսով, սոցիոլոգը չպետք է ձեզ ասի, թե ինչ է պետք անել, այլ կասի, որ մանկավարժական գործի նպատակները բոլոր տեսակ ագենտների կռվախնճորն է, որոնց շարքերում կան դասավանդողներ, ինչպես նաև աշակերտների ծնողներ և այլն: Բավական է մտաբերել, թե ինչ ասել է համալսարանի ռեֆորմ՝ տեսնելու, որ կրթական համակարգի նպատակները կռիվ են տալիս ճիշտ այնպես, ինչպես Ֆրանսիայի դրամային քաղաքականությունը, ու որ առկա են սոցիալական նպատակներ, բախումներ, ուժերի հարաբերակցություն: Սոցիոլոգն ընդամենը կարող է ասել՝ եթե ցանկանում եք նման նպատակ դնել, ինչն անձնապես ինքը կարող է համարել լեգիտիմ կամ ոչ լեգիտիմ, ապա ունեք հաղթելու այս և այն հնարավորությունները՝ հաշվի առնելով մարդկանց միջև առկա ուժերի հարաբերակցությունը, որը ներկայումս մոբիլիզացվելու հնարավորություններ ունի՝ հաստատելու այդ նպատակը կամ պայքարելու դրա դեմ: Այստեղ ևս, ենթադրում եմ, որ սոցիոլոգի դերն է տրամադրել ռացիոնալ քաղաքականության միջոցներ, այնքան, որքան մի քաղաքականություն կարող է լինել ռացիոնալ. տրամադրել ռացիոնալ գործողության միջոցներ՝ ձգտելով առաջ քաշել այս և այն նպատակները: Դա, կարծում եմ, առաջին կետն է, ու մտաբերում եմ ձեր կողմից առաջ քաշված ևս մի շարք հարցեր: Բացի իրադարձությունների միջև առկա կանոնավոր հարաբերությունների ուսումնասիրությունից՝ սոցիոլոգիան ձգտում

է սահմանել օրենքներ և ջանում այդ կանոնավոր հարաբերությունների տալ ճշգրիտ ձևակերպում, սակայն անգամ այդ հարաբերությունների իմացությունը կարող է, որոշակի պայմաններում, որոշակի սահմաններում, օգտագործված լինել որպես գործիք նույն այդ հարաբերությունները փոխակերպելու համար:

Սոցիոլոգիայի ֆունկցիաներին վերաբերող համընդհանուր հարցը անհատականացվում էր ուսուցիչների հետ կապված մասնավոր դեպքի վրա ուշադրությունը կենտրոնացնելու համար: Հաճախ են ինձ հարցնում՝ ի՞նչ կարող է ուսուցչին տալ սոցիոլոգիան, և արդյո՞ք սոցիոլոգիան կարող է օգնել ուսուցչին: Ո՞րն է այն տեղը, որը կարող է գրավել սոցիոլոգիան ուսուցչի պատրաստման գործում: Պե՞տք էր մանկավարժությունը հաշվի առներ սոցիոլոգիայի ջանքերը: Ինչպիսի՞ն են հարաբերությունները մանկավարժության ու սոցիոլոգիայի միջև: Ես արդեն կիսով չափ պատասխանեցի այս հարցերին, բայց կցանկանայի հավելել: Քիչ առաջ նշեցի, որ կկարողանայի վերլուծել իրավիճակը, որում մենք գտնվում ենք, թեպետ չեմ տիրապետում բոլոր մանրամասներին: Պետք է, որպեսզի շատ լավ ճանաչեմ հանրության սոցիալական կառուցվածքը, այն հիերարխիկ կառուցվածքը, որում տեղի է ունենում տվյալ դեպքը և այլն: Այդ վերլուծությունն իրականացնելով՝ կարծում եմ՝ կտրամադրեի հնարավոր օգտագործման և սոցիոլոգիայի կապիտալի օրինակ՝ մասնավորապես մանկավարժական իրավիճակում: Երբ զբաղվում եմ սոցիոլոգիայով, նման եմ մյուս բոլոր հետազոտողներին՝ որոնում եմ՝ ճանաչել-իմանալու, փնտրում՝ ըմբռնել-հասկանալու համար: Օրինակ՝ երբ աշխատում եմ, դա մի խնդիր է, որը փաստորեն մեկ այլ խնդիր է առաջ քաշում, և այն իրական է, չնայած որ հաճախ եմ հայտնվել այնպիսի ոլորտներում, ուր քաղաքական թեժ խնդիրներ էին բարձրաձայնվում (օրինակ՝ Ալժիրում և այլն): Փաստորեն դրանք իրենցից հաճախ տեսական հարցադրումներ են ներկայացնում, որոնք ինձ բերում հասցնում են իմ

կողմից քաղաքական հարցերի առաջ քաշմանը, ու շատ հաճախ զարմացած էի մնում այն քաղաքական կիրառություններից, որոնք կարողանում էին կյանքի կոչել իմ տեսական «բացահայտումներից»: Այլ կերպ ասած՝ հետազոտողի մոտ առկա է, ու ինձ թվում է, որ նա պետք է դրա հետ համաձայնի, իմանալու ճաշակի տեսակը՝ իմանալ այն, ինչը, բացի դրանից, կարող է ուղեկցվել իր գիտելիքի սոցիալական կիրառման կարոտախտով: Գործնականում սոցիոլոգիան կարող է լիովին ճշաձակալի գործառույթ ունենալ, բացի նրանից, ինչը ես հենց նոր հիշատակեցի՝ թույլ տալ մտածել այն գործողության մասին, որում ներգրավված են և հատկապես հարկադրանքները, որոնք ծանրանում են այդ գործողության վրա, խոչընդոտում դրանք ազատորեն ընդունել, երբ այլ կերպ հնարավոր չէ վարվել կամ նրանց վերավոխել սոցիոլոգիապես հնարավոր սահմանների շրջանակներում: Սա ձեզ կարող է շատ վերացական թվալ, բայց ի՞նչ կարող է ուսուցիչն իր դասասենյակում քաղել սոցիոլոգիայից: Շատ հաճախ սոցիոլոգին վերագրում եք, միանգամայն նրան դրանում մերժելով, փրկչի դեր: Փաստորեն, կարծում եմ, սոցիոլոգիան կարող է օգնել ավելի լավը դարձնել այն, ինչով ուսուցիչը գործնականում զբաղվում է՝ չիմանալով ինչպես ու անգամ չգիտակցելով, որ նա դա անում է: Երբ մանկավարժը հարցնում է, ի դեպ, ձեր ուղղած հարցերից շատերն են փաստում դրա մասին, արդյո՞ք դուք գործնական փորձառություն ունեք, դասավանդե՞լ եք և այլն, ու ցանկանում է ասել. «Մենք՝ մանկավարժներս, ունենք փորձով ձեռք բերված յուրահատուկ կոմպետենտություն, ինչին կարող է տիրապետել միայն քսան տարի շարունակ դրանով զբաղվող մեկը և այլն, ու դա անփոխարինելի է, ձեր բոլոր տեսություններով հանդերձ՝ դուք երբեք դրա հազարերորդ մասն էլ չեք իմանա»: Անշուշտ, սա պաշտպանողական համակարգ է, որը, սակայն, իր մեջ ճշմարտության հատիկ է պարունակում: Սոցիալական գիտությունների պարադոքսներից մեկն էլ հենց

այն է, որ շատ հաճախ նրանք չափից շատ էներգիա են վատնում՝ իմանալու մի բան, որն ամբողջ աշխարհը գիտի, պարզապես այլ կերպ, համաձայն այն եղանակի, որ մարդիկ չգիտեն, թե իրենք ինչ գիտեն: Համարում եմ, որ ավարտված մանկավարժական փորձառությունը, ինչպես ինչ որ մեկը նշեց, իսկապես լավ ուսուցիչ է. սոցիալական դիֆերենցացիայի իրավիճակում բովանդակում է բացարձակապես սովորական մի հմտություն: Լավ մանկավարժը նա է, ով կրում է ինքնաբուխ սոցիոլոգիա, իր դասարանի «աչքաչափային» սոցիոլոգիա: Բոլորս ապրում ենք մեր գործողությունների 3/4-ում, այն իմացության հիմքի վրա, որն ինքնին կույր է: Նիկոլա դը Կյուզը[34] սրան անվանում էր «ուսյալ անտեղյակություն»: Չենք գիտակցում՝ ինչ ենք անում, բայց և այնպես կարծեք թե հասկանում ենք: Ամենապարզ օրինակը սպորտային փորձառությունն է: Լավ մարզիկը նա է, ում համար ասում են՝ նա դիրքավորման զգացում ունի, մշտապես այն վայրում է, ուր գնդակն ընկնելու է, թվում է, թե չի վազում, բայց միշտ բոլորից առաջ է և այլն: Սոցիալական միջավայրերի մեծ մասում հաջողության են հասնում նրանք, որոնք ունեն տեղի զգացում, ճիշտ վայրում ճիշտ դիրքավորված լինելու զգացում: Այս գործնական գիտակցումն է, որ մղում է գրողին իր գիրքը տալ ավելի շուտ այս, քան թե մեկ այլ խմբագրին, որ կրթական համակարգում ավելի շուտ կընտրվի այս, քան թե մեկ այլ ուղղություն, որ պատրաստում ենք ուղղություններն ինքնահոսի մատնել՝ անցնելու ակնհայտորեն ռիսկային ուղղությունների, որոնք անսպասելիորեն կդառնան հետաքրքիր:

Դիրքավորման զգացման այդ տեսակը սոցիոլոգիական հմտության ձևերից մեկն է: Սոցիոլոգի աշխատանքը հենվում է այն գործնական գիտելիքների վրա, որոնք հենց իրենք՝ մարդիկ

[34] Նիկոլայ Կուզանացի (1401-1464) - կաթոլիկ եկեղեցու կարդինալ, 15-րդ դարի գերմանացի խոշորագույն մտածող, փիլիսոփա, աստվածաբան, մաթեմատիկոս, եկեղեցաքաղաքական գործիչ (թարգմ.):

են տնօրինում: Ամեն անգամ, երբ սկսում եմ նոր միջավայրի վրա աշխատել, կարծեք սկսնակ լինեմ, բացի դրանից՝ ողջ իրավասությամբ իրազեկիչները տնտղում են սոցիոլոգին կամ ազգագրագետին, ինչպես փոքրիկ երեխայի, ում տարբեր բաներ են բացատրում: Սոցիոլոգի գործն է մի մասով մարդկանց բերել հասցնել այն գիտակցման, թե ինչ նրանք ունեն և միևնույն ժամանակ բացարձակապես չունեն, որովհետև այն, ինչի մասին որ խոսում են, ոչ մի ընդհանրություն չունի իրենց արածի հետ: Եթե վերցնեք ռեգբի խաղացողին ու նրան ասեք՝ «Դու կեղծ անցում արեցիր, ինչպե՞ս ես դա անում», նա ձեզ կասի այն, ինչ լսում ենք ռադիոյով, երբ խաղի վերջում հարցազրույց են վերցնում խաղացողներից (մարզիկները պատմում են, թե ինչ նրանք ընթերցեցին l'Equipe օրաթերթում): Հետևապես, պետք է շատ համեստ լինել ստիպելու նրանց իրապես խոստովանել, թե ինչ ասել է կեղծ անցում: Մասամբ սոցիոլոգի աշխատանքը կայանում է ինչ-որ մեկին սատարելու մեջ այն գործում, որը պետք է անել՝ իմանալու համար, թե ինչ են անում:

Վերադառնամ հենց նոր առաջ քաշված հարցին. «Ի՞նչ կարող է մանկավարժը քաղել սոցիոլոգիայից»: Նա դա կարող է վերջինս ծառայեցնել՝ իմանալու համար քիչ ավելի լավ այն, ինչով զբաղվում է, ամեն դեպքում աչքաչափով: Օրինակ՝ Ֆրանսիայի ու Նավարենի բոլոր ուսուցիչներն իրենց աշակերտներին ստիպում են լրացնել թերթիկներ, դա տարեսկզբյան արարողություն է, այնուհետև հավաքում ու այլևս չեն խոսում դրա մասին, չնայած որ այդ թերթիկները բովանդակում են առաջին կարևորության տեղեկություններ, պայմանով, որ դրանից չպետք է վիճակագրական հետևություն անել, այլ խելամտորեն ծանոթանալ դրանց, հաշվի առնել երեխայի հոր, ինչպես նաև մոր մասնագիտությունը, մի քիչ մտորել մշակութային ու լեզվական կապիտալի ձևի, ազատ ժամանակի մասին, որն այդ թերթիկը պարունակում է և այլն: Այլ կերպ ասած՝ դա հազիվ թե տվյալներից

կազմված թերթիկների մի ձև է, որը ծիսական ձևով ստիպված են լրացնել, և դասարանում առկա տարբերությունների մասով դրանց ուշադիր ընթերցումը կարող է թույլ տալ ընկալման շատ նուրբ տարբերակում: Այդ տարբերությունները տեսանելի դարձնելու փաստը շատ կարևոր է, ընդ որում, տեսանելի որպես սոցիալական, այլ ոչ թե դպրոցական (լավ կամ վատ) հոգեբանական լեզվի վերաթարգմանված ձևի ներքո, ինչը, պատրաստվում էի ասել, վատթարագույնն է:

Կան բազմաթիվ բաներ, որոնք միայն սոցիալական բնույթ են կրում, և որոնք վերաթարգմանվում են խառնվածքային տարբերություններում (բնականաբար լինելով ակնհայտ, որ սոցիալական ճշմարտությունը չի սպառում մարդու ամբողջությունը):

Բնականաբար վերադառնում եմ արդեն երկու անգամ բարձրաձայնված հարցին, որն ինձ թվում է շատ կարևոր. «Ինչպիսի՞ն է ուսուցչի սոցիալական ծագման դերն աշակերտ-ուսուցիչ հարաբերություններում»: Դա փաստացի հարց է (չեն ասում պետք է՞, պետք չէ՞), որի շուրջ հնարավոր է ծավալել մի ամբողջ գիտական դիսկուրս: Կարող եմ միայն մատնանշել մի քանի փաստ. դժբախտաբար բավականաչափ աշխատանքներ չեն տարվել այս հարցի շուրջ՝ շեշտը դնելով ամերիկացի հեղինակների որոշ աշխատանքների և մյուս կողմից՝ մարդկանց միջև հաղորդակցման ընդհանուր օրենքների ու տարբեր միջավայրերի վրա: Ամերիկացի հեղինակների աշխատանքների մի մասը հիմնված է այն բանի վրա, որ գոյություն ունեին անգիտակցական սոցիալական կապեր, որոնք շոշափում էին աշակերտների ու ուսուցիչների միջև հարաբերությունները: Դա ակներև է. սոցիոլոգիան երբեմն փակ դռների է դեմ առնում, սակայն այս ակնառու երևույթները ջրի երես են ելնում միայն, երբ դրանց մասին բարձրաձայնվում է: Այդպիսով, միջին դասին պատկանող կին ու տղամարդ ուսուցիչները (օգտագործում եմ ամերիկացի հեղինակների դասդասաբանությունը (տաքսոնոմիան)) անգիտակ-

ցաբար միտված են գտնել միևնույն միջավայրին պատկանող նախընտրելի երեխաների, ու հակառակը՝ սոցիալական ստորին, տարբեր դասերին պատկանող երեխաների անգիտակցական էթիկական բազայի նկատմամբ նրանք նողկանք են զգում: Սա մի բան է, որը սոցիոլոգիան հաստատել է հազարավոր ձևերով:

Անգիտակցական սոցիալական առանձնահատկություններ ի սկզբունքին ուղղված նմանության ամենաուժեղ օրինակներից մեկի համաձայն, որին սոցիոլոգները կոչում են հոմոգամիա, միևնույն սոցիալական առանձնահատկություններով օժտված մարդիկ միմյանց հետ ամուսնանալու շատ ավելի մեծ հնարավորություններ ունեն, քան տարբեր սոցիալական հատկանիշներով օժտվածները: Կարող է հարց առաջանալ՝ ինչպե՞ս է այս ամենը տեղի ունենում: Հին շրջանում ամուսնությունների մեծ մասը կարգավորվում էր չափահասների, ծնողների գիտակցմամբ: Մինչ Մոլիերը երեխաներին ամուսնացնում էին ծնողները, և հոմոգամիան հստակորեն կայունացած էր հնազանդ ընտանիքի գիտակից միջամտություններով՝ լինի դա ազգակցական կամ էլ թե տնտեսական հարաբերություններին վերաբերող (չպետք է նվաստանալ, պետք է ամուսնանալ դույզն-ինչ մոտ, նույն մակարդակի վրա գտնվող մարդկանց հետ, ինչպես գյուղացիական մեծ մասի հասարակություններում): Նման դեպքում զույգերի՝ միմյանց հարմարեցումը համարվում է նորմալ երևույթ, որովհետև դա կամքի, նպատակամիտության արդյունք էր: Արդ, ինչպես մեր հասարակությունում, զույգերի «ընտրությունը» («ընտրություն» բառի չակերտավոր լինելը լիովին թողնված է կողմերին, նրանք հանդիպում են պարահանդեսին և մանկավարժական գիտաժողովներին, սիրահարվում են, ամուսնանում…): Մինչդեռ, երբ սոցիոլոգը վիճակագրորեն ուսումնասիրում է, «ընտրություն» ասվածն ի հայտ է գալիս եթե ոչ բացարձակորեն, ապա գոնե ոչ էլ պատահական դետերմինացված ձևով: Այն, ինչ գոյություն ունեցավ որպես սիրո ու պատահականության մի

խաղ, որպես լիովին անակնկալ ծանոթություն, որն էլ հենց փաստացի գրավչությունն է, իրականում մեծապես դետերմինացված է կամ էլ գտնվում է բացասականի սահմաններում: Այդպիսով, եթե չկա ցանկություն, ինչպե՞ս կարող են հետազոտել մի բան, ինչը հեշտությամբ թույլ կտար իրեն նկարագրել ցանկության տրամաբանության շրջանակներում: Դա սոցիալական գիտության կենտրոնական պրոբլեմներից մեկն է, շատ բաներ «անելու համար» շարքից է: Ամենալուրջ դժվարություններից մեկը՝ չեզոքացնել նման տիպի հակազդումը, որից բոլորս էլ ունենք, ու երբ երևույթն ի հայտ է գալիս, այն մեզ մղում է ձևավոխել եզրափակիչ նկարագրության գործընթացի արդյունքը ու իմաստ ունեցող յուրաքանչյուր գործողության ետևում փնտրել անհատական նպատակամիտվածություն («իրավիճակի տերը դա ցանկացավ») կամ էլ թե կոլեկտիվ նպատակամիտվածություն («դա գերիշխող դասն է»): Երկար եմ կանգ առնում այս կետի վրա, որովհետև սա սոցիոլոգիայի փոխանցման ու սոցիոլոգիական փորձի ողջամիտ օգտագործման ամենամեծ խոչընդոտներից մեկն է: Իրականությունում այդպես չի լինում, գոյություն ունեն մի խումբ գործողություններ, որոնք նպատակամիտվածության տպավորություն են թողնում: Ամեն բան տեղի է ունենում ինչպես բուրժուազիայում սոցիալական իրադարձությունների մի շարք, միջավայրից կախված՝ ավտոռալլիները, ընդունելության արարողությունները, ակումբները, այլուր կազմակերպվող մանկավարժական գիտաժողովները, և ավելի ընդհանրական, սոցիալական ծագման տեսանկյունից դիսցիպլինների՝ որպես սոցիալապես միատարր խմբերի բաժանումը (երբ, օրինակ, մի ֆակուլտետից անցնում են մյուսը՝ փիլիսոփայությունից աշխարհագրություն, ուսանողների սոցիալական ծագումը կրճատվում է) սոցիալական ծագման կապի ներքո, միատարրության բովանդակության շուրջ ունեցած իրենց գիտելիքների արդյունքներով նպատակ ուներ ստեղծել հնարավորինս միատարր խմբեր: Բու-

հերի դեպքում ամեն բան տեղի է ունենում այնպես, կարծես թե նրանք ունեին փոքրիկ Մաքսվելի դև[35], որը, համաձայն միևնույն դպրոցում հնարավորինս շատ մարդկանց միջև շատ ընդհանրություններ ունեցող եղանակի, պատասխանատու էր թեկնածուների տեսակավորման համար: Պոլիտեխնիկում սովորողները կլինեին ավելի շատ կաթոլիկ, քան մանկավարժական ինստիտուտի ուսանողները, ու նրանք հավաքված կլինեն տարիքով պայմանավորված տևական կապով, ուր և սիրալիր վերաբերմունքի կարժանանան: Այդպիսով, նրանք ստեղծում են երկարաժամկետ կապեր, որոնք կարող են վավերացվել ամուսնությամբ կամ ընկերությամբ, որն ընկած է մեծ ձեռնարկությունների և այլնի կառավարմանն ուղղված ինքնահամալրման հիմքում: Ուստի ունենք բազում երևույթներ, որոնք նպատակամիտության տեսք են հաղորդում, ու որոնք, փաստորեն, անայուժե սոցիալական մեխանիզմներ են, ինչը ոչ ոքի սրտով չէր: Ոչ ոք բուհերի պլան չկազմեց: Միայն մեկը կազմվեց Հեղափոխության տարիներին, մյուսը՝ 1880 թվին և այլն: Այնուամենայնիվ, երբ այսօր սովորում են, տպավորություն է ստեղծվում, թե կա մի տրամաբանություն, համաձայն որի՝ HEC[36]-ում կգտնվեն բազմաթիվ առևտրականների զավակներ, École normale[37]-ում՝ մանկավարժների ու դասախոսների, և ENA[38]-ում՝ քաղաքացիական բարձր պաշտոնների զբաղեցնողների զավակներ: Վերադառնալով ամուսնությանը՝ ուսանողների միատարր խմբերն այն մեխանիզմներից մեկն են,

[35] Մաքսվելի դև - 1867 թ. բրիտանացի ֆիզիկոս Ջեյմս Կլերկ Մաքսվելի կողմից հորինած մտավոր էքսպերիմենտ, ինչպես նաև վերջինիս գլխավոր հերոսը՝ շատ փոքր երևակայական գիտակից երևույթ, որով հեղինակը նպատակ ուներ պատկերել ջերմադինամիկայի երկրորդ օրենքի թվացյալ պարադոքսը (թարգմ.):

[36] Hautes études commerciales de Paris (HEC Paris) - Փարիզի բիզնես դպրոց (թարգմ.):

[37] École normale supérieure (ENS) - Փարիզի բարձրագույն դպրոց (թարգմ.):

[38] École nationale d'administration (ENA) - Պետական կառավարման բարձրագույն դպրոց (թարգմ.):

որոնց շուրջ իրականացվում է գրեթե նույնչափ կատարյալ միատարրություն, ինչպես և ընտանիքների միջամտությամբ: Ինչո՞ւ: Որովհետև այդ ուսանողների խմբերը նույնչափ միատարր են, որչափ և հնարավորինս սոցիալական: Ես բավականաչափ շեղվեցի բուն թեմայից, սակայն ցանկացա ձեզ ծանոթացնել երևույթների հետ այնչափ հստակ, որչափ և համալիր կերպով:

Ինչի՞ն կարող է գործնականում ծառայել սոցիոլոգիան: Հարցին ամբողջապես տեղյակ լինելով՝ սոցիոլոգիան կարող է թույլ տալ իրականացնել գործողություններ, որոնք գործնականում աղոտ կերպով են իրականացվում: Երբ, օրինակ, սոցիալական կապերի դիագրամ են կազմում, հոգեբանությունն ավելի հեշտ է տարածվում կրթության համակարգի վրա, քան սոցիոլոգիական փաստարկներով հանդերձ՝ սոցիոլոգիան, ճայում ենք Պոլին, քանի՞ ընտրություն: Գոնե մեկ նշում կա՞, թե ոչ: Բայց անտեսում ենք Պոլի սոցիալական հատկանիշները: Եթե ընդունում էինք Պոլին՝ որպես միջին օղակի կառավարչի որդի, միգուցե կհասկանայինք ինչու, որովհետև կան ընտրություններ, որոնց սկզբունքը կարող է լինել կեցության նմանությունը: Նույնը ևան այն նախընտրությունների դեպքում, որոնք ունեն միջին դասին պատկանող դասախոսները մինչույն միջավայրին պատկանող աշակերտների նկատմամբ, իբրև սկզբունք այդ նախընտրությունն ունի (ու շատ ավելի վատ. պետք է բարձրագոչ նախադասություններ հնչեցնեմ) մի հաբիթուս, մի փորձառություն, որը կգործածվի իբրև հատկություն, ընտանիքում փորձառությամբ ձեռք բերված գիտելիք, սոցիալիզացման, կրթության բոլոր գործողությունների միջով անցնող կարգավորումների, անփոփոխ կեցության, ճաշակների, նախընտրությունների և այլնի համակարգի պես մի բան, որն ուղղված է միևնույն ժամանակ մեր՝ մյուսների ընկալման, մեր՝ սննդի ընկալման, մեր՝ սեռական զուգընկերոջ, ընկերների ընտրման և այլնի խնդիրներին: Միջոցների այդ համակարգը, սոցիալական այդ ակնոցները, որոնք

մենք կրում ենք ու կարծում, թե կուրորեն գնում ենք կամ գնում դեպի ազատություն, կողմնորոշում է զույգերի, դիսցիպլինի և այլնի ընտրությունը:

Ինձ թվում է՝ ավելի լավ ենք տեսնում, թե ինչ կարող է անել սոցիոլոգիան: Դասավանդողը կարող է կիրառել սոցիոլոգիան՝ փորձելու լինել հասկանալի և ավելի լավ հասկանալ իր քայլերը. լինել դասավանդող բնավ չունի այն նույն իմաստը, ինչ երեսուն տարվա միջին օղակի ղեկավարի աղջկա, նույն հիսուն տարեկան կնոջ անչափահաս որդու դեպքում: Այս տարբերությունները, որոնք չպետք է դիտարկել որպես ճակատագրական երևույթ, կկողմնորոշեն աշակերտների ընկալումը շնորհիվ նրա, ինչն անվանում եմ հաբիթուս: Վերջինս կդառնա լիովին անգիտակից նախընտրությունների սկզբունքը, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեն առանձնաշնորհության (favoritisme) հետ, որոնք իրենց իմաստով ավելի վատն են, քան գիտակից առանձնաշնորհությունը, որը կարող է լինել մանկավարժության սկզբունքը կամ մանկավարժության գնահատականը, աշխատանքի գնահատականը՝ ճգնավորական, պուրիտանական կամ հակառակը՝ «հանգստացնող», նոր ոճ, արհմիությունների և կուսակցությունների և այլնի վերաբերյալ կարծիքները: Սոցիոլոգիայից կարող ենք ստեղծել գիտելիքի մի գործիք, որն էլ և հենց սոցիալականապես ստեղծված այդ «հատկանիշն» է, ինչպիսին հաբիթուսն է ու, միևնույն ժամանակ, սոցիալական ինստիտուտները, որոնցում այդ հատկանիշը հանդես կգա, սոցիալական բնույթի այդ տեսակը, բնականաբար, ըստ սոցիալական տարածության, որում այն կգործի, ամեն անգամ կթողնի տարբեր ազդեցություններ: Գոյություն ունի սոցիոլոգիայի կլինիկական կիրառում՝ կարող ենք սոցիոլոգիական վերլուծությունն իր եզակիության շրջանակներում կիրառել մի մարդու վրա ու հասկանալ այն, ինչը գերազանցապես իզուր մնում է հոգեբանությանը: Ինձ թվում է՝ սոցիոլոգիայի գործն է մշակել անհատի գիտակցությունն այնպես, որպեսզի

այնուհետև հոգեբանությունը կարողանա իրապես կատարել իր գործը (ես ոչ մի վատ բան չեմ տեսնում հոգեբանորեն բացատրել այն, ինչը հոգեբանական չէ):

Վախենամ չափազանց շատ եմ խոսքս երկարացնում: Համոզված էի, որ քննարկումը հիմա է սկսվում, անընդմեջ ինքս ինձ ընդհատում էի, բայց շատ եմ վախենում այս դատարկ շարքերից, այս հեռավորությունից, որոնց մասին անընդհատ խոսում էի և այս պահին էլ դեռ շարունակում եմ խոսել: Համարում եմ, որ մանկավարժությունը մեծ առաջընթաց կապրեր, եթե մի կողմից՝ կիրառական մանկավարժության սոցիոլոգիական սկզբունքները դառնային ավելի գիտակից, և մյուս կողմից՝ եթե նախապես սոցիոլոգիայի վրա հիմնված կիրառական մանկավարժությունն իր ճիշտ տեղում ընդուներ հոգեբանության բոլոր ներդրումները, տվյալ պահին՝ շատ ավելի հզոր: Համարում եմ, որ ընկալման շրջանակներում կարևոր է կրկին ներառել սոցիալական բաղադրիչը, և որ հաճախ բաց թողնելով սոցիալականի ընկալումը՝ հրաժարվում են իրական գործողությունների հնարավորությունից, որովհետև որոշակի առումով այն, ինչ ստեղծեց սոցիալականը, այդ նույն սոցիալականն էլ կարող է քանդել, մինչդեռ էության հետ ոչինչ չենք կարող անել: Իմ սկզբնական գործն էր քանդել այն, ինչը կոչում եմ շնորհքի գաղափարախոսություն:

Վերջինս լիովին կործանարար է, քանզի իրապես ճակատագրապաշտական է: Այն պահին, երբ երևան են գալիս այդ տարածայնությունները, որոնց ընտելացնում ենք, սահմանում որպես բնական՝ դրանք համարելով շնորհք, անմիջականորեն կապված են սոցիալական առանձնահատկություններին. այն, ինչ անում է սոցիալականը, նույն սոցիալականն էլ կարող է քանդել այն, ինչ պատմականը պատմության միջոցով կարող է վերափոխել (ակնհայտորեն երբեմն առկա է անդարձելին, շատ հզոր, ընդհանուր սոցիալական բնույթի խոչընդոտներ): Վերընտրին ուսուցչի ընկալման մեջ ներառել աշակերտների սոցիալա-

կան չափումը, հենց սա է, որ նրան ավելի շատ ազատություն է տալիս: Կարծում եմ՝ քողազերծելով անհրաժեշտությունը՝ սոցիոլոգիան մի քիչ ազատություն է տալիս: Հակառակ վայրի ու ուտոպիստական մանկավարժության՝ բանականության վրա հիմնված մանկավարժությունը փորձում է առավելագույնս օգուտ քաղել ազատության տարածություններից՝ անհրաժեշտության դեպքում, հավանաբար, իմանալով ծառայեցնել անհրաժեշտության մի տեսակը մյուսին:

Պիեռ Բուրդիե. Սպասում եմ նոր հարցերի:

Ռոնալդ Կլապկա. Մեկն արդեն հնչում է:

Հարց. Երբ խոսքը գնում է երեխաներին ընդգրկելու մի լեզվական միջավայր, որին որոշներն այդպես էլ երբեք հաղորդ չեղան, անհի՞մն է լիովին տարրական դպրոցի մակարդակում «ուսուցչի» խոսքում տեղ գտած «բռնարարք» արտահայտությունը:

Պիեռ Բուրդիե. Միաժամանակ կպատասխանեմ ու ցույց կտամ, թե ինչ հարաբերությամբ է սոցիոլոգիան կապված լեզվական միջավայրի հետ: Ըստ էության, դա սոցիոլոգիային չվերաբերող հարց է: Գոյություն ունեն հաղորդակցման այնպիսի վիճակներ, որում լիազորված խոսող անձն այնքան է լիազորված, որ պակաս կարևոր է՝ նրան հասկանում են, թե ոչ, ինչպես, օրինակ, քաղաքական իրավիճակների մեծ մասը: Իրավիճակների մեծ մասում կատարվածի էականը գտնվում է այնպիսի պայմաններում, որը ստիպում է, որպեսզի այն, ինչ տեղի է ունենում, կատարվի: Այսինքն՝ էական մասն անցնում է աննկատ: Գլխավոր սոցիալական փաստը հետևյալն է՝ սոցիալական աշխարհում ամենակարևոր բաները ինքնըստինքյան հասկանալի են, և սոցիոլոգի դերն է ներկայացնել այդ գիտակից բաները ու դրանք գիտակից դարձնելով՝ վերարտադրել հնարավոր գործողությունը:

Ես վերաձևակերպեցի հարցը՝ բռնարարք չկա, դա այդպես է: Հեղինակությունն այստեղ է, և դա փաստ է: Լինում են դեպքեր,

երբ սոցիոլոգիան արձանագրում է արժեքավոր դատողություններ, եթե թույլ է տրվում բառերի միություն: Այն պահից, երբ նա սկսում է խոսել, իր ողջ լիազորված իշխանությամբ հանդերձ, դասավանդողն իր լեզուն պարտադրում է լսարանին, ինչն անցել է նրան իր դիպլոմների, կոչումների, կրթական համակարգի շնորհիվ, և նա, ով չունի այն լեզուն, որն օգտագործում է, նրան մնում է միայն դուրս գալ լսարանից: Նա նույն րոպեին դուրս չի գալիս: Սակայն ընդհանրապես... երբ սա ասում եմ, մեղքի զգացում առաջացնելու նպատակ չունեմ: Փաստն այն է, որ որպես դասավանդող՝ ունեմ ամբիոն, գրատախտակ, այդ ես եմ, որ գնահատականներ եմ նշանակում և լավ լեզվի կրողն եմ հանդիսանում: Ուստի, սահմանած ունենալով այդ փաստը, կարող ենք ասել, որ ես դիմում են մարդկանց, որոնք լավ լեզվի կրողը չեն, ի՞նչ պետք է անեմ, պարտավո՞ր եմ, օրինակ, խղճիս վրա վերցնել լեզվի ճանաչման հարցը: Չե՞մ կարող արդյոք օգտվել այդ լավ լեզվի ընձեռած իշխանության հեղինակությունից: Վերլուծությունը ոչ մեղքի զգացում առաջացնող, ոչ էլ դեմոբիլիզացնող երևույթ է, այն թույլ է տալիս ընտրություն կատարել պատճառի ողջ գիտակցմամբ: Եթե ասում եք՝ այդպես է, այլ կերպ չեմ կարող վարվել, վերահսկիչն ինձ թույլ չէր տա, դուք ընտրեցիք: Եթե ասում եք. «Ցանկանում եմ տապալել մանկավարժական զեկույցը», ապա դեռևս պատրաստվում եք օգտվել մանկավարժական հեղինակությունից՝ որակազրկելու գերիշխող լեզուն: Բայց դա ի՞նչ է ենթադրում: Մի դասարանի նկատմամբ (կրթական իմաստով) պատրաստվում եք իրականացնել հարաբերականորեն ինքնուրույն լեզվական առուծախ, որտեղ կկարողանան խոսել ժարգոնային լեզվով, որտեղ կկարողանան խոսել այնպես, ինչպես տանը (ենթադրենք՝ դա հնարավոր կլինի, ինչն իրականում ուտոպիա է): Արդյո՞ք դա սոցիոլոգիապես իրատեսական է: Սոցիոլոգը ձեզ կասի՝ ուշադրություն, դուք ստեղծում եք ինքնավար կղզյակ մի աշխարհում, որը շարունակում է գործել այլոց օրենք-

ներով: Կարո՞ղ են արդյոք մանկավարժական ենթատարածություններում մանկավարժական հեղափոխություն անել՝ առաջ չքաշելով լեզվական գերակայության ձևափոխման փոխհարաբերությունների համընդհանուր խնդիրը: Սակայն որտե՞ղ է գտնվում լեզվական գերիշխանության հարաբերությունների սկզբունքը: Պետք կլիներ երկարաձգել, վերլուծել այն ավանդը, որը գրականությունն ունեցել է գերիշխման փոխհարաբերությունների վերարտադրման գործում, օրինակ՝ այնպիսի երևույթներով հանդերձ, ինչպիսի ավանդ որ ունենում են գրական մրցանակներով գրականության ոլորտում, հագուստի հավաքածուներով՝ բարձր նորաձևության մեջ: Եթե ավելի երկարացնեինք այդ վերլուծությունը, վերջում դուք կդառնայիք ինձ պես ու կասեիք՝ գաղափար չունեմ, թե ինչ է պետք անել: Մեր զրույցի մեկնարկին ունեցած սոցիոլոգի կերպարը ես պատրաստվում եմ ավելի զորեղ դարձնել. վերջիվերջո ի՞նչ է իրենից ներկայացնում այն տեսաբանը, ով մեր ունեցած խնդիրների հետ միասին դասարանում մեզ լիովին մենակ է թողնում: Կիսվեմ իմ համոզմունքով: Իրականում, ինձ ուղղած ձեր հարցերի մեծ մասը վերաբերում է մարգարեին և ոչ թե սոցիոլոգին: Մարգարեն նա է, ով պատասխանում է ամեն ինչին այնպես, ինչպես Փարիզ կանչված մի նոր փիլիսոփա, ով ձեզ պատմում է ամեն ինչ սովետական ճամբարների ու Իսրայելի պատերազմի փոխհարաբերությունների, համալսարանական ռեֆորմների և գիտական առաջընթացի մասին: Ինձ թվում է՝ պատասխանել այն հարցին, թե ինչպես եմ ես դա անում՝ յուրաքանչյուրին թողնելով քիչ ավելի լավ առաջադրված խնդրի առջև, իրենից քաղաքական ակտ է ներկայացնում: Եթե ծավալեի որևէ քաղաքական գործունեություն, ապա կկամենայի մարդկանց տրամադրել միջոցներ, որպեսզի մտածեն, թե ինչն է քաղաքական գործիչներին պարտավորեցնում մտածել իրենց փոխարեն:

Հոգեբանի հարցը. կլինիկական/վիճակագրական հակադրության վերաբերյալ:

Պիեռ Բուրդիե. Երբ ասացի կլինիկական, դա միմիայն հաղորդակցման կարիքների համար էր. բնականաբար սոցիոլոգիայում, ինչպես հոգեբանությունում, օրենքներն են ենթադրում վիճակագրությունը: Այնքան երկար ժամանակ, քանի դեռ մենք ունենք միայն մի քանի դեպք, կարծես թե ոչինչ էլ չենք ունեցել: Այսինքն՝ համարում եմ, որ գոյություն ունեն ավարտուն, անկատ բաներ, որոնք սկզբում ըմբռնում ենք միայն շատ խորը ուսումնասիրման դեպքում: Այն, ինչ ես այստեղ ասում եմ, դեմ է իմ գիտակարգի (դիսցիպլինի) բոլոր ավանդույթներին. մասնակի կապված լինելով վիճակագրությանը՝ շատ հաճախ սոցիոլոգիան նախընտրում է աշխատել ավելի շուտ ընդլայնված, քան լարված վիճակում, ու հաստատվեց մակերեսային կանոնավորություն: Սակայն այդ մակարդակում մնալով՝ նրանք ոչինչ չէին հասկանա: Ողջ բարդությամբ հանդերձ՝ երբեմն մեծ գիտական քայլեր են անում շատ քիչ քանակությամբ ուսումնասիրված օրինակների շատ խորը հետազոտության միջոցով և որոնցից սկսած՝ կարողանում են նոր թափ հաղորդել մեծամասշտաբ վիճակագրական արդյունքների ստուգմանը: Կարևոր է վերադառնալ այդ գիտակցմանը ոչ թե յուրահատկությունից, այլ ընդհանուր հատկանիշներից ելնելով, որոնք ներառում են միայն առանձնահատուկ մասշտաբ:

Ճշգրտման պահանջ. «Այն, ինչ ստեղծում է սոցիալականը, վերջինս էլ կարող է քանդել» արտահայտած մտքի շուրջ և սոցիալական խոչընդոտի դեմ որևէ բան անելու հնարավորության մասին:

Պիեռ Բուրդիե. Դա շատ բարդ խնդիր է: Միանշանակ է՝ չեն կարող որոշման, կրթական ռեֆորմի միջոցով վերացնել սոցիալական խոչընդոտը: Գտնում եմ, որ այն մարդիկ, ովքեր չեն ընդունվում աշխարհի կողմից այնպիսին, ինչպիսին որ կան, ովքեր ցանկանում են կամ վտվտխվել, կամ հեղափոխել սոցիալական աշխարհը, մշտապես գերագնահատում են տրանսֆորմացիայի

հնարավորությունը: Գտնում եմ՝ որքան սոցիոլոգիան առաջադիմի, այնքան ավելի հոռետեսական կթվա: Որքան սոցիոլոգիան ճանաչի հարկադրանքի մեխանիզմները, այնքան ավելի շատ մենք կիմանանք այն, ինչ մեզ հարկադրված է իմանալ, այնքան ուտոպիզմի այդ անպատասխանատու ձևը, որը հաճախ փոխարինում է ձախակողմյան թևի կուսակցությունների քաղաքական ծրագրին, կտուժի: Սոցիոլոգի դերերից մեկը, ասենք՝ այն դերը, որն ինձ որպես սոցիոլոգ վերագրում եմ, հետևյալն է՝ ուշադրություն, չպետք է գերագնահատեք սոցիալական աշխարհում մեր ունեցած իշխանությունը: Որովհետև այն նույն մարդիկ, որոնք հանդես կգան վատատեսությամբ, սոցիոլոգիայի գիտաժողովին ոտքերը քարշ տալով, կլիազորեն նրանց, որոնք հազար անգամ պակաս գիտեն սոցիալական աշխարհի, այդ աշխարհում գործող իշխանության մասին:

Իմանալ այն, թե ինչ պետք է անել, ու ինչ կարող են անել, որպեսզի պայքարելով հասնեն սոցիալական օրենքների արդյունավետությանը, որոնք ձգտում են վերարտադրել անարդարության օրինակներ, սոցիոլոգիան կարող է միայն նախազգուշացնել ուտոպիզմից զգուշանալու մասին: Ակներև է, որ որոշման միջոցով չենք ազդում նման բաների վրա:

Մանկավարժական ռեֆորմն անցնում է պայմանագրով աշխատողներից վերջինի միջոցով, ով միայն վերջերս նշանակվեց Ազբրուկի (Hazebrouck)[39] դպրոցում: Եվ սա այն բոլոր մարդկանց փոխազդեցությունն է, որոնք կներդնեն իրենց մանր շահերը, իրենց մանր նկրտումները, իրենց ունեցած դիպլոմը, ինչպես նաև այն, ինչը կցանկանային ձեռք բերել, իրենց պարտությունները, իրենց հաջողությունները և այլն, որը (փոխազդեցությունը) ջրի երես կհանի կրթական համակարգի ապագան:

Ուստի պետք է քաղաքական գործիչների մասնագիտական գաղափարախոսության մի մասը լինել կարծելու, թե տիրում են

[39] Ֆրանսիայի հյուսիսում գտնվող համայնք (թարգմ.):

պետական ապարատին (դա լենինյան մոդելն էր) ու հետո միայն սեղմել կոճակներն ամեն ինչ փոխելու համար: Կարծես թե նախարարներն էին պատասխանատու… նրանք ոչ մի այլ բանի ունակ չեն, քան իրենցից երևակայել, թե պատասխանատու են:

Սա հոռետեսական փիլիսոփայություն չէ, այլ հակառակը, խորքային վերափոխման գործողությունները ենթադրում են խորքային մոբիլիզացիա, մեկնաբանություն, ենթադրում, որ իր հայտնվելով յուրաքանչյուրը պետք է իմանա քիչ ավելին այն ամենի մասին, ինչ նա անում է: Սակայն ես ուղիղ կերպով չպատասխանեցի հարցին՝ իմանալու, թե արդյոք կարող ենք ինչ-որ բան անել ընդդեմ սոցիալական խոչընդոտի:

Հարց հետազոտողի կարոտի վերաբերյալ…

Պիեռ Բուրդիե. Խնդիրներից մեկը, որը բավական երկար ժամանակ ինքս ինձ առաջադրում եմ, կարոտի ձևն է՝ հետազոտական պրակտիկայում հետազոտությունն իրոք կողմնորոշել պրակտիկ հետազոտության ուղղությամբ: Որոշ արհմիությունների հետ ունեցածս կապերը ցույց են տալիս, որ այն, ինչ նրանք անում են, հետազոտողները չեն կարող անել, որովհետև կան վայրեր, որտեղ հետազոտողները մուտք գործելու հնարավորություն չունեն, ինչն արհմիություններին ավելի լավն է դարձնում, քանի որ հետազոտողների օգնությամբ նրանք կարողանում են բարելավել իրենց նկատառումները, վերլուծությունները և այլն: Դա հեշտ բան չէ: Որովհետև չնայած դասավանդողների մոտ սոցիոլոգիան կբախվի պաշտպանողական ագրեսիվ հակահետելեկտուալիզմին, այնուամենայնիվ, արհմիություններում պետք է հաշվի առնել աշխատավոր դասի առկայությունը, որն ունի նույն գործառույթները: Հետազոտության և դրա պրակտիկ մասի իրագործման ռեալ ամբողջականացման համար առկա են հիերարխիկ խոչընդոտներ, մի խումբ սոցիալական արգելքներ: Բացի դրանից՝ մնացած բոլոր վատ հետազոտողներն ունեն կեն-

սական հետաքրքրություն առ այն, ինչ հարակցությունը (connexion) չէր անի:

Հարց. Սոցիոլոգիայի կողմից լեզվաբանականի առարկման վերաբերյալ: Գոյություն ունի՞ սոցիոլոգիայի կողմից ի հայտ եկող իմպերիալիստական նպատակ կամ ինչ-որ գայթակղում:

Պիեռ Բուրդիե. Ահա այն թյուրիմացություններից մեկը, որն առաջացնում է սոցիոլոգիան: Ցանկացած գիտություն տրվում է հնարավորի ծրագիրը մեկնաբանելու համար՝ դուրս չգալով սեփական սահմաններից, օբյեկտի սահմանմանը բնորոշ չափանիշներից: Օրինակ՝ այն, ինչը շոշափում է մարմնին վերաբերող բոլոր երևույթները, հակված կլինենք ասելու, որ դա կենսաբանության կամ հոգեվերլուծության գործն է: Տվյալ դեպքում սոցիոլոգի համար գոյություն ունի մարտահրավերի պես մի բան: Ես ցույց տվեցի, որ ուրիշների կողմից սեփական մարմնի պատկերի կազմումն անհատականության ամենակարևոր էլեմենտներից մեկն է: Կլինիկական կենսագրությանը չանդրադառնալով, որը քննում է հոգեվերլուծությունը, սոցիալական փոփոխականներից սկսած՝ կարող ենք հասկանալ անհատականության կառուցվածքին վերաբերող որոշ քանակի շատ կարևոր երևույթներ: Որպես սոցիոլոգ, կարծում եմ, սա կթողնեմ կենսաբանական շնորհքներին, հոգեբանական փոփոխականներին, որպեսզի հետո փորձության ենթարկեմ բոլոր հնարավոր սոցիոլոգիական փոփոխականները՝ թույլ տալով պաշտպանվել հոգեբանին ու լեզվաբանին: Աշխատանքիս իմաստն է ստիպել որքան հնարավոր է հետ քաշել սահմանը: Բայց բնավ ոչ իմպերիալիզմի միջոցով: Ընդհակառակը, ինձ թվում է, որ այս պահին սոցիոլոգիան լեզվաբանությանը ծառայություն մատուցելու ճանապարհին է՝ հակադրվելով այդ տոտալիտար մոդելին: Լեզվաբանությունն իր մոդելը պարտադրելու միջոցով հասնում է նրան, որ սին է դարձնում սոցիալական գիտությունները, մարդաբանությունը, սոցիոլոգիան և այլն: Հուսամ՝ լեզվաբաններն առաջ կքաշեն այն խնդիր-

ները, որ իրենց գերակայությունը թույլ էր տալիս իրենց խույս տալ: Գիտությունների միջև բախումը կենսական երևույթ է. գիտությունն առաջադիմում է բախման միջոցով:

Հարց. «Լեզուն որևէ կոնկրետ իրավիճակում ու կառուցվածքային գործունեությունում»:

Պիեռ Բուրդիե. Լեզվին վերաբերող հարցերին տրված իմ պատասխաններում առանձնապես շատ չհամառեցի, որովհետև ենթադրում էի, որ հենց այդ ոլորտում էին առկա ամենից շատ հղկված հարցերը: Սակայն, դա չի նշանակում, որ դրանք ինձ չեն հետաքրքրում: Դատարկ տեղն իրականացնել լեզվի կառուցվածքային գործունեություն, կարող ենք ասել, որ հենց սա է լեզվի առանձնահատկության անտեսումը, ինչը հիշատակում են սոցիոլոգները: Յուրաքանչյուր լեզու ստեղծվում է տվյալ իրավիճակում գործածված լինելու նպատակով, որը չի նախապատրաստում առօրյա կյանքի այլ իրավիճակների համար, երբ պետք կլինի խոսել տվյալ իրավիճակում, ինչը հարկավոր կլինի ներմուծել կյանք և այլն: Փաստորեն, կարիերա անելու համար կյանքում կան բազմաթիվ իրավիճակներ, և անշուշտ շատ ավելի կարևորները, երբ պետք է խոսել այնպես, կարծեք թե իրականացնում ես կառուցվածքային գործունեություն, օրինակ՝ քննությունները, հարցազրույցները, քաղաքական իրավիճակները: Ի՞նչ է անում սոցիոլոգիան: Այն ձեզ հարցնում է. «Ի՞նչ ասել է կրթական դրություն»: Այն ձեզ ասում է՝ ինչպիսին էլ լինեն կյանքը դպրոց բերելու ձեր ջանքերը, միևնույն է, դպրոցը դպրոց է, արհեստական աշխարհ: Լեզվի շուրջ մտորումներիս մի մասը ծնվեց կրթական ոլորտում լեզվի օգտագործման մասին դատողություններից: «Ոչնչի համար» դպրոցը պահանջում և փոխհատուցում է լեզվի օգտագործումը: Սոցիալական դասերի ծագման համաձայն՝ լեզվի այդ գնահատականը շատ անհավասար եղանակով է խրախուսվում: Այլ կերպ ասած՝ այն, ինչը բնորոշում է տարբեր միջավայրերին, դա, ի թիվս այլոց, հնարավորություն է

այդտեղ խոսել՝ խոսելու համար, իրավիճակից դուրս, այսինքն՝ խոսել դպրոցում գերիշխող եղանակին մոտ եղանակի մասին: Որտեղից էլ ինքնավերլուծության պես մի բան անելու կարևորությունը, ի՞նչ է նշանակում խոսել կրթական վիճակի մասին, ո՞րն է արտահայտման այն ձևը, որը ես պահանջում եմ, երբ ծաղրում եմ «պատմեք ձեր վերջին արձակուրդների մասին» արտահայտությունը, մի բան, ինչը ոչ ոք ինքնաբերաբար չէր անի նույնիսկ իր տատիկի համար: Քաղաքական կարծիքի ուսումնասիրությանն ուղղված հարցաթերթերում, հարցումներում նկատում ենք, որ սեռից, սոցիալական պատկանելիության դասից, կրթական մակարդակից կախված՝ չպատասխանածների տոկոսը տատանվում է:

Մասնավորապես ուշադրություն են դարձնում, որ այն չպատասխանած հարցերի տոկոսը, որոնք պետք է «պատասխանված լինեին», այդ վիճակը, որ պահանջում է դպրոցը, սերտորեն կախված է կրթական մակարդակից: Այս տեսակ չեզոքացված դիսկուրսները, որոնք հարկավոր է պահել թեկնածուականներում, ըստ սոցիալական դասերի՝ բաշխվեցին շատ անհավասար եղանակով: Նույն հարցվողները որոշակի կարգով ձեզ կներկայացնեն Ռենոյի աշխատակիցների և արհմիության միջև առկա կապի հիասքանչ տեսություն, եթե դուք նրանց հարցնեք. «Ի՞նչ եք կարծում՝ պե՞տք է արդյոք արհմիությունների գործունեությունն ընդլայնվի ի շահ սովորական աշխատողների և այլն», շարունակությունը կարևոր չէ: Ի՞նչ հետևություն կարվի մանկավարժական տեսանկյունից: Ոչ մի: Ավելի լավ է լինել ազնիվ ու չստիպել կարծել, որ մանվարժական հարցերի համար գոյություն ունեն գիտական պատասխաններ: Ինչ վերաբերում է կոնկրետ խոչընդոտների խնդրին, ապա մեր աշխատանքն է պատմականորեն կապ ստեղծել պարտադիր դպրոցական ուսուցման հետ, որի ի հայտ գալը պետական դպրոցում սոցիալապես նախատեսված չէր, ինչպես նաև բժշկահոգեբանական

դասդասաբանության երևան գալը, որի հարացույցը (պարադիգման) ներկայացված է Բինեի[40] աշխատություններում: Այդ աշխատանքները լույս են սփռում հոգեբանության և դրա ֆունկցիաների վրա, իսկ այնուհետև տեսնում ենք, թե ինչպես սոցիոլոգիական բնույթ կրող մի շարք խնդիրներ դառնում են բժշկական (QI-ի[41] օրինակը): Ըստ իս՝ բոլոր դարաշրջաններում կա պայքար հաճախորդների մենաշնորհության համար, բժշկականացնելով (médicaliser) կատեգորիան՝ նշանակում է ապահովել հաճախորդների շուկա:

Օրինակ՝ հոգեբույժների և հոգեվերլուծաբանների միջև առկա է առճակատում, ինչն արտացոլվում է գիտական մակարդակով: Կարևոր է, որպեսզի դասավանդողներն իմանան, թե ինչպես են իրենց վերաբերում այդ բախումներում: Կարծում եմ՝ կարևոր է իմանաք, որ հետազոտություն անելը նույնպես ձեր գործն է: Ուտոպիստ թվալու վտանգով կնշեմ, որ ամենաբարձր կրթական աստիճանին անհրաժեշտ կլիներ տրամադրել ամենաբարձր տեսակի պայմանական կրթություն: Կրթական համակարգի թողած հետևանքներում կան ստորակարգային ազդեցություններ, որոնք ստիպում են, որպեսզի մարդիկ, անգամ եթե նրանք հասկանում են, իրենց վրա չզգան հասկացման իրավունքը (դա մի բան է, ինչը ես զգացի՝ կարդալով որոշ հարցաթերթեր): Կրթական համակարգը պետք է ստեղծի տարբերություններ և ճանաչելի տարբերություններ, ու պետք է ստիպել խոստովանել այն մարդկանց, որոնք արգելքի վատ կողմն են բռնել, չնայած որ նրանք այնտեղ էին և չէին կարող որևէ այլ տեղ լինել: Գոյություն ունի գաղտնի համոզման մի ձև, որն ազդում է կրթական համակարգի ու հատկապես այն մարդկանց վրա, ովքեր նշված կատեգորիաների շարքին են դասվում. դա ուսման համակարգի ներքին բաղա-

[40] Ալֆրեդ Բինե (1857-1911) - ֆրանսիացի հոգեբան, մանկավարժ, ղեֆեկտոլոգ, հոգեբնախոս (թարգմ.):
[41] Quotient intellectuel - ինտելեկտի գործակից (թարգմ.):

դրիչներից է, ինչը զարգացնում է հիշաչարության կեղևով պատված հակաինտելեկտուալիզմի մի ձև ու միևնույն ժամանակ ինտելեկտուալ հիերարխիայի չափազանց մեծ ընկալման տեսակ: Երկուսն էլ բացարձակապես իրարամերժ չեն՝ ի տարբերություն ագրեսիվության, որը, ընդհակառակը, հաճախ հանդես է գալիս որպես լոկ չափից դուրս հարգանքի ինվերսիա: Ենթադրում եմ՝ սա ունի միանգամայն կործանարար ազդեցություն այն իմաստով, որ մարդիկ իրենք իրենց հեռացնում են իմացությունից, գիտելիքից, որոնք ոչ միայն հնարավոր է ստանալ, այլև՝ անհրաժեշտ:

Հարց. Խորքային անդրադարձ հաշմանդամություն ունեցող անձանց հարցին:

Պիեռ Բուրդիե. Այդ խնդրի մասին չեմ ասում, որ լավ է, եթե իրենք լինեն կամ էլ չլինեն ներգրավված, այլ նշում, որ հաշմանդամների մենաշնորհության համար կա պայքար, որոնք իրենցից հաճախորդների հետաքրքիր խումբ են ներկայացնում: Օրինակ՝ այդ դաշտում մասնավոր հատվածը շատ ուժեղ մրցակցության մեջ է հանրային հատվածի հետ, ու դա այն կողմերից մեկն է, որով մասնավոր հատվածն ինչ-որ բան շահում է դաշտից: Ընդհանուր առմամբ, մասնավորը յուրացնում է դժվարին դաշտերը (հաշմանդամներ, ներգաղթյալ զավակներ, սոցիալական դեպքեր և այլն), որովհետև նա ի վիճակի է դա անել՝ հաշվի առնելով իր առանձնահատկությունները, և հետո դա ինստիտուցիոնալիզացվում է: Կան այս դեպքերով հետաքրքրված բավականաչափ անձինք, որպեսզի մնացած դատարկ տեղի շուրջ մրցակցություն լինի: Ու հաճախ գիտական մրցակցությունը միայն անձնակազմների միջև պայքարի արտացոլումը չէ. դա մրցակցություն է այն մարդկանց միջև, որոնք բոլորովին այլ կարգով են իրենց շահերը հետապնդում: Ավելին, բոլոր նրանք, որոնք այդ մարմնի շուրջն են պտտվում, այսօր պայքարի մեծ նպատակ ունեն:

Հաճախորդ գրավելու համար գիտական կեղծ բախումները հաճախ, այսպես կոչված, ինտելեկտուալ մարմինների շահերի կոնֆլիկտի վերահաղորդումն են: Ինչպիսին էլ լինի սահմանումը, հաշմանդամների, ինչպես նաև հոգեկան հիվանդների դեպքը, բոլոր այդ կրկնապատկված կատեգորիաներն առաջադրում էին գլխավորապես կրթական համակարգին առնչվող խնդիրներ. այդ բոլոր դեպքերը չեն կարող մենաշնորհային ձևով կարգավորվել, այլ՝ մշակվել միայն մրցակցային հսկման արդյունքում: Հաճախ հետազոտությունից պահանջում են հարթել այնպիսի խնդիրներ, որոնք իրենը չեն, ու արդյունքում, երբ հետազոտողը պատասխանում է, անգիտակցաբար ճնշող խմբի տրամադրության տակ է հայտնվում:

Հարց. Դասավանդողի նկարագրի արժեզրկումը:

Պիեռ Բուրդիե. Անկեղծ ասած, դասավանդողի կարգավիճակը քիչ ուսումնասիրված դաշտ է: Դասավանդող անձնակազմների մասին բավականաչափ հաջող հարցաթերթեր չունենք, և հատկապես բացակայում են, ինչը շատ ավելի կարևոր կլիներ, երկայնակի հետազոտությունները, որոնք թույլ կտային համեմատել տարբեր պահերին դասավանդողի դերը սոցիալական տարածությունում մշակութային հազվագյուտության, շահերի կապի ներքո: Կնշանակի՝ կարող եմ տալ մի քանի ցուցումներ ու փորձել հստակեցնել հարցը: Մասնագիտության թվային աճի դասական արդյունք՝ ուղեկցված հազվագյուտության կորստով: Սովորական արդյունք, որն ապշեցրեց ողջ դասավանդող անձնակազմին: Ինձ թվում է՝ կան կառուցվածքային շատ կարևոր երևույթներ, օրինակ՝ բնակչության գերակշիռ մասի մոտ առկա միջին կամ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն, ինչը նույնպես ուղեկցվում է հազվագյուտության կորստով: Բացի դրանից, ըստ իս, այս երևույթը շոշափեց սոցիալական տարածությունում գտնվող ավելի շատ մշակութային, քան թե տնտեսական կապիտալով հարուստ բոլոր մարդկանց: Օրինակ՝

ինտելեկտուալների մակարդակում, նույն այդ ինտելեկտուալներին առնչվող հազվագյուտությունն իշխող հատվածների համեմատ, որոնք ավելի շատ տեղյակ են, քան թե անտեղյակ, արդեն հիսուն տարի է՝ կտրուկ անկում է ապրում. այս փոփոխմամբ իշխանության և ինտելեկտուալների միջև առկա ողջ հարաբերությունը վերափոխվեց:

Երբ խոսում ենք ծնողների վստահության պակասի մասին, ինքս ինձ հարց եմ տալիս՝ խոսքը գնո՞ւմ է մի բանի մասին, որը կծագեր յուրաքանչյուրիդ փորձառությունից ու եթե դա միջավայրում տարածում ստացած դիսկուրս չէ: Հարկ եմ համարում նշել ևս մեկ կարևոր բան՝ դասավանդողների շրջանում սեռային ու սոցիալական առումով կադրերի համալրման փոփոխությունը:

Ընդհանրացված դպրոցական ուսուցման ընթացքում դպրոցական տիտղոսների արժեզրկումը ու նրանց հարաբերական անկումը, դասավանդողի արհեստը, որն առաջընթացի եզրույթն էր այն մարդկանց համար, որոնք ծագում էին գյուղացու, աշխատավորի կամ որևէ այլ դասից, նույնպես դարձան տիտղոսներ ստացած մարդկանց հովանավորը, որոնց այլ դարաշրջանում հարգի կլիներ միջնակարգ դպրոցի ուսուցչի պաշտոնը: Այս փոփոխություններն ինձ կարևոր են թվում՝ հասկանալու հանրույթի ներսի կոնֆլիկտները, մանկավարժական տրանսֆորմացիաները, մանկավարժության վերաբերյալ տեղի ունեցող բախումները: Վերջնական շրջանում ապրված բազում կոնֆլիկտներ շատ արագ հասկացվում ու թեթևացվում են, հենց երևում է, որ դրանք համապատասխանում են սոցիալական հետագծերին ու շատ տարբեր անձնակազմ ունեցող անդամներին, այսինքն՝ այն կատեգորիայի մարդկանց, որոնք իրենց արհեստ են ներմուծում լիովին այլ հաբիթուսներ՝ արհեստի հետ փոխհարաբերություններ, անգիտակցական արժեհամակարգեր, աշխարհայացքներ, լիովին այլ ճաշակներ: Դասավանդողներից բաղկացած անձնակազմում նմանատիպ շատ բաներ են կատարվում, որոնք խիստ

կցանկանայի ի վիճակի լինել ուսումնասիրել: Այս պահին ավելին ասել չեմ կարող:

Այս առումով միջամտություն ավանդական մանկավարժության և բարեփոխված մանկավարժության շուրջ առկա կոնֆլիկտի վերաբերյալ:

Պիեռ Բուրդիե. Կարծում եմ՝ այստեղ նույնպես խոսքը գնում է վերջին կոնֆլիկտների մասին: Ինչ-որ տեղ ասել եմ՝ սա մի արտահայտություն է, որը բազմիցս կրկնում եք. «կան մարդիկ, ովքեր պատրաստ են կյանքը տալ ուղղագրության համար»: Կցանկանայի ասել, որ կան դեպքեր, երբ մանկավարժական նպատակները ծնունդ են տալիս այնպիսի հզոր ներդրումների, որոնք շատ լավ տեսնում ենք. խոսքն այլ բանի մասին է: Ենթադրում եմ, որ մանկավարժության ոլորտում տեղի ունեցող բազում կոնֆլիկտներ հիմնային բնույթ են կրում, որոնք ներառում են արժեհամակարգը, աշխարհայացքը, սեռականության, կենսակերպի վերաբերյալ պատկերացումները, սեփական մարմնի կառավարումը, կապել փողկապ, թե ոչ՝ ցուցաբերելով կամ էլ չցուցաբերելով հարգանք: Երբ նման երևույթները հարցականի տակ են դրվում, մարդիկ շատ վատ են դառնում: Խոսքը գնում է այնպիսի բաների մասին, որոնք շոշափում են ամենաատարրական ազդակները՝ պաշտպանում են իրենց սոցիալական կաշին, իրենց ապրելաձևը: Կցանկանայինն, որպեսզի սոցիալական աշխարհը լցված լիներ իրենց նման մարդկանցով (դա շատ կարևոր դեր է խաղում ինքնահամալրման (cooptation) վիճակներում): Նրանք պաշտպանում են իրենց հաբիթուսը, շատ ավելի կենսական մի բան, քան իրենց աշխատավարձը, ասել է թե՝ իրենց մասին կարծիքը, իրենց ինքնությունը, իրենց ինքնագնահատականը, իրենց հասունությունը, երիտասարդության մասին հիշողությունները, աշխարհը, ինչպիսին որ այն կուզեին լիներ. այն ամենը, ինչն իրենց կյանքն իմաստավորում է: Երիտասարդների համար ես մշտապես վատաբանում էի ծերերին, որովհետև դա շատ

ավելի դյուրին է. գոյություն ունեն մանկավարժական կապի մուտացիաներ, որոնք ակնհայտորեն գործառնական են (նրանց համար, ովքեր դրանք իրականացնում են): Միանգամից հասկանում ենք, որ հենց կապ են հաստատում դիրքի ու օկուպացնողի կապիտալի և վերջինս օկուպացրածի միջև, որոշների համար կա դիրքն իրենց չափով վերաձայելու մի կենսական շահ:

Հարցազրույց «Պետական արքունիքը» գրքի վերաբերյալ[42]

«Ժառանգները», «Պատճենը», «Տարբերակումը» աշխատություններից հետո Պիեռ Բուրդիեն այս շաբաթ հրատարակում է ևս մեկը, որը հղի է մեծ աղմուկ բարձրացնելու վտանգով: «Պետական արքունիքը» աշխատության մեջ ճշանավոր սոցիոլոգը մեր ուշադրությանն է ներկայացնում բուհերում շուրջ քսան տարի իրականացրած հարցումների արդյունքները: Վեց հարյուր էջ անողոք խստություն՝ միտված ավելի ու ավելի մերկացնելու վերնախավի շահերը պաշտպանող համակարգը: Ըստ նրա՝ բուհերն ապահովում են այն մարդկանց երեխաների սոցիալական ու տնտեսական իշխանության գրեթե ավտոմատ փոխանցումը, ովքեր այն արդեն իսկ ունեն: Սա նոր ձևավորվող արքունիք է, որն իր ուրույն տեղն է գրավում: Մի նյութ, որը «մի գդալ կուպր կլցնի երկուհարյուրամյա դպրոցի ավանդույթների մեղրի տակառի մեջ»:

Le nouvel observateur. Ինչո՞ւ այսօր անդրադարձաք կրթական համակարգին, որը մի կողմ էիք դրել «Ժառանգները», «Պատճենը» աշխատությունները լույս ընծայելուց ի վեր:

Պիեռ Բուրդիե. Հետազոտական նախաձեռնությունները ծանրակշիռ ներդրումներ են պահանջում: Բուհերի վերաբերյալ հարցումը սկսվեց 1966 թ. և տևեց մինչև 1969 թ… Ես անցա l'X[43], HEC[44], ENA[45] և այլ բուհերով: Այդտեղից էլ հովանավորության,

[42] Դիդիե Էրիբոնի և Պիեռ Բուրդիեի հարցազրույցը «Պետական արքունիքը» գրքի հրատարակման առթիվ տպագրվել է "Le Nouvel Observateur" ամսագիր 80-82 էջերում, 1989 թ. մարտի 9-15-ը: Աղբյուրը՝ http://www.homme-moderne.org/societe/socio/bourdieu/noblesse/entretienNO89.html, այցելվել է 20.04.2017 (թարգմ.):

[43] L'X (École polytechnique) - Պոլիտեխնիկ (թարգմ.):

[44] HEC (Hautes Etudes Commerciales) - Բիզնես ուսումնասիրությունների բարձրագույն դպրոց (թարգմ.):

հանրային բարձր գործառնության, բարձրագույն կրթության դասախոսական կազմի և այլնի վերլուծությունը: Այդպես, մնացի նույն ոլորտում, բայց աշխատանքիս նպատակները փոխվեցին. կարծում եմ՝ այսօր չեն կարող հասկանալ, թե բոլոր զարգացած հասարակություններում, Արևմուտքում կամ Արևելքում, ինչ ասել է իշխանություն, ոչ էլ վերջինիս փոխանցումը՝ առանց հաշվի առնելու դպրոցի ազդեցությունը:

Le nouvel observateur. Այդ դեպքում ինչո՞ւ եք նեղացնում բուհերի վերլուծության դաշտը:

Պիեռ Բուրդիե. Բարձրագույն կրթության հաստատությունների միության վերաբերյալ՝ սկսած ամենամեծերից ու ամենահայտնիներից, ինչպես ENS-ը[46], l'X-ը կամ ENA-ն, մինչև ամենաանշանները, ինչպես IUT-ը[47] կամ Լիոնի կաշվի գործարանի ֆրանսիական դպրոցը, որոնք ներկայացված են դիագրամաներում, ես իրականացրեցի հետազոտություն: Եվ այդ տարածքի ներսում, մանրադիտակի տակ զննեցի ամենամեծերին: Վերջինս ուներ երկու պատճառ, համաձայն իմ կողմից առաջ քաշված հիպոթեզներից մեկի՝ բուհերի տարածքը, այսինքն՝ այնքանով, որքանով որ նրանք ձևավորում են հարաբերությունների ու հակադրությունների մի կառուցվածք, նպաստում էր վերարտադրել տարբերություններ այն ներքին միջավայրում, ինչը սովորաբար կոչում են «կառավարող դասակարգ»: Սա ոչ թե դպրոցում ուսանելու պայման է, այլ այն ամբողջությունը, որը նրանք ձևավորում են, որ կարող են հասկանալ այն կարևոր գործառույթները,

---

[45] ENA (École nationale d'administration) - Կառավարման ազգային դպրոց (թարգմ.):

46 ENS (École normale supérieure) - Փարիզի բարձրագույն ուսումնական հաստատություն (թարգմ.):

[47] IUT (Instituts universitaire de technologie) - Տեխնոլոգիայի համալսարանական ինստիտուտներ, կազմում է Ֆրանսիայի համալսարանական համակարգի մի մասը, և այսօր առկա են 116 IUT-եր, որոնք կցված են 80 համալսարանների (թարգմ.):

որոնք նրանք իրականացնում են: Ulm[48] փողոցի վրա գտնվող բուհին կամ HEC-ին վերաբերող լավագույն մենագրությունները չեն կարող արտահայտել էականը, որովհետև վերջինս կայանում է նրանում, որ ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ կտրվածքով, իրենց գործունեության ու իրենց փոփոխության մեջ, այս կրթական հաստատություններն առնչվում են միմյանց հետ:

Le nouvel observateur. Այդ վերլուծությունը Դուք սկսել եք 1966 թ., շարունակել մինչև 1988 թ.: Ի՞նչ է փոխվել բուհում:

Պիեռ Բուրդիե. Բազում մակերեսային փոփոխություններ և միևնույն ժամանակ շատ մեծ անսասանություն էականի առումով: Մտավորականի կարիերայի համար նախապատրաստող բուհերն ու դեպի իշխանության ոլորտ տանող բուհերի միջև առկա արմատական հակադրությունները գտնվում են անփոփոխ վիճակում: Ճիշտ ինչպես երկրորդական հակադրությունների շարքում, ինչը ես մանրամասն վերլուծեցի: Բոլոր վիճակագրական տվյալները միտված են ցույց տալու, որ մեծ ու փոքր բուհերի կամ ֆակուլտետների, կամ էլ, թե նախընտրում եք, մեծ ու փոքր դռների միջև առկա տարբերություններն ավելի ընդգծված են դարձել, և որ բուհերի ներքին միջավայրի տարբերությունները հավասարապես աճում են: 68 թվականի շեմին, համակարգի՝ որպես իր նախասկզբնական ձևի վրա թողած հետևանքներից մեկն էր ստեղծել շատ միատարր մշակութային մեկուսացված տեսակներ, որոնք կարող էին համեմատվել կղզու բնակիչների հետ: Հաճախ էին նշում, որ ազգաբանները սիրում էին ուսումնասիրել կղզիները, որովհետև դրանք փակ աշխարհներ են, ու նրանց կարող էր թվալ, որ գործ ունեն լավ սահմանագծված օբյեկտի հետ: Ազգաբանների համար բուհերն իրենց մեջ ինչ-որ

[48] Փարիզի բարձրագույն ուսումնական հաստատություն (Écoles normales supérieures (ENS)) կամ նույնն է թե՝ "ENS de l'Ulm"՝ կոչված համանուն փողոցի անվամբ (թարգմ.):

չափով որոգայթներ են պարունակում, որտեղ ձգտում են ստեղծել հնարավորինս միատարր, փակ աշխարհներ. նախկին աշակերտների մոտ առաջացող կորսված դրախտի զգացումն այն փաստի հետևանքն է, որ հետագայում նրանք երբեք չեն վերագտնում այն մարդկանցից բաղկացած սոցիալական աշխարհները, որոնց հետ ունեին այդքան ընդհանուր բաներ. դա անհամաձայնություն խաղալու միջոց էր: Այսօր միատարրությունը, ավելի, քան երբևէ, շատ ուժեղ է արտահայտված: Ulm փողոցը երբեք չի արձանագրել հիմնադիրների կամ դասախոսների որդիների համամասնության նման աճ: Նույնը խոշոր առևտրականների կամ HEC արդյունաբերողների, կամ էլ ENA բարձր պաշտոն զբաղեցնողների որդիների համար:

Le nouvel observateur. Իսկ սոցիալական համալրման տեսանկյունից ինչպե՞ս է բնութագրվում էվոլյուցիան:

Պիեռ Բուրդիե. Դա շատ բարդ գործընթաց է, որը ես կարող եմ բնութագրել միայն իր սկզբունքի շրջանակներում, ու որը քողարկված է «դեմոկրատացման» շուրջ տարվող ամեն տեսակ դիսկուրսների ուղղությամբ: Գոյություն ունեն դպրոցական ուսուցման զանգվածային աճ և միևնույն ժամանակ մրցակցության ինտենսիվացում՝ այն արձանագրված արդյունքով հանդերձ, որով սոցիալական ընտրանքն առայժմ ընդարձակվում է: Դրա վերաբերյալ առկա են հազարավոր տվյալներ:

Ակնհայտորեն, 6-րդ դասարաններում հանդիպում ենք բոլոր սոցիալական ծագման աշակերտների, այդ թվում՝ և ներգաղթյալների որդիների: Բայց տեղի է ունենում անցում, և երկրորդ հերթին, երբ գործերը սկսում են լուրջ բնույթ կրել, ու հատկապես «լրջանում» է աղյուսակի երկրորդականը (տեսեք Louis-le-Grand[49] սոցիալական կազմման երկրորդ C-ն), գործը դեռ շատ ավելի փակ է, քան քսան տարի առաջ էր: «Դեմոկրատացումն» իրենից ներկայացնում է փաստացի մրցակիցների քանակի

[49] Լյուդովիկոս Մեծի լիցեյ (թարգմ.):

ավելացում. դպրոցական դասընթացի գոյատևումը շատ ավելի դժվար է, ուստի ինչպես մեկնարկի, այնպես էլ ողջ դասընթացի ընթացքում այս ավելի ու ավելի կարևոր ընտրանքում գոյատևելու համար հարկավոր է իմանալ մշակութային առավելությունները: Ulm-sciences[50], Ulm-lettres կամ Պոլիտեխնիկ հասնելու համար ավելի, քան երբևէ պետք է ունենալ մշակութային կապիտալ, և բացի դրանից՝ ընտանեկան մշակութային ժառանգությունն ավելի ու ավելի մեծ դեր է խաղում: Հետևապես, նմանատիպ բուհեր ընդունվող աշակերտների սոցիալական ծագումը չի դադարում նրանց բարձրացնել: Այսինքն՝ եթե 50-ականներին Ulm-lettres /գրականության ֆակուլտետի մոդալային/ տիպի (modal) ուսանողը ուսուցչի որդի էր, ապա այսօր նա դասախոսի և հավանաբար նույնիսկ բարձրագույն ուսումնական հաստատության դասախոսի որդի է:

Le nouvel observateur. Այսինքն՝ ինչ-որ իմաստով կարող են ասել, որ դա դասախոսների որդիների հաղթանակն է…

Պիեռ Բուրդիե. Այո, բայց դա այդքան էլ պարզ չէ… Քանի որ համակարգը վերարտադրվեց մի շարք գործողություններով, որոնք ես երկար նկարագրեցի, բազմաթիվ կողմնային ուղիներ, որոնք արքայական ուղուց ձախողվածներին առաջարկում են ուսումնական խոչընդոտի շրջանցման միջոցներ: Ցանկանում եմ խոսել մասնավոր դպրոցների, առևտրային, կառավարման, հաղորդակցման դպրոցների բուռն աճի մասին…

Le nouvel observateur. Երբ խոսում եք կրթական համակարգից «ձախողվածների» մասին, նկատի չունե՞ք ներգաղթյալ-

[50] Ընդհանուր առմամբ Փարիզի բարձրագույն ուսումնական հաստատությունը բաժանված է երկու մեծ հիմնական մասերի՝ հումանիտար գիտություններ և հասարակություն, կարճ գրվում է "lettres", որի մեջ մտնում են փիլիսոփայություն, լեզուներ և գրականություն, պատմություն, սոցիալական գիտություններ և այլն, և մյուսը՝ ճշգրիտ և բնական գիտություններ՝ "sciences", իր հերթին՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա և այլն (թարգմ.):

ների որդիներին կամ սոցիալական համեստ ծագումով երեխաներին:

Պիեռ Բուրդիե. Ոչ, այս մակարդակում նրանք երկար ժամանակ է, ինչ տեսադաշտում չեն երևում: Երբեմն շատ թանկ արժեցող, ապաստարան դպրոցներն ընդունում են թույլ մշակութային կապիտալ ունեցող բուրժուազիայի դասին պատկանող որդիների՝ խոշոր առևտրականներ, արդյունաբերողներ և այլն: Նրանք երկրորդ հնարավորությունն են տալիս իրենց աշակերտներին և նրանց տրամադրում ավազագույն անհրաժեշտ կոչումներ, որպեսզի ձեռք բերեն նոր մասնագիտությունների սահմաններում՝ շուկայագիտություն, գովազդ, ինչպես նաև՝ արդյունաբերության տարբեր ճյուղերին պատկանող մասնագիտություններ:

Մյուս կարևոր փաստն այն է, որ դպրոցների բուռն աճը փաստում է, որ շատ դժվար է այնտեղ կողմնորոշվել:

Լավ դիրքավորման զգացում ունենալու համար, նախ և առաջ, պետք կլիներ ունենալ հաստատությունների աշխարհին վերաբերող պրակտիկ տիրապետում կամ էլ քարտեզի նման մի բան իմ ներկայացրած դիագրամաների տեսքով (միգուցե գիրքս կողմնորոշիչ հանդիսանա...):

Բարձրագույն կրթության անհավասարության հիմնական գործոններից մեկը դիրքավորման զգացման անհավասար բաշխումն է, այսինքն՝ այն պրակտիկ գիտակցումը, որ ուսանողներն ու ընտանիքները կարող են ունենալ այդ առևտրից: Ջարտուղի ճանապարհները բազմապատկված են, որոնք գրեթե մշտապես նախատեսված են տնտեսապես լավագույնս ապահովվածների համար, սակայն դա տեղի է ունենում նաև պահեստային գծերի, փակուղիների, ծուղակների հետ, ինչպես որոշ ֆակուլտետների որոշ գիտակարգերի (դիսցիպլինների) դեպքում (գրականության, իրավունքի, նույնիսկ բնական գիտությունների), ուր կփակվեն

ցածր կամ միջին դասակարգին պատկանող կուրսերի ուսանողները:

Le nouvel observateur. Այո, որովհետև խլացման, մշուշի պես մի բան կա, ու աշակերտները կամ նրանց ընտանիքները շատ լավ չգիտե՞ն, թե որ մի դպրոցին նվիրվել:

Պիեռ Բուրդիե. Այդ հարցի լուծումը կարող են տալ միայն եզակի մարդիկ, որոնք գոնե մի քիչ պատկերացում ունեն խաղի կանոններից: Սակայն այստեղ էլ սխալվելու երկու եղանակ գոյություն ունի, կան մի խումբ մարդիկ, որոնք չգիտեն: Ու վերջիններս շատ են: Մյուսները գրանցման պահին տեսնում են այդ մարդկանց, նրանք տագնապի մեջ են ու գրանցվում են՝ քիչ կարևոր է, թե որտեղ: Եվ կան նրանք, որոնք կարծում են, թե գիտեն: Նրանց ընտրության զոհ են ընտրյալները: Կրթական հաստատության կողմից նրանք դարձան ճանաչված ու կարծում են, թե ամեն բան անցյալի պես շարունակվում է՝ չտեսնելով հիմնական երևույթների շեղումը, որն աննկատելիորեն տեղաշարժվում է: Չեն տեսնում, որ, օրինակ, իշխանության կենտրոնն այլևս Պոլիտեխնիկը չէ, այլ ENA-ն է, ու առավել ևս՝ ոչ Ulm-ը: Այդպիսով, կրթական «ձեռքբերումների» ու սոցիալական շահերի միջև առկա անհամապատասխանությունը գնալով մեծանում է, ինչը, անկասկած, դասախոսների «հեղափոխական» ու պահպանողական երկիմաստ ըմբոստության պատճառներից մեկն է. HEC կամ Sciences-po[51] դպրոցն ավարտող աշակերտը տասնյակ անգամ ավելի շահեկան դիրքերում է հայտնվում, քան մանկավարժական ինստիտուտի շրջանավարտը:

Le nouvel observateur. Հետևապես պե՞տք է տարբերություն դնել ավագ դպրոցների ու իշխանության ավագ դպրոցների միջև:

Պիեռ Բուրդիե. Երբ սկսեցի այս հարցումը, մտադրություն չունեի բուհերի շարքում ներառել քաղաքագիտական ուսումնա-

[51] Sciences-po-Institut d'études politiques de Paris Փարիզի քաղաքագիտական ուսումնասիրությունների ինստիտուտ (թարգմ.):

սիրությունների ինստիտուտը, որի դիպլոմն աշխատաշուկայում ավելի եկամտաբեր է: Միևչդեռ դա մնում է անհամեմատելիորեն ցածր, եթե որպես չափանիշ վերցնում ենք բակալավրի գնահատականները, որտեղ նշանակումներն ընդհանուր են տեղի ունենում: Սակայն կարող եմ ասել, որ պայքարը շարունակվում է… Չորս կամ հինգ ավագ դպրոցներ շարունակաբար պայքարում են դպրոցական, քաղաքական, սոցիալական, տնտեսական գերակայության համար… Այս սիմվոլիկ պայքարի տրամաբանությունը շատ նման է Պրուստի սալոններին: Դա մի մրցույթ է, որտեղ յուրաքանչյուրը, զարմանալիորեն, կախված է մյուսների տեսակետից, որոնք իրենց հերթին հետաքրքրված չեն համաձայնեցնելու մյուսների հետ իրենց պահանջած ճանաչումը: Թեկնածուները շահագրգռված են աչքերին թոզ փչելով…

Վերլուծել եմ, օրինակ, ինքնաառաջխաղացման խորհրդանշական մեխանիզմները, որոնցով HEC-ը առաջ է քաշված որպես առաջին պլանի բարձրագույն դպրոց: Առնտրի, հաղորդակցության և այլնի փոքր դպրոցները այսօր HEC-ի կամ քաղաքական ուսումնասիրությունների ինստիտուտի նկատմամբ նույն կերպ են վարվում: Որպես արձագանք, մյուս դպրոցները նշում են իրենց հեռավորությունները: Կա մի ամբողջ շատ փխրուն խաղ այդ համարժեքության շուրջ, որով դպրոցները լինում են լավ հարաբերությունների մեջ կամ պարզապես հրաժարվում են համագործակցել: Ulm փողոցը, ուր, 50-ականներին, շատ հազվադեպ էին մտաղիր լինում հայտնվել l'ENA-ում, իր պատասխանատուների շրջանում հանդես բերեց միամտություն՝ պահանջելով l'ENA-ի հետ համարժեքություն, իսկ այնուհետև Sciences-po-ի հետ: Սկզբում l'ENA-ն «պարծենում էր»՝ տեսնելով նման թեկնածուների ժամանումը, պաշտոնապես դասակարգում էր առաջին գրագետ մանկավարժական ինստիտուտի գրականության ֆակուլտետի ուսանողին: Այսօր l'ENA-ն պատվով վերջակետ է դնում, մերժում մանկավարժական համալսարանի որոշ ուսանողներին, անգամ գիտական…

Le nouvel observateur. Բայց ի՞նչ է տեղի ունենում այդ ընթացքում Ulm-ի և l'ENA-ի միջև, որոնք Ձեր դիագրամայի երկու բևեռներն են ներկայացնում:

Պիեռ Բուրդիե. Դրանք հավատքի աշխարհներ են, որտեղ խոսքը գնում է ստիպել հավատալու մասին, որ այն լավագույնն է, *the best and the brightest*[52]... Սակայն ստիպելուց առաջ դրան հավատալու համար անհրաժեշտ է, որպեսզի նախ և առաջ ինքդ դրան հավատաս: Իսկ վերջինիս համար երաշխիքներ են պետք: Սա մի երկար գործընթացի արդյունք է: Ես վերլուծեցի l'ENA-ի հաջողության պատճառները: Ամփոփելու համար պետք է իմանալ, որ l'ENA-ում առաջ արդեն իսկ կար, 19-րդ դարից սկսած առ այսօր, մրցակցություն գլխավոր մարմինների համար: Բոլոր անջատ մրցույթների համար l'ENA-ն գործառնում էր կենտրոնացման պես մի բան, այսինքն՝ արդեն իսկ շատ մեծ խորհրդանշական կապիտալի իրական կենտրոնացում, որը կապված էր դրանցից յուրաքանչյուրի հետ: Եվ հետո, այն միակ դպրոցն է, որը բացահայտ կերպով պատրաստում է իշխանության ներկայացուցիչների: Բուհը մշտապես պատրաստել է Հանրապետության նախագահներ, դիվանագետներ... բայց դրանք քիչ քաղաքական բնույթ ունեցող մի խմբավորումից մյուսն անցած անձինք էին, և բուհն ուղղությունը պահում էր դեպի հետազոտության, բարձրագույն կրթության կողմը... Պոլիտեխնիկը միշտ ապահովել է երևելի կադրեր, բայց նրա հիմնական գործառույթը ինժեներներ տրամադրելն էր... Մինչդեռ l'ENA-ն միանգամից կազմվեց որպես իշխանության համար կադրեր պատրաստող ուսումնական հաստատություն: Հենց այս հանգամանքը մրցույթում նրան տալիս էր շոշափելի առավելություն: Այդպիսով նա կարող էր գրավել բոլոր նրանց, որոնք, իրենց ծագմամբ, իշխանություն պահանջելու համար իրենց զգում էին լեգիտիմացված, և որոնք ունեին բոլոր առավելությունները դա կյանքի կոչելու

[52] Լավագույնն ու ամենապայծառը (թարգմ.):

համար, մասնավորապես՝ սոցիալական հարաբերությունների կապիտալն ու աշխարհիկ դիրքերը, առանց որոնց, գոնե ինչ-որ շուկաների առումով, ուսումնական կապիտալը ոչինչ է:

L'ENA-ն նույն չափով, գուցե և ավելի վստահորեն, քան Պոլիտեխնիկը, տնտեսության տեսանկյունից իշխանության հասնելու ուղղություն է որդեգրել: Պոլիտեխնիկը հասկանալի է, եթե պարզվում է, որ մի խոշոր ինժեներ կարող էր դառնալ արտադրական ընկերության ղեկավար, սակայն l'ENA-ի համար դա ավելի շուտ պարադոքսալ է հնչում: Հղի և՛ բանկի, և՛ տնտեսության գործունեության համար հետևանքներով: Մեկն ինձ ասում էր (քիչ պարզեցված ձևով), որ դա կայանում է որպես չափանիշ հավաքագրելու մեջ գեներալներին՝ վերցնելով խաղաղության ժամանակ գրասենյակներում իրենց դրսևորված ունակությունների չափը…

Le nouvel observateur. Ամեն դեպքում, Sciences-po, l'ENA, HEC նման կամ այլ, պակաս հայտնի, բարձրագույն դպրոցների միջամտության շնորհիվ իշխանական պաշտոնների հասանելիությունը պահպանված է այն մարդկանց երեխաների համար, որոնք արդեն զբաղեցնում են այդ պաշտոնները: Որտեղի՞ց այդ վերնագիրը՝ «Պետական արքունիքը»:

Պիեռ Բուրդիե. Դա, ինչպես և ազնվականի կոչումը, փոխանցվում է ժառանգաբար, միայն թե այն առանձնահատկությամբ, որ տնտեսական, սոցիալական ու քաղաքական իշխանության պաշտոնների հասանելիությունն անցնում է կրթական հաստատությունների անվանումների ձեռքբերմամբ: Եվ կապն այդ պաշտոնները զբաղեցնողների ու նրանց հաջորդների միջև անփոփոխ չէ: Չենք կարող վստահ լինել, որ միջուկային էներգիայի արքայի որդին կլինի միջուկային էներգիայի արքան…

Le nouvel observateur. Ձեր աշխատանքում անդրադառնում եք Մոսին[53] և մոգության հասկացությանը, Մարկ Բլոկին[54] և նրա՝ միջնադարյան ասպետների շուրջ իրականացրած վերլուծությանը…

Պիեռ Բուրդիե. Դա բուհերի նկատմամբ ունեցած հետաքրքրության երկրորդ, ավելի տեսական պատճառն է: Այդ հաստատությունների նպատակներից մեկն է իրականացնել այն, ինչը ես անվանում եմ ինստիտուտների ծիսակարգեր՝ նման մյուս հասարակություններում տեղ գտածներին, անցում կատարյալ մարդու կարգավիճակին, ամբողջապես մարդ՝ ի հակադրումն երեխաների, որոնք դրան դեռ չեն ենթարկվել, սակայն այդ թվում և հատկապես կանանց համեմատ, որոնք դրան երբեք էլ չեն ենթարկվի (ինչպես թլպատմանը): Այդ ծիսակարգերն արտահայտում են բաժանում, սրբազան սահման, ինչպես այն երևույթները, որոնք ցուցադրական մրցության ժամանակ բաժանում է առաջին կպցրածի վերջին ստացողը, պահի քառորդ մասը, որը զանազանություն է ստեղծում ողջ կյանքի համար: Մեծ մրցություններն իրենցից մոգական ծիսակարգ են ներկայացնում, որոնց միջոցով մեր հասարակությունները հաստատում են իրենց լեգիտիմությունը: Մարկ Բլոկն ասպետների ասպետի կոչում տալու հանդիսավոր արարողության վերաբերյալ պատմում է քահանայի ձեռնադրման պատմությունը, որը նույնպես կանոնակարգված է ու աստիճանակարգված (*ranking)*, ինչպես նաև սոցիալական խմբերի իմաստով մյուսներից էական ձևով բաժանված կանոնակարգի ստեղծման մասին: Միանշանակ է, որ տեխնիկական իրազեկության փոխանցումը, ակներևաբար,

[53] Մարսել Մոս (1872-1950) - ֆրանսիացի ազգագրագետ, սոցիոլոգ: Էմիլ Դյուրկհեյմի բարեկամն ու աշակերտը (թարգմ.):

[54] Մարկ Բլոկ (1886-1944) - ֆրանսիացի պատմաբան, արևմտաեվրոպական ֆեոդալիզմի, Ֆրանսիայում ագրարային փոխհարաբերությունների, պատմության ընդհանուր մեթոդաբանության վերաբերյալ աշխատությունների հեղինակ, Աննալների դպրոցի համահիմնադիրներից մեկը (թարգմ.):

ավելի ու ավելի մեծ է այն չափով, ինչ չափով որ գնում ենք դեպի իմացության ուսումնական հաստատությունների բևեռ (ինչպես ասացիք), ու անկասկած նաև այն չափով, որ այն ժամանակից առաջ է անցնում: Տեխնիկական բանիմացության հենց այս փոխանցումն է, որ քողարկում է սոցիալական անցումը, սրբագործման ակտը, լեգիտիմացիա պաշտոնի միջոցով ասվածը. այն ամենը, ինչ ասել է կրթական տիտղոս, բարձր իմաստով, ազնվական պաշտոն:

Le nouvel observateur. Դրա միջոցո՞վ է, որ Ձեր գիրքն իրենից նաև իշխանության տեսություն է ներկայացնում:

Պիեռ Բուրդիե. Փորձեցի այդպես կազմել՝ հենվելով կրթության պատմաբանների աշխատությունների կառավարական հաստատությունների և դասական խոշոր տեսությունների վրա, որոնք դատավորները ստեղծել են 16-րդ դարում՝ ցույց տալու, թե ինչպես է աստիճանաբար ստեղծվում այդ մարմինը (ավելի շուտ, քան դասակարգը), որը պարտավորվեց ստեղծել պետությունը՝ իրեն ցույց տալու ու իր գերակայությունը սահմանելու համար, և ինչ պետք է վերարտադրի պետությունն ինքնավերարտադրման համար: Ազնվականության վերածած բուրժուականության այդ պատմուճանը, որը l'ENA-ի հետ միասին գտավ իր իդեալական վերարտադրման գործիքը…

«Անհրաժեշտ է, որպեսզի մտավորականը խոսքի հնարավորություն տա նրանց, ովքեր դա չունեն»[55]

Հրատարակելով իր նոր՝ «Արվեստի կանոնները» («Les régles d'art»[56]) գիրքը՝ Պիեռ Բուրդիեն միաժամանակ դեմ է հանդես գալիս արվեստին, կրոնին և միջնորդ մտավորականներին: Թող որ հանդես գա, բայց առավել համեստ, արդյունավետ և քննադատական ոգով:

«Չցավել, չծիծաղել, չարտել այլ հասկանալ», Սպինոզայի այս խոսքերով է սոցիալական տառապանքին նվիրված «Աքտ» («*Actes*»)[57] գիտական հանդեսի վերջին համարում սոցիոլոգ Պիեռ Բուրդիեն ամփոփում իր մասնագիտությունը: Դրա մասին նա խոսում է արհեստավորին հատուկ չափի զգացմամբ, ով սիրում է իր արհեստը, ու գիտնականին հատուկ մոլագարությամբ, ով հանուն գիտելիքի զոհաբերում է իր կյանքը: Քանի որ նրանում առկա է զինված և գիտելիքների պաշարով սոցիոլոգիայի իշխանության տակ անցած գործընկեր ճիշտ այն չափով, որչափով և հետազոտող: Բեարնացի գյուղացու իր արմատներով Պիեռ Բուրդիեն պահպանեց համեստների՝ իշխանական մարմինների ու կարծիքների զեղծարարության նկատմամբ ունեցած անվստահությունը: Իր հանրային միջամտություններում չկա մի դեպք, որն ուժով չքողազերծի ողջախոհ Փարիզը, երևելիների Հանրապետությունը կամ էլ ՋԼՄ-ների մշակութային բզզոցը:

---

[55] Այս հարցազրույցը տպագրվել է "L'Événement du jeudi" օրաթերթում, 1992 թ. սեպտեմբերի 10-16, էջ 114-116, հարցազրույցը վարեց Ֆիլիպ Փըթին: Աղբյուրը՝ http://www.homme-moderne.org/societe/socio/bourdieu/entrevue/edj9209.html, այցելվել է 27.04.2017 թ.:

[56] «Արվեստի կանոնները», Seuil հրատարակչություն, 481 էջ:

[57] Նկատի ունի 1975 թ. Պիեռ Բուրդիեի կողմից հիմնած «Սոցիալական հետազոտությունների գործիք» («Actes de la recherche en sciences sociales») գիտական հանդեսը (թարգմ.):

«Տարբերակումը» («*La Distinction*», 1979) և «Պետական արքունիքը» («*La noblesse d'État», 1989*) աշխատությունների միջոցով իրերի հակառակ արդար կողմը ներկայացնող հեղինակի ընկերները միայն մտավորական ու քաղաքական հանրույթի վառ ներկայացուցիչներից են: Որոշ գրողներ նրան կասկածում են գրականությունը սոցիոլոգիզացնելու և ընթերցողի ազատ-բար դերը թերագնահատելու մեջ, ուսուցիչները մեղադրում են, որ նա դպրոցները դիտարկում է միայն որպես էլիտաներ վերարտադրելու գործարան, իսկ պետական ծառայողները ծաղրում են՝ հաստատության ներսում կաշառված կաշառող լինելու համար:

Հիրավի, Սոցիոլոգիայի եվրոպական կենտրոնի տնօրենը բոկոտն համալսարանի դասախոս չէ, ոչ էլ գիտելիքին ծառայող դյուրահավատ բարեհաճ: Նա մի պաշտոնյա է, ով հոգով ու մարմնով պաշտպանում է իր դիսցիպլինը և բնապահպանին հատուկ ոգևորությամբ պայքարում գիտնականների ընկերակցության պաշտպանության համար՝ միևնույն ժամանակ պայքարելով բնաջնջման ճանապարհին գտնվող տարածքների պահպանման համար: Եվ հետո, նրան չեն ներում պատրանքները փարատող, ճանճրալի, խանգարող մեկը լինելու համար: Մեկ այլ բանի բացակայության պատճառով «Պատասխաններ» («*Réponses*», 1992) գործում ասում էր. «Ունենանք հնարավորինս քիչ տարածայնություններ»: Գրազ գանք, որ իր վերջին գիրքը՝ «Արվեստի կանոնները» («*Les régles d'art*»), տարածայնությունների պատճառ կդառնա:

Բուրդիեն կլիներ Դյուրկհեյմի վերջին զավակը, ում ականջ չդնելով՝ մեծ սխալ կանեին: «Մարդու թշվառությունն առանց առաքելության և առանց սոցիալական ճանաչման»,- կհայտարարեր նա: 1982 թ. Կոլեժ դը Ֆրանսում (Collège de France) իր դասընթացի հանդիսավոր բացումից ի վեր նա ծրագրում որևէ փոփոխություն չկատարեց: Այդ համընդհանուրի պահապանի

համար չէ իսկական մտավորական ազատությունն առանց սոցիալական ճնշումների խիստ վերլուծության, որոնք ազդում են «սոցիալական ագենտների» մարմնի ու ոգու վրա: Արտիստները, ինչպես և գրողները կամ փիլիսոփաները բացառություն չեն կազմում այդ կանոնից: Արդյո՞ք պատճառն այն է, որ ազատությունն ամբողջական, անբաժանելի է, և դրա համար էլ այն վերաբերում է սոցիալական աշխարհի բոլոր խաղացողներին: Ինչ-որ իմաստով՝ այո: Քանի որ չենք կարող խուսափել արտիստի հավատն առ արվեստն ապահովելուց, ինչպես և չենք կարող խուսափել ապահովելուց ցանկացած անհատի հավատն առ այն, ինչ նա անում է: Կուշանար միայն Բուրդիեի աշխատանքի այս ուղերձը, որ անհատական անկախության ու սոցիալական անհրաժեշտության շուրջ տարվող հավերժական կեղծ բանավեճը կլիներ ուժը կորցրած: Նա, ինչպես ասում են, թափ կհավաքեր:

Փիլիպ Փըթի

L'Événement du jeudi. Ձեր գիրքը՝ «*Արվեստի կանոնները*», որը պատրաստվում է լույս տեսնել, սկսվում է Դանիել Սալանավի («*Մահացածների ընծան*») գրականության մասին էսսեի կտրուկ մեղադրանքով և շարունակվում հեղինակներին, ընթերցողներին, քննադատներին և այն մարդկանց ուղղված հանդիմանություններով, որոնց Դուք մեղադրում եք արվեստն ու արտիստներին սրբացնելու մեջ: Կարո՞ղ եք ավելի հստակեցնել Ձեր մոտեցումները:

Պիեռ Բուրդիե. Դուք փոխում եք դերերը… Ես ինձ բացարձակապես դատախազի տեղ չեմ դնում, այլ հիշատակում եմ արվեստին առնչվող մի գրականություն, ընդ որում, այնպիսի գրականություն, որը հանուն կրոնական, մշակութային պատկերացման, մշակույթի տեսանկյունից մեկնաբանվում է որպես սուրբ օբյեկտ, դատապարտում մշակութային պրակտիկային ուղղված

ցանկացած գիտական մոտեցում: Կարծում եմ, որ շատերի համար արվեստն այսօր կրոնի տեղը գրավեց: Բոլոր ողջախոհ մարդիկ հղում են կատարում արվեստից, գրականությունից և մշակույթից՝ լուսավորելու ամենապահպանողական մտավորականների արժեքների վերականգնումը, հնաոճ չարտահայտվելու համար, դատապարտելու ժամանակակից արվեստի շուրջ իրականացվող, հատկապես նկարչության դեպքում, հետազոտությունները, ինչպես նաև արվեստի վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները հայտարարելով իբրև սրբապղծություն: Ինչպես նախկինում էր հարկավոր ու բավարար ինքդ քեզ հայտարարել հավատացյալ՝ քաջության վկայականով ապահովագրված լինելու համար, այսօր էլ բավարար է աղաղակել արվեստի ու արարման հավատի, արվեստը երևակայական սպառնալիքներից պաշտպանելու մասին, ստիպելու գիտությանը ծառայել նրա վրա՝ վեհ հոգու համբավ ստեղծելու համար:

«Ինչ վերաբերում է արվեստին, ապա պետք է ունենալ այդ ազատությունն ու անկաշկանդվածությունը, ինչը բնութագրում է արտիստներին»:

L'Événement du jeudi. Դուք շարունակում եք դարասկզբին ծնունդ առած սոցիոլոգիան ընդդեմ գեղարվեստական գրականության հետևորդների պայքարը: Ովքե՞ր են նրանք, Ձեր քննադատությունների թիրախը:

Պիեռ Բուրդիե. Դա հատկապես մշակույթի «քաղքենի սպիտակամորթների» շրջանում է, ովքեր իրենց արտոնություններում իրենց զգում են վտանգված, չգիտեմ ինչ տեսակ բարբարոսության ահով, և այդ արտոնությունները զինվորագրում են մշակույթի կեղծ պաշտպաններին, որոնց համար սոցիոլոգը Նեռն է: Արվեստի գործերի սոցիոլոգիան, փաստացի, ենթադրում է, որ այն դուրս է գալիս մշակութային կեղծ բարեպաշտությունից, ինչը, արվեստի տեսանկյունից, ունենք՝ ազատություն և անգամ անկաշկանդություն, ինչը հստակորեն կբնութագրեր արտիստնե-

րին: Պասկալի խոսքերը խեղաթյուրելով՝ կարող էինք ասել, որ իսկական մշակույթը ծիծաղում է մշակույթի վրա, ու այլևս ոչինչ հանդես չի գալիս ընդդեմ ճշմարիտ մշակույթի, քան գրական հոգևորականության լրջության ոգին: Վստահեցնում եմ՝ արվեստի սոցիոլոգիան «իմացության զվարճանքի» պես բան է, որը բերում է ավելի ուրախալի, պակաս ճոխ և մանավանդ արվեստի սիրո հաճույքներից օգտվելու պակաս հանդուգն կառուցվածք, ճիշտ այն, ինչը (կառուցվածքը) պաշտպանեցին կամ այսօր պաշտպանում են ինձ մոտիկ բոլոր արտիստները:

L'Événement du jeudi. Իսկապես, Ձեր գրքի հիմնական մասը վերաբերում է Ֆլոբերին: Ինչո՞վ է պայմանավորված այս ընտրությունը:

Պիեռ Բուրդիե. Դա բացարձակապես այդպես չէ, և եթե նայեք անձնանունների ցանկում, ապա կտեսնեք, որ ես հիշատակում եմ հայտնի կամ անհայտ հարյուրավոր գրողների, արտիստների, փիլիսոփաների: Սակայն ճշմարիտ է նաև, որ Ֆլոբերը, ինձ թվում է, արժանի է, որպեսզի գրքի վերնագրերի բաժնի մեծ մասում իր ուրույն տեղն ունենա: Նախ և առաջ, որովհետև, ըստ իս, նա պայմանականությունների ու համապատասխանությունների այդ հրաշալի ազատության մարմնավորումն է, ինչը բնութագրում է արարչին բառիս բուն իմաստով: Բարոյական կարգի պայմանականություններն ու համապատասխանությունները (դրանց անվանում են գործընթաց), ինչպես նաև, և դա շատ ավելի հազվադեպ ու, ըստ էության, ավելի համարձակ (այն, ինչ մոռանում են «խախտման» մեր փոքրիկ մարգարեները, հավասարեցվում է սեռային բնույթի մի քանի տաբուների զանցառմանը, որոնց ոչ ոք չի հավատում), արտիստիկ պայմանականությունները ու համապատասխանությունները, գրական զրքուզիբիլները, որը, բացահայտ հակադրություններից այն կողմ, միավորում է բարոյական արվեստն ու սոցիալական արվեստը: Նրանցից մեկն էլ հենց Ֆլոբերն էր, ով առավելապես նպաստեց

(սակայն ես նաև բավականաչափ շատ եմ խոսում Բողլերից և նրա՝ Ֆրանսիական ակադեմիայի թվացյալ թեկնածությունից. ո՞վ այսօր արվեստի բոլոր փոխերեցների շրջանում հանդգնություն կունենար դիմել նման «գործողության», ինչպես անում էին տարիներ առաջ ավանգարդ նկարիչները) ժամանակակից արտիստի հայտնագործմանը, արտիստիկ ազատությանը:

L'Événement du jeudi. Փաստացի Դուք ի՞նչ էիք փորձում հասկանալ Ֆլոբերի գրական մոլորության մեջ:

Պիեռ Բուրդիե. Իրականում Ֆլոբերն ինձ հետաքրքրում էր այն պատճառով, որ նա այն գրողներից մեկն էր, ով գրական պատրանքի, գրականությունում առկա հավատքի շուրջ ունեցած մտորումներում (գործնականում) Էմմա Բովարիից հնարավորինս հեռուն գնաց, ինչպես նաև Ֆրեդերիկը՝ այն անձինք են, ովքեր ապաստան գտան հավատքում, արվեստի աշխարհում (դա է բովարիզմը), որովհետև նրանք մեծ դժվարություն ունեն միանալու սովորական աշխարհի հավատքին, մտնել փողի, հարաբերությունների, իշխանության խաղի մեջ: Անկասկած նույն ինքը՝ Ֆլոբերը, այդպիսին էր, ու նրա գրած վեպերը կոչված էին հաղթահարելու այդ անզորությունը (ինչպես ասում են նորմալ մարդիկ) և առանձնապես իմանալու, թե ինչ էր այն նշանակում: Ֆլոբերը մեզ մատուցում է գրական հավատքի մի փիլիսոփայություն, որն ընդգրկում է փիլիսոփայական դատողություններին վերաբերող ամեն տեսակ հարց:

L'Événement du jeudi. «*Գրական ստեղծագործության հմայքը*,- գրում եք Դուք,- *գերազանցապես կախված է նրանից, որ այն խոսում է ամենալուրջ բաների մասին, առանց պահանջելու՝ ի տարբերություն գիտության... լինել միանգամայն լուրջ ընդունված*»: Այս առումով ի՞նչ կասեք:

Պիեռ Բուրդիե. Հավատքի այն խիստ յուրահատուկ ձևը, որը մենք շնորհում ենք արվեստի գործերին, թույլ է տալիս, որպեսզի գրականությունը կարողանա խոսել ավելի լուրջ բաների՝ սիրո,

մահվան, իշխանության, վերջինիս զարգացման ընթացքի և այլնի մասին, բայց այնպես, որ շատ հաճախ, իրականում, չեն էլ նկատում, և այդ իսկ պատճառով զվարճանքին վերաբերող տիպիկ պասկալյան հարցերը տանելի են դառնում: Այսպես Ֆլոբերը *«Զգացումների դաստիարակությունում»* կարողացավ սոցիալական աշխարհին վերաբերող բոլոր ֆունդամենտալ հարցերն այնպես առաջ քաշել, որպեսզի ոչ ոք դրանում նկատված չլինի (և մանավանդ Սարտրը, չնայած հազարավոր էջերի, որոնք նա նվիրեց Ֆլոբերին):

L'Événement du jeudi. Արվեստի ու արտիստների մասին չափազանց աբստրակտ պատկերացում ունենալու համար Դուք հանդիմանում եք ստրուկտուրալիզմն ընդհանրապես և Ֆուկոյին մասնավորապես: Կարո՞ղ եք ավելի հստակեցնել Ձեր դիրքորոշումը:

Պիեռ Բուրդիե. Ստրուկտուրալիզմը կամ, ավելի ճիշտ, ռուս ձևապաշտները և նրանցից հետո Ֆուկոն, ով անտարակույս ապահովում է ստրուկտուրալ մեթոդի ամենահետևողական իրականացումը, իրենց ներդրումն են ունենում (պարզ լինելու համար) այն հանգամանքի պնդման մեջ, համաձայն որի՝ գրական, փիլիսոփայական և անգամ գիտական գործը կարողանում էին հասկանալ՝ միայն դրանք ստեղծագործությունների համակարգ տեղափոխելով: Սակայն ինչպես Ֆուկոն, այնպես էլ նրանք, անխոս կամ բացահայտորեն, արհամարհեցին գործեր ստեղծող մարդկանց համակարգը, այդ փոքրիկ սոցիալական աշխարհի գոյությունը մեկ այլ սոցիալական աշխարհի ներսում, ինչին ես կոչում եմ դաշտ: Դա այդ միկրոաշխարհի ներսում է, բախումների մրցակցությունում և դրանցով պայմանավորված, երբեմն մահացու (խորհրդանշական կերպով…), որի հենց տեղը յուրաքանչյուր պահի պարզորոշ է դարձնում գրական (կամ արտիստիկ և այլն) խաղի նպատակները և հավատք ստեղծում արվեստի գործերի արժեքի նկատմամբ: Հատկապես «ջատագովների» ու

«հավակնորդների» միջև առկա այդ բախումներն են, որ ստեղծագործությունների աշխարհում առաջացնում են շարունակական փոփոխություններ, այն, ինչ տվյալ պահին հնարավոր է գրել ու դրանք գրելու հնարավոր ձևերը: Այսպիսով, մոտենում ենք նախազգացմանը, ինչը գործնականում, իրական մտավոր կյանքում բոլորս էլ ունենք, ինչը սրբերի գրական վարքագրությունը, ինչպես սկզբում հիշատակեցի, ցանկանում է հաշվի չառնել:

L'Événement du jeudi. Դուք առաջարկում եք մտավորական աշխարհի և մտավորականի մի պատկեր, որը հեռու է նրանից, ինչ կոչում եք բացարձակ մտածող (intellectuel total), ինչպիսին որ Սարտրն էր: Խոսում եք «համընդհանուր կորպորատիզմի» մասին: Ինչպիսի՞ն է այս երկու դիրքորոշումների նկատմամբ Ձեր վերաբերմունքը:

Պիեռ Բուրդիե. Ենթադրում եմ, որ մտավորական դաշտի մեխանիզմների իրապաշտական վերլուծության կարևոր գործառույթներից մեկն է թույլ տալ մեզ խուսափել (գոնե մասամբ) այդ մեխանիզմների ազդեցությունից: Օրինակ՝ բացարձակ մտածողի, կատարյալ մտածողի մոլորությունը, որի վերջին զոհերից մեկն էլ Սարտրն է, ով այսօր առաջնորդում է այդքան էսսեիստների (հատկապես Ֆրանսիայում դա ազգային սովորույթ է)՝ իր վրա վերցնելով մտքի, քաղաքականության և այլնի բոլոր ճակատները, ոչ միշտ ունենալով զինամթերք, չնայած այն բոլոր տարօրինակություններին, որոնց տնօրինում է Սարտրը, իրենից ներկայացնում է մի յուրահատուկ մարմին, ինչը մտավորական համակեցությունում կոչվում է կամք առ իշխանություն (*libido dominandi)* կամ ավելի կարճ՝ «լիբիդո» (*libido)* : Ֆուկոն զգում էր այդ ամբողջատիրական պահանջի սնափառությունը, որը որոշակիացնում է այն, ինչն իտալացիներն անվանում են տուտոլոգո (*tuttologo)*, այսինքն՝ նա, ով խոսում է ամեն ինչի մասին և ունի դրանց պատասխանը մի դարաշրջանում, երբ գիտություն-

ներն ու, մասնավորապես, սոցիալական գիտությունները ահռելի մեծ առաջընթաց ապրեցին՝ իրենց հետ բերելով անհամար գիտելիքներ, փաստեր, մեթոդներ, կանոններ ու պարզապես կոնցեպտներ (հայեցակարգեր). ահա թե ինչու էր նա խոսում «յուրահատուկ մտավորականից»: Ինձ թվում է՝ պետք է ավելի հեռուն գնալ և Միակի ֆետիշիզմը շոկի ենթարկելու ռիսկով խոսել կոլեկտիվ մտավորականության կամ ունիվերսալ շահերի ընդհանրության մասին:

L'Événement du jeudi. Սա Ձեզ չի խանգարում ափսոսալ հանրային քննարկումից դուրս գտնվող արտիստների, գրողների ու գիտնականների «բացառման» համար… Մեր ժամանակաշրջանը որակելու համար օգտագործում եք «Վերականգնում» բառը: Ինչպիսի՞ դեղամիջոցներ եք խորհուրդ տալիս կիրառել մտքի ազատության նկատմամբ գոյություն ունեցող սպառնալիքները վերացնելու նպատակով:

Պիեռ Բուրդիե. Մտավորականների կոլեկտիվ ազատությունը ճնշող սպառնալիքներին հակազդելու համար, մասնավորապես այն սպառնալիքներին, որոնք գալիս են քաղաքական իշխանություններից, ինչպես նաև ՁԼՄ-ների միջոցով կիրառվողներին, ու նաև այն գայթակղմանը, որ ՁԼՄ-ները գործադրում են մտավորական աշխարհի ամենաթույլ օղակների նկատմամբ և հանրային դեբատներում ստիպում ականջալուր լինել նրանց ձայնին, որոնք սոցիալական աշխատանքի բաժանման մեջ այն ծանրաբեռնեցին որոշակի քանակի զուր կամ նպատակային համարվող համընդհանուր բաներով՝ իրավունք, գիտություն, արվեստ և այլն: Պետք կլիներ, որպեսզի գրողները, արտիստներն ու գիտնականները հաջողեին հաղթահարել ոչ թե լեգիտիմ, ճշմարտության համար տարվող մրցակցության ներգործությունները, այլ՝ գերիշխանության համար տարվող մրցակցության: Հարկավոր կլիներ զինել մշակութային արդյունքների ազատ

քննադատին, ինչպես նաև տնտեսական կամ քաղաքական իշխանություններին քննադատող խոսքով հանդես եկող անձին:

L'Événement du jeudi. Ինչպե՞ս եք տեսնում մտավորականների դերը եվրոպական կառուցման գործում:

Պիեռ Բուրդիե. Կարծում եմ՝ մտավորականները կարող են ու պարտավոր են կազմել միասնական ու քննադատական հակաուժ և, նույնիսկ, ինչու ոչ, փորձել ազդել օրենսդիրների վրա՝ առաջ քաշելով առաջարկություններ գոնե այն ոլորտներում, որոնք նրանց իրավասության տակ են՝ կրթությունը, մշակույթը, մամուլը և այլն: Ենթադրում եմ, որ այս պայմանով, առանց բարդույթների, նրանք կպաշտպանեն իրենց կոլեկտիվ (մշտապես համընդհանուր կորպորատիզմի) ազատության սոցիալական ու տնտեսական հիմքերը, որոնց կարող են ապահովել միջոցներով՝ ստիպելու առաջխաղացնել ունիվերսալ դրդապատճառների պաշտպանությունը, որոնց նրանք երբեք չեն դադարել օժանդակել:

L'Événement du jeudi. Ձեր պարբերականի վերջին համարում Դուք խոսքի հնարավորություն եք տալիս տղամարդկանց ու կանանց, որոնք, սովորության համաձայն, դա չունեն: Զրուցում եք Ֆրանսիայի հյուսիսում գտնվող փոքրիկ քաղաքի երիտասարդների հետ, Բեարնի գյուղատնտեսների, փոստային ծառայության կենտրոնի աշխատակցուհու հետ… Ինչո՞վ կարող է սոցիոլոգիան օգնել նրանց, ովքեր տառապում են սոցիալական բացառումից:

Պիեռ Բուրդիե. Մտավորականները, ի թիվս այլ ֆունկցիաների, կարողանում են իրականացնել (պետք է փաստել, որ անցյալում դրանք վատ իրականացվեցին)՝ հաճախ, հանդես գալով որպես բացառիկ, իշխող խոսնակ, կա ևս մեկ ֆունկցիա, որ սոցիոլոգները կարող են իրագործել (ամենից հետո, դրա համար նրանք հանրությամբ են հատուցում)՝ տալով նրանց խոսքի հնարավորություն, ովքեր ցանկացած տեսակ պատճառաբանու-

թյուններով դրանից զրկվեցին: Այդպես գործելով՝ սոցիոլոգները կարող են բարդացնել օրինապես ընտրված բոլոր խոսնակների կյանքը, օրինակ՝ քաղաքական այրերի կամ ինքնաճշանակված-ների, միջնորդ մտավորականների, որոնք, իրենց մտավորական մագիստրոսության միակ պահանջով զինված, նետվում են դեպի թերթերը կամ տեսախցիկները՝ ասելու, որ այնտեղ կա սոցիալա-կան աշխարհ: Սակայն մարգարեության մեջ չընկնելու համար, դուրս չգալով իրենց դերից, նրանք կարող են քիչ ավելին անել՝ փորձելով հրապարակել սոցիալական աշխարհի իրական պատ-կերը, ինչը փորձում են միասնաբար ստեղծել: Սոցիոլոգի աչքը, որը ցույց է տալիս, թե ովքեր են մարդիկ և ինչ են անում որոշակի սոցիալական պայմաններում, որի արգասիքն են հանդիսանում, հակված է մյուսների հասկացմանը, ինչը ոչ ներողամտություն է, որը ամեն ինչ ներում ու հանդուրժում է, ոչ էլ համակերպումը, որն ընդունում է աշխարհն այնպիսին, ինչպիսին որ է:

Մեր թշվառության պետությունը[58]

Ամենուր՝ քաղաքներում, առաջնահերթ քաղաքաշինական աշխատանքների գոտիներում (ZUP)[59], բնակավայրերում, գյուղերում, ձեռնարկություններում կամ դպրոցներում ու ընտանիքներում, տղամարդկանց, կանանց, դեռահասներին թվում է, թե նրանք անուշադրության են մատնված: 1989 թ. մի խումբ սոցիոլոգների[60] հետ միասին Պիեռ Բուրդիեն գնաց նրանց ընդառաջ: Իր հետազոտություններով, որոնք անդրադառնում են ճաշակի չափանիշներին կամ «*Պետական արքունիքի» (“La nobless d' État”)* ձևավորմանը (“Minuit” հրատարակչություն, 1989), Կոլեժ դը Ֆրանսի (Collège de France) պրոֆեսորն էական շրջադարձ մտցրեց սոցիոլոգիայում:

Հասկանալու «հասարակության անզորությունը», կորսված սոլիդարության դրսևորումները, ծայրահեղ աջակողմյան շեղումները կամ ռասիզմը՝ ենթադրում է լսել ցածր եկամուտ ունեցող ընտանիքների համար նախատեսված բնակելի շենքի (HLM)[61] անվտանգության ներգաղթյալ աշխատակցի կամ դատավորի գոյության ու տառապանքի պատմությունը, որը ոչ թե անհատական, այլ սոցիալական բնույթ է կրում: Այնպիսի թեժ անդրադարձ, ինչպես «*Աշխարհի թշվառությունը»* աշխատանքը (“Seuil” հրատարակություն, 1993), որն առաջացրեց բուռն բանավեճերի ընթացքում՝ ամրապնդված անողոք վերլուծություննե-

---

[58] Հարցազրույց Սիլվեն Պասկիեի հետ, տպագրվել է «L'Express» շաբաթաթերթում, 18.03.1993 թ.: Աղբյուրը՝
http://www.homme-moderne.org/societe/socio/bourdieu/misere/express0393.html, այցելվել է 26.04.2017 թ. (թարգմ.):

[59] ZUP (Zone à urbaniser en priorité) - Կառուցապատման առաջնահերթ գոտի (թարգմ.):

[60] A. Accardo, G. Balazs, S. Beaud, F. Bonvin, E. Bourdieu, P. Bourgeois, S. Broccolichi, P. Champagne, R. Christin, J-P. Faguer, S. Garcia, R. Lenoir, F. Matonti, F. Muel-Dreyfus, F. Œuvrard, M. Pialoux, L. Pinto, A. Sayad, C. Soulié, B. Urlacher, L. Wacquant, A-M. Waser.

[61] HLM-Habitation à loyer modéré (թարգմ.).

րով, նույնպես հարցում է պետության մասին: Ընդդեմ հրաժարման ու ամենաթողության, այս հարցազրույցում Պիեռ Բուրդիեն առաջ է քաշում «իրապես ժողովրդավար քաղաքականության» գաղափարի գերակայությունը:

L'Express. Սովորականի պես իր սոցիալական տառապանքների մասին լռող ներկայիս Ֆրանսիային իշխանությունում ձախակողմյանների ներկայությունը ավելի՞ շատ սոլիդարություն կարժենա:

Պիեռ Բուրդիե. Այն տարվող քաղաքականությունը, որի ականատեսն էինք քսան տարի շարունակ, այսօր հանդես է գալիս ակներև շարունակականությամբ: 70-ական թվականներին՝ այն պահից ի վեր, երբ «Քաղաքագիտական ուսումնասիրությունների կենտրոնում» (“Science Po”) առաջ քաշվեց ուսուցանվող նեոլիբերալ մոտեցումը, պետության բացառման գործընթացն ավելի ամրապնդվեց: Դա ծաղրի առարկա դարձնելով՝ մոտավորապես 1983-1984 թթ.՝ մասնավոր ընկերությունների երևան գալու և շահ ստանալու պաշտամունքի շրջանում, նեոլիբերալ մոտեցմանը հարող սոցիալիստ ղեկավարները կոլեկտիվ գիտակցության մեջ կառավարում էին տեղի ունեցող մի խորը փոփոխություն, որը բերեց շուկայագիտության ընդհանրացված հաղթանակին: Անգամ մշակույթն էր դրանով վարակված: Քաղաքականությունում դիմել հանրային կարծիքի ուսումնասիրությանը նշանակում է հաստատել դեմագոգիայի ամենաայլանդակ ձևը:

Մտավորականների մի մասը համաձայնվեց այս կոլեկտիվ փոխարկման հետ, որը, համենայն դեպս, կառավարիչների շրջանում ու հանրության արտոնյալ միջավայրերում չափից դուրս լավ հաջողեց: Իրագործելով համաձուլվածքն ու զոհաբերելով մտքի անորոշությանը՝ նրանք աշխատեցին՝ ցույց տալու, որ տնտեսական լիբերալիզմը քաղաքական ազատության անհրաժեշտ ու բավարար պայման է: Իսկ հակառակ դեպքում պե-

տության ցանկացած միջամտություն վերստին թաքցնում է «տոտալիտարիզմի» վտանգի ի հայտ գալը: Իրենց մեծ վնաս տվեցին՝ հաստատելու համար, որ անհավասարության դեմ պայքարող ցանկացած փորձ սկզբում անարդյունավետ է, իսկ այնուհետև կարող է իրականացվել միայն ի վնաս ազատության:

L'Express. Հետևապես սրա՞նք են պետության այն գլխավոր գործառույթները, որոնք նրանք շոշափում են:

Պիեռ Բուրդիե. Ճիշտ այդպես: Այնպիսին, ինչպիսին որ մենք ենք հասկանում պետություն ասվածը, սակայն, միգուցե, դրա մասին կարելի է խոսել միայն անցյալ ժամանակով, միանգամայն յուրահատուկ սոցիալական աշխարհի է, որի պաշտոնական ավարտը պետական ծառայությունն է, ընդհանուր շահին ուղղված հասարակական ծառությունն ու անձնազոհությունը: Այս ամենը կարող են ծաղրի առարկա դարձնել, վկայակոչել նպատակների ու հանրային միջոցների հափշտակման բացահայտ ձևերը: Այնուհանդերձ, պաշտոնականի պաշտոնական ձևակերպումը, և պետական պաշտոնյաները, ովքեր կոչված են ծառայելու և ոչ թե վերցնելու համար, խիստ պատմական հայտնագործություն է, մարդկության կողմից արձանագրած ձեռքբերում, ինչպես արվեստը կամ գիտությունը: Մշտապես հետընթացության կամ անհետացման վտանգի առաջ կանգնած անկայուն նվաճում: Եվ այս ամենն այսօր հղվում է անցյալին կամ անցածին:

L'express. Ինչպե՞ս է պետության բացառումը արձանագրվում սոցիալական իրականության մեջ:

Պիեռ Բուրդիե. 70-ական թվականներից սկսած՝ այն սկիզբ առավ բնակարանային ոլորտում մի այնպիսի քաղաքականության ընտրությամբ, որը հանգեցնում էր սոցիալական բնակարանին ուղղված օգնության կրճատմանը ու հավանության էր արժանացնում մասնավոր սեփականություն ունենալու հնարավորությունը: Այստեղ էլ, կեղծ հավասարեցումների հիման վրա,

որոնք միտված էին զուգորդել կոլեկտիվ համակեցությունը կոլեկտիվիզմին, ու փոքր մասնավոր սեփականության մեջ տեսնելով քաղաքական լիբերալիզմի հիմքը: Եվ ոչ ոք ինքն իրեն չի հարցնում՝ ինչպես խուսափել անհատականի ու կոլեկտիվի, սեփականության և վարձակալման այլընտրանքից՝ առաջարկելով, օրինակ, ինչպես արվում է այլ վայրերում, վարձով տրվող առանձնատներ: Երևակայությունը չի կարող, ոչ էլ այլևս պատկանում է աջակողմյան կամ ձախակողմյան թևին: Հասանք մի արդյունքի, որը մեր հայտնի տեխնոկրատները չէին կանխատեսել՝ աքսորման այն տարածքները, որտեղ կենտրոնացված էր ամենաանբարենպաստ պայմաններում ապրող բնակչությունը, այսինքն՝ բոլոր նրանք, ովքեր միջոցներ չունեն փախչելու ավելի բարենպաստ վայրեր: Գործազրկության և ճգնաժամի պայմաններում զարգանում են շատ թե քիչ պաթոլոգիական սոցիալական երևույթներ, որոնցով էլ այսօր զբաղվում են տեխնոկրատներից բաղկացած նոր ձևավորված հանձնաժողովները:

L'Express. Ինչ-որ ընդհանուր բան կա՞ Ֆրանսիայի հյուսիսում բնակվող երկու երիտասարդների՝ Ֆրանսուայի և ծագումով թունիսցի բանվոր Ալիի ու փոստային ծառայությունում աշխատող Դանիելլայի միջև, կամ էլ՝ գրականության դասախոսի և արհմիության աշխատակցի միջև:

Պիեռ Բուրդիե. Նույնիսկ եթե չքավորի մոտ հանդիպում է ամենաակնառու սոցիալական տառապանքը, ապա սոցիալական աշխարհի բոլոր մակարդակներում գոյություն ունեն պակաս տեսանելի տառապանքներ նույնպես: Ներկայիս սոցիումները, և դա նրանց գլխավոր առանձնահատկություններից մեկն է, տարբերակվում են ենթատարածքների բազմազանությամբ, սոցիալական միկրոաշխարհներով, մեկը մյուսի նկատմամբ դրսևորվող անկախությամբ: Յուրաքանչյուրն ունի իր հիերարխիան, իրեն գերիշխողներն ու իր իշխանության տակ գտնվողները: Կարելի է պատկանել ազդեցիկ աշխարհին, բայց միայն ան-

շուք տեղ զբաղեցնել այնտեղ: Լինել ևվագախմբի այն կորսված երաժիշտը, որը հիշեցնում է Պատրիկ Սյուզքինդի *«Կոնտրաբասը»* պիեսի կորսված երաժշտին: Այն մարդկանց հարաբերական ստորադասությունը, որոնք ղեկավարների շրջանում ավելի ցածր դիրք են զբաղեցնում, հենց դա է, վերջիններն առաջինների շրջանում, սահմանում դիրքի թշվառությունը, վերջինումս առկա անհաղթահարելի պայմանը, բայց և միանգամայն իրական ու խորը: Այս հարաբերական թշվառությունը հարաբերականացված (relativisable) չէ:

L'Express. Կարո՞ղ է սոցիոլոգն իսկապես հասկանալ տառապանքները կամ այն խռովությունը, որի շուրջ հարցում է իրականացնում:

Պիեռ Բուրդիե. Պայմանով, որ սոցիոլոգը կնկատի սոցիալական աշխարհում և հատկապես սոցիալական միկրոաշխարհում իր զրուցակցի զբաղեցրած տեղը, ուր և գտնվում են նրա ներդրումները, նրա նպատակներն ու մոլորությունները՝ նախաձեռնություն, ծառայություն, գրասենյակ, թաղամաս, անշարժ գույք… Պայմանով՝ մտքով ուղղվել այդ վայրը, տեղակայվել, բառիս բուն իմաստով, հենց իր տեղում:

L'Express. Ինչո՞ւ է կարևոր դա հաշվի առնել:

Պիեռ Բուրդիե. Որովհետև այդ թշվառությունն այն չափով, միգուցե և ավել, ինչ չափով որ ծայրահեղ աղքատությունը, ի հայտ է բերում հաճախ արտաքինից անհասկանալի պատկերացումներ ու քաղաքական պրակտիկաներ, ինչպես ռասիզմի ու քսենոֆոբիայի դեպքում, և որոնց գիտեն ընդդիմանալ միայն վրդովվածությամբ ու պարտադրանքով: Ինչպես նաև, որովհետև այդ ամենն իրենց վրա զգացողները քաղաքական հանցագործների կամ ղեմագոգների զոհերն են, Ազգային ճակատից սկսած, նշանակված քաղաքական գործիչներ են, որոնք ապրում են տառապանքի, հիասթափության և հուսահատության շահագործմամբ:

L'Express. Ինչպե՞ս են ավելի փորձառու դառնում ռասիզմի գործում: Ձեր հարցումը ներկայացնում է նմանատիպ դժվար կացության մեջ գտնվող հարևաններին, որոնք ապրում են փոխադարձաբար պաշարված վիճակում, այն պատճառաբանությամբ, որ ծագումով մահրեբ ընտանիքներից մեկն ունի, իբր թե, աղմկոտ կատուներ…

Պիեռ Բուրդիե. Օրինակը գլխավորապես «չքավորներին վերաբերողների» շարքից է. գաղութներում «խեղճ Սպիտակամորթներ» կոչվածները բոլոր նրանք են, որոնք, համոզված լինելով, որ հանդիսանում են էլիտայի անդամ, ունենալով իրական, բացառիկ իրավունքներ, պահանջում են ներթափանցում տնտեսական ու սոցիալական շահերի մոնոպոլիա՝ միավորելով իրենց «ազգային» որակներն ընդդեմ «ներգաղթած» որակների: Վկայություններ պարունակող, պաթետիկ ոճով գրված, մանր գյուղատնտեսների, առևտրականների մասին գրքերում կարող ենք կարդալ այն մարդկանց մասին, որոնք վրդովվում են իրենց որպես ներգաղթյալ դիտարկելու համար, որի հետ նրանք ոչ մի անմիջական առնչություն չունեն, և ավելի լայն իմաստով նրանց հետ, որոնք իրենց աչքերում անօրինաբար օգտվում են պետության օգնությունից՝ հանցագործները, բանտարկյալները… Անգամ, եթե առաջ են քաշում ավելի ռացիոնալ պատճառներ: Սոցիալական պետության (*Welfare State*) քննադատներն իրենց հաջողությամբ անկասկած պարտական են այն փաստին, որ նրանք հաճախ արմատանում են նման տեսակ ազդակներում կամ պատկերացումներում: Ո՞ւր կորան քսենոֆոբների ատելության դրսևորումներին հակազդելու ունակ ուժերը, որոնց ենթարկվում են այն մարդիկ, որոնք առավելագույնս առճակատված են «օտարներին», լինի աշխատանքի համար մրցակցության նպատակով կամ էլ թե համակեցության դեպքում: Անկասկած, տեղի են ունենում հակառասիստական շարժումներ, սակայն դրանք շոշափում են խիստ կրթված սերնդի ներկայացու-

ցիչներին: Որո՞նք դարձան հին կրթական համակարգի կամ արհմիութենական համակարգի միջազգային սկզբունքները: Սոլիդարության քաղաքացիական իդեալների կործանումը լիակատար ազատություն տվեց հաղթական եսասիրությանը, որը խրախուսում է ցանկացած քաղաքական ուղերձի բացակայությունը՝ ի վիճակի առաջարկել ապրելու այլ հիմնավորումներ, քան աշխատավարձով կամ ընդհանուր ներդրումային ֆոնդերով (SCIAV)[62] չափված անձնական հաջողությունը:

L'Express. Բայց արդյո՞ք այդ արգումենտը գործում է նաև պառակտված ծայրահեղ կարիքի իրավիճակում:

Պիեռ Բուրդիե. Մեծ տառապանքի վայրերում, ինչպիսիք են, օրինակ, քաղաքի կենտրոնները, մեծ անսամբլները, «բարդ թաղամասերը», նույն իրենք՝ պետության կամ քաղաքապետարանի կողմից լիազորված սոցիալական աշխատողները՝ կոչված կայունացնելու կոմունալ ամենատարրական ծառայությունները, իրենց ձեռքի տակ չունենալով անհրաժեշտ միջոցներ, գտնվում են հսկայական հակասությունների մեջ: Մտածում եմ, օրինակ, քոլեջի տնօրենի մասին, ով ունի դպրոցի առաքելության ամենաբարձր ու վեհանձն գաղափարը, երբեմն նա իրեն պարտական է զգում ժամանակի մեծ մասն անցկացնել բռնության դեմ բռնությամբ պայքարելով: Իրեն զգում է կարծեք պայմանագրի խզման իրավիճակում: Եվ այս հարցում նա միայնակ չէ: Դուք ունեք ուսուցիչներ, դասախոսներ, ոստիկաններ, հիմնական դատավորներ, որոնք ինստիտուտի ու իրենց վստահված առաքելությունում հանդիպող հակասություններն ընդունում են որպես անձնական դրամա:

L'express. Որովհետև նրանց թվում է, թե պետությունն անկում ապրեց, և նրանք իրենց վրա՞ են վերցնում դրա կանխարգելումը:

---

[62] SCIAV (Société d'investissement à capital variable) - Փոփոխական կապիտալով պաշարների ընկերություն (թարգմ.):

Պիեռ Բուրդիե. Պատմում են եզակի մարդկանց մասին, որոնք իրենց հոգին ու մարմինն են ներդրել այդ վատ վարձատրվող, վատ կշռադատված, կործանարար գործունեությանը, չնայած որ նրանք ապրում են բյուրոկրատիայի դեմ մշտական պայքարում: Այն փոքր շրջանակի տեսանկյունից, որը սնվում է բորսայի շուկայից, նրանք խելագարներ են: Մտաբերում եմ փողոցում մի խմբագրի հետ մեր ծանոթությունը, ով կապտած աչքերով ժամանեց այս առավոտ: Ոստիկանական բաժանմունքում պահված լինելով՝ նա գիշերվա մի մասն անց էր կացրել թմրանյութ օգտագործելով: Այս մանր գրասենյակային ծառայողները պետության առաջադեմ ալեհավաքներն են, որի աջ ձեռքը չգիտի, թե ձախն ինչ է անում: Ավելի վատ օրինակ բերեմ, պետական մեծ արքունիքի արտոնագրված անդամները, ցանկացած աստիճանի քաղաքական կախվածություն ունեցող պետական կառավարման բարձրագույն դպրոցի շրջանավարտները շատ մեծ տեղ են տալիս այդ փոքր կոչմանը, որի վերաբերյալ սիրում են դասեր անցկացնել: Անտեսում են, որ դա էական դեր է խաղում գոնե ամենաքիչը սոցիալական միասնականության գործում: Պետք կլիներ հիշեցնել, որ Հեղափոխությունը սկսվեց ազնվականության դեմ ագարակատերերի կազմակերպած ըմբոստությամբ…

L'Express. Որովհետև պետության մանրակալվածք ազնվականությունն այսօր խոռվության մե՞ջ է:

Պիեռ Բուրդիե. Մանրակալվածք ազնվականությունն է, որը քաղաքացիական քաջության կոչ է անում, և որը բացահայտում է բոլոր փարիսեցի պաշտպանների «արժեքները» կամ մարդու իրավունքները: Անշուշտ, նրանք այսօր երկու դար տևած, ինքնազոհողությունից ու անհետաքրքրվածությունից ժառանգած քաղաքացիական բոլոր ավանդույթների սոցիալական պայքարների պահպանողն են, որոնք, ինչպես լաբորատորիաներում, հորինում էին տարատեսակ ինստիտուտներ (ինչպես սոցիալական

ինստիտուտը, ևվազագույն աշխատավարձը և այլն), ինչպես նաև արժանապատվություն, իդեալներ:

L'express. Ավելի չի՞ մեծանում հիասթափությունը՝ տեսնելով, թե ինչպես են իշխանության եկած ձախակողմյանները մերժում իրենց իսկ սկզբունքները:

Պիեռ Բուրդիե. Ձախակողմյանների կառավարության ամենամեծ պատասխանատվությունը կայանում է նրանում, որ իրենց քաղաքականությունն իրականացնելիս այն օրինական դարձնեն, նույնիսկ երբ այդ քաղաքականության նպատակը վիճարկելն է և համաձայնվելը անցյալում թույլ տված բոլոր բացթողումների ու վրիպակների հետ: Ինչպես և գործազրկության խնդիրը, որի պարագայում բոլորը հասկանում են, որ այն լայնորեն խուսափում է զուտ քաղաքական գործողություններ ձեռնարկելուց: Նրան հանդիմանում են պետության բարոյալքման համար, ընդ որում, կրկնակի իմաստով՝ բարոյականի ու բարոյախոսականի կորուստը:

L'express. Շատ են խոսում մտավորականների լռության մասին: Խոստովանեք, որ նրանք կարող էին իրականացնել իրենց քննադատական ստվերային իշխանությունը:

Պիեռ Բուրդիե. Գաղափարի անազնիվ հզորներն օգնության են կանչում անազնիվ իշխանության մտածողներին, որոնք, առաջինների ակնկալիքների համաձայն, իրենց հերթին, շտապում են հանդես գալ արդարացնող խոսքերով: Ու մեղիաքաղաքական աշխարհի համար ամեն բան շատ ավելի լավ է դասավորվում: Ինչ վերաբերում է հետազոտողներին, ովքեր սահմանում են գիտելիքը, ունակ լուսաբանելու քաղաքական գործունեությունը, ապա մեզ գրեթե չեն անհանգստացնում նրանց կատարած աշխատանքների արդյունքները: Պատմաբանները, սոցիոլոգները, տնտեսագետներն օրակարգ բերեցին մեխանիզմներից մի քանիսը ու միտումնավոր, նաև, որոշ օրենքներ, որոնք երկարաժամկետ կտրվածքով ղեկավարում են հասարակությունը:

Օրինակ՝ մշակութային փոխանակման օրենքն ասում է, որ մեծ մասամբ կրթական շուկայի հաջողությունների հնարավորությունները կախված են ընտանիքի ունեցած մշակութային կապիտալից: Եթե իրապես ցանկանում ենք «ժողովրդավարացնել» հասանելիությունը դեպի դպրոց ու մշակույթ, ապա չենք կարող բավարարվել միայն արտաքին, գումեղ գործողություններով՝ լավ իրականացված «հայտարարության տպավորություն» թողնելու համար: Հակադրվելու համար մշակութային պրակտիկաների պես հզոր մեխանիզմներին անհրաժեշտ է նախ և առաջ դրանք ճանաչել և հատկապես ընդունել, վատնել շատ էներգիա՝ կարճաժամկետ, շատ թույլ արդյունք ստանալու համար: Նախընտրում են լսել դեմագոգիայի ոճի հայտարարություններ՝ 2000 թվին սերնդի 80%-ը բակալավրի մակարդակին է գտնվում:

L'express. Ինչպիսի՞ հետևանքներով:

Պիեռ Բուրդիե. Համապատասխանելու համար այն պահանջներին, որոնք իրենցից միայն գովազդային հայտարարություն էին ներկայացնում, թեթևացվեց բարձր դասարաններում աշակերտների հոսքը, որոնց նախկինում խոչընդոտում էին: Դա չէր ենթադրում օգնել հաղթահարել դժվարությունները և ոչ էլ տնօրինել նրանց, որոնց ստիպում են հանդես գալ իրենց ներկայությամբ: Եվս մեկ ավելի կարևոր բան, ուսումնական հաստատության առավել բարձր մակարդակներում գտնվող՝ ծնունդով տարբեր սոցիալական կատեգորիաների ներկայացուցիչների միջև տոկոսային շեղումները չկրճատվեցին: Դպրոցը շարունակում է բացառել, սակայն այժմ վերջինս գտնվում է հենց իրեն բացառողների համակարգում, պարտության խարաններով՝ նրանց՝ 16 կամ 18 տարեկաններին, հեռացնելով արժեզրկված ձևականություններից ու վերադարձնելով նույն այդ արժեզրկված ձևականությունները:

L'express. Ինչպիսի՞ն է կրթական քաղաքականության ազդեցությունը աշխատավոր ժողովրդի շրջանում:

Պիեռ Բուրդիե. Երեսուն տարի այստեղ, ինչպես և մանր առևտրականների ու գյուղական միջավայրում, նկատելի է դարձել սերունդների միջև առկա կոնֆլիկտը, որն իրականում կոնֆլիկտ է դպրոցական սերունդների միջև, այսինքն՝ նրանց միջև, որոնք միանգամից գործարան ընդունվելու նպատակով մոտավորապես 14 տարեկանում լքել են ընտանիքը, և այն անճանց, որոնք շարունակեցին դպրոցում մնալ: Քաղաքի երիտասարդ սերնդի ներկայացուցիչները, որոնք ունեն աշխատավոր դասին հատուկ սեփականության շահագործման բոլոր ձևերը՝ առանց ապագայի ու ապագա ծրագրի, սակայն ներշնչումներով ու մերժումներով ձևավոխված, ինչը դպրոցն է իրենց մեջ զարգացնում, նման են աշխատանքի տեղավորման գործակալությունների կողմից առաջարկվող ժամանակավոր աշխատողների: Եվ աշխատաշուկայում մշտական ու ժամանակավոր աշխատողների միջև առկա անջրպետը խորը բաժանում է մտցնում՝ բարդացնելով կոլեկտիվ գործունեության ցանկացած տեսակ: Բացի դրանից՝ որոշ ձեռնարկատերեր, աշխատանքի ազատման վախից պարտադրված, օգուտ են քաղում ենթարկվելուց: Հարստահարման եղանակները, որոնցով նրանք զբաղվում են, արտահայտում են ծնվող կապիտալիզմի ամենավատ ժամանակների վերադարձը:

L'Express. Բռնության պոռթկումներին դեմ հանդիման, ինչպես, օրինակ, Վոզան-Վելենում, ՋԼՄ-ները սխալվեցի՞ն՝ փնտրելով ԱՄՆ-ի վերաբերյալ նրանց «հղումները»:

Պիեռ Բուրդիե. Հանցավորության կամ վանդալիզմի որոշ գործողություններ կարող են հասկացվել որպես քաղաքացիական պատերազմի քողարկված միջոց: Միևչդեռ, ֆրանսիական «արվարձանները» հեռու են ամերիկյան մեծ գետտոներին հասնելուց: Պետք է կարդալ Չիկագոյի ու Հարլեմի առօրյա կյանքին վերաբերող Լոիկ Վականի ու Ֆիլիպ Բուրժուայի խիստ ռեալիստական նկարագրությունները՝ որոշակիորեն բացահայտելու

պետության ամբողջապես մի կողմ քաշվելու հետևանքները: Հանուն լիբերալիզմի՝ մեր ժամանակների ամենազարգացած երկրներից մեկի սրտում թույլ տվեցին բնակություն հաստատել պատմության մեջ նախադեպը չունեցող, ջունգլիների օրենքին թողնված մի հասարակության, մի պետության, որը կործանում էր բոլոր մեխանիզմներն ու բոլոր կառուցվածքները (կլաններ, ընտանիքներ…), ունակ սահմանափակելու բռնությունը, թողնելու իր ետևից, իր անկումից հետո, ինչպես այսօր նախկին Հարավսլավիայում բռնությունն իր անբիծ վիճակում, պատերազմ բոլորը բոլորի դեմ սկզբունքով, որը մշտապես գոյություն է ունեցել միայն Հոբսի երևակայությունում: Շատ ավելի լավ, քան բոլոր տեսական քննադատությունները. ամերիկյան մեծ քաղաքների ավերված կենտրոնի տեսարանը հիշեցնում է առանց սահմանների լիբերալիզմի սահմանները:

L'Express. Ինչպե՞ս եք ընկալում պետության դերը:

Պիեռ Բուրդիե. Չէին կարող գոհանալ նման նվազագույն տեսակ պետությունից, որի գործողությունը կսահմանափակվեր անհատների բնական իրավունքների պաշտպանությամբ: Եվ չկա այլևս էթիկա, որը հանրային առաքինությունները փոխարինում է մեկուսացած անհատների մասնավոր շահերով: Ըստ Մաքիավելու՝ կատարյալ պետությունն այն ռեժիմն է, որում քաղաքացիները շահագրգռված են առաքինությամբ: Կարող էի նաև հղել Կանտին, ով այդպես հոժարակամ թախանձում է նրանց, որոնք գտնվում են Մաքիավելու «սոցիոլոգիական» ռեալիզմի հակառակ կողմում, երբ, ըստ էության, «Հավիտենական խաղաղության ծրագիրը» աշխատության մեջ ասում էր, որ էգոիստների շահերը պետք է այնպես կազմակերպել, որպեսզի փոխադարձաբար արհամարհանքով վերաբերեն իրենց կործանիչ ազդեցություններին, և նա, ով անգամ լավ մարդ չէ, համարձակվի լինել լավ քաղաքացի:

L'Express. Կա՞ն այդ իղեալին մոտենալու օրինակներ:

Պիեռ Բուրդիե. Գիտական աշխարհները: Այս պարագայում, եթե, ինչպես բոլորը, կենդանի անհատները ցանկանում են ազդակների, կրքերի ու շահերի միջոցով հաղթել, ապա պարտավոր են դա անել հարկ եղած կերպով: Չեն կարող ոչնչացնել իրենց հակառակորդին կամ տապալել բռունցքների հարվածներով: Նրանք պարտավոր են այդ հակառակորդին հակադրել ճշմարտության ռեժիմին համապատասխան գործող հերքում: Բյուրոկրատական, քաղաքական աշխարհներում նպատակ կլիներ հիմնել նման տիպի կարգավորումներ՝ ունակ սահմանելու անհետաձգելի, ավտոմատ պատժամիջոցներ նրանց համար, որոնք խախտում են կանոնները: Լրագրողներին է պատկանում գլխավոր դերը, որը լավ աշխատում է «գործերի» քողազերծումից այն կողմ: Վերջիններիս շարքին են պատկանում մտավորականները ու ավելի անհատական կարգով՝ հետազոտություններ իրականացնող սոցիոլոգները: Իհարկե այն պայմանով, և՛ մեկը, և՛ մյուսները ենթարկվեն խաչաձև հսկման, պայմանով, որ որոշակի գործընթացներին դիմելը, ինչպես, օրինակ, այդքան հաճախ քննադատության մեջ հանդիպող, մյուսի հասցեին ուղղված զրպարտանքը կամ շնորհազրկումը, արժեներ նրան, ով զիջումներ է անում անհապաղ կերպով վարկաբեկված լինելու համար: Սովորական դեոնտոլոգիան այս դեպքում բավարար չէ, ինչպես կարծում են «էթիկայի հանճնաժողովները»: Մնացածը հորինելու մեխանիզմներ են, որոնք կարող են բնական կարգի պես համանման ճշգրտության տպավորություն թողնել:

L'Express. Իսկ ի՞նչ կասեք պետության ֆունկցիայի մասին:

Պիեռ Բուրդիե. Դա հնարավոր է սահմանել միայն՝ հրաժարվելով լիբերալիզմի ու սոցիալիզմի սովորական երկընտրանքից, այն չարագուշակ երկակիություններից մեկից, որոնք խոչընդոտում են միտքը: Երկու համակարգերը, համենայն դեպս իրենց բուն և ճշգրիտ իմաստով, ունեն մեկ ընդհանուր բան՝ իրենց տնտեսական չափով նվազեցնել սոցիալական աշխարհի

բարդությունն ու կառավարությունը ծառայեցնել տնտեսությանը: Բավական է մտածել սոցիալական ծախսերի և, վերջին հաշվով, տնտեսական արտադրողականության ու շահի բացառիկության քննմամբ ներշնչված քաղաքական տնտեսագիտության մասին, չափվում է նաև մահացու զատումը, ինչը տնտեսագետը ենթարկում է մարդկային պրակտիկայի ամբողջական սահմանմանը: Գործազրկության, թշվառության, շահագործման, բացառման, անմարդկայնության գինը վճարվում է տառապանքով, ինչպես նաև բռնությամբ, որը կարող է ուղղվել ընդդեմ մյուսների և իր իսկ դեմ նույնպես, օրինակ՝ ալկոհոլիզմով, թմրանյութով կամ ինքնասպանությամբ:

L'Express. Եվ դա՞ է «Աշխարհի թշվառությունը» գործի իմաստը:

Պիեռ Բուրդիե. Այդ թվում՝ և… Իրականում ես կարծում եմ, որ եթե մեր տեխնոկրատները սովորություն դարձնեին բոլոր ձևերով, բոլոր հնարավոր հետևանքներով, ազգի հաշվին տնտեսական կամ այլ տեսակ տառապանք պատճառել, նրանք կհայտնաբերեին, որ հաճախ իրենց տնտեսական ծրագրերում, որոնք հուսով են իրականացնել, շատ սխալ հաշվարկներ կան:

«Ընդդեմ նեոլիբերալ չարիքի»[63]

Նախաբան[64]

Կոլեժ դը Ֆրանսի պրոֆեսոր Պիեռ Բուրդիեն (ծնվել է 1930 թ.) հումանիտար գիտություններում ամենաշատը հղված ֆրանսիացի մտավորական դասախոսներից է: Բարձրագույն դպրոցում[65] կրթություն ստացած փիլիսոփա և ազգաբան մտավորականն իր առաջին աշխատանքները նվիրում է Ալժիրին, այնուհետև՝ Բեարնի գյուղացիներին. 68 թ. մայիսյան դեպքերից առաջ[66] ֆրանսիացի ուսանողների հետ միասին կազմակերպում հարցումներ, աստիճանաբար մշակում «դաշտի» կոնցեպցիան (տնտեսագիտական, քաղաքական, գրական, գիտական), որն ուսումնասիրում է ֆրանսիական եպիսկոպոսության, 19-րդ դարի վիպագիրների, լիբերալ տնտեսագետների, ֆեմինիստների, «պետական արքունիքի», ինչպես նաև մանր բուրժուազիայի ներկայացուցիչների երաժշտական ճաշակների, էլիտայի սպորտային նախընտրությունների, համալսարանական միջավայրերի, կին ու տղամարդ նույնասեռականների, երկարաժամկետ գործազուրկների շրջանակներում: Բազմաթիվ լեզուներով թարգմանված շուրջ երեսուն աշխատությունների, հարյուրից ավելի հոդվածների հեղինակ, երկու գիտական հանդեսների («*Actes de la recherche en sciences sociales*» և «*Liber*» հրատարակություն) տնօրեն Պիեռ Բուրդիեն, վերջին տարիներին, բարդ տեսական

---

[63] Հարցազրույցը նախապատրաստել է Ժերոմ Մեյզոն: Տպագրվել է «Le Temps» օրաթերթում, Ժնև, 1998 թ., մարտի 28-29, էջ 11: Աղբյուրը՝ http://www.homme-moderne.org/societe/socio/bourdieu/contrefe/letemps.html, այցելվել է 25.04.2017 թ. (թարգմ.):

[64] Նախաբանը՝ Ժերոմ Մեյզոյի, 1998 թ., մարտի 11-ին (թարգմ.):

[65] École normale supérieure (թարգմ.).

[66] Ֆրանսիայում 1968 թվականի մայիս-հունիս ամիսներին տեղի ունեցան ցույցեր, գործադուլներ, զանգվածային անկարգություններ: Շարժումը սկսվեց ուսանողների նախաձեռնությամբ, որին հետո միացան բանվորները (թարգմ.):

աշխատանքների կողքին («*Raisons pratiques*»[67], 1994, «*Méditations pascaliennes*»[68], 1997) հանդես է գալիս բազմաթիվ խոռվարար բնույթի բանավեճերով ու դրդում քաղաքական գործողությունների, որոնք իր կատարած դաշտային աշխատանքների գործնական հետևանքներն էին: Այդպես՝ «*Sur la télévision*»[69] (1996) աշխատությամբ Բուրդիեն խոռվության ալիք բարձրացրեց լրագրողական աշխարհում, որի «ազդեցությունը» ժամանակակից մտածող աշխարհի վրա վատաբանվեց ու քննադատվեց: Այս ամիս «Le Monde diplomatique»[70] ամսաթերթում Պիեռ Բուրդիեն հրատարակեց «Նեոլիբերալիզմի էությունը» հոդվածը, որն իրենից ներկայացնում է տնտեսական տեսության կազմաքանդում (դեկոնստրուկցիա)՝ ներկայումս չունենալով որևէ այլ մրցակից: Այս օրերին, վերջապես, հայտնվեց «*Contre-feux*»[71] անվամբ քաղաքական տեքստերի ժողովածուն, որի ենթավերնագիրը՝ «Կոչ՝ ծառայելու նեոլիբերալ ներխուժման դիմադրությանը», արդեն իսկ արտահայտում է գործի էությունը: Աշխատությունն աղմկալի հաջողություն ունեցավ, քանի որ այն հակապատկերն էր դասական, խրթին ու իր հետևում թողած գործերի, ինչպիսիք էին օրինակ՝ «*Տարբերակում*» *(«La Distinction», 1979),* «*Պետական արքունիքը*» *(«La Noblesse d'état», 1989) կամ* «*Արվեստի կանոնները*» *(«Les Règles de l'art», 1992)*: Հետ չկանգնելով ձեռք բերված սոցիոլոգիական գիտելիքներից՝ Բուրդիեն հարձակվում է Բունդեսբանկի (Bundesbank) նախագահ Հանս Տիտմեյերի, Ֆրանսիայում տարվող «պետական ռասիզմի» քաղաքականության, գրող Ֆիլիպ Սոլերսի, ազատական տնտեսագետների, եվրոպացի կառավարիչների վրա, որոնք նեոլիբերալիզմը ներկայացնում են որպես պատմա-

[67] «Գործնական դրդապատճառներ» (թարգմ.):
[68] «Պասկալյան մտորումներ» (թարգմ.):
[69] «Հեռուստատեսության վերաբերյալ» (թարգմ.):
[70] «Դիվանագիտական աշխարհը» (թարգմ.):
[71] «Հանդիպակաց կրակներ» (թարգմ.):

կան անխուսափելիություն: «Նեոլիբերալ չարիքը» այժմեական է: Ընթերցողին հասանելի այս գրքում սոցիոլոգն առաջարկում է պայքարել դրա դեմ՝ նպատակ ունենալով «իրազեկել ակտիվիստներին հետազոտության ամենաառաջադեմ ձեռքբերումների մասին»: Որտեղի՞ց են գալիս իր նեոլիբերալիզմն ու «պահպանողական հեղափոխությունը», որոնք նա իր հետ տանում է: Ինչպե՞ս «ճկունություն» կամ «ապակարգավորում» (dérégulation) տերմինները, որոնք իրենց մեջ թաքցնում են սոցիալական դրամաներ, կարող էին դրականորեն նշանակցված լինել: Սոցիոլոգը ջանում է պատասխանել այս կարևոր հարցերին, բայց և արձանագրում հուսալու հիմքերը, ինչպես ի դեմս «սոցիալական հրաշքի», որը 1995 թ. դեկտեմբերին ու 1998 թ. հունվարին Ֆրանսիայում արձանագրեց գործադուլներ, ասոցիացիաներում ընդգրկված գործազուրկների կողմից հանրային վայրերի ինքնաբուխ գրավումներ: Ընչազուրկների կողմից բխած «դիմադրության» դրսևորումները նախաբանն էին քաղաքացիների ընդհանրացված լիգայի համար, որը միավորում էր գործազուրկներին, սոցիալական աշխատողներին, հանրային ծառայության ներկայացուցիչներին, մտավորականներին, արտիստներին ընդդեմ «մաքուր» տնտեսությունից եկող սոցիալական այդ սպառնալիքի:

Ջրույց՝ Ժերոմ Մեյզո

Անդրադարձ

«Contre-feux». «Կոչ՝ ծառայելու նեոլիբերալ ներխուժման դիմադրությանը», Լիբեր (Liber) հրատարակություն, Seuil diffusion, էջ 125, 1998 թ.:

Վերջին հրատարակումները

«*Հեռուստատեսության վերաբերյալ*», Liber հրատարակություն, 1996 թ., «*Պասկալյան մտորումներ*», Le Seuil հրատարա-

կություն, 1997 թ., «*Աշխարհի թշվառության*» վերահրատարակում, Points-Seuil, 1998 թ., «*Նեոլիբերալիզմի էությունը*», «Le monde diplomatique» ամսաթերթ, մարտ, 1998 թ., ARESER[72] (կոլեկտիվ), «*Որոշ դիտարկումներ և հրատապ միջոցներ վտանգի տակ գտնվող համալսարանի համար*», Լիբեր (Liber) հրատարակություն, 1998 թ.:

[72] Association de Réflexion sur les Enseignements Supérieurs et la Recherche - Բարձրագույն ուսումնահետազոտական դատողության ասոցիացիա (թարգմ.):

Հարցեր Պիեռ Բուրդիեին

1. 90-ականների սկզբից ինչպես «Հեռուստատեսության վերաբերյալ» («*Sur la télévision*») աշխատության մեջ, այնպես էլ այսօր արդեն «*Contre-feux*» գործում արձանագրում ենք, որ «մեթոդապես կարգավորված» Ձեր դասական աշխատությունների կողքին, գործողության մղող տեքստերի միջոցով Դուք բարձրաձայնում եք «գործելու դրդապատճառի մասին»: Ինչպե՞ս դրան հասաք:

Պիեռ Բուրդիե. Քաղաքական դաշտում իմ ունեցած միջամտություններն ավելի վաղ բնույթ են կրում, բայց պակաս տեսանելի են, քանի որ այդ ժամանակ ես ինքս ինձ համար պակաս տեսանելի էի: Մտածում եմ 1982 թ. Միշել Ֆուկոյի հետ Լեհաստանի վերաբերյալ արված միջամտությունների, ինչպես նաև Ալժիրի վերաբերյալ ունեցած կանոնավոր տեսակետների մասին, մի երկիր, որտեղ երկար ժամանակ հարցումներ իրականացնելով՝ ես այն շատ լավ ճանաչեցի: Այսինքն՝ 15 տարի շարունակ, ավելի շատ անհատապես, պայքարեցի՝ սահմանելու «կոլեկտիվ մտավորական» ասվածը: 10 տարի շարունակ Միլանի գրքերի տոնավաճառում թվով հիսուն եվրոպացի մտավորականի համար ապահովեցի ծանոթության հարթակ՝ փորձելով ստեղծել մի կայուն միջազգային մարմին, որն ի վիճակի կլինի ուրույն ձևով հանդես գալ մտավորականներին հետաքրքրող մի շարք քաղաքական հարցերի շուրջ: Մասնավորապես «*Liber*» ամսագրի շնորհիվ ես գրեթե ամենուր կոլեկտիվ մտավորականի օրինակ էի ծառայում: Այս ուտոպիայի խնդիրներից մեկի նպատակն է ապահովել մուտք դեպի ՋԼՄ-ն, իմ ցանկությունն է վերստին մտավորականներին տալ միջոցներ իրենց խոսքը տարածելու համար, ավելի շուտ նրանց թույլ տալ խոսել, քան թե ՋԼՄ-ների միջոցով խոսեցված լինել:

Դժբախտաբար ՁԼՄ-ները չեն ցանկանում ընդունել մտավորականներին որպես անհատականություններ ու բարդացնում կամ իզուր են դարձնում կոլեկտիվ խոսելու բոլոր փորձերը, դրա օրինակները գրքում ներկայացված են:

2. Արդյո՞ք դրա համար է, որ արդեն երկու տարի է, ինչ հիմնել եք Ձեր սեփական՝ «*Liber- Raisons*» հրատարակչատունը:

Պիեռ Բուրդիե. «Գործելու դրդապատճառներ» ժողովածուն իրապես հետազոտողների, պատմաբանների, տնտեսագետների, սոցիոլոգների կոլեկտիվ աշխատանքի արդյունքն է, ինչպես նաև կոլեկտիվ «*ARESER*»-ը, որը ֆրանսիական համալսարանի համար առաջարկեց կլինիկական բավական դաժան մի նկարագիր: Խոսքը գնում է ինքնավար հրատարակչատան մասին, առաջարկելով ամբիոն, որը թույլ է տալիս խուսափել ուժասպառ անող լոբբինգից, ինչն անհրաժեշտ է ՁԼՄ-ներում մի քանի էջ ներկայացնելու համար: Մեր հրատարակած փոքրիկ գրքերից երկուսի տպաքանակը հասավ 100.000 օրինակի: Այդպիսով, առանց որևէ գրախոսականի լույս է տեսել մեր մտքերի ողջ ժողովածուն: Հիշեք Սերժ Հալիմիի լրագրության մեծարանքի գիրքը՝ «*Նոր պահակաշները*» (Les Nouveaux chiens de garde). միանշանակ այն երբեք իր խմբագրին չէր գտնի...

3. Ձեր հրատարակչատունը աշխատում է «դիմադրության» ոգով, բառ, որին ստիպված ես հաճախ անդրադառնալ:

Պիեռ Բուրդիե. Այո: Մենք ցանկանում ենք փորձության ենթարկել մի *բացասական ուժի*, այսինքն՝ առաջին հերթին ամենահզոր ՁԼՄ-ների ողջ դիմադրությունը, ինչպես «*Le Monde*»-ի դեպքում, մնացածի անունները չնշեմ, որոնք պարզեցնում են սոցիալական աշխարհի շուրջ տարվող նեոլիբերալ դիսկուրսը: Վաճառքի հաջողությունը կարևոր է, քանի որ ՁԼՄ-ներին այն պարտավորեցնում է հաշվի առնել այն, ինչ մենք ասում ենք: Դժբախտաբար, այսօր, ՁԼՄ-ներում մտքի ուժը չափվում է թվե-

րի ուժով: Դա է audimat[73]-ի գաղափարը: Հուսով ենք գրքերի միջոցով զսպել կամ գոնե ստիպել հարգել որոշ կանոններ: Այստեղից էլ իմ գրքի վերնագիրը՝ «*Contre-feux*»: Այսօր իրենց ձեռքերում ահռելի հզորություն կենտրոնացրած խոշոր լրագրողներ երբեմն ցանկանում են ստիպել հավատալ, որ մտավորականները ձգտում են ունենալ չգիտեմ ինչ տեսակ ստալինյան ահաբեկչական իշխանություն: Փաստացի, մտավորականները իշխանություն չեն ցանկանում, նրանք ցանկանում են արդյունավետ ստվերային իշխանություն, ցանկության դեպքում «ոչ» ասելու կարողություն:

4. Ձեր գրքում գերիշխում է երկակի զգացում՝ մի կողմից «ցասումն» ընդդեմ անարդար տնտեսական աշխարհի, մյուս կողմից՝ սոցիալական «հրաշքի» գովքը, ինքնաբուխ դիմադրությունը, ինչը Ֆրանսիայում գործազուրկները, գործադուլավորները դրան հակադրում են: Չեզ կարդալով՝ այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ հոռետեսությունը հաղթանակում է...

Պիեռ Բուրդիե. Առկա է հուսահատություն այն ամենի նկատմամբ, ինչ տեղի է ունենում եվրոպական հասարակություններում, հավասարապես կա նաև մտավորականներից առաջացած ցասում, որոնք դառնում են առնտրային ուժերի հանցակիցները: Այսպես ասեմ՝ ինձ ջղայնացնում է փարիզեցու թեթևամտությունը, այն կատակային տոնը, որով նա պարտավորվում է խոսել լուրջ թեմաներից, որն էլ իր հերթին թույլ է տալիս ամեն տեսակ

[73] 1985 թ. հունիսին ստեղծված “Médiamétrie» ընկերությունը մասնագիտացված է աուդիովիզուալ և ինտերակտիվ ԶԼՄ-ների լսարանի չափման մեջ, որը նաև դիտարկում, չափում ու վերլուծում է հանրության վարքն ու ԶԼՄ-ների և հաղորդակցման շուկան: «Audimat» տերմինն առաջ է քաշվել հենց այս ընկերության կողմից, որը, սակայն, իրենից ներկայացնում է նաև հեռուստացույցի կամ ռադիոյի հաղորդչին կցված մի սարք, ինչը թույլ է տալիս չափել վայրկյանում գովազդների կամ սպորտային գովազդային հոլովակների դիտման/լսման տոկոսը: Ավելի ուշ «Audimat»-ը սկսեց օգտագործվել մատնանշելու հեռուստաու ռադիոալիքները դիտող և ունկնդրող լսարանի չափման արդյունքները (թարգմ.):

վերափոխություններ ու խղճի դեմ գործելու ցանկացած դրսևորումներ: Փարիզեցու թեթևամտությունը սպանում է համոզմունքը: Բարեբախտաբար ես այլ փորձառություն էլ եմ ձեռք բերել, ուստի իմ մասնակցությունը նոր ձախակողմյան շարժումներին, այսինքն՝ ձախակողմյանի ձախակողմյանին, ստիպեց բացահայտել, հակառակ իմ նկարագրածի, չհետաքրքրված ակտիվիստների, որոնք զբաղվում են ինչ-որ արվեստով հանուն քաղաքականության արվեստի: Նրանք գլուխներն ազատում են լավատեսության ու հոռետեսության կեղծ այլընտրանքից: Միգուցե նրանց պայքարն անհույս է, բայց նրանք անում են այն, ինչ պետք է այնտեղ անել: Որտեղից էլ ահա իմ համակրանքը գործադուլավորների շարժումների նկատմամբ, որը հաջողվեց Ֆրանսիայում և տարածվեց նաև Գերմանիայում: Այդ, գերազանցապես քիչ հավանական, շարժումը, որում անգամ սոցիալիստները շտապեցին քննադատվել, ՋԼՄ-ների կողմից գրեթե չօժանդակվեց, անգամ հաջողացրեց անցնել սահմանները:

5. Հենց սոցիոլոգն անցնում է անգաժավորված տեքստի օբյեկտիվիստական ուսումնասիրությանը, առաջանում է երկակիություն՝ արդյոք այն «քողազերծում է» թաքնված սոցիալական մեխանիզմները, թե «մերկացնում» դրանք: “Sur la télévision”-ի դեմ ուղղված բազմաթիվ նախնական արձագանքներն այդտեղ են գտնում իրենց սկզբնաղբյուրը: Ինչպե՞ս կնկարագրեիք Ձեր աշխատության նպատակը:

Պիեռ Բուրդիե. Դա է հումանիտար գիտություններում առկա *նկարագրել* ու *վերագրել* բառերի տարբերությունը: Վերցրեք, օրինակ, Միլտոն Ֆրիդմանի՝ Չիկագոյի դպրոցի հայտնի տնտեսագետի օրինակը: Չիլիում Ֆրիդմանը եղել է Պինոչետի ուլտրա ազատական քաղաքականության շրջանի տնտեսական գծով խորհրդականը: Խոսքը գնում է նկարագրողակա՞ն տնտեսության մասին: Ես ինքս դարձա այդ չեզոքության բարոյախոսության, գիտական անհաղորդության զոհը: Այդպիսով ես ինքս ինձ

խոչընդոտում էի կատարածս հարցումներից որոշակի ակներև հետևություններ անել և իզուր: Տարիքի, այդ թվում և ճանաչման հետ եկող վստահությունը, և այն ճնշման ներքո, որը դիտարկում եմ որպես իրական քաղաքական հրամայական, ստիպված էի ներխուժել մի դաշտ, որն անվանում են քաղաքականություն: Կարծեք հնարավոր է քաղաքականությամբ չզբաղվելով՝ խոսել քաղաքականության մասին: Կարելի է ասել, որ սոցիոլոգն այնքան շատ է զբաղված քաղաքականությամբ, որքան կարծում է, որ զբաղված չէ…

6. Ժողովրդավարության արդի դրսևորումներում հանդես եք գալիս ընդդեմ «քաղաքացիական առաքինության դեգրադացիայի»: Դա գրեթե բարոյախոսին հատուկ արտահայտություն է: Սրանով ի՞նչ կցանկանաք ասել:

Պիեռ Բուրդիե. Այս արտահայտությունը կարող է շատ նորմատիվ թվալ: Կանտյան ընդհանրականության (universabilité) թեստի համաձայն՝ գոյություն ունեն վարքի դրսևորումներ, որոնք ավելի ընդհանրական են, քան մյուսները: «Քաղաքացիական առաքինությունը» փաստում է, որ օբյեկտիվորեն մենք փոխկապակցված ենք, և որ մեկի գործողություններն իրենց հետևանքներն են ունենում մյուսների համար: Դեմոկրատ պետության կողմից ձեռք բերված ողջ պատմական փորձառությունը (սոցիալական անվտանգությունը, որը ցանկանում ենք վոխարինել սոցիալական ապահովագրությամբ և այլն) վտանգված է նեոլիբերալ գաղափարով:

7. Դուք հիշեցնում եք, որ սոցիալական պետությունը պատմական նվաճում է, որն իր հերթին ենթադրում է ընդհանուր բարեկեցության երաշխավորում: Այսօր այն հավասարապես վտանգված է նեոլիբերալիզմով, ինչը նրան ստորացնում է որպես բյուրոկրատական ապարատի, փաստի ծանրությունների և այլն:

Պիեռ Բուրդիե. Տնտեսության մասին ունեցած նեղ պատկերացման վրա հիմնված նեոլիբերալ քաղաքականությունը նպատակ ունի քայքայելու ողջ կոլեկտիվը (պետություն, միություններ, ընտանիք և այլն), շուկայում առկա բոլոր խոչընդոտները, թույլ տալ իր ուժերին ազատորեն գործել: Դա այն սոցիալական կարգի մերժումն է, որի մասին խոսում էի: Սոցիալական պետության տապալումը ներկայումս, օրինակ, AMI[74] համաձայնությամբ, ինչպես և այլ միջոցներով, խորտակում է մի շարք կենսական նշանակություն ունեցող կառույցների գործունեությունը: Հայտնի է, որ տիրապետողներն ինչ-որ չափով կապված են սոցիալական պետության հետ, ավելի կոնկրետ՝ ինչ չափով որ սոցիալական պետությունը թուլանում է, նույն չափով անցումը կանանց ժամանակավոր աշխատատեղերի ավելանում է: Ինչո՞ւ: Այն, ինչ թուլացած է, դա այն է, ինչը կոչում եմ պետության «ձախ ձեռքը» (հիվանդանոցներ, սոցիալական ծառայություններ, տիրապետող հանրային ծառայություններ), և այնտեղ է, որտեղ կանայք ամենաշատ են ներկայացված… Իր հերթին պետության «աջ թևը» (բարձրաստիճան պաշտոնավորները, Պետական կառավարման բարձրագույն դպրոցի շրջանավարտները և այլն) դասախոսում և պարտադրում (ուրիշներին) է նեոլիբերալ սկզբունքներ:

8. Դուք եք մասնավորապես քննադատն այն ամենի, ինչն այս գործընթացում վերաբերում է մեդիաների դերին:

Պիեռ Բուրդիե. Այո, քանի որ դա ինչ-որ չափով նպաստում է թեթևորեն, անհոգությամբ, այդ թվում և անիրազեկությամբ նպաստում է նեոլիբերալ մռմռոցին: Չհաշվելով նրանց, որոնք անում են իրենց պահպանողական քաղաքական դիսկուրսի փոփոխություն՝ ներկայացնելով որպես մոդեռնիստներ... Ինչպես և

[74] AMI (Association Montessori Interantionale) - Մոնտեսորիի միջազգային ասոցիացիա (թարգմ.):

բոլոր վարպետ խաբեբաները, նրանք իսկապես ստում են, որովհետև հենց նրանք խաբում են:

9. Հարձակվելով այնպիսի գրողների վրա, ինչպիսիք են Ֆիլիպ Սոլերսը կամ Բերնար-Անրի Լևին, ցույց եք տալիս, թե արտիստիկ միջավայրում նեոլիբերալ տրամաբանությունը որքան կործանիչ հետևանքներ կարող է ունենալ: Կարո՞ղ եք օրինակներ բերել:

Պիեռ Բուրդիե. Կբերեի հրատարակչական շուկայի օրինակը, որի շուրջ ներկայումս մեծ հարցում ենք անցկացնում: Տեսնում ենք այն հետևանքները, որոնց ես կոչում եմ «պահպանողական հեղափոխություն» մշակութային գործունեության գերիշխող բնագավառներում, արտիստների մոտ՝ ինչպես ինստիտուտների մակարդակում: Քիչ ցինիկ գրողների շահերի միջև առկա են բախում ու համընկնում, որոնք հնազանդությունը ներկայացնում են առևտրական վճիռներին՝ որպես մի գրական հեղափոխություն (այդպես կարդում ենք վիպագրական «նոր սերնդի» մասին, «վերադարձ իրականին», «ֆորմալիզմի ավարտը»), և մյուս կողմից՝ հրատարակման ավելի ու ավելի մեծ կենտրոնացում: Ինչպես գրական հրատարակման, այնպես էլ խոշոր պարբերականների դեպքում այդ տեսանելի կենտրոնացումն ուղեկցվում է առևտրական տրամաբանության ընդհանրացված հաղթանակով: Ինչպես ասում էր հրատարակչական ոլորտի մասնագետներից մեկը, այս գործն ավելի ու ավելի շատ ուղղորդվում է այն մարդկանց կողմից, որոնք կարդում են ոչ թե գրքերը, այլ վաճառքի լայնածավալ ցուցակները... Ահա թե ինչու եմ հարձակվում այն գրողների կապիկությունների վրա, որոնք, կատակելով նման հարցերի շուրջ, սողոսում են այն ճյուղը, որի վրա նստել են:

10. Մշտապես մտքերի միևնույն հաջորդականությունը. ինչպե՞ս եք բացատրում խոշոր պարբերականներում հանդիպող «հասարակությանը վերաբերող թեմաների» հռչակը՝ միահյուս-

ված լրագրողների՝ «սոցիոլոգներին» ուղղված արհամարհանքով:

Պիեռ Բուրդիե. Սոցիոլոգիան ունի բացասական համաձայնություն ստեղծելու արտոնություն, հասնելու սոցիոլոգիայի դեմ հանդես եկող լրագրողների, արտիստների և մյուսների միաձայնությանը, քանզի հենց վերջինս է նրանց վերաբերյալ ցավալի բաներ ասում: Գիտնականները, օրինակ՝ ֆիզիկոսները, ընդհանուր առմամբ ոչինչ չեն ասում սոցիոլոգիայի դեմ: Գրողի անուն հանելու համար, օրինակ, ողջունելի է համարվում հանրայնորեն ներկայացնել քո քամահրանքը սոցիոլոգիայի հանդեպ: Ինչպես նաև փիլիսոփաները, որոնք գրեթե չեն սիրում սոցիոլոգիան, բայց մեկ այլ պատճառով, ինչը ես դիտարկեցի «*Պասկալյան մտորումներ*» (1997) գրքում: Քանի որ սոցիոլոգիան հարցականի տակ է դնում նրանց կախյալ տեսակետը և դրա միջոցով անգամ նրանց գերակա ու առաջնային համարվող հետազոտողի կարգավիճակը: Ընդհանուր առմամբ սոցիոլոգիայի հանդեպ առավել դաժան տրամադրվածները տարօրինակաբար այն մարդիկ են, որոնք նույնիսկ պատկերացում չունեն սոցիոլոգիայի մասին... Ինչ վերաբերում է լրագրողներին, ապա «*Աշխարհի թշվառություն*» (1993) աշխատությունը նրանց ստիպեց բացահայտել, որ մարդիկ, ովքեր սովորաբար ստիպում են իրենց մասին խոսել (նկատի ունեմ գրավոր լրագրությունը) կամ որ ստիպում են լռել (նկատի ունեմ հեռուստատեսային կամ ռադիո լրագրությունը), արտառոց ասելիք ունեն, եթե, իհարկե, իրենց գիտեն լսել: Բարեբախտաբար բազմաթիվ լրագրողներ սա դեռևս գիտակցում են, սակայն ավելի ու ավելի դժվար է լինում, որպեսզի իրենք իրենց ստիպեն լսել: «Հասարակության» սենսացիայի որոնումն իսկը սոցիոլոգիայի հակառակ կողմն է:

«Տեսնել այնպես, ինչպես դեռ երբեք չեն տեսել»[75]

Ամերիկյան ժամանակակից գրականության հզորագույն ներկայացուցիչ Թոնի Մորիսոնը՝ հրատարակեց գիրքը գրքի ետևից, ինչպես նաև բազմաշերտ, ճնշվածների կրքերով, ձայներով, ռիթմերով համակված մի ստեղծագործություն[76], որը հետաքրքրեց Պիեռ Բուրդիեի սոցիոլոգիային: Բայց կոնկրետ ի՞նչ նպատակով հետաքրքրեց: Նրանց միջև նմանությունների, թե՞ Թոնի Մորիսոնի՝ սոցիոլոգիական գիտելիքից ունեցած հեռավորության տեսանկյունից: Որովհետև այն արտացոլում է սոցիալական վիճակը, թե՞ որովհետև ազատվում է դրանից: Որպես գրական, թե՞ քաղաքական հորինվածք: Զրույցը, որը թույլ կտա դատողություններ անել այս ամենի մասին, տեղի ունեցավ 1994 թ. հոկտեմբերի 22-ին, Փարիզում[77]:

Պիեռ Բուրդիե. Հարցերիս նպատակն է Ձեզ առիթ տալ փորձել ասելու բաներ, որոնք Դուք սովորաբար չեք ասում: Շատ կցանկանայի Ձեզ հարցնել Հովարդ համալսարանի, Ձեզ դասավանդողների, օրինակ՝ Ֆրազիերի՝ «*Սև բուրժուազիայի*» մեծ հեղինակի, ինչպես նաև Ռանդոմ Հաուզի *գլխավոր խմբագրի* Ձեր դերի մասին, որտեղ հրատարակեցիք մի շարք խոշորագույն գրողների և սևամորթ վերլուծաբանների կարևոր աշխատությունները: Կցանկանայի նաև հիշատակել 1988 թ. Պուլիտցերյան մրցանակի շուրջ առաջացած մեծ աղմուկի մասին, որովհետև ինձ թվում է՝ դա մի ճշանակալից գործ էր, որը թույլ տվեց մտորել ամերիկյան ինտելեկտուալ աշխարհում, որոշակի պայ-

[75] Պիեռ Բուրդիեի հարցազրույցը Թոնի Մորիսոնի հետ, որը տպագրվել է 1998 թ. հունվարի 2-ի «Վակարմ» (Vacarme) ամսագրի 6-րդ համարում: Աղբյուրը՝ http://www.vacarme.org/article807.html, այցելվել է 20.04.2017 (թարգմ.):

[76] Ֆրանսիայում Թոնի Մորիսոնին ճանաչում բերեց «Beloved» (Սեր) վեպը: Նա Նոբելյան մրցանակի արժանացավ 1993 թ.: Ֆրանսերեն են թարգմանված որոշ վերնագրեր՝ Beloved, Tar Baby, La chanson de Salamon, Sula, Playing in the dark, L'oeuil le plus bleu. սույն վերնագրերը հասանելի են 10/18 հավաքածուում:

[77] Հարցազրույցը արձանագրել է Դիդիյե Էրիբոնը (թարգմ.):

մաններում հայտնված սևամորթ գրողի մասին: Սակայն վերադառնամ, ըստ իս, մեկ այլ ավելի կարևոր հարցի: «Մթության մեջ խաղացողը» (Playing in the Dark) գործում Դուք վերլուծում եք սպիտակամորթների գրականության այն պատկերները, գաղտնիքները, որոնք տրվում են սևամորթներին, թեպետ վերջիններիս գրականության մեջ կա սպիտակամորթին ներկայացնող չափազանց կարծրատիպացված պատկեր: Եթե անգամ չեք սիրում, և դա լիովին լեգիտիմ է, ընդունված լինել որպես սևամորթ գրող, իսկ Դուք սևամորթ գրող եք, որովհետև կարծում են, որ Դուք սևամորթ գրող եք, որովհետև Ձեր գործի ընթերցումը ուղեկցվում է վերը նշված կարծրատիպային պատկերով: Ինչպիսի՞ն է այդ կարծրատիպը: Կանոնավոր կերպով կապ է հաստատվում այդ գրականության ու սոցիալական գիտությունների միջև, որի մասին խոսում էր Ալբերտ Մյուրեն՝ անվանելով այն «սոցիալ-գիտաֆանտաստիկ» գրականություն: Կրճատում են գրական գործի էջերի քանակը, և սևամորթ գրողի հետ վտանգ պարունակող էջերի կրճատումը համաձայնեցնում են սոցիալ-քաղաքական և ֆորմալ դաշտում: Օրինակ՝ ինչպես ջազը իր հետ բերեց միանգամայն յուրօրինակ նորարարություններ, որոնք միևնույն ժամանակ և՛ հասանելի և՛ անհասանելի էին, ցուցակագրված, տեղավորված երաժշտական արվեստի ստորին շերտում, որտեղ արտացոլվեց ֆոլկլորային երաժշտության, սևամորթ գրականության մեջ հանդիպող էսթետիկ նորարարությունների որոշակի քանակություն, ինչը չեզոքացվեց գրական յուրահատկության մեջ: Օրինակ՝ «Ջազ» (Jazz) գործում ավելի շատ ընդունվեց ռիթմը, քան կառուցվածքը, ուստի հետաքրքիրը ձայների բազմազանությունն է և այն փաստը, որ գլխավոր ձայն, կենտրոնական խոսք ասվածը չկա... Նույնը կարող ենք ասել այդ տիպի գրականության մասին: Խոսում են զգայությունից, ջերմությունից, սեքսուալությունից և այլն: Այլ կերպ ասած՝ Ձեր ստեղծագործության շուրջ ծավալված քննարկման մեջ գտնում են այն ամենը, ինչ

գտնում եք սևամորթների վերաբերյալ սպիտակամորթ գրողների գործերում:

Թոնի Մորիսոն. Ընդունված լինել լոկ որպես որևէ իրավիճակի ականատես կամ էլ որպես մեկը, որը, բացի «Ախ, վատ եմ» կամ էլ «Ես բողոքարկում եմ» խոսքերից, այլ բան չունի ասելու, խորապես նվաստացնող է, նույնիսկ եթե շատ կարևոր է, որպեսզի գրողները դիտարկվեին իրենց համատեքստում: Փորձեցի «Սեր» (Beloved) վեպը ներկայացնել որպես պատմական ստեղծագործություն, բայցև որը միևնույն ժամանակ խուսափում է պատմական գիտակարգի (դիսցիպլինի) սահմաններից: Երբ այն ավարտեցի, որոշեցի գրել հաջորդ պատմական շրջանին վերաբերող ևս մեկ վեպ՝«Ջազի դարաշրջան» (Jazz Age): Ես հատկապես ցանկանում էի, որպեսզի ընթերցողները նախ և առաջ գիտակցեն նրա կառուցվածքը, հեղինակումը, որտեղ, որքան հնարավոր էր, ձգտում էի ներմուծել ջազի կազմությունը: Համեմատությունն այդ տեսակ երաժշտության հետ հիմնային է, քանզի եթե ճիշտ է, որ այժմ ջազի մշակույթը մշտապես ասոցիացվում է զգայունության, անօրինակության, տամ-տամների կամ էլ էկզոտիկության հետ, ապա ամենադժվարը դրանում մնալն էր: Այն պահից ի վեր, երբ ամենաքիչ վերլուծությանն են ենթարկում այդ երաժշտությունը, չեն կարող անտեսել անբնականությունը: Բայց սա դեռևս գրականության ոլորտում հանդիպող դեպք չէ, ինչպիսին էլ որ լինի ստեղծագործությունների արհեստականությունը, ինչպիսին էլ որ լինեն նոր պատասխանները, նրանց բանեցրած խորամանկություններն ու ստեղծած նորամուծությունները, այս ամենը լիովին անտեսվեց. արձագանքը մշտապես ամենապարզունակն է, այնտեղ տեսնում են ինչ-որ «բնական», հասանելի մի բան՝ կամ կախարդական, կամ ֆոլկլորային:

Կցանկանայի ավելացնել, որ լրագրողներն իրենց մասնագիտության մեջ ենթարկվում են հարկադրանքների, բայց կարող

եմ երաշխավորել, որ ոչ ոք չի քննարկում այն, ինչն ինձ հետաքրքրում է՝ շրջանակված կառուցվածքը, ձևը, որով պատմությունները պատմվում են, պատմողի ձայնի ուժգնացմամբ պատմության մեջ ցանկացած տեսակ գերակայության մերժմամբ:

Պիեռ Բուրդիե. Այն ամենը, ինչ Դուք ասում եք սևամորթ գրողի վերաբերյալ, արժեքավոր է սոցիոլոգի համար: Նա հաճախ ստիպված է դիմել բավական արհեստական քայլերի, որոնք հակադրվում են մաքուր *«բովանդակությանը»*: Հավանաբար սրա պատճառով է, որ ես զգայուն էի անարդարության նկատմամբ, որը դրսևորվում էր սևամորթ գրողների հանդեպ: Այժմ ինձ կարևոր թվացողը, ինչը Դուք մի պահ հաստատեցիք, այն է, որ սևամորթ գրողների գրականությունը հաճախ ոչ գրական տեսանկյունից է դիտարկվում: Եվ գրական տեսանկյուն որդեգրելու համար իրապես կարևոր է գրական պատմության, նախորդների պատմության մեջ վերստին անդրադառնալ գրական մի գրվածքի, ինչը մեզանից շատ ավելի ժամանակ կպահանջեր. կցանկանայի մեզ մի քիչ պատմեք, թե ինչպիսի վերաբերմունք ունեք 20-ական թվականներին Հարլեմի[78] մարդկանց նկատմամբ, որոնց դարաշրջանը վերագտաք «Ջազում» (Jazz), կամ ինչպես, օրինակ, Զորա Նիել Հյորսթոնի[79] նման մարդկանց մասին, որոնք շատ կարևոր են մեզ՝ սոցիոլոգներիս համար, քանի որ նա միևնույն ժամանակ և՛ գրող է, և՛ մարդաբան: Կցանկանայի պատմեիք Ձեզ նախորդող գրողների մասին, որոնց միջոցով դուք՝ սևամորթ գրողներդ, ճանաչեցիք ինքներդ ձեզ, և սպի-

[78] Նյու-Յորքի Մանհեթեն շրջանի հյուսիսային մասում գտնվող թաղամաս՝ հայտնի որպես աֆրո-ամերիկացիների բնակավայր: Հենց այս թաղամասն է եղել 1920-1930-ական թվականներին՝ աֆրո-ամերիկյան մշակույթի ծաղկման տարիներին, առաջատար աֆրո-ամերիկացի գրողների ու նկարիչների կողմից գլխավորող մշակութային շարժման կենտրոնը, որը ստացավ Հարլեմյան վերածննդի անվանումը (Harlem Renaissance) (թարգմ.):

[79] Աֆրո-ամերիկացի կին գրող (1891-1960), ֆոլկլորիստ, մարդաբան, հայտնի է «Նրանց աչքերը տեսել են Աստծուն» վեպով: Մասնակցել է, այսպես կոչված, Հարլեմյան վերածննդի շարժմանը (թարգմ.):

տակամորթներին նույնպես՝ Ֆոլկներ, Վիրջինիա Վուլֆ, Գարսիա Մարկես:

Թոնի Մորիսոն. Ինչպես բոլոր գրողները, ես նույնպես երազեցի լինել ինքնատիպ (sui generis) գրող և բավականաչափ յուրահատուկ՝ ամեն տեսակ համեմատություններից հեռու լինելու համար: Բայց փաստն այն է, որ մենք շատ կարդացինք և կցանկանայինք չխոստովանել մեր թողած ազդեցությունների մասին: Մինչդեռ ես միանգամայն գիտակցում եմ՝ ինչ ասել է հիշատակված լինել մի շարք ամերիկյան հեղինակների կողմից՝ սևամորթ և սպիտակամորթ, երբեմն տարբեր պատճառներով, իսկ երբեմն էլ նույն պատճառով: Ինձ համար ամենակարևոր մարդիկ 20-ականների գրողներն էին, ինչպիսին է Ժան Թումերը[80], իսկ սևամորթ գրականության նկատմամբ ես դրսևորում էի հետաքրքրություն և ուշադրություն, ինչն ինձ թույլ է տալիս բացահայտել մինչ այդ անտեսված գանձեր, ոչ թե վեպեր, այլ ստրուկների պատմություններ կամ էլ նախկինում ստրուկ եղած մարդկանց պատմություններ: Գրականությունն ինձ ներկայանում է այնպիսի մարդկանց կողմից փետուրով գրված այս անհավատալի քանակի պատմություններով, որոնք թոթափում էին ստրուկի լուծն ու մտնում ազատության աշխարհ: Մարդկության պատմության մեջ չգիտեմ այլ հալածված մարդկանց, որոնց շուրջ, նրանց վիճակի մասին այդքան մտածվել, գրվել ու հրատարակվել է: Եվ հետո գոյություն ունի երգերի, խոսքերի, սպիրիչուելս (spirituals) ասված այդ անսպառ շտեմարանը, որը եղել ու մշտապես մնում է ջազի ձայնը. պոեզիայի այդ ձևն ինձ միանգամից ստիպեց խոսել: Նախկինի գրողները պարզորոշ կերպով ներկայացված են իմ աշխատանքում, իսկ որոշ դեպքերում նրանց հարցականի տակ

[80] Ժան Թումեր (1894-1967) - սևամորթ ամերիկացի հեղինակ, որի «Cane» (1923) վեպը Հարլեմի վերածննդի գլխավոր գործն էր:

եմ դնում: Ռալֆ Էլիսոնի[81] մոտ, օրինակ, պատմողական ձայների վերաբերյալ ես ինձ հարցնում էի, փորձում տեսնել, թե արդյոք այն չէր կարող դրանք ձևափոխել, կիսել՝ տպավորություն թողնելու համար: Հասկանում եմ, թե դա որքան կարևոր էր բոլոր գրողների համար, ինչպես դեռևս ստրկության մեջ ապրողների, այնպես էլ դարասկզբին հանդես եկողների՝ ապացուցելու սպիտակամորթ լսարանին, որը թելադրում էր նրանց լավ գրելու խաղի կանոնների հնարավորության մասին: Գրվածքին նրանք մոտենում էին՝ օգտագործելով չափազանց ճիշտ և գիտական լեզու: Կամ էլ հակառակը, փորձում էին վերարտադրել այն, ինչ կոչում են սևամորթների «դիալեկտ»՝ չունենալով ավելի համապատասխան տերմին, սակայն նրանք դա անում էին հաճախ անգամ հիվանդագին, ուղղագրական տառադարձությամբ՝ փորձելով ընդգծել սևամորթների լեզվի յուրահատկությունը: Այս խնդիրն ինձ հետաքրքրում էր հատկապես իմ գործում հենց այն չափով, ինչ չափով կարող էի գիտակից կերպով ջանք գործադրել ինձ դասելու անցյալի հեղինակների շարքին:

Պիեռ Բուրդիե. Միգուցե ինձ կարևոր թվացող տեսանկյունից Դուք կարող եք մի քիչ պատմել, թե որն է Ձեր սեփական լուծման տարբերակը, տեքստային այս երկու սահմանափակումների միջև՝ գերճշտության և գերազնվության, լինի այն լեզվական, թե մշակութային: Ինչպե՞ս Դուք գտաք գրողի Ձեր սեփական ճանապարհը փոխհաջորդման և համադրման մեջ:

Թոնի Մորիսոն. Թերագնահատել դիմացինի լեզուն առաջին բանն է, ինչն օգտագործվում է նրանց կողմից, որոնք զինվում են, երբ ունեն բանակ ու նավատորմ, կարող են դիմացինին ասել, որ իր լեզուն լեզու չէ, և այն, ինչ նա ասում է, ավելի նման է կենդանու լեզվին: Բոլոր գերիշխող ազգերի ֆունդամենտալ խնդիրն է

[81] Ռալֆ Ուալդո Էլիսոն (1914-1994) - «Homme invisible, pour qui chantes-tu?» (Invisible Man) (1952) վեպի հեղինակը: Աբսուրդ և ճնշող մթնոլորտում նկարագրում է Նյու Յորքում սևամորթ երիտասարդի կյանքը:

իրենց լեզվի միջոցով կառավարել ենթականերին: Գիտենք, որ տեսականորեն ցանկացած լեզու մեկ այլ բանից է ծնվում: Բոլոր լեզուների ամբողջությունը շատ յուրահատուկ է, և եթե ցանկանում ենք պաշտպանել դրանցից մեկի անաղարտությունը, պետք է չափազանց բարդ քայլ կատարել, որը ենթադրում է ինքնապաշտպանության մի մեծ բաժին: Եվ այս պաշտպանության անհրաժեշտությունը կայանում է ինչ-որ մեկի կողմից հետևողականորեն ոչնչացված լինելու վտանգի մեջ: Այդպես լեզուն կարող է լինել պատերազմի մի իրական, ճնշման դաշտ, բայց և դիմացկունության վայր: Այս առումով անգլո-ամերիկյան գրականությունը քիչ խնդիրներ ունի: Մի կողմից, ըստ էության, դա արդեն իսկ բազմալեզու է, և մյուս կողմից՝ Ամերիկայում ապրող բոլոր մարդկանց շնորհիվ, որոնք սևամորթների պես մերժում են մի լեզվի գերակայությունը մյուսի նկատմամբ: Սևամորթների այդ բացարձակ ժխտումը, բոլոր սևամորթների՝ լինի այն սոցիալական, թե մշակութային մակարդակում, ինձ մշտապես ցնցում է, նրանք միշտ հավատարիմ են մնում իրենց լեզվին, միևնույն ժամանակ նրանց համար դա շատ անճնային երևույթ է, բայց և ըմբոստության նշան:

Կարծում եմ՝ 20-րդ դարի անգլիական գրվածքի գրավչությունը կայանում է լեզվի տարբեր աստիճանների միջև զարգանալու հնարավորության, փողոցային տեղային լեզվից դեպի լիրիկական կամ աստվածաշնչային, բարձր ոճից սովորական ոճ (le registre courant) անցնելու փաստի մեջ: Լեզվական այս բոլոր ոճերը տարբեր ասելիք ունեն: Այսպիսով՝ ինձ հետաքրքիր էր թվում մեկը մյուսի հետ հալեցնել, խառնել՝ ևս մեկ բան ասելու համար, միգուցե այնպիսի, որը նախկինում դեռևս երբեք ճիշտ նույն կերպ չի ասվել: Ըստ իս՝ այս հետազոտությունն այն մարդկանց լեզվի «արդիականացման» (մոդեռնիտե) սահմանումն էր, որոնց կոչում են «արդի» (մոդեռն), ինչպիսիք են Էզրա Փաունդը, Թոմաս Ս. Էլիոթը, Գերտրուդա Սթեյնը, նույնիսկ Հեմինգուեյի,

իսկ այնուհետև Է. Է. Քամմինգսի ստեղծագործությունների մեծ մասը: Այս բոլոր հեղինակները, երբ իրենց տեղն էին որոնում «ավանգարդ[82]» գրողներ շարքում, հնարավորինս ազատորեն լիովին նոր բան ասելու նպատակով օգտագործում էին ճիշտ և ճիշտ սևամորթների տեղային լեզուն: Նայեք օրինակ Ռեգթայմը (Ragtime)[83] կամ էլ այս գրողների նամակագրությունը, այնտեղ գտնում եք ֆոլկլորային ավանդույթին հատուկ ահռելի քանակի դուրս բերված արտահայտություններ: Երբ նամակցում էին Թոմաս Ս. Էլիոթն ու Էզրա Փաունդը, իրար անվանում էին Փոսում (Possum) և Բռաղը Ռեբիթ[84] (Bro'er Rabbit): Նրանք անգամ որոշեցին հարմարվել ուղղագրությանն ու տպագրությանը՝ օգտագործելով փոքրատառն այնտեղ, որտեղ գրական անգլերենում օգտագործում են մեծատառ: Հետևաբար գոնե այն մարդկանց համար, որոնք վկայակոչում են բարձր ոճի և սովորական ոճի միջև գտնվող լեզուն, պետք է նշել, որ սևամորթների լեզուն մշտապես եղել է ոչ թե վերադարձ առ տխուր անցյալ, այլ հակառակը՝ դեպի ժամանակակից և գրավիչ ապագային ուղղված քայլ:

Պիեռ Բուրդիե. Ձեր անցած ճանապարհն ուսումնասիրելիս ինձ ամենաշատը տպավորեց Ձեր նվիրված և միևնույն ժամանակ զուսպ վերաբերմունքը: Որքան գիտեմ, Դուք երբեք բացեիբաց ցույց չեք տվել Ձեր նվիրվածությունը: Ձեզ չենք տեսնում ֆեմինիստական շարժումներում՝ որպես ուժեղ հանդես եկող մասնակից, չնայած որ այդ շարժումները հենց Ձեր իսկ կողմից

---

[82] Տեքստում ֆրանսերենով:

[83] 1974 թ. լույս տեսած Է. Լ.Դոկտորոուի վեպը, որը, ի նշան հարգանքի Սքոթ Ջոփլինի կողմից հորինած երաժշտական եղանակի, ներկայացնում է դարասկզբի ամերիկյան հասարակությունը ներկայացնող խելահեղ որմնանկար, որտեղ խառնված են պատմական ու մտացածին կերպարներ, և որում հեղինակը փորձում է բռնել «արդիականության» ոգին, ինչը պատրաստվում էր հաստատել XX դարը:

[84] Ամերիկացի սևամորթ հերոսների մասնակցությամբ «Frère Lapin» («Նապաստակ եղբայրը») հեքիաթների գիրքը:

են բարձրաձայնվում, աչքի չեք ընկնում ևան սևամորթների կողմից կազմակերպված շարժումներում, չնայած որ նրանց նույնպես պաշտպան եք կանգնում: Միևնույն ժամանակ ինքներդ Ձեզ համար սահմանել եք Ձեզ բնութագրող մի շատ գեղեցիկ բանաձև՝ «Աֆրո-ամերիկյան կին գրող՝ սեռականացված ու ռասայականացված աշխարհում»: Ակներև է, որ շատ ուժեղ ներգրավված եք Ձեր ստեղծագործության, ինչպես նաև Ձեր գործողությունների մեջ: Մտաբերում եմ, թե վերջերս ինչ արեցիք ուժասպառության մեջ մեղադրվող այդ դատավորի գործի կապակցությամբ: Կարելի է ասել՝ Դուք շատ ներվիրված եք, բայց և շատ հատուկ կերպով «ներվիրված-ազատված» (engagée-dégagée)... ինչը ինձ շատ է դուր գալիս[85]:

Թոնի Մորիսոն. Այդպես էլ կա: Ես մի մեծ խնդիր ունեմ, ինչպես նշեցիք, ապրում եմ լիովին սեռականացված ու ռասայականացված աշխարհում և ես այնտեղ պետք է անեմ այն, ինչում ես ինձ իսկապես լավ եմ զգում: Ուստի ես ինձ լավ չեմ զգում կազմակերպությունների հետ աշխատելիս, երբեք այնտեղ չեմ, երբ պետք է, և չեմ սիրում կարգադրություններ ստանալ, շատ քիչ տեղ ունեմ որոշակի քաղաքական միջավայրերում մանևրելու համար: Սակայն կարծում եմ, որ գրելը գերազանցապես քաղաքական գործողություն է: Վերջինս ցանկանում եմ ներկայացնել նաև որպես ապացույց, որ կեղեքող կառավարությունների առաջին քայլը գրաքննելը կամ էլ գրքերը ոչնչացնելն է, կամ էլ մարդկանց բերանները փակելը: Եվ նրանք դա ճշգրտորեն իրականացնում են, որովհետև հիմար չեն, որովհետև շատ լավ գիտեն, որ անգամ գրելու ակտը պոտենցիալ կերպով, բայց, այնուամենայնիվ, տագնապալից է և միշտ հարցադրումներով լի: Իմ գրքերը չեն պատասխանում միայն էսթետիկ կողմին վերաբերող

[85] Բառացիորեն՝ «Արդարադատության մեջ ռասայի խնդիրը որպես իշխանության վերարտադրիչ»: Առկա բառերի խաղը վերաբերում է «engendering» բառին, որն ունի միաժամանակ սերունդ և սեռ իմաստը («gender»):

հարցերին, ոչ էլ ավելին, քան բացառապես պատասխանում են քաղաքական վախերին: Լուրջ ընդունված լինելու համար, ենթադրում եմ, արվեստը պետք է երկուսն էլ միաժամանակ իրագործի: Որևէ հիմք չկա, որպեսզի արվեստի գործն իր սեփական աշխարհը լուրջ չընդուներ, ոչ մի ներում ստեղծագործությունը հնարավորինս ավելի լավը չդարձնելու համար: Բայց մյուս կողմից էլ ինձ թվում է, որ գրողները նաև պարտավոր կլինեն ներգրավվել կոլեկտիվ գործողության մեջ: Ինչպես գիտեք, Միացյալ Նահանգներում մենք չունենք քաղաքականապես ակտիվ «մտավորականների» տևական ավանդույթը: Մեկ-մեկ այն իր մասին հիշեցրեց, հետո անհայտացավ, ու ինձ թվում է, որ այս պահին մենք անցնում ենք այդ շրջաններից մեկով, որտեղ այդ ավանդույթը, ի տարբերություն Ֆրանսիայի, ավելի շատ թաղված է, քան կենդանի: Ահա թե ինչու այն ամենը, ինչն այս երկու տարիների ընթացքում կատարվում է ԱՄՆ-ում, ոմն դատավորի նշանակման գործընթացում, ստեղծեց քաղաքականապես մի բացառիկ իրավիճակ: Խնդիրն էր գտնել մեկին, ով ի վիճակի էր փոխարինել դատավոր Մարշալին՝ իրապես բացառիկ ֆիրոամերիկյան դատավորին, ով հիսուն կամ վաթսուն տարիների ընթացքում անդադար կռվեց և երկու գործում բազմաթիվ հաղթանակների հասավ, մեկը՝ մարդու իրավունքների, մյուսը՝ սևամորթների քաղաքական իրավունքների հարցում: Ուստի նախագահ Բուշն ընտրեց շատ ավելի երիտասարդ տարիքով սևամորթ մի երիտասարդի, որովհետև դա աջակողմյան թևին պատկանող ու բացի դրանից էլ՝ ենթարկվող սևամորթ էր: Մեկնաբանելով այդ նշանակումը՝ Բուշը հայտարարեց. «Ցանկանում եմ, որպեսզի հասկանաք, որ այս գործում հարցը ռասան չէ. այդ որոշումը կայացվել է ռասայական բոլոր չափանիշներից դուրս»: Եվ սա այն պահին, երբ սկսվեցին սեռական բնույթի հետապնդման մեղադրանքները: Դա մի իսկական ճախողում էր, և բոլորն ապուշ էին կտրել այդ պատմությունից: Չգիտեմ՝ դուք Եվրոպայում ինչ

զգացիք, բայց այս ամենը մեզ գրեթե կաթվածի հասցրեց: Բավարար չէր հեռախոսազանգել սենատորներին, որովհետև ավելի շուտ նրանք էին ձեզ հարցնում. «Ո՞ւմ եք տալիս Ձեր ձայնը»: Ինչ էլ լինի, ահա, տեսնո՞ւմ եք, ես կրկին բարկանում եմ, ինչը նախատեսված չէր, ես կոչ արեցի մի խումբ գրողների, համալսարանական տարբեր՝ պատմություն, անգլերեն, իրավունք, քննադատական իրավունք, մարդաբանություն, կրոն, էթիկա, փիլիսոփայություն և այլ դիսցիպլիններ ներկայացնող մարդկանց: Տասնութ հոգի էինք՝ սպիտակամորթներ ու սևամորթներ, կանայք և տղամարդիկ: Քանի որ անհրաժեշտ էր շտապ գործել, շատ կարճ ժամանակում կազմեցինք մի անթոլոգիա, որում մեզանից յուրաքանչյուրն օգտագործում էր իր գիտակարգի (դիսցիպլինի) տեսակետը՝ վերլուծելու և պարզելու այն քաղաքական իրավիճակը, որը մեզ հասցրեց այս օրին: Անթոլոգիան վերնագրեցինք «Արդարադատության մրցավազք: Առաջադիմության ուժը» (Race in Justice. Engendering Power), մի քիչ խրթին բառերի խաղ...

Պիեռ Բուրդիե. Ասացիք, որ աշխատում էիք մի վեպի վրա ունենալով երկու «հերոսուհիներ», մեկը՝ սևամորթ, մյուսը՝ սպիտակամորթ, և որ ձեր ամբողջ ջանքերն ուղղված են ստիպելու լիովին վերանալ սևամորթների ու սպիտակամորթների կատեգորիան: Նման բան հնարավո՞ր է արդյոք: Ինչպիսի՞ յուրահատուկ դժվարությունների եք հանդիպում այդ համարյա թե «վերակոդավորման» աշխատանքում: Սա մի փորձառություն է, որի նմանը կարելի է հանդիպել Պերեկի[86] արածում, երբ նա փորձում էր գրել՝ չօգտագործելով «e» ձայնավորը, բայց կոնկրետ այս դեպքում սա սոցիալական աշխարհի ընկալման հիմնային կատեգորիա է, որը Դուք բացառում եք: Այսպիսով, մի՞թե չեք առաջնորդվել ծայրաստիճան բարդ բանաձևի հետազոտությամբ, որը միև-

[86] Ջորջ Պերեկ (1936-1982) - ֆրանսիացի վիպագիր, ռեժիսոր, վավերագիր և էսսեիստ (թարգմ.):

նույն ժամանակ նաև քաղաքական հետազոտություն է, ուտոպիան մի աշխարհում, որում սև-սպիտակ կատեգորիան այլևս էական չէր լինի, այլևս գոյություն չէր ունենա:

Թոնի Մորիսոն. Գիրքը, որի վրա այժմ աշխատում եմ, խիստ կապված է մի վայրի հետ, որը մտածված ձևով ես ընտրեցի՝ որպես 19-րդ դարի սկզբի բացառիկ ծայրահեղ սևամորթներով լի մի քաղաք: Բայց և այնպես այնտեղ ներկայացնում եմ չորս կանանց. «մեկը սպիտակամորթ, մյուսները՝ ոչ»: Հուսով եմ նրանցից յուրաքանչյուրին այնքան լավ ներկայացնել, որպեսզի անձնային մակարդակով ընթերցողը նրանց կարողանա ճանաչել, մտնի նրանց կաշվի մեջ, ամբողջովին դառնա այդ կանանցից մեկը, բացառությամբ ռասայի: Կարծում եմ, որ իսկապես ընթեցողը կհարցնի, թե ով է նրանցից սպիտակամորթը, ով՝ սևամորթը, եթե հաջողեմ, ինչում դեռևս վստահ չեմ, քանզի չեմ ավարտել, առանց որևէ կարևորության այդ հարցին այլևս վերջ կտրվի: Սակայն դժվարությունն ահռելի է, քանի որ դրա համար լեզու գոյություն չունի: Ինչպե՞ս նկարագրել կերպարի հոգին՝ չանդրադառնալով ռասայական կողերին, չօգտագործելով այդ հստակ կամ ենթադրելի գաղտնի լեզուն, որն ամբողջ աշխարհն օգտագործում է ռասան մատնացույց անելու համար: Եվ միևնույն ժամանակ, պետք է տալ ընթերցողին այն, ինչի իրավունքը նա երբևէ չի ունեցել՝ անմիջական հայացքի, որը նրան թույլ է տալիս տեսնել այնպես, ինչպես դեռ երբեք չի տեսել: Այս ամենը պահանջում է նոր դիսկուրս, նոր լեզու: Դա բարդ է, բայց կարծում եմ՝ բավարարող: Ես իսկապես հավատում եմ, որ այս լեզուն կարող է լինել նուրբ և միևնույն ժամանակ ուժեղ ու ստիպել նույնչափ արտահայտել զգացմունքներ՝ որևէ անդրադարձ չկատարելով մաշկի գույնին: Հուսով եմ: Սակայն ամեն դեպքում, այս պահին ինձ համար կարևոր է ոչ այնքան ծրագրի հաջողությունը, որքան հետազոտությունն ինքնին, լեզվի կառուցումը, որն ինձ թույլ է տալիս ներկայացնել այդ կերպարը ծայրաստիճան իրական, ստիպել նրանց լիովին ճանաչել... բացառված ռասան:

Հոսանքին հակառակ
հարցազրույց Պիեռ Բուրդիեի հետ[87]

Պիեռ Բուրդիեին առաջարկեցինք հետամուտ լինել մեր ներածական զրույցների ընթացքում քննարկված գաղափարների իրագործմանը, շաղկապել գիտությունն ու քաղաքականությունը, հմուտ ու անվարժ կարողությունները, տեսությունն ու գործնականը: Ուստի առկա էր որոշակի լարվածություն զրուցակցին այս ծրագիրը ներկայացնելու գործում: Բուրդիեն չի սիրում, երբ իրեն դիմում են որպես «Ֆրանսիայի ամենաուժեղ մտավորական», և ինքն իրեն ցանկանում է համարել այլախոհ, եթե ոչ՝ ինտելեկտուալ, լրատվական ու քաղաքական դաշտերում գերիշխող մեկը: Բացարձակապես ճշմարիտ չէ, որ նա ունի տեսլական և համբավ առանց իրեն համարժեք որևէ մեկի: Միջազգային մակարդակի գիտնականն ու ձախակողմյան թևի ներկայացուցիչը հաճելի չէ նրանց, որոնք Բուրդիեին համարում են խոչընդոտ: Նման պայմաններում ինչպե՞ս խուսափել վարպետին մեծարողների երկակի ընդհատակյա քարից ու «շտապող թեկնածուի» դժվյունից՝ իմանալով, որ երբեմն վարպետը մի ձեռքով հետ է վերցնում այն, ինչը մյուսն առաջարկում է, օրինակ՝ օժանդակելով Ֆրանսիայում նույնասեռականության հարցի երևան գալուն, միաժամանակ խեղաթյուրելով ամեն ինչ ամերիկյան *փոքրամասնությունների ուսումնասիրությունների (minority studies*) վերաբերյալ:

Կոշտ մատերիալիզմով զինված, ուժերի, կոնֆլիկտների ու մարմինների նկատմամբ ուշադիր, հավատով լցված առ գիտությունը, ունենալով հնարավորություն տեսնելու արդարը և ասելու ճիշտը, որոնք մեզ կարող են մոտեցնել (ոչ մի ռիսկ, ուստի կարելի է սուզվել աշխարհիկ ռելյատիվիզմի և հաճելի զրույցի մեջ) ու

[87] Այս հարցազրույցը տպագրվել է 2001 թ. հունվարի 2-ին Վաքառմե (Vacarme) ամսագրի 14-րդ համարում:
Աղբյուրը՝ http://www.vacarme.org/article224.html, այցելվել է 20.04.2017 (թարգմ.):

միաժամանակ նաև հեռացնել, եթե միայն հմուտ ռեալիզմը վերափոխվում է արդյունավետության դասի, Բուրդիեն ոտք է դնում կարողություն/հմտություն հարցի ոլորտ: Իրականի նկատմամբ իր ամողջ համակվածությամբ, միաժամանակ նա սոցիոլոգիան ներկայացնում է մտերիմ և սպառնալից ձևով, մտերիմ ու գնահատելի՝ բոլոր նրանց համար, ովքեր գիտեն, որ քաղաքականությունը բավարար չէ բառերով արտահայտելու համար, սպառնալից ու բարկացած՝ բոլոր վերը նշված նույն մարդկանց համար, ովքեր հաճախ համառորեն շարունակում են հավատալ հրաշքների:

Առավել ևս, որ քննարկվող սոցիոլոգիան ընդհանուր առմամբ նաև պրակտիկաների սոցիոլոգիա է, որտեղից էլ և մեր երկակիությունը: Մի կողմից՝ միասին աշխատելու իսկական ցանկություն, ասել է թե՝ այո, տեսականացնենք պրակտիկաները, այն՝ է ոչ միայն մեր կրթական և մասնագիտական հաբիթուսի սովորական «պրակտիկ իմաստը», այլև մեր քաղաքական պրակտիկաները, որոնք ներգրավում են հաբիթուսն իր կայացման մեջ: Մյուս կողմից՝ նոու-հաուով (know-how) խանդավառությունը կարող է հավասարազոր լինել մի բռնագրավված գիտելիքի, երբ այն վարկաբեկում է «նախատիպային տեսությունը գործողության մեջ» ասվածը[88], պրակտիկաների անգաղտնապահ հավակնոտությունը, որը չի մնում որպես մի համր օբյեկտ, ինչի վառ օրինակն է «Վակարմ» (Vacarme) ամսագրի փորձը:

Եկեք փակագծերը չբացենք, բայց, այնուամենայնիվ, Պիեռ Բուրդիեն, ով մեզ չանտեսեց, միգուցե որովհետև մենք չթաքցրեցինք ո՛չ մեր հիացմունքը, ո՛չ տարաձայնությունները, ո՛չ էլ փոր-

[88] Պիեռ Բուրդիե և Լոիկ Վական, «Նոր համաշխարհային Վուլգաթա», Մանիե դ՛վուար (Manière de voir), սեպ.-հոկտեմբեր 2000 թ.: Թեթևակի փոփոխությունների ենթարկված այս հոդվածը վերահրատարակվել է «Իմպերիալիստական խորամանկությունների դրդապատճառի վերաբերյալ» անվան ներքո, Սոցիալական հետազոտական գործողություններ (Actes de la recherche en sciences sociales), 1998 թ. մարտ:

ձը, ինչից ելնելով՝ նրան առաջադրում էինք հարցեր (նա բոլորից լավ գիտի, որ հետազոտողը չեզոք չէ) և մեծահոգաբար ակնկալում պատասխաններ, որը, անկեղծ ասած, նրան հատուկ չէր, ինչի համար էլ մենք նրան երախտապարտ ենք:

Զրույցը պատրաստել է Ֆիլիպ Մանժոն Սթենի Գրելեի, Վիկտուար Պատույարի և Ժաննա Ռեվելի օգնությամբ:

Հարց. 1994-1995 թվականներին «Աշխարհի թշվառությունը» գրքի հրատարակման կապակցությամբ առաջացած արձագանքները, 95 թ. դեկտեմբերի սոցիալական շարժումը, քաղաքական տեսանկյունից, ակնհայտորեն, Ձեզ համար շրջադարձային էին: Կամ ավելի շուտ, նրանք ստեղծեցին այնպիսի շրջադարձ, որը Դուք զգացիք: Ժամանակագրությո՞ւնն էլ էր այդքան պարզ: Եթե ենթադրենք, որ այն գործում է, ապա ինչո՞ւ ճիշտ հենց հիմա: Եվ եթե կա քաղաքական ցենզուրա, համապատասխանո՞ւմ է այն արդյոք էպիստեմոլոգիական ցենզուրային:

Պիեռ Բուրդիե. Մշտապես անակնկալի եմ գալիս, երբ խոսում են «շրջադարձից»: Ընդհանուր առմամբ ես զարմանում եմ, երբ Մարքսի կամ Հայդեգերի դեպքում խոսում են «շրջադարձից»: Երբ գիտենք նայել, շարունակականություններն ավելի են տպավորում, քան ընդհատվածությունները: Որևէ հետազոտող կամ մտածող նման է մարդատար-փոստատար շոգենավի, որի շրջադարձներն ահավոր ժամանակատար են: Անգամ Ֆուկոյի դեպքում, ում մոտ առկա են նույնիսկ ավելի շատ շրջադարձներ, քան ինձ մոտ, կարծում եմ՝շարունակականությունները սոսկալի են: Իհարկե, կարող ենք ինքներս մեզ հարց տալ՝ իսկ ինչպե՞ս է հնարավոր, որ այն «անցնում է քաղաքականություն»: Փաստորեն, այն արդեն անցել է: Ինքներդ ձեզ ասում եք՝ այն այնպես է շրջադարձ կատարում, ինչպես ես ընկալում եմ: Կարծում եմ՝ այդպես էլ կա: Փոփոխությունը կարող է ծագել տեսածից կամ ընկալածից: Վերջինիս կողմից ես շատ լավ տեսնում եմ մի շարք բաներ. ինտելեկտուալ աշխարհը շատ է փոխվել, և դա հնարա-

վոր է, որովհետև ես էականորեն շատ չեմ փոխվել, մինչդեռ թվում է՝ փոխվել եմ: Դա էլ կարող էր ունենալ բացատրություն: Քանի որ շատերը փոխվեցին: Անրի Վեբերն ինձ հետ միասին առաջ քաշեց Կոմունիստների լիգայի վերաբերյալ մի թեզ, որի ղեկավարն էր նաև, և ով այժմ սոցիալիստ սենատոր է, ու ով սոցիալիզմ է բացատրում իր աղջկան: Բազմիցս կարդացել եմ «Զգացմունքների դաստիարակություն» ստեղծագործությունը: Չեմ կարող չունենալ ֆլոբերյան ծաղրանք: Լավ, երևի ոչ թե ծաղրանք, այլ մի թեթև տխուր ժպիտ:

Նման բաները շատ են հանդիպում: Ինչո՞ւ բազում մարդիկ կարիք ունեն մտածելու, որ ես փոխվեցի: Օրը երկուսից մեկն ինձ ասում է՝ ե՞րբ կվերջացնես երեսով տալ: Դա շատ դուրեկան չէ, բայց միգուցե ես մի անհետացած, կորած մայրցամաքի վկան եմ: Ինտելեկտուալ աշխարհը շատ է փոխվել: Կային ժամանակներ, երբ ամեն բան ակնհայտ էր: Սարտրը չէր գնում Ելիսեյան պալատ ճաշելու: Այսօր կոնֆերանսներ են կազմակերպում Ելիսեյան պալատում, գնում «ՄԵԴԵՖ»-ի («MeDeF»)[89] հետ ճաշելու, և այլն: Հետևապես մի քիչ պալեոլիթի հոտ է փչում իմ ասածից: Սա ընկալման առաջին ասպեկտը:

Միևնույն ժամանակ կան շարունակականություններ: «Աշխարհի թշվառություն» գրքի համար ասում էին, որ դա մի խզում է: Ես ընկալվում էի որպես օբյեկտիվիստ, վիճակագրություն, «ծանր սոցիոլոգիա», ինչը բացարձակապես սխալ է: Սկզբում ես մշտապես դատապարտել եմ օբյեկտիվիզմը: Այնուհետև, շատ կուռ կառուցվածքով *«Աշխարհի թշվառությունը»* գիրքը, որի վրա դժվարությամբ եմ աշխատել, ու ոչ միայն այն պատճառով, որ դժվար է հարցազրույցներ կազմակերպելու գործընթացը, այլև տեսական պատճառներից ելնելով: Եվ վերջում, իմ առաջին՝ «Ալժիրի աշխատողները» գրքի վերջին մասում կա մի հարցազ-

[89] MeDeF (Movement of the Enterprises of France) - Ֆրանսիայի ձեռնարկությունների շարժում (թարգմ.):

րույց ալժիրցի խոհարարների հետ՝ վերնագրված «Մի ինքնակամ սոցիոլոգ»: Այս տեքստն ամբողջովին կարող էր ներառվել «*Աշխարհի թշվառությունը*» աշխատության մեջ:

Քաղաքական միջամտությունների համար նրանք ունեն այլ ընկալելիություն: Ահա թե ինչը փոխեց իմ սոցիալական կարգավիճակը: Ես դարձա ավելի ընկալելի: Մյուս կողմից, սակայն, եղան ամեն տեսակի քաղաքական միջամտություններ: 1981 թվին Լեհաստանի հարցն էր դրված, բայց կարող եմ ավելի հետ գնալ՝ մոտենալով 1960-ականներին: Օրինակ՝ Ալժիրի դեպքում ես գնացի սոցիոլոգիայով զբաղվելու հեղափոխական պատերազմի մեջ գտնվող մի երկիր ու մոտավորապես 1960 թվին գրեցի «Հեղափոխական պատերազմից հեղափոխություն» գիրքը: Այն փորձ էր հետևելու այդ հեղափոխական շարժմանը, նկարագրելու այն ամենը, ինչ փոխվեց մարդկանց վարքում, սեռերի միջև փոխհարաբերություններում, և ասելու, թե ինչու էր պետք, որպեսզի ալժիրցի մտավորականները, որոնք պատրաստվում էին իշխանության գալ, գիտակցեին այդ փոփոխությունները, որպեսզի խուսափեն իրենց ստիպողաբար անկում ապրելուց: Ես դիտարկվում էի որպես պատվական մի ալժիրցի, որն այդ առումով ավելի շատ բան գիտեր, քան մի շարք հանգամանքներով պայմանավորված՝ ալժիրցիների մեծ մասը: Այն ոչինչ չէր փոխում օբյեկտիվության հասնելուն ուղղված իմ ջանքում, սակայն կարծում էի, որ պետք է ծառայեմ: *«Աշխարհի թշվառությունը»* գրքում օգտագործեցի հանրային գրողի փոխաբերությունը (մետաֆորան): Վերջինս արդեն իսկ տեղ էր գտել «*Աշխատանքն ու աշխատավորները Ալժիրում*» գործի նախաբանում, այդ ժամանակ ես խորապես գտնվում էի մանկավարժական ֆակուլտետի ազդեցության ներքո և միաժամանակ սկսել էի աշխատել թեկնածուականիս վրա, որը առնչվում էր նշված թեմային:

Փոխվեց միայն իմ կարգավիճակը՝ Կոլեժ դը Ֆրանս և այլն: Դա ավելի տեսանելի դարձրեց այն, ինչ ես անում եմ: Միևնույն

ժամանակ այն ինձ տվեց գաղափար, համաձայն որի՝ այդ տեսանելիությունը կարող էի ծառայեցնել ինքս ինձ: Սա բացարձակապես ցինիզմ չէ: Կոլեժ դը Ֆրանսում իմ դասի հանդիսավոր բացման ավարտին, որն ինձ համար շատ ծանր հոգեբանական փորձություն էր, ասացի. «Կարող եք ծառայել խորհրդանշական իշխանությանը՝ խթանելու խորհրդանշական քննադատության տարածումը»:

Մեկ այլ բան էլ կա: Միշտ ասում եմ, որ պետք է ինքնաճանաչողական սոցիոլոգիայով զբաղվել, սա չի նշանակում, որ պետք է ինքդ քեզ ստիպես զբաղվել սոցիոլոգիայով, այլ պետք է օգտվել սոցիոլոգիայից ավելի օբյեկտիվ, ավելի վիճակագրորեն, «ինչպիսի՞ ծագումնաբանություն, ինչպիսի՞ հետագիծ» և այլն, փորձելու հասկանալ նրա սահմանները, որից այն կազմվում է, ու միևնույն ժամանակ ազատվել սոցիալական սահմաններից, ինչը թույլ տվեց բացահայտել սոցիոլոգիական գործիքը:

Կարծում եմ՝այդ ինքնաճանաչողությունն ինձ ստիպեց շատ փոխվել: Ես բացահայտեցի, որ լուսավորյալ մարդիկ դառնում են իրենց իսկ պնդումների զոհը: Պետք է տարբերակել կենսաբանական ծերացումն ու սոցիալական ծերացումը: Վերջինիս դեպքում սոցիալական աշխարհը աստիճանաբար տիրանում է ձեզ: Գյուղում առկա է ծերերի այնպիսի դրություն, որ մարդիկ ընդունում են այն առանց իրենց հաշիվ տալու: Մի ծեր ինտելեկտուալի փառաբանում, գովերգում են, տալիս *Պատվո դոկտորի* (Honoris Causa) կոչում և այդպես համալսարանական միջավայրում սպանում ծերերին: Սոցիոլոգիայի շնորհիվ ես հասկացա նաև, որ ճանաչումը կարող է ազատության սկզբունք դառնալ: Ուսումնասիրությունների, հետազոտությունների այն ողջ շարքը, որ կարող է իրականացնել սոցիոլոգը, ես իրագործեցի: Ինքս ինձ ասում եմ՝ հասել է այնպիսի ուսումնասիրություններ և հետազոտություններ անելու ժամանակը, որոնք հանդես են գալիս որպես խախտում գերիշխող սահմանման նկատմամբ: Դա այն է, ինչ

ես իրականացրի *«Աշխարհի թշվառությունը»* աշխատության մեջ:

Վերջապես առկա է մեկ այլ փոփոխական ևս, որը բացատրում է մի հարաբերական փոփոխություն. ըստ իս՝ աշխարհը ծանոթ է աննախադեպ փորձություններին, և դրանով է պայմանավորված հետազոտողի աննախադեպ դերը, համաձայն որի՝ նա չի կարող մնալ իր փոքր գիտության շրջանակներում: Ճիշտն ասած, ինձ թվում է, որ այսօրվա գերակայող ուժերը սարսափելի են, որովհետև տնտեսապես նրանք հասել են աննախադեպ կենտրոնացված մակարդակի, ու տնտեսական կապիտալի այդ կենտրոնացմանն ավելացվում է մշակութային կապիտալի կենտրոնացումը, որը նրանց թույլ է տալիս խորհրդանշորեն ունենալ սարսափելի հետևանքներ: Առկա է լոբբինգերի, մամլո գործակալությունների մոբիլիզացում: Պետք է կարդալ հոլանդացի հինգ հետազոտողների կողմից գրված և «Ագոն» (Agone) հրատարակչության խմբագրմամբ «Եվրոպա Ինք.» («*Europe Inc.*») հրաշալի գիրքը, որտեղ նկարագրվում են բոլոր ճնշված խմբերը: Արմատապես նոր իրավիճակում, կարծում եմ, պետք են վարքի նոր դրսևորումներ:

Հարց. 1995 թ. դեկտեմբերի Ձեր միջամտությունն իսկապես թվում է արմատապես տարբեր…

Պիեռ Բուրդիե. Գոյություն ունեն բառիս բուն իմաստով իրավիճակներ: Դա աստղային զուգաղիպության պես մի բան է: Պարզվում է, որ *«Աշխարհի թշվառություն»* գործն արել եմ այլ հետազոտողների հետ միասին: Հետաքրքրվում էի սոցիալական շարժմամբ, ունեի կապեր, ամիսներ շարունակ ինքս ինձ ասում էի. «Միանշանակ ես պետք է միջամտեմ»: Ո՛չ ցանկություն ունեմ, ո՛չ էլ տրամադրված եմ գուշակություններ անել: Անգամ նման դեպքերում պետք է ինձ դրան մղեն: Ինքս ինձ պատրաստում էի դրան: Ճամփորդեցի Մեծ Բրիտանիայում, հանդիպեցի Բլեների խորհրդականներին, որոնցից սիրտս խառնեց: Այդ շրջա-

նից սկսած՝ բոլորն արդեն կարող էին ամեն բան իմանալ, խոսում էին միայն «արժեքներից»: Եվ հետո մի բան էլ կար՝ ես չէի ցանկանում ելույթ ունենալ, նրանք ինձ տվեցին խոսքի հնարավորություն, ես էլ այն օգտագործեցի: Բախտի գործոնն էլ այստեղ նշանակալի դեր է խաղում:

Հարց. Մինչև 1990-ական թթ. Ձեր աշխատանքն ավելի շուտ քննադատում էին ոչ այնքան, որ չէին կարող բավարարել քաղաքական, այլ դեմոբիլիզացնող լինելու համար:

Պիեռ Բուրդիե. Դա շատ բարդ հարց է: Մշտապես ինքս իմ մեջ պայքարել եմ հակաինտելեկտուալիզմի դեմ: Խելամիտ չէ նման բան ասելը, սակայն ճիշտ է, որ ես սարսափելի ջղայնացած էի մտավորական որոշ պարտականություններից: Օրինակ՝ այն շրջանում, երբ ողջ աշխարհը հղում էր կատարում Մարքսին, ես՝ դիտավորյալ Վեբերին: Ես մշտապես հոսանքին հակառակ եմ գնացել: Կարծում եմ, որ անվճռականության, շրջահայացության դրսևորումների մեծ մասը հակազդական է: Երբ տեսա, թե ինչ դարձան ձախից ինձ վազանցող, իսկ հիմա էլ նաև աջից վազանցող մարդիկ, ինքս ինձ խոստովանում եմ, որ գոնե մի քիչ ճիշտ էի: Տեսակետների մեծամասնության մեջ կային արկածախնդրային, պոպուլիստական, մանկական և բուրժուական տարրեր, զայրացնող ինչ-որ բան: Փաստացի, իմ աշխատանքը մշտապես համարել եմ քաղաքականապես շատ օժտված: Եթե ամփոփենք, ապա պրակտիկորեն բոլոր բնագավառներում դարձա կրթությանը, սպորտին վերաբերող բազմաթիվ ցնցող, հաջողված մտքերի, ավելի հաճախ՝ ինտելեկտուալ կերպով հաջողված մտքերի հեղինակ:

Այո, ես ընկալվում եմ որպես ծանր (hard) գիտնական, որը հաստատում է փաստերն ու գլուխն ազատում է դրանցից, տեղով թեմա է՝ «Բուրդիեն հուսահատեցնում է Բիյանկուրին» վերնագրով, կամ ավելի ճիշտ՝ դասախոսներին: Անհավատալի է, այն

ժամանակ «Միտքն» («*Esprit*»)[90] էր ինձ դասեր տալիս: Այնտեղ տեղ էր գտել Անտուան Պրոստի[91] հոդվածը, որն ասում էր, թե Բուրդիեն հուսալքում է, դա ճակատագրապաշտություն է և այլն: Ինձ ասում էին, որ իսկական հեղափոխականը Իլյիչն[92] է (տեսնում եք, նույնիսկ չգիտեք, թե նա ով է): Իլյիչն ասում էր. «Բուհի պետք չունենք»: Ես ասում էի. «Բուհը պետք է փոխել», ուստի դա ռեֆորմիստական կամ էլ չգիտեմ ինչ բնույթ ուներ: Մշտապես լինում են մարդիկ, որոնք քննադատությունն իր ծայրակետին են հասցնում, այսինքն՝ մի կետի, ուր այն դառնում է աբսուրդ ու չեղարկվում:

Հարց. 1990-ական թվականների յուրահատուկ հասկացություններից էր «կոլեկտիվ ինտելեկտուալը»: Շատ լավ գիտենք, որ կոլեկտիվ ինտելեկտուալն այլընտրանքն է որոշակի քանակի մտավորականների և հասկացությունների՝ ամբողջական կամ ընդհանրական, առանձնահատուկ կամ օրգանական և այլն:

Պիեռ Բուրդիե. Ինձ թվում է՝ կոլեկտիվ մտավորականը ինտեգրում է յուրահատուկ մտավորականի, այն նրան չի հերքում: Ասել է թե՝ պետք է համատեղել կարողությունները: Իմ դիտարկմամբ՝ սա յուրահատուկ գիտելիքների կոլեկտիվ աշխատանքի միջոցով սոցիալական քննադատության նպատակներին ուղղված ներգրավում է: Կարծում եմ՝ Ֆուկոն համաձայն կլիներ սրա հետ, ինչպես որ ես եմ համաձայն «առանձնահատուկի» հետ: Ե՛վ մեկի, և՛ մյուսի դեպքում բավականաչափ սարսափում էինք ամեն ինչին պատասխանող ընդհանուր ինտելեկտուալից, որը միևնույն ժամանակ զայրացնում էր իր մեծամտությամբ ու անզգուշությամբ:

---

[90] Ֆրանսիական ինտելեկտուալ ամսագիր՝ հիմնված 1932 թ. Էմանուել Մունիեի կողմից (թարգմ.):

[91] Անտուան Պրոստ (ծնվ. 1933) - ֆրանսիացի պատմաբան (թարգմ.):

[92] Իվան Իլյիչ (1926-2002) - ավստրիացի փիլիսոփա և սոցիալ-քննադատ, ձախակողմյան հայացքների տեր (թարգմ.):

Շատ արագ հասկացա, որ պետք կլիներ վերացնել պրոֆեսիոնալների ու ոչ պրոֆեսիոնալների միջև, հատկապես հետազոտությամբ զբաղվող պրոֆեսիոնալների ու ակտիվ գործունեությամբ զբաղվող պրոֆեսիոնալների միջև առկա անջրպետը: Առավել ևս կրթության մասին կատարած իմ ողջ աշխատանքով ես հարմար դիրք էի բռնել՝ տեսնելու, որ լիովին նոր քաղաքական դեմքերի երևան գալու հետ միասին կրթական համակարգի ընդհանուր ածը քաղաքական հարթակներում և մարտնչող դաշտում ազդեցություններ է թողնում: Ինչպես ընդհանրապես մշակույթի, այնպես էլ քաղաքականության տեսանկյունից նրանք շատ զարգացած մարդիկ են և հասկանում են սոցիալական փոփոխությունները, որոնք էլ իրենց հերթին անտանելի էին դարձնում «զանգվածների կառավարման» որոշակի տեսակը: Այլ կերպ չենք կարող ասել, գոյություն ունեն նոր ձգտումներ: Իսկապես, ինձ թվում է՝ մարտնչող հետազոտողը, ակտիվ հետազոտողը պակաս անհրաժեշտ է, քան երբևէ: Ակներևաբար դա անհավասար է: «Էքթ ափ» (Act up[93]) ասոցիացիայի պես մեկը կարող է ունենալ աննախադեպ մշակութային կապիտալ: Գոնե առաջնորդների մակարդակում:

Հարց. Բայց «Էքթ ափ»-ին ու այլ խմբերին կարող ենք հակառակ կողմից էլ դիտարկել, ինչպես ընդհանուր մտավոր կարողության օրինակներ, որտեղ վերջիններս մշակութային ճներ են, որոնք հանդիպում են և ստեղծում…

Պիեռ Բուրդիե. Ներքին ձայնս հուշում է, որ այն մարդիկ, որոնք տոն են հաղորդում, ովքեր ուրիշներին ընձեռում են հնարավորություն, նրանք են, որոնք ստեղծում են պայմաններ, որ-

[93]Act up (AIDS Coalition to Unleash Power) - միջազգային ուղիղ ազդման իրավաբանական կազմակերպություն, որի նպատակն է բարելավել ՁԻԱՀ-ով հիվանդ մարդկանց կյանքը, հասնել այդ ոլորտում օրենսդրական ու քաղաքական փոփոխությունների, բժշկական հետազոտությունների իրականացմանը, որոնք վերջին հաշվով կհանգեցնեն համաճարակի կանխարգելմանը, հիվանդների կյանքի որակի բարձրացմանը (թարգմ.):

պեսզի այդ ընդհանուր մտավոր կարողությունն արտահայտվի, և ավելի շուտ, նրանք բավականաչափ ռեֆլեքսիվ մարդիկ են: Վիետնամի պատերազմի դեմ ընթացող երթերի ժամանակ ես ԱՄՆ-ում էի: Մեկ տարվա ընթացքում նրանք թարմացրին քայքայիչ գործունեության գործիքների հավաքածուն, ինչպես որ չէին արել 100 տարվա ընթացքում: Վառեցին դրոշները, վառեցին զորահավաքային քարտերը, հորինեցին բանաստեղծություններ ու երգեր: Որովհետև համալսարանական տարածքում նրանք մեծ կապիտալով ձևավորված հեղափոխականներ էին, այն կապիտալով, որը պետք էր կապիտալը քայքայելու համար: Գրական հեղափոխությունները միշտ կապիտալիստների ձեռքի գործն են (դիտարկվող ոլորտում, իհարկե): Այս պարագայում դա գրեթե այդպես է:

Դե ինչ, մնում է տարբերության մի փոքր շերտ ինտելեկտուալների ու մարտնչողների միջև: Որոշները դիտարկվում են որպես մարտնչողներ, մյուսները՝ ինտելեկտուալներ: Սա առաջացնում է շփման, դյուրազգացության դրսևորումներ:

Հարց. Հատկապես, երբ նրանք Ձեզ հետ միասին ընդունում են ինտելեկտուալ դաշտի գոյությունը և առաջ քաշում մարտնչող դաշտին բնորոշ մի հարց…

Պիեռ Բուրդիե. Ճիշտ է, այն դաշտ է՝ մրցումներով, մրցություններով, ինչպես մյուս բոլոր դաշտերում, ուժերի հարաբերություններով, գերիշխանության ձգտումներով, կապիտալի կենտրոնացման փորձերով: Այս պարագայում իմ դերը նրանում է, որպեսզի իմ իմացած ընդհանուր օրենքները ծառայեցնեմ այդ գործողության խթանմանը: Օրինակ՝ ողջ եվրոպական շարժումը հիշեցնում է, որ չեն կարող ունենալ սոցիալական Եվրոպա առանց եվրոպական շարժման ու դրանից ունեցած հետևանքների: Ոչ ոք չի կարող ժխտել, որ պետք է ունենալ կոլեկտիվորեն կազմակերպված շարժում: Պետք է պարզապես ձևը գտնել: Բայց և անհրաժեշտ է հաղթահարել ահռելի դժվարություններ: Դժվարու-

թյուններից մեկը դաշտի նախկին հետևանքներն են, որոնք հատկապես ուժեղ են Ֆրանսիայում: Այստեղ այն արմատացած է ու հին: Եթե ուսումնասիրենք շարժման մասնակից բոլոր մարդկանց ծագումնաբանությունը, ապա բանը կհասնի մինչև Կոմունա[94]: Մենք ունենք մի տեսակ պատմական հիմք, որը փաստում է՝ Ֆրանսիան բացառիկ է, այս երկիրը, կարծեք, մի տեսակ հեղափոխության մասնագետն է: Հատուցումը՝ խմբավորումներ, դիվիզիաներ, կասկածներ, հին քաղաքական կապիտալի վերափոխումները նոր կապիտալի: Դե դա իսկապես ցավալի է: Այս պահին կան ծուղակներ, որոնք թաքնվելու ցանկություն են առաջացնում:

Հարց. Եթե գոյություն ունի մարտնչող դաշտ, ինչպիսի՞ն կարող էր լինել նրա սեփական կանոնը: Իրականում, ինտելեկտուալ դաշտն անհավասար քանակի ձայներ է ստանում, բյուրոկրատական գերազանցությունը նորմի պահպանման մեջ է: Ինչո՞ւմն է կայանում արվեստի մարտնչումը:

Պիեռ Բուրդիե. Չգիտեմ, դուք ինձ շփոթեցնում եք: Առկա արդյունավետությունը... Բայց դա բավարար չէ, ահա թե ինչն է ինձ անհանգստացնում: Համոզմունք, արդյունավետություն, այս ամենը բարոյագիտություն է, դա այդքան էլ լավ չէ: Պետք է որոնել: Սակայն ամենից շատ ինձ տպավորում է այն, որ այդ դաշտն իրենից լիակատար վերափոխում է ներկայացնում: Առկա են ահռելի փոփոխություններ: Տարօրինակ է, որ հիստերիայի, անտարբերության հետևանքները, ընկալման կատեգորիաները ստիպում են, որպեսզի դրանք չտեսնենք: Բայց Բերժեռոնն[95] այսօր արդիական կլիներ, մինչդեռ ժամանակին ծիծա-

[94] Փարիզի կոմունա, առաջին պրոլետարական հեղափոխությունը և բանվոր դասակարգի առաջին կառավարությունը: Գոյատևել է 72 օր (1871 թ. մարտի 18–մայիսի 28) (թարգմ.):

[95] Խոսքը գնում է Կուրտ Վոնեգուտի «Հարիսոն Բերջերոն» ֆանտաստիկ անտիուտոպիստական պատմվածքի գլխավոր հերոսի մասին (թարգմ.):

ղում էին ոչ թե որովհետև միայն Թիբոն[96] («Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիա»-յի (CGT) [97] գլխավոր քարտուղարը) երկար մազեր ուներ, և ոչ միայն որպես արտաքին բաղադրիչ: Այդքան էլ վաղուց չէր, որ մարտնչողը հանդես էր գալիս որպես ռազմական մարտնչող, դա լենինյան մոդելն էր: Փոխաբերականը ռազմականն էր կամ վանականը: Մեր օրերում՝ ավելին: Պայքարի ասոցիացիաների ակտիվիստի մոտ այսօր ոգևորողի/բացահայտողի/աշխուժացնողի կողմն է հանդես գալիս:

1981 թ. «Լիբե»-ին[98] տված հարցազրույցում ես նշեցի. «Իշխանության ձախակողմյան թևը սպանեց սոցիալական շարժման անարխիստական ավանդույթը, որը կենտրոնական բռնապետական ավանդույթի հետ մշտապես մրցակցության մեջ էր գտնվում: Միգուցե պետք էր նրան արթնացնել»: Ուստի կարծում եմ, որ այդ շարժումը վերածնվեց արդի սոցիալական շարժման: Եվ դա լոկ անարխիստական ավանդույթը չէ: Անարխիստական ավանդույթն ավելի խրթին է, որը պահպանեց մի կարոտ կամ ավելի շուտ, կապվածություն ռեալիզմին, որը ենթադրվում էր լինել ցենտրալիստների մոնոպոլիան: Ինքնաբերականության/ցենտրալիզմի պես ընդդիմությունները տեղափոխվեցին:

Հարց. Հաճախ ենք կրկնում, որ մի քանի դաշտերում իրողության միաժամանակյա գրանցումը գնահատելի է, որ առկա է կոռուստ: Ուստի կարելի է կարծել, որ այդ բազմատեսակ գրանցումը՝ պրոֆեսիոնալ, սոցիալական, քաղաքական, բացառությամբ սեփական մարտնչողականության, այդուհանդերձ, իր փորձն է:

---

[96] Բերնար Թիբո (ծնվ. 1959 թ. հունվարի 2-ին Փարիզում) - ֆրանսիացի սինդիկալիստ, 1999 թ.-ից մինչև 2013 թ. «Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիա»-ի գլխավոր քարտուղարը (թարգմ.):

[97] CGT (Confédération générale du travail) - Ֆրանսիայի աշխատանքի համընդհանուր կոնֆեդերացիա (թարգմ.):

[98] Libé – Libération ֆրանսիական ամենօրյա շաբաթաթերթի կրճատ տարբերակը (թարգմ.):

Պիեռ Բուրդիե. Մարտնչողի առումով այդպես է: Բայց դա նաև մտավորականի ճշգրիտ սահմանումն է: Մտավորականը նա է, ով, լքելով դաշտը, օրինակ՝ Զոլան գրական, Սախարովը՝ գիտական և այլն, իր արված ողջ հետևություններով, լարվածության ողջ դրսևորումներով հանդերձ, մուտք է գործում քաղաքական դաշտ, որն էլ առաջ է քաշել նրան:

Հարց. Նման պայմաններում գործելը Ձեզ համար հանդիսանում էր այդ լարվածությունը մեղմելու միջոց, թե՞ հակառակը՝ խաղալ դրա վրա:

Պիեռ Բուրդիե. Դա անցավ գնաց: Մի օր մի խումբ հետազոտողներ եկան ինձ տեսնելու: Ասացին. «Լսեք, սա կարևոր է»: Ես անչափ երջանիկ էի, գոնե մեկ անգամ շոգեքարշ քաշողը ես չէի: Նրանք գտան անվանումը. «Գործելու դրդապատճառները» (Raisons d'agir), ինչը ես համարում եմ նշանակալից, դա մի հրաշալի գաղափար էր: Ցանկանում էին աշխատանքային խումբ կազմել, բերել մարդկանց, շատ չէին հասկանում, թե ինչ էին ուզում: Այժմ դա եվրոպականացված է, այն ամենուր է՝ Հունաստանում, Իտալիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում: Փոխաբերենը շարժման նկատմամբ Ռեզոն դ'աժիր (Raisons d'agir) հրատարակչատունն ինքնիշխան է: Այն պետք է միշտ անկախ մնա:

Հարց. Ինչպե՞ս եք դա տեխնիկապես իրագործում:

Պիեռ Բուրդիե. Դա իմ գաղտնիքներից մեկն է: Ես այն եզակի մտավորականներից եմ, որոնք զբաղված են տնտեսության ղեկավարմամբ: Նույնը նաև հետազոտության պարագայում: Էպիստեմոլոգիական քննախոսություններում, գիտնականների հիշողություններում մշտապես խոսում են «գիտնականների խոնարհության» մասին: Դա մի քիչ հիմարավարի է հնչում, սակայն շատ ճիշտ է: Այն մի գիտական առաքինություն է, որովհետև ասել կուզի, որ դանդաղում ենք, ենթարկվում փաստերին ու ջախջախվում ամենահիմար փաստերից և որ չենք խորաման-

կում: Դա բուհի ամենամեծ խնդիրներից մեկն է, հնազանդություն փաստեր ասվածը դաժան բան է:

Իմ աշխատանքում ես մեծ ուշադրություն եմ դարձրել տեխնիկական կողմին: Որպես նախանմուշ ասացի. «Պետք է, որպեսզի այն լինի միևնույն ժամանակ շատ շքեղ ու արմատական: Այն չպետք է արիմիության տոմսի տեսք ունենա, բայց և լինի չափավոր, համեստ, որպեսզի տեղավորվի գրպանում ու շատ թանկ չարժենա»: Սահմանված գինը՝ 30 ֆրանկ, դա չտեսնված բան էր, մինչդեռ, փաստորեն, հեշտ իրագործելի:

Հարց. Գոյություն ունի՞ Բուրդիեի պատերազմի մեքենա ասվածը:

Պիեռ Բուրդիե. Չեմ հավանում այդ միտքը: Ինձ շատ տարօրինակ է թվում, որ ես կարող եմ ուժի տպավորություն թողնել: Նույնիսկ թշնամիներիս նկատմամբ: Վերջերս գավառից մի ձախակողմյան ներկայացուցիչ բարեհաճորեն ինձ ասաց. «Ես Ձեզ գրեցի, որովհետև Դուք Ֆրանսիայի ամենաուժեղ մտավորականն եք»: Դա «Լ' էվենման դյու ժյոդի» (*L'Événement du jeudi)* շաբաթաթերթում տեղ գտած վերնագիրն է, որը ձգտում էր լինել վիրավորական, ու որն ինձ էր ուղղված: Ամենակարևորը՝ սրտովս էր (ծիծաղում է): Բայց ամենաուժեղը ոչ թե… Իսկապես, այն դառնում է հավաքական ուժ, որից սակայն շատ քիչ բան է մնում: Երբ տեսնում եք նրան, ով գյուղում մոբիլիզացված է իմ դեմ, ում առարկան եմ հանդիսանում արդեն քանի տարի, օրինակ՝ Գրասեի[99] «Մագազին լիտերեր», «Լ'էվենման դյու ժյոդի», «Արտ պրես» *(Magazine littéraire*, *L'Evénement du jeudi, Art Press)*, արված էին համապատասխան կարգադրություններ, ու ամեն բան ձեռքի մի շարժումով մոբիլիզացված էր: Կան կոնկրետ անուններ, որոնց դուք ճանաչում եք, ինչպես և ես՝ Սոլլերս

[99] E ditions Grasset & Fasquelle - ֆրանսիական հրատարակչատուն՝ հիմնադրված 1907 թ. (թարգմ.):

(Sollers)[100], ԲՀԼ (BHL)[101] ու էլի մի քանիսը: Այս մարդիկ շատ հզոր տնտեսական- մշակութային հրահանգիչներ են: Ուստի դեմառդեմ… Այո, ճիշտ այդպես, այլախոհին բնորոշ ինչ-որ բան հատուկ է ինձ:

Հարց. «Պատերազմի մեքենա» ասելով՝ բացասական իմաստով չասացի, ընդհակառակը, մենք դրա կարիքն ունենք: Ահա թե ինչու կարող ենք զգալ թշնամու ուժին ուղղված համակարգված սուտը, որը ետ է շպրտում մեզ մեր իսկ թուլությունը: Դա դիվանագիտական աշխարհի հետևանքն է, շատ լավ տեսնում եք՝ ինչպես այն կարող է մարդուն անզոր դարձնել: Օրինակ՝ Լոիկ Վականի հեղինակած բանտերի վերաբերյալ գրքում ես բացահայտեցի աղքատների կալանավորման «ծանր սոցիոլոգիա» ասվածը, որը խուսանավելու այնքան քիչ տեղ է թողնում, որ կարող է ցանկություն առաջանալ իր հերթին «վերադառնալ իր ապաստանը»:

Պիեռ Բուրդիե. Դա կարգապահության կոչ է, որը շատ կարևոր է: Պետք է, որպեսզի երկուսն էլ գոյություն ունենան: Անհրաժեշտ էր, որպեսզի Վականը խոսեր, ու Դուք էլ արձագանքեք՝ ասելով. «Ոչ, դա հնարավոր չէ»: Հաշվի առնելով այն, թե ինչ ասել է ուժ, արդյո՞ք մոբիլիզացիան դեռ հնարավոր է: Հնարավո՞ր է արդյոք մոբիլիզացվել խիստ տեխնիկական բնույթ կրող կոչերից, ինչպես, օրինակ. «Գոյություն ունի 133-ի կոմիտեն, որը ղեկավարում է Եվրոպան» կամ էլ «Ընդհանուր առևտրական ծառայությունների ընդհանուր համաձայնության հոդվածը, որը հանգում է կրթական համակարգերի սեփականաշնորհմանը»: Դժվար է մոբիլիզացվել նման արտահայտություններից: Ես լիովին հասկանում եմ Ձեր առարկությունը ու կցանկանայի, որպեսզի ակտիվիստներն ավելի կոփվեն, որպեսզի

[100] Ֆիլիպ Սոլլերս (ծնվ. 1936) - ֆրանսիացի գրող, գրաքննադատ, էսսեիստ, երկու տասնյակից ավելի վեպերի հեղինակ (թարգմ.):
[101] Բեռնար-Անրի Լեվի (ծնվ. 1948) - ֆրանսիացի գրող, փիլիսոփա, սցենարիստ, էսսեիստ, քաղաքական լրագրող, մտավորական (թարգմ.):

չնայած ամեն ինչի ի վիճակի լինեն գործել, բայց լինելով գործից տեղյակ: Կարող եմ խոստովանել՝ միշտ չէ, որ էներգիա ունեմ: Այս առումով Վականը շատ լավ օրինակ է: Դրանք երկու դիսկուրսներ են, որոնք միաձևաձևակորեն միասին իրենց ելքը կգտնեն: Դա միևնույն խառնվածքը չէ, միևնույն դիրքը չէ նաև սոցիալական տարածությունում, բայց անշուշտ պետք է դրան հասնել: Առավել ևս, որ Վականն այն մարդն է, ով գնում է բանտեր, որը վերափոխում է բանտի պահակներին և ստիպում, որպեսզի վերջիններս իրեն ծափահարեն. նա մարտնչող մեկն է:

Հարց. Իսկը մարտնչման հարց: Թվում է, թե Դուք ավելի հաճախ հանդես եք գալիս որպես քննադատ, քան որպես պահանջատեր: Տեղյակ չենք, թե ինչ եք կարծում, օրինակ, երաշխավորված եկամտի մասին: Ողջունեցիք գործազուրկների շարժումը, սակայն և ոչ մի կերպ չարձագանքեցիք հենց նույն երաշխավորված եկամտի վերաբերյալ հարցին և ավելի ընդհանրական՝ աշխատանքից ու եկամտից զրկվելուն:

Պիեռ Բուրդիե. «ՓԱՔՍ»-ի (PACS[102]) առումով այդ ես էի, որ գործի դրեցի Էրիբոնին[103]: Նավակատիկին օտարերկրացիների իրավունքների համար գրեցի մի տեքստ՝ ասելով, որ պետք է բացել սահմանները: Դերիդան ինձ հետ միասին ստորագրեց այդ տեքստը, և հետո այլևս ամբոխ չհավաքվեց: Ոչ, վերջիվերջո, ամեն անգամ, երբ կարող էի, ես չափից շատ չեմ միջամտել (դրական առումով):

Երաշխավորված եկամտի առումով, ինչպես ասացիք, ինձ իսկապես հատուկ է ուսումնասիրողի ռեֆլեքսներ ասվածը: Դա բարդ խնդիր է, որի շուրջ ես շատ եմ մտորել: Այս հարցի շուրջ մտածում էինք հրատարակել *«Սոցիալական հետազոտությունների գործեր»* (Actes de la recherche en sciences sociales) վերնա-

[102] PACS (Pacte civil de solidarité) - Քաղաքացիական սոլիդարության պայմանագիր (թարգմ.):
[103] Դիդիե Էրիբոն (ծնվ. 1953) - ֆրանսիացի սոցիոլոգ և փիլիսոփա (թարգմ.):

գրով ամսագիր: Խորհրդակցեցի շատ լավ մասնագետների հետ, որոնք, բացի դրանից, ավելի շուտ նեղդասական տնտեսություն ուղղությանը պատկանող հոլանդացիներ էին: Բայց ես տեսություն չունեի: Այո, դա լավ է, սակայն բոլորն ինձ ասում էին՝ ուշադրություն, առկա են վնասակար ազդեցություններ, կան թաքնված հետևանքներ: Եվ ահա այդպես կրկին կդառնամ հմուտ: Եթե միջամտում եմ, ապա երաշխավորման արդյունքով, և եթե շարժման ընթացքում ստիպում եմ ինչ-որ հիմարություն անել, ապա դա լավ չէ: Հետևապես, նման դեպքերի ժամանակ ես հակում ունեմ ինձ հեռու պահել: Կամ էլ պետք է, որպեսզի ավելի շատ աշխատեմ, բայց կյանքը կարճ է: Ասում են «պարտավորված ինտելեկտուալ», ես ինքս ինձ անվանում եմ «պատասխանատու»: Սա քիչ հնացած է, դրանից մի քիչ դյուրկհեյմյան հոտ է փչում: Եթե կարծում են, որ սոցիոլոգիան գիտություն է, ապա դա մեծ պատասխանատվություն է, ուրեմն ես էլ եմ այդպես կարծում: Անձամբ ինձ այդ մոտեցումը հոգեհարազատ է: Այ սա վստահորեն կարող եմ ասել: Բայց պետք է տարակուսել՝ շատ հաճախ թույլ տրված մեծ սխալներն իրենցից անչափ համակրելի նախաձեռնություններ են ներկայացնում, որոնք էլ իրենց հերթին թաքցնում են անցանկալի հետևանքներ: Հենց այդ ոչ ցանկալի արդյունքների հակառակ հետազոտողը պարտավոր է աջակցել երաշխիքներ ձեռք բերելուն:

Հարց. Չնայած դրան՝ գիտական փաստարկները հղում չե՞ն կատարում այն մարդկանց, որոնք դրանք բարձրաձայնում են՝ սկսած նրանից, ովքեր որպես գիտելիք պաշտպանում են «ուլտրագիտականը» (infra-scientifique), «նախատիպային տեսությունը գործողության մեջ» ասվածը, ինչը Դուք քննադատում եք Լոիկ Վականի հետ միասին: Արդյո՞ք սա չի նշանակում վերականգնել տեսության ու պրակտիկայի միջև սահմանը:

Պիեռ Բուրդիե. «Տղամարդկային գերիշխանություն» (La Domination masculine) գրքի հետգրություն բաժնում ես շատ էի

մտածում «Աքտ ափ»-ի (Act up), «ԷյՍի»-ի (AC), նմանատիպ շարժումների մասին, որոնք նորարարություններ էին մտցնում ինչպես սիմվոլիկ, այնպես էլ տեսական կառուցակցման դաշտում: Չեմ կարծում, որ Բաշլյարի[104] նման մարդկանց մասին խոսելու համար վեկտորը, քաղաքականությունը անհրաժեշտ է ուղղել գիտությունից պրակտիկա: Ավելի լավ է գնալ պրակտիկայից գիտություն: Գալ-գնալ: Պարզապես պետք է գտնել այնպիսի վայրեր, որտեղ որքան հնարավոր է շատ են հանդիպում նմանատիպ բաներ: Այն, ինչը Դուք ուրվագծեցիք Վականի ու բանտերի պայքարի մասին, կարող էինք ամենուր սահմանել: Սոցիոլոգների համար դա խնդիր չէ:

Շատ հաճախ, երբ ասում եք «տեսական», անշուշտ նկատի ունեք «փիլիսոփայությունը»: Ես մշտապես մեծ հետաքրքրություն եմ տածել սպորտի նկատմամբ, մարմինն ինձ համար խնդիր էր, մի դաշտ, գնացի դասավանդելու «ԷՆՍԵՓ»-ու, (ENSEP[105]): Ընդհանուր առմամբ վատ դասավանդողների հետ միասին գոյություն ուներ աշխատանքային խումբ, որը թեզեր էր պատրաստում: Ֆրանսիայի ռեգբիի հավաքականի հարձակվողը հիմարություններ էր գրում ռեգբիի վերաբերյալ: Հիշում եմ դրանցից մեկը. «Բայց դու դա ասացիր հանդերձարանում, ստիպեցիր ծաղրել քեզ, ստիպեցիր քեզ դուրս հանել, ուրեմն ինչո՞ւ ես դա թեզիդ մեջ ներառում»: Մեկ ուրիշ անգամ ես ունեի թեզերի մի տրցակ, որոնք արդեն լրիվ կարդացել էի. «Այս ամենում հինգ հետաքրքիր նախադասություն կա: Ահա դրանք»: Ու վերջիններս իրենցից բացարձակապես հետաքրքրություն չէին ներկայացնում. «Դուք պետք է սովորեք դառնալ ձեր մասնագիտության տերը: Դուք շատ բան գիտեք»: Եվ շատ արագ սկսեցին նշանա-

[104] Գաստոն Բաշլյար (1884-1962) - ֆրանսիացի փիլիսոփա, արվեստագետ (թարգմ.):

[105] ENSEP (École normale d'éducation physique) - Ֆրանսիայի ամենահին ֆիզիկական պատրաստության և կրթության բարձրագույն ուսումնական հաստատությունը (թարգմ.):

կալի բաներ տեղի ունենալ: Հիշում եմ մարմնամարզություն դասավանդող մի աղջկա: Մի օր նա իմ երկարաշունչ մենախոսությունից արթնացավ, կանգնեց գրատախտակի մոտ ու բացատրեց, որ հորինել է երկսեռ մարմնամարզական վարժություններ: Վեցերորդ ամսվա վերջում տղամարդիկ ուժային, իսկ աղջիկները գլխավորապես ճկունության վարժություններ էին անում: Ընդհանուր առմամբ՝ ճկուն/ամուր: Այդպիսով, մինչ իմ գալը երբեք ոչ ոքի մտքով չէր անցնի, որ դա անհնարին է: Նման իրավիճակում ինձ թվում է՝ խորապես արմատացած, տեսության շրջանակներում իրեն շատ համեստ դրսևորող սոցիոլոգիայի դերերից մեկն է ասել. «Համագործակցելով սոցիալական շարժումից պետք է սոցիալական պատմություն կերտել, կլինեն հետազոտողներ ու կաշխատեն մարտնչողների հետ»: Ինչո՞ւ, որպեսզի ազատականացնեն ու ակտիվացնեն այդ ահռելի սոցիալական գիտելիքը: Դա ճիշտ և ճիշտ այն էր, ինչ ես արեցի ռեգբիի խաղացողիս հետ. «Հենց դու ես, որ գիտես, ես այստեղ եմ, որպեսզի քեզ ասեմ, որ դու ինձանից ավելի լավ գիտես: Եվ ես բավականաչափ տեղյակ եմ քո պրակտիկայից՝ իմանալու, որ այն, ինչ դու ինձ ասում ես, ցնդաբանություն է: Խոսիր ինձ հետ քո իրական պրակտիկայից»: Որտեղից էլ և աղջիկը, ով գնաց գրատախտակի մոտ:

Տարիների ընթացքում մտավորականները գնացին դասավանդելու: Ալտյուսերը[106] տեսաբանության մարմնավորումն էր: Ես լուռ հետևում էի նրա «Հակադրություններ վերջին վերլուծության» թեմայի դասախոսություններին: Ինձ պես մտածող սոցիոլոգները բնավ այդպիսին չեն: Այդ կերպ ըմբռնել սոցիոլոգիան, պրակտիկայի դերն առաջին դեմքից, որն ունի համապատասխան տեսություն պրակտիկան դիտարկելու համար, անփոխարինելի է: Եվ քաղաքականության համար դա իրենից ծան-

[106] Լուի Պիեռ Ալտյուսեր (1918-1990) - ֆրանսիացի փիլիսոփա, մարքսիստ (թարգմ.):

րակշիռ արժեք է ներկայացնում: Ու սա բացարձակապես չի նշանակում, որ ակտիվիստները պատրաստվում են թվով կրճատվել, հասնել տեղեկույթ փոխանցողի մակարդակին: Նրանց փորձառությունները պետք է մշակվեն, ու վերջիններս կարող են ենթարկվել գիտական քննադատության:

Հարց. Մեկ այլ օրինակ բերեմ: Բժշկության մեջ ՁԻԱՀ-ով հիվանդների մրցակցությունը բժիշկների հետ մեկ այլ բան է: Այնտեղ առկա է ակտիվ հավակնոտություն, ինչը մրցակցում է կարողության դաշտում, որն էլ իր հերթին հանդիսանում է հաստատված մի տարածք, որի շրջանակներում փորձում ենք ստիպել տեղաշարժվել: Առկա՞ է այնտեղ անհավանական հավակնոտություն:

Պիեռ Բուրդիե. Բնավ: Ինձ թվում է, որ հենց այդ հավակնոտությունն է պետք օրինականացնել ու համընդհանուր դարձնել: Բոլորն ինձ հարցնում են. «Բուրդիե, ի՞նչ սպասումներ ունես բժշկության դաշտ անցնելով»: Գիտեմ՝ դա ինչ է նշանակում: Սա շատ բարդ թեմա է, որի հարվածներին պետք է պատրաստ լինել: Կարծում եմ՝ կարևորագույն գործը վստահության վերականգնումն է, որի կարիքն ունի յուրաքանչյուր հիվանդ, այսինքն՝ սոցիոլոգը պետք է լինի նրա լավագույն բժիշկը, վստահություն ներշնչի՝ իմանալու այնպիսի բաներ, որն անգամ իր բժիշկը չգիտի: Հակառակ «առանձնահատուկ զրույցի» առասպելաբանության, ինչպես ասում է բժիշկների ազատական գաղափարախոսությունը, Գոֆֆմանը[107] շատ լավ է նկարագրել ողջ առողջապահական ինստիտուտի ուժեղ և հիվանդների թույլ դիսկուրսի միջև առկա կապը, գերակայող նորմի հետ միասին հիվանդների խարդախելու խորամանկությունները: Ինչպե՞ս զինել մարդկանց բժիշկների հետ դեմ առ դեմ դուրս գալու համար: Դրանում ես առաջինն եմ:

[107] Գոֆֆման Էրվինգ (1922-1982) - ամերիկյան սոցիոլոգ, Չիկագոյի դպրոցի «երկրորդ սերնդի» ներկայացուցիչ (թարգմ.):

Հարց. Ես նույնպես, գիտեք…

Պիեռ Բուրդիե. Բժշկի մոտ գնալուց առաջ ես միշտ ինձ հայհոյում եմ: Ինձ ասում են. «Ինչպե՞ս թե, դու դա չասացիր»: Դե ես պատրաստում եմ իմ նշումների գրքույկը: Բայց չենք խոսում դրա մասին, կիսով չափ որովհետև չենք ուզում իմանալ, կիսով չափ էլ, որովհետև չենք համարձակվում ու մի տեսակ ամաչում ենք: Ես ողորմելի հիվանդ եմ: Չեմ կարող ինքս ինձ ստիպել իմ մասին հոգ տանել: Անհրաժեշտ է սովորեցնել մարդկանց օգտագործել բժշկությունը որպես միջոց: Օրինակ՝ ինձ հետ աշխատող մարդկանց ասում եմ. «Ես գործիք եմ, մի ծեր վետերան, գիտեմ լիքը հնարքներ, հենց դուք պետք է ներկայացնեք ձեր խնդիրներն այնպես, որպեսզի ես կարողանամ ձեզ օգնել»: Եթե եկել եք ինձ ցնցելու, ապա վերստին կգաք, ու ես ձեզ ոչինչ էլ չեմ ասի: Իսկ եթե գալիս եք՝ ասելով՝ ես կազմեցի իմ օրինակը, ու ես զզվանքի մեկն եմ, չգիտեմ՝ ինչպես անել… ձեզ հրաշալի ձևով կախտորոշեմ: Հետևաբար ինձ պետք է օգտագործել որպես միջոց:

Գիտեք, հետազոտության պրակտիկայում գործառնական կապը ամենաժողովրդավարականն է: Այդ օրերին մենք աշխատաժողով ունեցանք: Իսկապես զարմանալի էր, պլատոնական իդեալական երկխոսություն, որի ժամանակ ճշմարտությունը բարձրաձայնվում էր, բայց ոչ ոք դրա մասին չասաց: Ժամանակ առ ժամանակ, երբ ամեն բան լավ է գնում, երբ կողմերն իրար շատ են սիրում, որոնք խորամանկություններ անելու համար հնարքների չեն դիմում, ստացվում է մի բան, որն ինձ գերագույն հաճույք է պատճառում:

Հարց. Ճիշտ որ, ինձ շատ հետաքրքրեց այն փաստը, որ ինչպիսին էլ լինի կոլեկտիվը, Ձեզ պես մտավորականը չի ասում «մենք»: Դուք հենց նոր նկարագրեցիք հետազոտման կոլեկտիվ պրակտիկան և միգուցե նաև ճշմարտությունը: Բայց եթե մեկը ճիշտն է ասում, ապա դա կամ գիտության անդեմ խոսք է, կամ էլ

առաջին դեմքի, ինչպես շատ գեղեցիկ ձևով գրում եք «*Պասկալյան մտորումներ*» գործում:

Պիեռ Բուրդիե. Ես անվստահությամբ եմ վերաբերում «մենք»-ին (ծիծաղում է): Եթե համարձակվեմ ասել, իմ քաղաքական գլուխգործոցը Բալիբարի[108] ու Ալտյուսերի վերաբերյալ մի հնարք է: Դուք դա երբևէ չե՞ք ընթերցել[109] (ծիծաղում է). անհրաժեշտ է… ես ցանկանում էի պատասխանել ալտյուսերիականներին, որոնք զզվեցրել էին ինձ, այլ բառ չեմ գտնում: Ցանկանում էի պատասխանել՝ թեպետ պատիվ չհամարելով նրանց պատասխանելը: Որոնեցի ու վերընթերցեցի «Գավառականները» (Les Provinciales), «Գերմանական գաղափարախոսությունը» (L'Idéologie allemande), Նիցշե: «Գերմանական գաղափարախոսությունը» աշխատանքում գտա Մարիների[110] վերաբերյալ Մարքսի գրած տեքստերը, որտեղ գրեթե կիրառված էր անձին ուղղված փաստը (ad hominem)[111]: Ու այդպես ես ստիպեցի օդի մեջ խոսել Մարքսի մասին՝ աչքի առաջ ունենալով Բալիբարի հեղինակած տեքստը Ալտյուսերի մասին: Հռետորաբանության կարևորության վերաբերյալ ներկայացված էին շատ լուրջ մեկնաբանություններ՝ ինչ ասել է «ես», «մենք» և այլն: Կարճ ասած, ես հաշվեցի դրանք՝ «եսերը», «մենքերը», «եսը», որը փոխվեց «մենքի»...

---

[108] Էթիեն Բալիբար (ծնվ. 1942 թ.) - ֆրանսիացի փիլիսոփա, Փարիզ X-Նանտեր համալսարանի քաղաքական փիլիսոփայության պրոֆեսոր (թարգմ.):

[109] «Այն, ինչ ասել կուզի» (Ce que parler veut dire), Fayard, 1982:

[110] Մաքս Մարիներ (իսկական անունը՝ Յոհան Կասպար Շմիդտ, 1806-1856) - գերմանացի փիլիսոփա: Հաճախ ներկայացվում է որպես նիհիլիզմի, էկզիստենցիալիզմի, պոստմոդեռնիզմի և անարխիզմի, մասնավորապես՝ անհատական անարխիզմի նախակարապետը (թարգմ.):

[111] Տրամաբանական սխալ, որի ժամանակ արգումենտը հերքվում է դա առաջ քաշող անձի բնույթի, մոտիվացիայի կամ նրա մեկ այլ ատրիբուտի մատնանշմամբ (թարգմ.):

Ցյուրիխում Անիկ Կուպեի, ՍՈՒԴ-ՓՏՏ-ի հիմնադիրի (SUD-PTT[112]) հետ անցկացրի գիտաժողով: Դա աննախադեպ բան էր, այնտեղ արդեն հաստատ «մենք» էինք: Օգտագործում էի «ես» դերանունը: Որովհետև կարծում եմ՝ շատ կարևոր է ասել «ես», երբ խոսում ես կոնկրետ իրավիճակում: Ու հենց այդ խորագրի ներքո էլ ինձ խնդրում են խոսել: Կամ էլ դառնում եմ վանահայր: Բայց երբ ինձ շարժման մեջ հարցին. «Ի՞նչ եք պատրաստվում անել», բնականաբար չասացի. «Ես խոսում եմ Անիկ Կուպեի ղեկավարության ներքո»: Դրա փոխարեն հարցրի Անիկին. «Ի՞նչ կասեիր այս մասին»: Նա սկսեց սքանչելի խոսել, ինչպես 1995 թվականին, երբ դա այնքան պարզ էր, հասարակ և ուղիղ, որ ցանկացա կարգի բերել թղթերս: Հետո ավելացրի մի փոքրիկ հնարք, որի վերաբերյալ կարող էին այս կամ այն բանն ասել:

Արդյունքում ստացվեց շատ գեղեցիկ դուետ: Եվ այդտեղ արդեն «մենք» էինք, որը նույն «մենք» ասածի վսեմությունը չի պարունակում: «Մենք» ասվածը ոչ մի ընդհանրություն չունի Ռոբեսպիերի «ես ժողովուրդ եմ» արտահայտության հետ, որովհետև դա տանել չեմ կարողանում: Իհարկե, պետք է համատեղ տեքստեր գրել: Մտաբերում եմ այն շրջանը, երբ մտավորականները կրակն էին ընկել: Դելյոզը գրել էր մի փոքր պամֆլետ նոր ժամանակների փիլիսոփաների վերաբերյալ, բայց ոչ այսօրվա: Ես ասում էի. «Դա սխալ է», դա մի բան է, որ բոլորը պրակտիկորեն գիտեն, բայց որը տեսականացված չէ: Երբ դուք մեծ եք ու փոքրի վրա եք հարձակվում, վերջինիս խորհրդանշային կապիտալ եք տալիս, սա գործառնում է որպես նախաբան: Մի խոսքով, ես համարեցի, որ դա ռազմավարական հիմարություն է: Հետևապես, ժողովի ընթացքում, որտեղ ներկա էին Ռոր-Գրիյեն, Դելյոզը, Ֆուկոն և այլոք, ասացի, որ եպիսկոպոսները, որով-

[112] Ֆրանսիայի Փոստի, Հեռագրի, Հեռախոսի, Կապի տեղային արհմիությունների ֆեդերացիա (Fédération de syndicats locaux français aux PTT) (թարգմ.):

հետև այդ ժամանակ նրանց էի ուսումնասիրում, ունեն եպիսկոպոսական քարտուղարություն:

Եպիսկոպոսները ունեն տարաձայնություններ, բայց եպիսկոպոսական քարտուղարությունն առկա է: Կարճ ասած, մտածում էի, որ պետք է ընդունել եպիսկոպոսական քարտուղարության այդ մոդելը (ծիծաղում է): Մոտավորապես տասնհինգն են: Եվ առկա է կոնկրետ խնդիրը, կարևոր չէ, թե մեզանից որ մեկս հանդես կգա նախաձեռնությամբ: Բանտերի դեպքում՝ ավելի շուտ Ֆուկոն, Պաղեստինում՝ Դելյոզը և այլն: Բացի դրանից՝ տեքստը շրջանառվում է, նշում են բոլոր նրանց, ովքեր կարող են, իսկ ովքեր չեն կարող, չեն նշում: Ու քանի որ պետք էր սպանել նրանց ինքնասիրահարվածությունը, ովքեր սիրում էին հանդես գալ հեռուստատեսությամբ, դերասաններին ստիպում էինք կարդալ տեքստը, որոնց գործն էր դա:

Լեհաստանի դեպքում դա աշխատեց, այստեղից էլ և մոդել ունենալու կարևորությունը: Պահպանվել էր Ֆուկոյի հետ միասին գրված մի տեքստ, շատ դաժան, ճգտում էինք գրեթե լինել վիրավորական: Այդ տեքստն ընթերցվեց Իվ Մոնտանի կողմից, որի մասին Էրիբոնն իսկապես պատմում է իր Ֆուկոյի գրքում: Ու մոդելն աշխատեց:

Ակներև է, չենք կարող տեղաշարժել, բայց ինքս ինձ ասում եմ, որ եթե հաջողել ենք սոցիալական շարժման համար… Օրինակ՝ մի խումբ նախաձեռնում է աշխատել բանտի վերաբերյալ տեքստի վրա: Գոյություն ունի հարաբերականորեն փակ ցուցակ, որը ներառում է շատ ծանր կացության մեջ հայտնված մոտ 20 խմբերի: Եվ նա, ով կարող է, հնարավորինս արագ թող ստորագրի: Այսինքն՝ եվրոպական կոլեկտիվին ինտերնետով ստիպել գործել, որի արդյունքում կստեղծվեր մի բանաձև: Այդտեղ կլինեին մեկ հատ «մեզ» և մեկ հատ էլ «մենք»: Մտածում եմ այդ տիպերի մասին, որոնց հենց նոր բացահայտեցի, որոնք կազմեցին «Եվրոպա Ինք...» (Europe Inc…) գիրքը, այդ դեպքում, ան-

կասկած, պետք էր լինելու, որպեսզի միաձյանակ նրանք լինեին «մենք, ում»:

Քննարկել մի տեքստ… Վերջերս՝ կիրակի օրը, Բոսնիայում նմանատիպ փորձ ունեցանք: Սրահում ներկա էին հրաշալի մարդիկ: Սակայն երկու ժամն անցավ մանրախնդրությամբ զբաղվելով, որպեսզի իմանան՝ տեղավորվել են «ահռելիորեն», թե «սքանչելիորեն»: Եվ հանկարծ ողջ բանիմացությունը ետ գնաց պահարան: Ու բացի դրանից՝ կար նաև ոճի խնդիր: Այնուամենայնիվ հակակրանքով ստորագրված տեքստերը նույնչափ էլ վատ են գրված: Երբ տեքստը գրվել էր Ֆուկոյի կողմից, ոճը, համենայն դեպս, ճանաչելի էր: Այ հենց սրա համար է «եսը» էական, առաջ են գալիս նրա բանիմացությունն ու ոճը:

Հարց. Բայց և այնպես նույն համարձակ էներգիան առկա է նաև «մենք»-ի մեջ, իսկապես արդյունավետ «եկող»…

Պիեռ Բուրդիե. Այո, ես դա հարգում եմ ու շատ եմ սիրում: Ոչ թե որովհետև այդ «մենք»-ը իմ ժանրը չէ, այլ՝ ես պաշտում եմ «Աքտ ափ»-ի գործունեության ձևը: Ներկա էի «ՓԱՔՍ»-ի (PACS) պես մի երթի, փոքր շշով կաթ էի խմում: Կային նաև այդ հրաշալի գովազդային հայտարարությունները, դա զավեշտ էր: Քանի որ վերջինս օգտակար է: Ես շատ երջանիկ էի: Ինքս ինձ ասում էի՝ հենց սա է ժամանակակից քաղաքականություն ասվածը: Դե ինչ, պետք է տեսնենք՝ այդպես է, թե ոչ: Բայց դա հրաշալի է:

Հարց. Դուք «հրաշալին» ասում եք ճիշտ այնպես, ինչպես օգտագործում եք «հրաշք» արտահայտությունը, ինձ միշտ թվում է, որ Դուք արտահայտում եք միաժամանակ և՛ ուրախություն, և՛ տարակուսանք: Օրինակ՝ երբ խոսում եք «գործադուլավորների» շարժման մասին, կարծես խոսեք «սոցիալական հրաշքից»: Խոնարհո՞ւմ: Դժվա՞ր է մտածել գերիշխողների գերիշխանության բացառության մասին:

Պիեռ Բուրդիե. Այստեղ ես պետք է բացատրեմ հրաշքի պատմությունը: Սա նշանակում է, որ սոցիոլոգիապես գործազուրկների շարժումը շատ քիչ հավանական էր: Մեծ աշխատանք կար անելու: Ես ինքս Ալժիրում շատ աշխատեցի գործազուրկների խնդիրների վրա: Առկա էին Լազարսֆելդի[113] աշխատանքները՝ ապագայում քայքայվող կապի մասին: Մի խոսքով, սոցիոլոգիապես դա քիչ հավանական է: 17-րդ դարի փիլիսոփաները՝ Դեկարտը, Սպինոզան, ասում էին՝ հրաշք գոյություն չունի: Մեր գործի նպատակն է ստիպել նրան անհետանալ և վերադարձնել բանական վիճակին: Այս առումով գործազուրկների շարժումներում քիչ հավանական բան կա, բայց, այնուամենայնիվ, ինչ-որ բան գոյություն ունի: Իմ հիպոթեզն այն է, որ այն առկա է, որովհետև կան աննախադեպ մոբիլիզացման գործիքներ, ակտիվիստներ, որոնք գիտեն խոսել արդի ձևով, որոնք կարող են օգտվել տեղեկատվության միջոցներից և այլն: Նրանք ստիպեցին գոյություն ունենալ մի բանի, որի լինելիության հավանականությունը շատ քիչ էր: Հենց դա է քաղաքականության լուսանցքում գտնվելը: Այդ իսկ պատճառով պետք է մշտապես գնալ այնտեղ, եթե անգամ քիչ հավանական է, անգամ եթե մենք ունենք կոկորդ պատռելու մեծ հնարավորություններ, որովհետև այնտեղ կարող են հրաշքներ լինել: Եվ ինչ, եթե սպասեինք, որպեսզի հավանականությունները միավորվեին, այլևս ոչինչ չէինք անի: Իսկապես ուռճացրել էին, քանի որ գործազուրկների շարժումը հավակնում էր լինել միջազգային, ինչը և հաջողվեց: Դա էլ իր բացատրությունն ունի. կային ՋԼՄ-ներ, կային ակտիվիստներ, այնպիսի ակտիվիստներ, որոնց, ընդ որում, շատ լավ գիտեք: Ահա և հրաշքը:

[113] Պոլ Լազարսֆելդ (1901-1976) - ամերիկացի հայտնի սոցիոլոգ: Առաջիններից մեկն է ուսումնասիրել ՋԼՄ-ները՝ որպես առանձին երևույթ և մաթեմատիկական մեթոդներ ներմուծել սոցիալական գիտություն (թարգմ.):

Հարց. Այդտեղ Դուք տալիս եք հրաշքի վերացման վերաբերյալ մի բացատրություն: Բայց Ձեր աշխատությունում այլ հրաշքներ էլ կան: Նկատի ունեմ «*Տղամարդկային գերիշխանություն*» գրքում տեղ գտած սիրո մասին հատվածը: Այնտեղ նույնպես Դուք անդրադառնում եք հրաշքին: Մի կողմից՝ սոցիալապես ծրագրավորված սեր (amor fati), մյուս կողմից, եթե կարելի է ասել, ճակատագրական սեր, որը հիշեցնում է շատ ավելի վաղ շրջանում գրված հոդվածը, որտեղ խոսում էիք «ճակատագրական գեղեցկության» մասին, որն էլ հենց խուսափող դառը տարբերակումը կլինե՞ր:

Պիեռ Բուրդիե. Հրաշքներն այն իրավիճակներն են, որոնցում սովորական օրենքները չեն գործում: Գոյություն ունի amor fati: Դա մի հնարք էր, որը ես օգտագործեցի Կաբիլի ու Բեարի ցեղախմբերի դեպքում: Սարսափելի է, մարդիկ իրապես սիրում են նրանց, որոնք ունեն սիրելու սոցիալապես սահմանված հնարավորություններ: Հստակորեն ասում ենք. «Նա ամուսնացավ իր խոստացած աղջկա հետ»: Իմ ուսումնասիրած շրջանում՝ կաբիլների ու բեարյան ցեղախմբերի գյուղերում, մեկ տղային հասնում էր երեք հնարավոր աղջիկ, ու պարզվում է, որ նա սիրում է նրանցից մեկին: Պատահաբար այս գյուղերում հանդիպում էին նաև մեզալյացիներ, ինչը բավական հուսահատեցնող էր: Ողջ սոցիալական կանոնակարգում ամենից սարսափելին հոմոգամիայի օրենքն է, որը լայն տարածում ուներ, ու երբ մշակում ենք, դա ամենավատն է: Երբ վերցվում է սոցիալական տարածությունը, ինչպես որ այն նկարագրված է «*Տարբերակման*» մեջ, որքան հեռացնում են փոքրիկին, այնքան հոմոգամիան սրվում է: «Պետական արքունիք» գրքում ես հպանցիկ անդրադարձա բուհում սովորողների հոմոգամիային: Մեջքովս սարսուռ է անցնում: Բայց այն, ինչ տեղի է ունենում նմանատիպ շրջանակում, կարող է ապրվել որպես հրաշալի մի բան, բռնի հարաբերությունները, գերիշխանությունը կարող են դադարեցվել: Եվ դա այդպես էլ կա:

Հարց. Ուրեմն ամեն անգամ նման «հրաշքի» համար Դուք պահպանում եք մի նշում, մի հետգրություն…

Պիեռ Բուրդիե. Ճիշտ այդպես, դա խորամանկություն է (ծիծաղում է):

Հարց. Սակայն գիտեք, հենց այստեղ է երևան գալիս մեր քաղաքական ցանկությունը: Ահա վերջապես այն հաջողված հակազդումները, որոնք դուրս են պրծնում գերիշխանության խորամանկություններից:

Պիեռ Բուրդիե. Իհարկե, անշուշտ, անկասկած է: Ես ինքս ինձ հետ պահեցի կյանքիս հրաշքներից, որպեսզի շարունակեմ իմ՝ սոցիոլոգիս գործը: Պատահական չարության կամ այլանդակության է վերագրվում այն, ինչը հանդիսանում է մեթոդաբանական լուծման արդյունք: Ուշադրություն, չպետք է երազել, աշխարհը դաժան է, այդ օրենքները՝ դաժան, ու դու պետք է քեզ հաշիվ տաս այս ամենում: Մի խոսքով, դու այնտեղ երազելը **սատարելու համար չես**, հատկապես այն փուլերում, երբ առանձնապես շատ է երազվում:

Վերադառնալով առաջին հարցին, միգուցե, այն շրջանին, երբ ոչ ոք այլևս չէր երազում, ես ինձ, հավանաբար, ասացի. «Սա է պահը» (ծիծաղում է): Ոչ, դա այդպես է: Այն ժամանակաշրջանում, երբ մտավորականները ձեռքերի վրա էին քայլում, դա սարսափեցնող էր: Իսկ ես ապրում էի սոցիոլոգիայով, ես զբաղված էի՝ *ամբողջ ժամանակ* ուսումնասիրելով սոցիալական աշխարհը: Մտավորականների մեծ մասի համար սոցիալական աշխարհն անտանելի է, դա նրանց զզվեցնում է: Ես սա կարող եմ հասկանալ, որովհետև այն իր մութ կողմն էլ ունի: Կարծում եմ՝ ինտելեկտուալ աշխարհում գոյություն ունեն մի շարք բաներ, որոնք բացատրվում են որպես էսկապիզմ[114], փախուստ իրականությունից,

[114] Էսկապիզմ (անգլ.՝ *escape* - փախչել, ազատվել), անհատապաշտական-հաշտվողական ձգտում փախչելու պատրանքների, երևակայությունների աշխարհ (թարգմ.):

իսկ իրականությունը սոցիալական աշխարհին է: Ուրեմն, մասնագիտության միջոցով մենք այդ սոցիալական աշխարհի ներսում ենք: Դա է գիտության հավակնոտությունը:

Առկա են հրաշքի հարցն ու հավակնությունների հոսանքին հակառակ գործողության խնդիրը: Պետք է պատկերացնել շատ թե քիչ ուղղահայաց զառիվերներով պատված մի տարածք: Միշտ էլ կարող ենք բարձրանալ ուղղահայաց միջնորմով: Սոցիոլոգիայի գործն է նկարագրել այդ աշխարհագրությունը: Այն, ինչը հատկապես քաղաքականության մեջ չի խանգարում սպասել կամ հավատալ հրաշքի: Ինձ հարցնում են. «Բայց ինչպե՞ս Ձեր սոցիոլոգիական տեսլականով դեռ կարող եք տեղներիցդ շարժվել»: Իսկապես որ, ինձ թվում է՝ ես շատ ռեալիստական տեսլական ունեմ, որովհետև չեմ սատարում լավ աշխարհը: Ենթադրում եմ՝ Գոֆֆմանն էլ է այդպիսին: Ինձ ասում էին. «Նա շատ չար մարդ է»: Բնավ: Սակայն նա խիստ զայրացած էր որոշ բաներից: Համարում եմ, որ այդ բարկությունը գալիս էր նրա տեսածից: Հազիվ եմ կարողանում իրար կապել արտահայտածս մտքերը, բայց տեսնում եմ կապը իմ անհամբերության, վրդովվածության, փոթորկոտության ու «պարզության» միջև, չգիտեմ ինչպես դա անվանել: Գիտական աշխատանքը չի արվում բարի մղումներից դրդված: Այն չի արվում կրքերով համակված, և հետո դրանք պետք է կառավարել: Դա ցույց տալու համար նախընտրում եմ խոսել Ֆուկոյից: Եթե վերջինս միասեռական չլիներ, իհարկե, չէր գրի այն գործը, որը գրեց: Բացի դրանից՝ ես շատ լավ եմ տեսնում այն ստեղծագործությունը, որը նա կկարողանար կյանքի կոչել: Ֆուկոն ունի մի շատ մոտիկ ընկեր՝ Մոզին[115], որը *պատկերացում ուներ 18-րդ դարի երջանկության մասին*, որն էլ իր հերթին ներշնչված է Ֆուկոյից: Նա այդ տեսակ հնարք կաներ:

[115] Ռոբերտ Մոզի (1927-2006) - ֆրանսիացի ակադեմիկոս, ուսումնասիրում և դասավանդում էր 18-րդ դարի ֆրանսիական գրականություն (թարգմ.):

Հարց. Բայց դա լավ գիրք է…

Պիեռ Բուրդիե. Այո, միայն թե ահա Ֆուկոյի մոտ շատ ուժեղ ազդակներ կային: Նրանում, աշխարհում և աշխարհի հետ նրա հարաբերության մեջ կար անտանելի մի բան, որից, սակայն, նա արտասովոր էներգիա էր քաշում: Ակներևաբար, եթե միայն դա էր, եթե միայն բանիմացությունն էր, միտքը, քննադատությունը, սթափությունը ու հատկապես աշխատանքը, Ֆուկոն Ֆուկո չէր լինի, և հատկապես աշխատանքը, որովհետև նրա կողմնակիցները շատ հաճախ մոռանում են դա: Երբ անհամբերությունը վերահսկվում է, դա աշխատանքի կարևոր բաղադրիչ մասն է: Աշխատելու համար պետք է ցասման մեջ լինել: Բայց դա էլ բավարար չէ: Պետք է նաև աշխատել ցասումը կառավարելու համար:

Հարց. Դուք շատ եք խոսում Ֆուկոյից: Սակայն ինչ վերաբերում է նրա փիլիսոփայությանը, ապա Ձեզ ճանաչեցին որպես վերջինիս մասին շատ զուսպ արտահայտվող մեկը:

Պիեռ Բուրդիե. Այո, բայց շատ բարեկամաբար, մենք սերտ ընկերական հարաբերություններ ունեինք: Դա բարդ է: Դրա մասին և՛ խոսում և՛ չէին խոսում: Քանի որ իրենց շատ էին սիրում, կարծում եմ՝ ցանկանում էին պաշտպանել այդ հարաբերությունը, ու միևույն ժամանակ առկա էին բախում և վազանց:

Հարց. Համակարգելու նպատակով կարծում եմ՝ Դուք նրան հանդիմանում եք, որ նա թերագնահատում է մարմինների սովորական վարժեցումն ինքնին սոցիալական կյանքով: Նա այսօր կարող էր ափսոսալ Ձեր՝ պետության վերաբերյալ ունեցած հայացքների համար, որոնք չափազանց հասարակ են և անուշադրության են մատնում իշխանության մազականության դրսևորումները:

Պիեռ Բուրդիե. Այո, բայց անտագոնիզմ չկա: Վերևում ես Լեյբնիցի հայացքների կողմնակից եմ: Երիտասարդական շրջանին պատկանող մի շատ գեղեցիկ տեքստ կա Լեյբնիցի գրքում, որտեղ հետևյալն է ասում. «Ես ցանկանում եմ ինտեգրել»: Այդ

ժամանակ ոչ ոք սխոլաստիկաներին չէր կարդում, մինչդեռ նա կարդում էր, կարդում էր նաև Դեկարտ, Պասկալ և այլն: Ես ինտեգրում եմ Մարքս ու Վեբեր, Վեբեր և Դյուրկհեյմ: Մինչդեռ անհրաժեշտ է հակադրել ավանդույթները: Տաս դասախոսություններից ինը կարդացվում է Մարքսի «Կապիտալ»-ի առաջին մասի հիման վրա, Վեբերի գործի երկրորդ մասի, կամ էլ Մարքսի աշխատության առաջին մասը, Վեբերի երկրորդ, գոյություն ունի Ֆուկո/Հաբերմաս երկակիությունը: Համոզված եմ՝ ԱՄՆ-ում մշտապես բարձրացվում է Հաբերմասի հարցը… նույնը նաև Դելյոզ/Ֆուկո դեպքում, շատ փոքր չափով: Ինչպես մեծ տարածություններում աննշան փոքր մի բան՝ դա դեռ լեյբնիցյան փոխաբերություն (մետաֆորա) է: Եվ այն իմաստ չունի: Վերցրեք Ֆուկո-Բուրդիե համադրությունը: Ի՞նչ եմ ես ուսումնասիրում: Ընդհանրականացում, փորձառություն, ներգրավում՝ արագ առաջ շարժվելու համար այն դարձնելով սոցիալական մարմին: Դա ինչ-որ հանճարեղ բան չէ: Ողջ աշխարհն է սա արել: Միայն թե ես այն ավելի համակարգված ձևով եմ իրականացնում: Ուստի սոցիալականը պատմություն է: Սոցիալականացվելով մարմինը դառնում է պատմական, այն կարգավորում է պատմությունը: Եվ ես կոնկրետացնում եմ այն, ինչը ներգրավված էր, հետևապես և ենթարկված: Ես նրան զրկում եմ հպատակությունից ու այդպիսով ազատում: Սա մարմինը շտկելու ձև է: Ողջ աշխատանքը հնարավոր է նպատակ ունենա բացահայտելու կլինիկական հնարավորությունների կիրառումը: Կան սոցիոլոգիայի կլինիկական հնարավորություններ, որոնք ես կիրառում եմ: Կարող էին ասել, որ ես զբաղվում եմ սոցիովերլուծությամբ: Դժբախտաբար գիտակցում ու դա ասում եմ «*Տղամարդկային գերիշխանության*» գրքիս երկար էջերում, ինչը թերապևտիկ բնույթ չի կրում: Ջուր եմ փորձում իմանալ լիքը բաներ, որոնք չեն փոխվում:

Ինչևիցե… Ընթացքում ամեն ինչ բերել նախկին տեսքի նշանակում է շտկել ու նաև օժանդակել ինքդ քեզ վրա տարվող աշխատանքը և դրանց տեխնիկաների կիրառումը: Անատոմիա գոյություն չունի:

Ֆուկոն, այո, ուներ «մարմինների քաղաքականություն» ասվածը, և ճիշտ է՝ նա ավելի շատ շեշտը դրեց դինամիկ, բաց կողմի վրա, քան ես: Ինչպես իմ, այնպես և Ֆուկոյի դեպքում առկա համար առաջին թշնամին անհատական ոգեպաշտությունն է: Ու դրա հետ կապված՝ ես համընդհանուր ուրախությունը խանգարելու հակում ունեմ: Ձեր «Անձը» և այլն: Սա այն է, ինչն ինձ մղում է շեշտելու, երբեմն քիչ այլանդակորեն (ծիծաղում է) հարամողի չափը:

Հարց. Կարող ենք պատկերացնել, որ դետերմինիզմի դրսևորումների մասին այդ գիտակցությունը ազատական է, երբ մեր գործունեության ուժի չափի ավելացմամբ հասնում ենք դրան, այսինքն՝ այն, ինչ կոչում եք «ֆիզիկական-քաղաքական»: Գոյություն ունի մարմինների քաղաքականություն՝ որպես ինքն իրեն ցույց տալու, օգտագործվելու, այդ մարմինները փորձելու միջոց: Դուք խոսում եք «սոցիալական մարմին դառնալու» մասին, մենք՝ «մարմինը սոցիալական դարձնելու»: Ինչպե՞ս դրանք միավորել:

Պիեռ Բուրդիե. Սոցիոլոգիայից սկսած, ինչպիսին որ ես այն պատկերացնում եմ, իհարկե լոգոթերապիայի միջոցով: Իսկ հետո, ինչպես ասում եմ, առկա է մարմնի թերապիա, չգիտեմ՝ հուսական ինչպիսի արմատ է պետք վերցնել, գուցե թերապիա՝ մարմնամարզությամբ, միջոցով ինքդ քո նկատմամբ տածած հոգածությամբ: «*Տղամարդկային գերիշխանություն*» գրքում ես հիշատակում եմ մի աղջկա սքանչելի աշխատանք, որը բացեիբաց ասում է, թե ինչպես զբաղվել մարմնամարզությամբ, ինչը լիովին փոխեց իր կապը տղաների հետ: Սա ընդամենը մի փոքր մասն է, և հենց սա է կլինիկական գործածությունը: Բայց քաղա-

քական գործածությունը հանդես է գալիս, այո, ԼԳՏԲ շքերթներում: Որովհետև այնտեղ հանրայնորեն ցուցադրված մարմինը ներկայացնում է մի վերավոխում, թաքնված, ամոթալի կամ էլ քե մեղավոր մարմնի տրանսֆորմացիա:

Հարց. Բայց ի՞նչն է Ձեզ թույլ տալիս ասել, որ դա գերիշխանության խորամանկության նոր դրսևորում չէ:

Պիեռ Բուրդիե. Հենց սա է հարցը: Չգիտեմ ինչու: Թվում է՝ շարժումները պահպանում են ղեկավարումը: Որովհետև կառավարումն այստեղ անցնում է կատակի միջով, ու բացի դրանից՝ շատ կարևոր է: Աքտ ափում (Act up), օրինակ, այն ներկայանում է զվարճալիի կողքին, ողբերգականի հիման վրա, ինչն իսկապես էական է:

Հարց. Հետևապես գոյություն ունի զավեշտի քաղաքականության ուժ:

Պիեռ Բուրդիե. Ես դրանում համոզված եմ: Բայց դա քաղաքական ուժ էր, տեսեք ծաղրանկարը: Դա կրկին նոր ակտիվիստների բնորոշ կողմերից մեկն է: Դրա մասին պետք է իրոք խոսել, նախկին ակտիվիստներն այդքան ծիծաղելի չէին, նրանք շատ չէին ծիծաղում: Կողքից կային բեղավոր, երեք երեխաների հայր, ամուր կազմվածքով մարդիկ: Դա դասակարգի ծուղակն է, սոցիալապես ստեղծված հաբիթուսներ: Բայց հենց ծաղրանքն է կերտում արդի շարժումը, որովհետև այն մշտապես մի քիչ ինքնածաղրանք է:

Հարց. Իսկ եթե դա՞ լիներ այստեղ՝ տեսությունների սահմանափակված անդրդվելի գերակայության ու «հակազդումների» քիչ շքեղ վուլգաթայի պակասող օղակը:

Պիեռ Բուրդիե. Կարծում եմ՝ մեր օրերում վիճակը բավական տխուր է, որպեսզի սոցիալական շարժումները կարողանան օժանդակել սոցիոլոգիական ճշմարտությունը: Բեռլինյան պատի անկման ժամանակ ես ուրախանում էի ու ինքս ինձ ասացի՝ վերջապես կազատվենք այս տեսակ պատրանքից, ու հավանա-

բար ռեալիզմը լսելի կդառնա: Կարծում եմ՝ դա մեծ առաջընթաց էր: Այն փաստը, որ համաշխարհայնացման քննադատները տեխնիկապես զինված էին, չի ոգևորում. որքան ոգևորություն, այնքան էլ համոզվածություն: Սակայն խոսում են 35-րդ հոդվածի Բ կետի մասին: Այն, ինչ պետք է, այն, ինչ հանդիպում է նման տեսակ նավում գտնվող քննադատության մեջ, տարօրինակ երևակայություն, պատկերների հորինում, իրավաբանական քննադատություն, որը հանդիսանում է գործիք, որից սոցիալական շարժումը երկար ժամանակ զրկված է եղել հանուն իրավունքի մարքսիստական սահմանման:

Որովհետև մենք կորցնելու բան չունենք, ոչ էլ պլանավորող ունենք: 1983 թ. բազմաթիվ անգամ հանդիպեցին Ֆուկոյին, ասում էին. «Սա այսպես չի կարող շարունակվել»: Դա աջակողմյանների վերադարձից առաջ էր: Եվ Ֆուկոն պատասխանեց. «Բայց և այնպես մեզ կարող են կշտամբել ոչինչ չասելու համար»: Ես էլ իմ հերթին ավելացրի. «Այո, բայց կարող են նաև հանդիմանել ձախակողմյաններին մոտենալու համար. դա զզվեցնող է:» Այդ պահին մտածեցի, ես գնացի նրա մոտ բազում անգամներ, աշխատեցի ամբողջ օրը: Ջուսպ էին: Դեռ այսօր էլ կան մարդիկ, որոնք ասում են՝ Նեյդրը[116] ստիպեց հաղթել Բուշին: Սակայն ինձ թվում է, որ տաբուի այս ձևը կամ որոշ գործողությունների ապրիորի դատապարտումն ավարտված է: Հետևաբար ունեն ավելի մեծ ազատություն: Վերջիվերջո այն, ինչ կարծում ենք, ճշմարտություն է: Հանկարծ սոցիոլոգները լսելի կդառնան:

Հարց. Կա՞ն արդյոք այսօր սոցիոլոգիական հարցման մասշտաբային թեմաներ:

[116] Ռալֆ Նեյդր (ծնվ. 1934 թ.) - ամերիկացի փաստաբան և քաղաքական ակտիվիստ: Չորս անգամ մասնակցել է ԱՄՆ նախագահական ընտրություններին՝ 1996, 2000, 2004 և 2008 թթ. (թարգմ.):

Պիեռ Բուրդիե. Դա կլիներ միևնույն ժամանակ գիտական ու քաղաքական հարցում, այն ամենը, ինչ վերաբերում է միջազգայինին, միջազգային հարաբերություններին, իրավունքին, գրականությանը և այլն: Ինչպես նաև կադրերի թշվառ վիճակին: Տարօրինակաբար սոցիալական շարժման հույսերից մեկը կարող է այդտեղից ծագել: Ներկայումս մեր քննադատ ընկերների սուրհանդակները համակարգի մեջ գտնվող մարդիկ են ու, ընդ որում, գտնվում են շատ բարձր մակարդակներում՝ «ՖՄԻ» (FMI[117]), «ՕՄՍ» (OMC[118]), Բրյուսելում, ֆինանսների նախարարությունում: Չեմ ասում, որ դա կառավարման առումով իրենից ուժ կներկայացնի, սակայն գերազանցապես մտավոր բնույթ կրող պայքարում, որտեղ մտավորն ավելի ու ավելի կմեծանա, այդ մարդիկ ավելի նշանակալից դեր կխաղան: Նրանք պատրաստվում են փոփոխություններ մտցնել կապիտալում, որովհետև այն ունեն, ունեն նաև ինֆորմացիա և դա պետք է: Առկա էին շոշափելի բախումներ: FMI-ում, OMC-ում կային լարվածության դրսևորումներ, անգամ եթե դրանք մեզ թվում են միակուռ: Ռուս ֆորմալիստները ցույց տվեցին, որ Բ-ի շրջանում անսպասելիորեն երևան է գալիս գրական ուղղություն, որը, սակայն, փաստացի, արդեն իսկ առկա էր Ա-ի ժամանակ, անգամ եթե նրան չէին տեսել, որովհետև այն ստվերում էր մնացել գերիշխող ուղղության պատճառով: Այդ աշխարհներում գերակայող ուղղությունն այդպես է, որը կոչված է մասսայական վերակառուցման և մեկ այլ բանի համար, որն ընդդիմանում է: Եվ հիմա ասում են, որ այդ ուղղությունն ավելի շատ է լսելի. «Սա է Սիեթլի ազդեցությունը»: Բայց ոչ: Սիեթլը ուժ տվեց այդ մարդկանց: Բայց նրանք արդեն իսկ կային: Դաշտերի տեսությունը հետաքրքիր է, որովհետև հիշեցնում է, որ պայքարն ամենուր է,

[117] Fonds Monétaire International - Արժույթի միջազգային հիմնադրամ (թարգմ.):
[118] Organisation mondiale du commerce - Առևտրի համաշխարհային կազմակերպություն (թարգմ.):

հետևապես և փոքրիկ հեղափոխություններն ամենուր են: Կամ ավելի շուտ պատահում է, որ ամենուր հեղափոխություն է, ինչը շատ քիչ հավանական է: Այդ մեծ կազմակերպություններում, տարօրինակ պատճառներով, մարդիկ հաբիթուսներ են ներկրում: Նրանք կարող են լինել առաջին սերնդի, կարող են լինել բողոքական խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչներ, կարող են կապված լինել ավետարանչական եկեղեցու հետ, կան երկրորդական բաղադրիչներ, որոնք հնարավոր է ապագայում ինչ-որ բան իրագործեն: Հիմա դուք խոսում էիք մարդկանց մասին, որոնք գտնվում են երկու դաշտերում: Ենթադրում եմ, որ կա անդրպատմական օրենք, որի համաձայն՝ կործանարար մարդիկ անհարմար վիճակում գտնվողներն են, որոնք երկու դաշտերի արանքում են, որոնք վատ են զգում իրենց կաշվի մեջ, որովհետև վատ են զգում իրենց զբաղեցրած դիրքում: Դրա մասին կան վկայություններ, համեմատական պատմություն, դա շատ լավ են ցույց տալիս միջին դարերում հազարամյա շարժումները, աշխարհի վերջը գուշակող մարգարեները, կարգազուրկ վանականները: Մարդիկ, որոնք իրենց տեղում չեն:

Ժան Բոդրիար
(1929-2007)

Հելոտները և էլիտան[119]

Ապրում ենք ամբողջովին քայքայված քաղաքական իրականությունում: Մի կողմից՝ անպատժելիորեն էվոլյուցիա ապրող քաղաքական դասը, տեխնիկապես գաղտնի գործազուրկ զուգահեռ միկրո-հասարակությունը, կոչված լինելով, թվում է թե, միայն վերարտադրման. աջակողմյանի ու ձախակողմյանի այս արյունապլիղծ միությունը՝ չհրահրելով մի ամբողջ պաթոլոգիա ու արյունակցական կապի բնույթի անկումը: Մյուս կողմից՝ քաղաքական ոլորտից ավելի ու ավելի հեռացված «իրական» հասարակություն: Մեկը մյուսից ահռելի արագությամբ հեռանալով, հանրային կարծիքի ուսումնասիրման կամ ՋԼՄ-ների միջոցով միմյանց հետ կապված միակ պորտալարով՝ երկուսն էլ, թվում է, յուրաքանչյուրն իր անկյունում, քիչ թե շատ կոչված են թուլանալու կամ էլ ավիրվելու: Վիրտուալությունը, այն իմաստով, որ քաղաքական կամքը գործում է միայն հեռուստացույցների մտավոր պատկերների համաձայն և հանրային կարծիքի ուսումնասիրման միջոցով, կյանքի կոչեց գրեթե անօգուտ վերապրուկների գործառույթն ու քաղաքական թատրոնը:

Ոչ մի դիալեկտիկա այլևս չի օժանդակում երկու բևեռների փոխազդեցությանը: Այնուամենայնիվ, տնտեսության մեջ նրանք հայտնվում են միևնույն վիճակում: Մի կողմից՝ հատվածային արտադրություն ու իրական տնտեսում, մյուս կողմից՝ ահռելի չափերի հասնող վիրտուալ միջոցների շրջանառություն, որ-

[119] Տպագրվել է 1995 թ. սեպտեմբերի 4-ին «Լիբերասիոն» («Liberation») թերթում: Աղբյուրը՝ http://www.liberation.fr/auteur/2525-jean-baudrillard, այցելվել է 02.05.2017 թ., այցելվել է 20.04.2017 թ. (թարգմ.):

պես հետևանք՝ հանկարծակի փոփոխությունների արդյունք հանդիսացող բորսային և այլ տիպի ֆինանսական սնանկացումներ, որոնք իրենց հետևից չեն բերում անգամ իրական տնտեսությունների ավելի մեծ կործանումներ, որքան միմյանց տարանջատում: Նույնն է նաև քաղաքական դաշտում՝ սկանդալներ, կոռուպցիա. կազմալուծված հասարակությունում ընդհանուր դեգրադացիան հանդես է գալիս առանց որոշիչ հետևանքների, որտեղ պատասխանատվությունը (երկու կողմերի համար իրար պատասխանելու հնարավորությունը) այլևս խաղի մաս չի կազմում:

Այս զարմանալի իրավիճակը ինչ-որ տեղ շահավետ է, որովհետև այն պաշտպանում է քաղաքացիական հասարակությանը (ինչն էլ մնում է նրան անել) քաղաքական դաշտի անկայունությունից, ինչպես նաև տնտեսությանը (ինչն էլ կրկին մնում էր անել) բորսայի ռիսկերից ու միջազգային ֆինանսական վայրիվերումներից: Հայելու մեջ չզանազանվող մեկի իմունիտետը փոխադարձաբար ճնավորում է մյուսի իմունիտետը: Շատ ավելի լավ, ամբողջովին տրվելով ներկայացմանը, իրական հասարակությունը հեռու է մնում քաղաքական դասի մասը կազմելուց: Այդպիսով, վերջապես, ՋԼՄ-ներն իրենց ծառայեցնում են ինչ-որ բանի, և «հանդիսանքի հասարակությունը» իր ողջ իմաստը ձեռք է բերում այդ դաժան հեգնանքում. քաղաքական դասի շրջանակներում հանդիպող կոռուպցիայի դեպքերի միջոցով զանգվածները ներկայացնում են վերարտադրման խոչընդոտների հանդիսանքը: Ոչ մի այլ բան չի մնում, քան ինքնասրբացնել պարտավորությունը՝ երաշխավորելու մարդկանց հաճույքին ծառայող անհրաժեշտ հանդիսանքը: Քանի որ եթե նախկինում իշխանության սկզբունքը ներառում էր մահվան ռիսկ, իշխանության զրոյական մակարդակ, ապա այդ սկզբունքը ենթադրում է միայն արհեստական հրաղատություն (autodafé): Եվս մեկ անգամ մեր երախտիքի խոսքը հայտնենք այն քաղաքական գոր-

ծիչներին, որոնք մեզ ազատում են այդ դատարկ տեղը կառավարելուց, ինչը դարձավ իշխանություն, որովհետև փողերը, գործերը, ազատ ժամանակը, բարոյականությունը, մշակույթը տնօրինելու համար այն բաժին է ընկած ուրիշներին: Բարեբախտաբար խաբեբաներին, կողոպտիչներին, բորսայի գործարարներին բաժին է ընկել ցանկացած այլ խնդիր, չհաշված փիլիսոփաներին, որոնց շուրթերին՝ չորացած կաթը:

Քաղաքականության սպիտակարյունության այս սոցիալիստական հատվածը կլիներ ամենագեղեցիկ պատկերումը: Անկում ապրած քաղաքական կամքը և վիրտուալորեն ազատ իշխանության ամենաածեռնտու դիրքը, թեև լինելով անմշակ (միգուցե 68 թվից ի վեր)[120], ձախակողմյան թևն առաջ նետվեց այն գրավելու և միանգամից ունայնության մեջ կազմալուծվեց (Նույն կերպ, վիրտուալորեն արական ամենաշահեկան դիրքը չզբաղեցրած վիճակում, ունենալով անհետացած մարդու առավելությունը, ֆեմինիզմին որևէ այլ բան չի մնում, քան շտապել դրան լիազորել, և, իհարկե, այն զարնվում է ընդհատակյա քարին, որն էլ հենց իշխանության անբովանդակությունն է): Թերևս պետք է շնորհավորել Միտերանին աշխատանքի մեծ մասն իրականացնելու համար՝ հետմահու մաքրման պես հաստատելով քաղաքական ողջ համակարգում առկա խորը կոռուպցիան, մոլորեցված ու սրբած-մաքրած աստվածային ամբողջ ձախակողմյան թևը:

Եթե ձախակողմյան թևն իր իրական անկումից այն կողմ այդպես ուժասպառ եղավ, և նրա հետ միասին էլ՝ իշխանության երևակայության շուրջ ունեցած ողջ երազները, ապա բանն այն չէ, որ նա դրան ընդունակ չէ կամ էլ որ ճակատագրական սխալներ է գործել (դժբախտաբար ողջ կուտակածը լոկ հասարակ վրիպակներ էին), այլ այն, որ չնայած իր առաջադիմական

[120] Ֆրանսիայում 1968 թվականի մայիս-հունիս ամիսներին տեղի ունեցան ցույցեր, գործադուլներ, զանգվածային անկարգություններ: Շարժումը սկսվեց ուսանողների նախաձեռնությամբ, որին հետո միացան բանվորները (թարգմ.):

պատմական հիմքերի խարխլմանը (ոսկրախտին)՝ ի վիճակի չէր իր վրա վերցնել այդ անտարբերությունն ու հասարակական իներտությունը: Չիմանալով, ըստ էության, որ իր համար պատիվ է լինել ընկած, իր իդեալից ամբողջովին հրաժարված, վերջնականորեն դրանից ազատված: Աջակողմյան թևը հանկարծակիորեն նույնականացվում է հասարակական այդ իներտ ուրվականի հետ և գտնվում քաղաքականության ուղղված խորը հիշաչարության մեջ: Այս իմաստով այն ավելի շատ միջքաղաքական է, քան քաղաքական, այսինքն՝ քաղաքականապես չգործող ամենավոքր ընդհանուր հայտարարով հավասարեցված հասարակություն: Հետևաբար հենց նա է օգուտ քաղում անգործությունից: Բայց որովհետև այն իրենից նաև քաղաքական հեռանկար է ներկայացնում, ձախակողմյանների թերությունները ու աջակողմյան թևը ներդաշնակորեն համատեղվում են:

Ո՞վ է խոսում իշխանության երևակայության մասին: Երբեք էլ նման բան չի եղել:

Ինչ վերաբերում է այն իրադարձություններին, որոնք բերում են մասնատված հասարակության ի հայտ գալուն, Եվրոպան դրա լավագույն օրինակն է: Դա անգամ մեր ժամանակներում տեղի ունեցող իրադարձություն է՝ իրադարձություն ունայնության ներքո, ցնդաբանություն ունայնության ներքո: Եվրոպան տեղ չի գտնի ոչ գլխում, ոչ երազներում, ինչպիսին որ լինի, ոչ էլ բնական ոգեշնչման մեջ (համենայն դեպս ներկայիս ծրագրում) կամ էլ քաղաքական կամքի լուսնոտության, արխիվների, դիսկուրսների, ծրագրերի ու հաշվարկների տարածքում և կարծիքի արհեստական սինթեզում, որը, փորձագետների ու քաղաքական գործիչների խորամանկ իդեալիզմի համաձայն, ուղղորդված ու կառավարվող համընդհանուր ընտրական իրավունքն է: Այնպես, ինչպես ուրվագծվում է Եվրոպան, ինչ-որ տեղ այն լիովին սոցիալական ամայացման մեջ ներված սիմուլյացիայի մոդել է: Պարտադիր վիրտուալ իրականություն՝ ներկայացված որպես

թվային համադրություն (վակուումում արդեն իսկ իրագործված էր Պարսից ծոցի պատերազմը, մատուցված որպես վիրտուալ իրականություն):

Մենք դրանից կխուսափենք ոչ ավելին, քան ինտերնետից, միասնական արժույթից կամ էլ սառեցված սննդամթերքից: Նման բաները տեղի են ունենում բոլոր ձևերով, չնայած ամեն տեսակ հակասական զգացումների՝ նրանք հետամուտ են լինում իրենց ընթացքին: Կշարունակվեն ընդունվել էլիտայի, փորձագետների և ստրատեգների կողմից շրջանառվող որոշումներ առանց հաշվի առնելու հանրային կարծիքը: Մեր անզորությունը համընդհանուր է, չնայած կամ շնորհիվ անգամ այն տեղեկատվության, որով հագեցած ենք: Դա շատ լավ երևաց Ռուանդայում. բոլոր ԶԼՄ-ները հստակ կերպով նշում էին, թե որտեղ են մարդասպանները, սադրիչները (որոնք, ընդ որում, մենք էինք), մինչդեռ ամեն բան շարունակում էր իր հունով ընթանալ: Տեղեկատվությունը համընդհանուր է, սակայն որևէ ազդեցություն չի թողնում: Համաձայնությունը, կոլեկտիվ վախկոտությունն իր ալիբին գտնում են նման ընդհանուր տեղեկատվության մեջ: Վերջինս, աշխարհի բոլոր երկրներում, կոլեկտիվ բոլոր ցանկությունները, հերձադանակի դեր է կատարում՝ ընդմիշտ բաժանելով իշխանության մարմիններին և որպես հետևանք՝ սպիանալով տաք երկաթին նմանվող հակասություններում:

Հելոտների և էլիտաների այս բեկման միջև զուր և ծիծաղելի է ափսոսալը՝ քողարկվելով աստվածային ձախակողմյանների ձևերով ու իրենց ժողովրդավար մեծամտությամբ: Զուր և ծիծաղելի են մեղիայի զոհ դարձած զանգվածների հիմարությունը և ընտրական համակարգը, ինչպես վերջերս կրկնվեց Իտալիայի և Բերլուսկոնիի կամ էլ մեզ մոտ՝ Լը Պենի ու քաղաքային մարմինների դեպքում: Քաղաքական դրդապատճառով պայմանավորված՝ այս ամենը վկայում է կարճատես և պայմանական վերլուծության մասին: Ըստ էության, վերը նշվածը տեղի է ունենում

այնպես, կարծես թե «կույր» զանգվածներն ունեին ավելի «զգայուն» աչք, քան «լուսավորված» մտավորականները: Գիտակցելով, որ իշխանությունը փուչ, կոռումպացված, անհույս բան է, և որ տրամաբանության համաձայն՝ այնտեղ պետք է տեղավորել միևնույն դատարկ բնագավառի տեր մարդկանց՝ խեղկատակների, կատակերգուների ու խաբեբաների շրջանում, որոնք կատարյալ ձևով կմարմնավորեն իրավիճակը: Օրինակ՝ Բերլուսկոնիին...

Քաղաքական աշխարհն այնպիսին է, ինչպես որ այն համապատասխանում է միակ «իրական» հնարավորին, անգամ եթե այն ռացիոնալ չէ: Եթե ցանկանում են փոխել ինչ-որ բան, պետք է ընդամենը իրականությանն ուղղված ոտնձգության փորձ անել, որն արդեն այլ բան է: Բերլուսկոնիին, Լը Պենն այնպիսին են, ինչպիսին որ են, և «ռացիոնալ» զանգվածներին ուղղված ցանկացած հանդիմանություն արդյունքն է միամիտ լուսավորչականության (այնքան խորամանկ, որքան և քաղաքականապես ճշգրիտ): Միևչդեռ, կասկածից վեր է, որ մենք չենք հանդուրժում իրերի նման դրությունը, այսինքն՝ ո՛չ Բերլուսկոնիին, ո՛չ Լը Պենին, ո՛չ էլ ներկայիս քաղաքականության անկումը: Հետևաբար պետք է հաշվի առնել այս հակասական ակներևությունը, որը մենք ունենք՝ մեզ իսկ արժանի համակարգ ու նաև քիչ աննշան փաստ, որը չենք հանդուրժում: Հենց սա է անլուծելի երկընտրանքի եղանակը: Կարող են ունենալ հակամիասնական, գործադուլային, խորապես հակաֆրանսիական, ինչպես նաև լիովին հակաէլիտային, հակակաստային, հակամշակութային, հակաանվանացուցակային խորը արձագանք: Պե՞տք է զանգվածների կամ էլ արտոնյալ մեծամիտների կողքին հիմար լինել (գլխավորապես երբ հավատարիմ ծառայում են զանգվածներին): Լուծում չկա: Գտնվում ենք երկու ինտեգրացիաների միջև. մեկը՝ պոպուլիստական (կամ իսլամական և հիմնային), մյուսը՝ լիբերալ, էլիտար, ունիվերսալ, հարկադրական ժողովրդավարու-

թյան: Լուսավորականների ֆանատիզմը, որն ըստ էության այլևս չգիտի, թե ինչպիսի արժեքներին հետամուտ լինել, և մյուսի ղեպքում՝ պոպուլիստական և իսլամական ինտեգրացիան, ծառայել նախասահմանված նպատակին: Բայց ինչն էլ իր հերթին հավասար անհանդուրժողականությամբ, ուղիղ կերպով չի ճանաչում բարոյական իրավունքը և գոյություն ունենալու քաղաքականությունը: Երկուսն էլ գործառնում են անտարբեր աշխարհի նոր կարգի միևնույն ուխտի համաձայն: Այսքանից հետո, այդ երկուսի մեջտեղում, տեղ կգտնվի՞ ազատության տգետ օգտագործման համար:

Disneyworld company[121]

80-ականների սկզբին, երբ լոթարինգյան մետաղագործությունը հայտնվեց ճգնաժամի մեջ, պետական իշխանությունը մտադրվեց հարթել այդ անկումը՝ ստեղծելով եվրոպական զվարճանքների «խելամիտ» թեմայով զբոսայգի, որը նոր շունչ կհաղորդեր տարածաշրջանին: Այն պետք է կոչվեր «Շտրումֆլանդ» («Schtroumpfland»): Անկում ապրած սև մետաղագործական գործարանի տնօրենն ինքնըստինքյան դարձավ զվարճանքների այգու տնօրենը, իսկ զվարճանքի այգու տարածքում վերստին աշխատանքի անցան «Շտրումֆլանդ»-ի («Schtroumpfland») անգործ մետաղագործները: Սակայն, ավաղ, երբ զբոսայգին տարբեր պատճառներով նույնպես ստիպված եղավ իր դռները փակել այցելուների առջև, նախկին «Շտրումֆլանդ»-ի («Schtroumpfland») մետաղագործները կրկին դարձան գործազուրկ: Մռայլ է այն նախաձեռնության ճակատագիրը, որն այդ աշխատողներին աշխատաշուկայի իրական զոհեր դարձնելուց հետո վերափոխեց նրանց ազատ ժամանակի ուրվական աշխատավորների, որպեսզի ի վերջո գործազուրկ դարձնի և՛ մեկին, և՛ մյուսին:

Սակայն «Շտրումֆլանդ»-ն («Schtroumpfland») այս ամենի միայն փոքրագույն մասն էր: Դիսնեյլենդը (Disneyland) լրիվ այլ մասշտաբի նախաձեռնություն էր: Դրա մասին գաղափար կազմելու համար պետք է հասկանալ, որ Դիսնեյլենդը «անսահմանափակ» է, կցված լինելով ամերիկյան ամենամեծ հեռուստաալիքներից մեկին, որը պատրաստվում էր գնել Նյու Յորքի 42-րդ փողոցի «ամենայուղոտ» մասը էրոտիկ թեմայով զբոսայգի ստեղծելու համար, գրեթե կամ էլ ոչինչ չվոխելով, ընդամենը տեղում վերափոխեց պոռնոգրաֆիայի ամենաբարձր կենտրոնանե-

[121] Տպագրվել է «Libération» օրաթերթում, մարտի 4, 1996 թ.: Աղբյուրը՝ http://www.liberation.fr/tribune/1996/03/04/disneyworld-company_166772, այցելվել է 20.04.2017 (թարգմ.):

րից մեկը Դիսնեյլենդի մասնաճյուղի: Վերափոխել պոռնոգրաֆներին, մարմնավաճառներին, ինչպես «Շտրումֆլանդ»-ի («Schtroumpfland») մետաղագործներին՝ պատկերելով նրանց սեփական աշխարհին ըստ համանմանության, «թանգարայնության», «դիսնեյլենդության»: Իսկ գիտե՞ք, թե ինչպես «հաղթանակի հասավ» Ծոցի պատերազմի ստրատեգ գեներալ Շվարցկոֆը՝ Դիսնեյլենդում մեծ խրախճանք կազմակերպելով: Երևակայականի պալատում տեղի ունեցող այդ խրախճանքը վիրտուալ պատերազմի արժանի ավարտն էր:

Սակայն Դիսնեյի նախաձեռնությունը երևակայականից էլ հեռուն է գնում: Դիսնեյը՝ մեծն ռահվիրան, երևակայականի՝ որպես վիրտուալ իրականության նախաձեռնողը, այսօր ողջ իրական աշխարհը գրավելու ճանապարհին է, սինթեզի իր աշխարհ ինտեգրելու համար, մի ահռելի ռեալիթի շոուի ներքո, որտեղ իրականությունը ներկայացվելու էր իբրև զվարճանքների այգի: Իրականի փոխներարկումը նման է արյան փոխներարկման, միայն թե բացառությամբ, որ այս դեպքում տեղի է ունենում իրական արյան փոխներարկում դեպի վիրտուալի կենսազուրկ աշխարհ: Երևակայականի մարմնավաճառությունից հետո ահա իդեալական և պարզեցված տարբերակով իրականի պատրանքը:

Լոս Անջելեսի Դիսնեյլենդը նույնականությամբ Օռլանդո քաղաքի «Դիսնեյորլդը» (Disney-world) վերակազմելու ճանապարհին էին: Երկրորդ մակարդակի պատմական զվարճանքի պես մի բան, երկրորդ աստիճանի քառակուսի բարձրացրած սիմուլյակր: Դա միևնույն բանն է, ինչ ՍԻ-ԷՆ-ԷՆ-ն (CNN) արեց Պարսից ծոցի պատերազմի հետ՝ մի նախատիպային իրադարձություն, որը տեղի չունեցավ, որովհետև այն տեղի ունեցավ իրական ժամանակում, CNN-ի վայրկենականության ներքո: Այսօր Դիսնեյը կարող էր մեծ հաջողությամբ վերսկսել Ծոցի պատերազմը՝ որպես համաշխարհային զվարճանք: Եվրոդիսնե-

յում Կարմիր բանակի երգչախումբը նշեց Սուրբ Ծնունդը: Վիրտուալ բազմաձև աշխարհում ամեն ինչ հնարավոր է և վերամշակելի: Ամեն բան հնարավոր է ետ գնել: Ուշադրություն չէին դարձնի, թե ինչու վաղը Դիսնեյը չի գնի մարդկային գենը, ուշադրություն չեն դարձնի, որ գենետիկ զվարճանք կազմակերպելու համար մակրոմոլեկուլ կազմող էլեմենտների հաջորդականության կարգը որոշելու ճանապարհին են: Ամբողջ մոլորակը հիմնահատակ սառեցնել, ճիշտ այնպես, ինչպես արվեց իր՝ Ուոլթ Դիսնեյի հետ, այսինքն՝ սառեցնելով հեղուկ ազոտը, սպասելով իրական կյանքի չգիտես ինչ հարության: Բայց ախր գոյություն չունի այլևս իրական աշխարհ, և այն անգամ գոյություն չի ունենա Դիսնեյի համար. եթե մի օր նա զարթնի, դա իր կյանքի ամենամեծ անակնկալը կլինի: Հեղուկ ազոտի մեջ սպասելով իրական աշխարհի վիրտուալության լուսապատկերային աշխարհում՝ նա շարունակում էր գործի դնել երևակայական աշխարհը: Հետևաբար, մենք բոլորս դարձել ենք անխոս դերակատարներ (figurants): Տարբերությունն այն է, որ երբ հագնում ենք մեր թվային կոստյումները կամ որսացող սարքերը, կամ էլ սեղմում վիրտուալ իրականության ստեղները, ոտք ենք դնում կենդանի լուսապատկեր, այնինչ նա՝ հանճարեղ կարապետը՝ Դիսնեյը, ոտք դրեց մահվան վիրտուալ իրականություն:

Աշխարհի նոր կարգը դիսնեյական է: Բայց Դիսնեյը միայնակ չէ նման տեսակ գրավիչ մարդակերության մեջ: Կարող ենք տեսնել Բենետոնին իր գովազդային արշավների ընթացքում, երբ ի ցույց է դրվում մարդկային ամբողջ դրամա (ՁԻԱՀ, Բոսնիա, աղքատություն, ապարտհեյդ), իրականությունից դեպի լրատվական նոր կերպարանավորման փոխներարկում, այնտեղ, ուր աղքատությունն ու խղճահարությունը մտնում են ինտենսիվ ռեզոնանսի մեջ: Առանց երկար-բարակ մտածելու վիրտուալը շարժվում է դեպի իրականություն և դրանով իսկ պատրաստի հարված հասցնում այդ նույն իրականությանը:

Եթե այս գործընթացը կարող էր հաջողել՝ ունենալով նման ընդգրկում, բարոյականից բացի որևէ այլ քննադատություն չհնչեցնելով, առաջացնելով համայն հիացմունք, ուրեմն իրականությունն ինքնին, աշխարհն ինքնին, կլոնների իր ամբողջ խելահեղ գործունեությամբ հանդերձ արդեն վերափոխվում է մի ինտերակտիվ ներկայացման, գաղափարների Լունապարկի պես մի բանի, տեխնիկաների, աշխատությունների, գիտելիքի, մահվան և կործանման՝ ունակ կլոնավորվելու և հարություն առնված լինելու մանկության Երևակայության թանգարանում, Տեղեկատվության վիրտուալ թանգարանում:

Բացի դրանից՝ անօգուտ է փնտրել տեղեկատվական վիրուսներ, մենք բոլորս գտնվում ենք վիրուսային ցանցում, և հենց ինքը տեղեկատվությունն է, որ վիրուս է՝ սեռական ճանապարհով առայժմ չփոխանցելի, բայց թվային եղանակով՝ շատ ավելի արդյունավետ:

Այդպիսով՝ Դիսնեյից շատ ջանք չի պահանջում իրականությունը վեր հանել այնպիսին, ինչպիսին որ կա: «Ազդու ինտեգրացված», կասեր Գի Դեբորը: Բայց մենք այլևս հանդիսանքի հասարակությունում չենք, որն ինքնին դարձավ մի գունեղ հասկացություն: Սա այլևս իրականությունը կեղծող հանդիսանքի վարակը չէ, այլ վիրտուալի վարակը, որը ջնջում է հանդիսանքը: Դիսնեյլենդը զվարճանքի ու հեռավորության տպավորության հետ միասին շարունակում է լինել հանդիսանք, ֆոլկլոր, մինչդեռ Դիսնեյորլդն իր շոշափելի ընդարձակման հետ միասին գործ է ունենում ոչ թե երևակայականում ընդհանրացված մետաստազի, աշխարհի ու մեր մտավոր աշխարհի կլոնավորման, այլ վիրտուալ ու վիրուսային աշխարհի հետ: Մենք այլևս պասիվ և օտարացված հանդիսատես չենք, այլ այս ահռելի ռեալիթի շոուի լիոֆիլիզացված ինտերակտիվ, սիրալիր դերակատարներ: Այն այլևս չի գործում օտարացման գունագեղ տրամաբանության, ոչ էլ մարմնականի լուսապատկերային տրամաբանության, ոչ էլ

այլևս դիվերսիայի ֆանտաստիկ տրամաբանության շրջանակներում, այլ՝ մոլեկուլային մակարդակով փոխներարկման, մեր յուրաքանչյուր բջջի վերափոխման հիման վրա: Այսպիսով՝ աշխարհի ներքին և ոչ թե արտաքին կողմին ուղղված արմատական զսպման նախաձեռնություն՝ նման այսօրվա կապիտալիստական իրականության նկատմամբ առկա կարոտախտին: Վիրտուալ իրականության անխոս դերակատարն այլևս ոչ դեբասան է, ոչ էլ հանդիսատես, նա բեմից դուրս գտնվող անպարկեշտ մեկն է:

Դիսնեյը շահում է մեկ այլ կողմից նույնպես: Չբավարարվելով ջնջել իրականը՝ առանց խորության ստեղծելով մի վիրտուալ եռաչափ պատկեր, այն ջնջում է նաև ժամանակը՝ միևնույն ճամփորդության ընթացքում սինխրոնացնելով բոլոր դարաշրջանները, միևնույն սցենարում համադրելով բոլոր մշակույթները: Այդպիսով՝ նա սկիզբ է դնում իրական, ճշգրիտ, միաչափ ժամանակի՝ առանց խորության, չունենալով ոչ ներկա, ոչ անցյալ, ոչ էլ ապագա, այլ միևնույն արտաժամանակյա վիրտուալության մեջ բոլոր վայրերի, ժամանակների վայրկենական սինխրոնացում: Սխալ կամ ժամանակի կոլապս, սա էլ հենց վիրտուալի, իրական ժամանակի չորրորդ չափումն է, այն չափումը, որը, հեռու լինելով միանալու իրական եռաչափ տարածությանը, ջնջում է նրան: Այդպիսով կարող ենք ասել, որ մեկ դարում կամ հազարամյակում Անտիկ շրջանի կանացի հագուստներ պատկերող ֆիլմերը կդիտվեն իբր հռոմեական շրջանը պատկերող ֆիլմեր՝ թվագրվելով Հռոմեական կայսրության շրջանով, որպես Հին Հռոմին վերաբերող իրական վավերագրական ֆիլմեր, Մալիբուում գտնվող Պոլ Գետտիի թանգարանի պոմպեական շրջանին հատուկ վիլլայի ընդօրինակումը, ժամանակաշրջաններից շեղվելով, կխառնվի մ.թ.ա. 3-րդ դարի վիլլայի հետ (այդ թվում ներքին հարդարանքի մաս կազմող ստեղծագործություններով՝ Ռեմբրանդ, Ֆրա Անջելիկո, այս ամենը միախառնված նույն այդ ժամանակի

ոչնչացման մեջ), Լոս-Անջելեսում ֆրանսիական հեղափոխության տոնակատարությունը 1989 թվին հետահայաց ձևով կմիախառնվի իրական հեղափոխությանը:

Դե ֆակտո Դիսնեյն իրականացնում է այս անժամանակյա ուտոպիան՝ միանգամից մի քանի էկրանի վրա ներկայացնելով անցած կամ գալիք բոլոր դեպքերը, անողոքաբար խառնելով բոլոր հաջորդականությունները, ինչպիսին էլ որ դրանք հայտնվեն, կամ էլ կհայտնվեն, մեզնից բացի, մեկ այլ քաղաքակրթության մեջ: Սակայն դա արդեն մերն է: Քանի որ աստիճանաբար մեզ ավելի ու ավելի դժվար է լինում պատկերացնել իրականը, պատկերացնել Պատմությունը, ժամանակի խորությունը կամ եռաչափ տարածությունը, ինչպես նախկինում էր դժվար մեր իրական աշխարհի հեռանկարից այն պատկերացնել վիրտուալ կամ քառաչափ ձևով:

Համաշխարհայինն ու համընդհանուրը[122]

Համաշխարհայնացումն ու ընդհանրականությունը ձեռք ձեռքի տված չեն գնում, այլ ավելի շուտ հանդես են գալիս մեկը մյուսից բացառված ձևով: Համաշխարհայնացումն իր արտացոլումն է գտնում տեխնիկաների, շուկայի, զբոսաշրջության, տեղեկատվության, իսկ ընդհանրականությունը՝ արժեքների, մարդու իրավունքների, ազատության, մշակույթի, ժողովրդավարության բնագավառներում: Համաշխարհայնացումը թվում է անդարձելի, մինչդեռ ընդհանրականը, ավելի շուտ, անհետացման ճանապարհին է: Համենայն դեպս այնպիսին, ինչպիսին այն ստեղծված է արդի արևմտյան արժեհամակարգի մասշտաբում՝ համարժեքը չունենալով որևէ մեկ այլ մշակույթում: Անգամ ճապոնականի պես կենդանի ու ժամանակակից մշակույթում չկա այդ երևույթը բնորոշող եզրույթը: Բառ չեմ գտնում սահմանելու մի արժեհամակարգ, որը հավակնում է ներդաշնակել բոլոր մշակույթների ու նրանց տարբերությունների հետ, բայց և որը, զարմանալիորեն, ինքն իրեն չի համարում առնչվող ու հավակնորդ՝ միամտորեն համարելով, որ կատարելապես գերակայում է մյուս բոլորին: Մի պահ անգամ չենք պատկերացնում, որ Արևմտյանի վերաբերյալ համընդհանուրը կարող է արտահայտված լինել միայն կոնկրետ մտքով, իր յուրահատուկ արդյունքով, անշուշտ օրիգինալ, բայց ի վերջո նույնչափ պակաս արտահանելի, որքան, կարևոր չէ՝ ինչ ծագումով, մեկ այլ արդյունք: Մինչդեռ հենց այդպես էլ դա տեսնում են ճապոնացիները՝ որպես արևմտյան տիպին բնորոշ առանձնահատուկ գիծ ու հեռու այդ վերացական գաղափարի շուրջ համախմբվելուց: Հենց նրանք են, որ մի տարօրինակ հակադարձ կապով հարաբերական են դարձնում մեր

[122] Հրատարակվել է «Liberation» ամսագրում 1996 թ. մարտի 18-ին: Աղբյուրը՝ http://www.liberation.fr/tribune/1996/03/18/le-mondial-et-l-universel_165520, այցելվել է 02.05.2017 թ. (թարգմ.):

ընդհանրականն ու ներառում իրենց յուրահատկության շրջանակ:

Այս անվանն արժանի ողջ մշակույթը ընդհանրականում անհետանում է: Այն ողջ մշակույթը, որն ընդհանրականացվում է, կորցնում է իր յուրահատկությունն ու վերանում: Այդպես եղավ այն ամենի հետ, ինչը, ուժով ասիմիլացնելով, ոչնչացրինք, սակայն նույնն է նաև մեր դեպքում՝ համընդհանրականին ուղղված իր պահանջում: Տարբերությունն այն է, որ մյուսները մեռնում են իրենց յուրահատկության մեջ, ինչը գեղեցիկ մահ է, մինչդեռ մենք կմեռնենք ողջ յուրահատկության կորստից, մեր բոլոր արժեքների ոչնչացումից, ինչը ողբերգական մահ է:

Կարծում ենք, որ ցանկացած արժեքի ճակատագիրը ենթադրում է վերելք դեպի տիեզերական մակարդակ՝ չչափելով այն մահացու վտանգը, որը ստեղծում է առաջխաղացումը: Իրավամբ, դա ավելի շուտ նվազում է, քան վերելք կամ էլ արժեքի զրո աստիճանի բարձրացում:

Լուսավորության դարաշրջանում համընդհանրացումն իրականացվում էր վերևից, ըստ աճման կարգի: Այսօր դա արվում է նվազման կարգով՝ արժեքների տարածմամբ ու անորոշ ընդարձակմամբ պայմանավորված դրանց չեզոքացմամբ: Դրանք են մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և այլն... այս ամենի ընդլայնումը համապատասխանեցնելով դրանց ամենաթույլ սահմանմանը և առավելագույն էնտրոպիային[123]: Արժեքի պատճենի աստիճանը: Փաստորեն, համընդհանուրը մեռնում է համաշխարհայնացման մեջ: Համընդհանրականի դինամիկան՝ որպես տրանսցենդենտություն, որպես կատարյալ ավարտ, որպես ուտոպիա, երբ այն իրագործվում է, դադարում է լինել այնպիսին, ինչպիսին որ կա: Փոխանակման համաշխարհայնացու-

[123] Էնտրոպիա (հին հուն.՝ ἐντροπία - շրջադարձ, փոխակերպում) - բնական գիտություններում բազմաթիվ էլեմենտներից բաղկացած համակարգի անկարգավորվածության չափը (թարգմ.):

մը վերջ է դնում արժեքների համընդհանրականությանը: Դա բացառիկ մտքի հաղթանակն է ունիվերսալ մտքի նկատմամբ:

Նախ և առաջ համաշխարհայնացվում են շուկան, ամեն տեսակ փոխանակությունների ու ապրանքների խառնվածությունը, փողի հավիտենական հոսքը: Մշակութային առումով դա բոլոր նշանների ու բոլոր արժեքների խառնվածությունն է, այսինքն՝ պոռնոգրաֆիան: Քանի որ հաջորդականությունը, ամենի համաշխարհային դիֆուզիան ու չգիտես ինչ ճներով իրար միացած կապերը հենց պոռնոգրաֆիան է, որ կա: Սեքսուալ անպարկեշտության կարիք չկա, բավարար է այս ինտերակտիվ զուգավորումը: Այս գործընթացի վերջում այլևս որևէ տարբերություն չի լինում համաշխարհայինի ու համընդհանրականի միջև: Վերջինս ինքնին համաշխարհայնացված է. ժողովրդավարությունը, մարդու իրավունքները շրջանառվում են ճիշտ այնպես, ինչպես ցանկացած համաշխարհային մասշտաբի ապրանք՝ վառելիքը կամ կապիտալները:

Դրանից սկսած՝ կարող ենք ինքներս մեզ հարցնել՝ արդյոք համընդհանուրը դեռևս չի զիջել իր սեփական քննադատական մասը, ու արդյոք բացի դիսկուրսներում ու պաշտոնական բարոյական խրատներում հանդես գալուց՝ այն երբևէ որևէ այլ տեղ հանդես չի գալիս: Բոլոր դեպքերում, մեզ համար համընդհանուրի հայելին փշրված է (իրականում կարող ենք ինչ-որ բան տեսնել մարդկության հայելու արտապատկերման փուլում): Սակայն, միգուցե, դա ընդամենը մի հնարավորություն է, քանի որ համընդհանուրի հայելու կոտրված կտորներում յուրաքանչյուր եզակիության դրսևորում կրկին երևան է գալիս: Սպառնալիք համարվող ցանկացած բան պահպանվում է, այն ամենն, ինչ համարում էինք անհետացած, վերականգնվում[124]: Համաշխարհայ-

[124] Ուշագրավ է Ճապոնիայի օրինակը: Վերջինս, ինչ էլ որ ասեն, ոչինչ չկորցրեց իր ուրույնության հարցում (թշնամական բավարարվածություն նրանց մոտ, որոնք կորցրեցին ողջ օրիգինալությունը՝ կանխազգալով ուրիշների մոտ այդ դեգրադացիան): Շատ ավելի լավ. այդպես նա հաջողացրեց իր

նացմանն ուղղված ավելի ու ավելի եռանդուն դիմադրության ետևում առկա են մի շարք սոցիալական ու քաղաքական դիմադրություններ, որոնք կարող են թվալ ամեն գնով արխայիկ հրաժարում արդիականությունից. պետք է ընթերցել համընդհանուրի գերակայությանն ուղղված մարտահրավերի ինքնատիպ շարժման մի օրինակ: Այնպիսին, որը գերազանցում է տնտեսականն ու քաղաքականը:

Սիրտը կեղեքող ռևիզիոնիզմի պես բան է առաջանում այն ամենի նկատմամբ, ինչ վերաբերում է արդիականության փորձառությանը, առաջընթացի գաղափարին ու պատմությանը. ոչ միայն հրաշալի համաշխարհային տեխնոկառուցվածքայինի մերժում, այլև համընդհանուրի նշանի ներքո բոլոր մշակույթների, բոլոր մայրցամաքների մտավոր կառուցվածքի նույնականացում: Այդ նորահայտ երևույթները, մինչև անգամ յուրահատկության այս ընդվզումը, ըստ էթնիկ, կրոնական, լեզվաբանական «լուսավորյալ» մտքի, կարող են ձեռք բերել բռնության, նորմայից շեղված, իռացիոնալ ասպեկտներ, ինչպես նաև անհատի մակարդակում, խառնվածքային ու նյարդախտական ասպեկտներ: Բայց շատ մեծ սխալ կլինի (անգամ այն, ինչը պատկերվում է «մտավորականների» մեծ մասի ու ընդհանուր ուժերի նախապատրաստման քաղաքականապես պատշաճ բարոյական դիսկուրսներում, բոլորը, մեկը մեկից ողջախոհ) այդ ամենը կատեգորիկ ձևով դատապարտել ու բոլորին անվանել պոպուլիստներ, արխայիկներ, անգամ՝ ահաբեկիչներ: Այն ամենը, ինչն այսօր համարվում է իրադարձությունների կենտրոն, արվում է ընդդեմ

աշխարհայնացումը (տեխնիկական, տնտեսական, ֆինանսական) մի քանի անգամ ավելի լավ, քան ողջ աշխարհը՝ չանցնելով ընդհանրականի միջով (բուրժուական գաղափարների անընդհատականությունը ու տնտեսական քաղաքականության ձևերը): Կարելի է անգամ ենթադրել, որ դա ընդհանրականով շփոթված չլինելու համար է, որն այդքան լավ հաջողացրեց տեխնիկապես և համաշխարհայնորեն՝ անմիջական կերպով կապելով յուրահատուկը (ծիսական իշխանությունը) ու համաշխարհայինը (վիրտուալ իշխանությունը):

համընդհանուրի, ընդդեմ այդ աբստրակտ ընդհանրականության (այդ թվում և արևմտյան արժեքներին ուղղված Իսլամի ուժգին անտագոնիզմը, որովհետև արևմտյան համաշխարհայնացման դեմ նա ամենաթեժ պայքարողներից մեկն է, համար մեկ թշնամին): Եթե դա չենք ցանկանում հասկանալ, ուրեմն կսպառվենք համընդհանուր մտքի անվերջ բազկամարտում, վստահ իր ուժի ու մաքուր խղճի և ավելի ու ավելի շատ անդրդվելի յուրահատկությունների վրա: Անգամ մեր՝ համընդհանուրի կողմից յուրացված հասարակություններում տեսնում ենք, որ այն, ինչն այդ գաղափարին զոհաբերվեց, իրականում չանհետացավ, այլ պարզապես ընդհատակ անցավ: Ու ով այսօր, ընդհակառակը, հրճվում է, ապա այն ամբողջովին, այսպես ասած, առաջադիմող պատմություն է, իր վերջնակետում լիովին բյուրեղացված էվոլյուցիոնիզմ, որը, ընդ որում, դեռ այն ժամանակ, մեր տեսադաշտից բաց թողեցինք: Այսօր այս ուտոպիան մասնատված է, ու խորքում իր մասնատումն ավելի արագ կընթանա, քան ուժով պայմանավորված ամրապնդումը:

Երեք առումներով էլ կանգնած ենք մի բարդ մեխանիզմի առաջ, առկա են փոխանակման համաշխարհայնացում, արժեքների համընդհանրություն և ճների եզակիություն (լեզուներ, մշակույթներ, խառնվածքներ, ինչպես նաև վտանգը, պատահարը, և այլն, այն ամենը, ինչը, իր օրենքի համաձայն, ընդհանրականը մերժում է որպես բացառություն կամ անոմալիա): Ուստի իրավիճակը փոխվում ու ավելի արմատական է դառնում այն չափով, ինչ չափով որ ունիվերսալ արժեքները կորցնում են իրենց հեղինակությունն ու իրենց լեգիտիմությունը: Քանի դեռ նրանք համարվում էին միջնորդավորված արժեքներ, տարբերությունների համընդհանուր մշակույթում հաջողում էին (լավ կամ վատ) առանձնահատկություններն ինտեգրել որպես տարբերություններ: Սակայն այսուհետև նրանք այլևս չեն հաջողի, քանի որ հաղթանակած համաշխարհայնացումը վերջ է տալիս բոլոր տե-

սակ տարբերություններին ու արժեքներին՝ սկիզբ դնելով կատարելապես անէական (տ)գիտության: Մեկ անգամ անհայտ կորած համընդհանրականը, մեկ անգամ էլ ունիվերսալը վտանգի ենթարկելով՝ մնում է միայն ամենազոր համաշխարհային տեխնոկառուցվածքը, որը դեմ է առնում կրկին վայրենի դարձած յուրահատկություններին ու հայտնվում ինքնահոս վիճակում:

Համընդհանրականն արձանագրեց իր պատմական հաջողությունը: Բայց այսօր, առանց այլընտրանքի առերեսված համաշխարհային նոր կարգին, մի կողմից՝ կատեգորիկ համաշխարհայնացմանը, մյուս կողմից՝ ինչպես պատահի կամ յուրահատկությունների համառ ընդվզմանը: Ազատության, ժողովրդավարության, մարդու իրավունքների գաղափարներն իրենցից շատ աղոտ պատկեր են ներկայացնում՝ լինելով միայն չքացած ընդհանրականի ուրվականներ: Ու շատ վատ ենք պատկերացնում, որ հնարավոր է սեփական մոխրից հառնել, և երևույթները կարող են կարգավորվել սովորական քաղաքական խաղով՝ արմատավորված լինելով ապակարգավորման մեջ ու հոգնոր կամ մտավոր իշխանությունից բացի՝ չունենալով որևէ այլ հիմք:

Այնինչ խաղերը փաստեր չեն, նույնիսկ եթե այլևս ոչինչ չի ընթանում ընդհանրական արժեքներին համաձայն: Ընդհանրականի միջոցով դատարկության մեջ թողնված նպատակները հասան դեպի իշխանություն, ու համաշխարհայնացումը նախապես չհաղթեց: Իր լուծիչ և համասեռ ուժին դեմ հանդիման կանգնած՝ տեսնում ենք, թե ինչպես են ամենուր գլուխ բարձրացնում ոչ միայն իրարից տարբեր, այլև անտագոնիստական ու անլուծելի տարատեսակ ուժեր:

Արվեստի դավադրությունը[125]

Եթե մեզ շրջապատող պոռնոգրաֆիայում կորել է ցանկության պատրանքը, ապա ժամանակակից արվեստում՝ պատրանքի ցանկությունը: Պոռնոգրաֆիայում ցանկանալու բան այլևս չի մնացել: Բոլոր ցանկությունների զեխությունից և ազատագրումից (libération) հետո անցանք տրանսսեքսուալ վիճակին, այսինքն՝ սեքսի տրանսպարանտության[126], նշանների և պատկերների տարածք, որոնք ջնջում են նրա ցանկացած գաղտնիք ու երկիմաստությունը: Տրանսսեքսուալ այն իմաստով, որ ցանկության պատրանքի հետ այն որևէ ընդհանրություն չունի, այլ միայն՝ պատկերի հիպերիրականության հետ:

Նույնը արվեստի դեպքում, որը նույնպես կորցրեց պատրանքի ցանկությունն ի օգուտ էսթետիկ պարզունակության, և որն այդպիսով դարձավ տրանսէսթետիկ: Արվեստի պարագայում արդիականության զեխությունը կայանում էր այն զվարթության մեջ, որով տեղի էին ունենում առարկայի դեկոնստրուկցիան ու պատկերումը: Այդ փուլում էսթետիկ պատրանքը դեռևս շատ ուժեղ էր, ինչպես և սեքսում ցանկության պատրանքը: Արվեստում ցանկության բոլոր ձևերով անցնող սեռական էներգիայի տարբերակումը համապատասխանում էր իրականության էներգիայի դիսոցիացիային[127] (կուբիզմ, աբստրակցիա, էքսպրեսիոնիզմ), ընդ որում և՛ մեկին, և՛ մյուսին բնորոշ է ուժով դուրս հանել ցանկության գաղտնիքն ու օբյեկտի գաղտնիքը: Մինչև ցանկության բեմից այս երկու հզոր կոնֆիգուրացիաների անհե-

[125] Աղբյուրը՝ http://www.liberation.fr/tribune/1996/05/20/le-complot-de-l-art_170156, այցելվել է 03.05.2017 թ. (թարգմ.):

[126] Այստեղ՝ տրանսպարանտությունը (թափանցիկություն, հստակություն) գաղտնիքի բացակայության, պարզության, տեղեկույթի հասանելիության իմաստով. տեղեկութային թափանցիկություն (թարգմ.):

[127] Դիսոցիացիա - բաժանում, անջատում, որևէ բարդ բանի կազմալուծում բաղադրիչների ու էլեմենտների: Հոգեբանությունում՝ քեզնից անջատումը տեղի ունեցածից (թարգմ.):

տացումը պատրանքի բեմը ծառայում է հօգուտ ապաբեմականացմանը (obscénité)[128]. նույն տրանսսեքսուալությունը ու տրանսէսթետիկությունը դիտվում են միայն անողոք տրանսպարանտության ներքո: Իրականում, որպես այդպիսին պոռնոգրաֆիա էլ չկա, որովհետև վերջինս, կարելի է ասել, ամենուր է, իսկ նրա էությունը թափանցել է բոլոր վիզուալ (visuel) և հեռուստատեսային (télévisuel) տեխնոլոգիաներ: Բայց ըստ էության, միգուցե, մենք արվեստի կոմեդիա ենք խաղում, ինչպես այլ հասարակություններ խաղում են գաղափարախոսության կոմեդիա, օրինակ՝ իտալական հասարակությունը (և ոչ միայն այն) շարունակում է իշխանության կոմեդիա խաղալ, կամ էլ ինչպես մենք ինքներս խաղում ենք պոռնոյի կոմեդիա՝ գովազդելով ապաբեմականացված կանացի մարմնի պատկերներ: Անդադար մերկապարը, սեքսի այդ բաց ցնորապատկերը, սեքսուալ շանտաժը, եթե այս ամենը ճշմարիտ լիներ, իրապես անտանելի կլիներ: Բարեբախտաբար, սակայն, այն չափից դուրս ակներև է իրական լինելու համար: Տրանսպարանտությունը չափազանց հրաշալի (belle) է իրական լինելու համար: Ինչ վերաբերում է արվեստին, այն չափազանց մակերեսային է, որպեսզի իսկապես ոչնչություն[129] լինի: Այս ամենի ետևում պետք է ինչ-որ գաղտնիք

[128] Բոդրիարի տեքստերում obscénité տերմինը ոչ միայն նշանակում է «անպարկեշտություն» կամ «ցոփություն». հեղինակն այստեղ բառախաղ է անում «բեմ» (scène) բառի հետ, այսինքն՝ բեմի բացակայություն՝ անտեղիություն, ապաբեմականացում (թարգմ.):

[129] Բոդրիարը ոչինչ (nul) և ոչնչություն (nullité) բառերն օգտագործում է ինչպես իրենց ստոր (ոչնչություն, դատարկ տեղ, զրո, ապաշնորհ), այնպես էլ վեհ իմաստով (չեղյալ հայտարարում, չգոյություն, բացակայություն), ինչպես ածանցավոր նիհիլիստական Ոչնչից: Բոդրիարը ոչնչություն բառի մեջ ներդնում է կախարդական, վեհ իմաստ, որն է՝ աննշան դառնալու ունակություն, հանդես գալ որպես այդպիսին, գործ ունենալ պատրանքի, Ոչնչի, բացակայության հետ: Այս ամենը բնորոշ հատկանիշներ են ու միաժամանակ ցանկացած մեծ գեղարվեստականության գաղտնիքը (թարգմ.):

լինի: Ինչպես անամորֆոզում[130], անհրաժեշտ է ունենալ մի անկյուն, որի ներքո սեքսի ու նշանների այս ողջ աներևակայելի ցոփությունը գոնե ինչ-որ իմաստ ձեռք կբերի, սակայն այս պահին մեզ չի մնում ոչինչ, քան այս ամենը ապրել միայն հեգնական անտարբերությամբ: Կա՞ն արդյոք նման անհիրականություններում պոռնո, արվեստի նման աննշանության (insignifiance) մեջ բացասական խորհրդավորություն, մի առասպելական գաղտնիք, կամ ո՞վ գիտի մեր ճակատագրի հեգնական արտահայտումը: Եթե իսկական լինելու համար ամեն բան դառնում է չափազանց ակներև, երևի պատրանքի համար էլ է մնում ինչ-որ հնարավորություն: Ի՞նչ է թաքնվում այս կեղծ տրանսպարանտների աշխարհում: Մտածողության այլ եղանա՞կ, թե՞ վերջնական լոբոտոմիա: Արվեստը (ժամանակակից) դեռ կարող էր մաս կազմել անիծված բախտի[131], կարող էր լինել իրականության դրամատիկ այլընտրանքի պես մի բան իրենից ներկայացնելով անհիրականության ներխուժումն իրականություն: Սակայն էլ ի՞նչ կարող է նշանակել արվեստն արդեն հիպերիրական, սառը, տրանսպարանտային, գովազդային աշխարհում: Բայց ինչ կարող է նշանակել պոռնոն արդեն պոռնոգրաֆիկ աշխարհում: Հակառակ դեպքում, մենք շպրտում ենք այս իրականության վրա վերջին պարադոքսալ հայացք, որը ինքն իրեն ծիծաղում է, իր առավել հիպերռեալիստական ձևերով, ինչպես սեքսը, որը ինքն իրեն ծիծաղում է առավել էքսգիբիցիոն[132] ձևերով, ինչպես արվեստը, որը ծիծաղում է ինքն իրեն իր սեփական անհետացման վրա ամե-

[130] Անամորֆոզ (այլաձևություն) - արվեստում օպտիկական պատրանքի տեսակ, որի դեպքում հարթության վրա ինստալիացիան, քանդակը կամ պատկերն այնպես են կառուցված, որ իրենց տեսողական ամբողջական ընկալումը հնարավոր է միայն որոշակի ռակուրսից (թարգմ.):

[131] «Անիծված բախտ» - ֆրանսիացի փիլիսոփա, գրող, ձախակողմյան հայացքների տեր Ժորժ Բատայի (1897-1962) կարևորագույն պատկերներից մեկը (թարգմ.):

[132] էքսգիբիցիոն - հրապարակայնորեն մերկացող՝ սեռական օրգանները ցույց տալու հիվանդագին հակում ունեցող մարդ (թարգմ.):

նաարհեստական ձևով. դա հեգնանք է: Ամեն դեպքում, պատկերների բռնապետությունը հեգնանքի բռնապետությունն է: Բայց ինքնին այդ հեգնանքն այլևս չի առնչվում անհիծված բախտին. այն կազմում է հաղորդակից դարձած մարդկանց զանգանքների մի մասը, այդ ծածուկ և ամոթալի դավաղրության, որը, օգտագործելով ծաղրի աուրան, նկարչին կապում է ցնցված ու թերահավատ զանգվածներին: Ստացվում է, որ հեգնանքն արվեստի դավաղրության մի մասն է:

Արվեստը, խաղալով իր սեփական անհետացումն ու իր օբյեկտի անհետացումը, դեռևս մնում էր մեծ արարիչ: Բայց կարո՞ղ է արդյոք արվեստ կոչվել այն, որը, կողոպտելով իրականությունը, անվերջ զբաղվում է երկորդական վերամշակմամբ (recycler): Մինչդեռ մեծ մասամբ ժամանակակից արվեստը զբաղված է հենց դրանով, այսինքն՝ յուրացնում է տափակությունը, կորուստները, միջակությունը[133], որպես արժեք և որպես գաղափարախոսություն: Այս բոլոր անհամար ինստալիացիաներում, պերֆորմանսներում չկա ոչինչ՝ բացի իրերի ներկայիս դրության կոմպրոմիսային խաղի ու արվեստի պատմության անցյալ բոլոր ձևերի միջև:

Անօրիգինալության, տափակության և ոչնչության դավանումը բարձրացված է գեղագիտական արժեքի կամ նույնիսկ այլանդակված գեղագիտական հաճույքի մակարդակի: Բնական է, որ այս ամբողջ միջակությունը հավակնում է դառնալ ավելի վսեմ՝ անցնելով արվեստի երկրորդ ու հեգնական մակարդակ: Բայց այս երկրորդ մակարդակում էլ այն շարունակում է մնալ նույնքան աննշան ու չնչին, ինչպես առաջինում: Անցումն էսթետիկ մակարդակի ոչինչ չի փրկում, այլ ընդհակառակը, ստաց-

[133] Այստեղ Բոդրիարը բառախաղի է դիմում: Médiocrité նշանակում է նաև անմիջականություն, ապաշնորհություն, միջակություն, տափակություն, գորշություն, ողորմելիություն (թարգմ.):

վում է կրկնակի առօրեականություն: Այս ամենը հաստատում է «Ես ոչինչ եմ, զրո՛, ոչնչությո՛ւն». և իսկապես՝ զրո (nul):

Սրանում է հենց ժամանակակից արվեստի ողջ երկդիմությունը. այն հավակնում է ոչնչության, աննշանության, անհեթեթության, ձգտում է զրոյի, երբ այն արդեն իսկ ոչինչ է: Չգտելը ոչինչ չի նշանակում, այն դեպքում, երբ արդեն այն ոչինչ է նշանակում: Հավակնել մակերեսայնության այն ժամանակ, երբ արդեն ոչ մի խորություն չկա: Իրականում ոչնչությունը գաղտնի հատկանիշ է, որին չի կարող հավակնել ով կամ ինչ պատահի: Ոչնչությունը, իսկական անիմաստությունը մարտահրավեր են իմաստին, իմաստի աղքատությանն ուղղված հաղթական մարտահրավեր: Իմաստազրկման արվեստը բացառիկ հատկություն է՝ բնորոշ միայն որոշ հազվագյուտ աշխատանքների, որոնք դրան չեն էլ հավակնում: Գոյություն ունի ինչ-որ ոչնչության նախաճեռնություն, այնպես, ինչպես Ոչնչի նվիրում, կամ Չարին հաղորդակից լինել: Բայց կան և հանցանքին հաղորդակիցներ, ոչնչության կեղծումներ, սնոբիզմ, այն ամենը, ինչ պոռնիկացնում է Ոչինչը հանուն շահույթի, ով շահադիտական նպատակներով պոռնիկանում է Չարով: Չպետք է ներողամտությամբ քաջալերել այդ կեղծարարներին: Երբ Ոչինչը հասցվում է նշանի մակարդակի, երբ Ոչնչությունը հանկարծ հայտնվում է նշանային համակարգի հենց կենտրոնում, դա արվեստի հիմնական իրադարձությունն է: Սա իրապես պոետիկ քայլ է, արարել Ոչինչ՝ նշանի ուժին հավասար. դա բացարձակապես տափակություն կամ իրականի նկատմամբ անտարբերության դրսևորում չէ, այլ ամենաիրական պատրանքը: Ուրեմն Էնդի Ուորհոլն իսկապես ոչինչ է այն իմաստով, որ նա ոչնչությունը տեղավորում է հենց կերպարի հիմքում: Անկարևորությունից ու ոչնչությունից նա այնպիսի բան է անում, որ դրանք վերածում է կերպարի ճակատագրական ռազմավարության:

Ինչպես ասում էր Բողլերը, մնացածը ոչ ավելին է, քան ոչնչության կոմերցիոն բնույթի ռազմավարություն, ինչը ոչնչությանը ապրանքի (գովազդային) տեսք, ապրանքին զգացմունքային ձև է հաղորդում: Նրանք թաքնվում են իրենց սեփական ոչնչության ու արվեստի մասին ծավալվող դատողությունների մետաստազների ետևում, որոնք առատորեն օգտագործվում են, որպեսզի ոչնչությունը դարձնեն արժեք ու բարձրացնեն գինը (այդ թվում և, միանշանակ, արվեստի շուկայում):

Ինչ-որ իմաստով դա ոչնչից էլ վատ է, քանի որ այդ ոչինչը ոչինչ էլ չի նշանակում, և այնուամենայնիվ այն գոյություն ունի՝ ինքն իրեն տրամադրելով գոյություն ունենալու բոլոր անհրաժեշտ հիմքերը: Արվեստի դավադիրների պես խելացնորությունն ավելի անհնար է դարձնում ոչնչության շուրջ որևէ քննադատական դատողություն, այլ միայն հնարավոր է ոչնչության հոժար, անհրաժեշտության դեպքում՝ պատեհ բաժանում:

Սրանում են կայանում արվեստի դավադրությունն ու նրա առաջնային տեսարանը[134]՝ բաղկացած վերնիսաժներից, ցուցադրություններից, ցուցահանդեսներից, վերականգնումներից, նվիրատվություններից ու անօրինական առք ու վաճառքից. դավադրություն, որն անհնար է բացահայտել հայտնի աշխարհներից և ոչ մեկում, որովհետև պատկերների խաղի հետևում այն թաքնվում է ցանկացած մտքից:

Ժամանակակից արվեստի երկդիմության մեկ այլ ասպեկտն այն է, որ ոչնչության բլեֆելով՝ այն ստիպում է մարդկանց գործել հակառակից ելնելով (a contrario)՝ տալով այդ ամենին վստահություն ու կարևորություն այն պատրվակով, որ բացարձակապես հնարավոր չէ, որպեսզի դա լինի այդքան ոչինչ (nul), և որ այդ ամենի ետևում պետք է որ գոնե ինչ-որ բան

[134] Առաջնային տեսարան - վաղ սեռական փորձառության վերաբերյալ մանկությունից եկող հիշելի կամ երևակայելի տեսարան՝ ամենից հաճախ ծնողների սեռական հարաբերությունները պատկերող (թարգմ.):

թաքնված լինի: Ժամանակակից արվեստը խաղում է այդ երկմտության հետ՝ հիմնավորված գեղագիտական արժեքի դատողության անհնարինության վրա, և օգտագործում այն մարդկանց մեղքի զգացումը, ովքեր դրանցից ոչինչ չեն հասկանում, կամ էլ պարզապես չեն հասկանում, որ այստեղ հասկանալու ոչինչ էլ չկա: Ու այստեղ, կրկին, իրազեկների հանցանքներն են ի հայտ գալիս:

Բայց, ըստ էության, կարող ենք նաև ենթադրել, որ այդ մարդիկ հասկացան, որ արվեստը զսպում է, որովհետև իրենց շփոթվածությամբ վկայում են ինտուիտիվ ըմբռնման գոյության մասին. լինելով իշխանության չարաշահման զոհեր, մարդկանցից թաքցնելով խաղի կանոնները՝ նրանց պարզապես հիմարացրել են[135]: Այլ կերպ ասած՝ արվեստը ներառվեց (ոչ միայն արվեստի շուկայի ֆինանսական, այլև անգամ գեղագիտական արժեքների կառավարման տեսանկյունից) իրազեկների հանցանքների գլոբալ գործընթացի մեջ: Եվ ոչ միայն արվեստը, այլև քաղաքականությունը, տնտեսությունը, տեղեկատվությունն օգտագործում է նույն մասնակցությունը ու նույն հեգնական հեզությունը իրենց «սպառողների» կողմից:

«Գեղանկարչությամբ մեր հիացումը երկարատև, հարյուրամյակներ ձգվող հարմարեցման արդյունք է, ու այն տեղի է ունենում այն պատճառներով, որոնք շատ հաճախ ոչ մի ընդհանուր բան չունեն ո՛չ արվեստի, ո՛չ էլ բանականության հետ: Գեղանկարը ստեղծեց իր ընկալողին: Ըստ էության, դա կոնվենցիոնալ[136] հարաբերություն է» (Գոմբրովիչը Դյուբուֆեին[137]): Միակ

---

[135] Ֆրանսերենով բառացի նշանակում է հոր կամքին հակառակ երեխա ունենալ (Faire un enfant dans le dos) (թարգմ.):

[136] Կոնվենցիոն (համաձայնական, պայմանագրային) - սուբյեկտիվ-իդեալիստական փիլիսոփայական հայեցակարգ (կոնցեպցիա), որի համաձայն՝ գիտական հասկացություններն ու տեսական կառուցվածքները մարդկանց համաձայնության արդյունքն են (թարգմ.):

[137] Գոմբռովիչ Վիտոլդ (1904-1969) - լեհ վիպասան, դրամատուրգ, գրող: Դյուբուֆե Ժան (1901-1985) - ֆրանսիացի նկարիչ ու քանդակագործ: Արտ

հարցը հետևյալն է՝ ինչպե՞ս կարող է կրիտիկական հիասթափության ու կոմերցիոն խելագարության պայմաններում նմանատիպ մեքենան շարունակի գործառնել: Եվ եթե այո, ապա որքա՞ն կտևեն այս պատրանքայնությունը և այս գաղտնագիտությունը (occultisme)՝ 100 տարի, 200 տարի: Կամ էլ արվեստը կստանա՞ երկրորդ, անվերջանալի կյանքի իրավունք, գաղտնի ծառայությունների նման, որոնք, ինչպես հայտնի է, արդեն վաղուց գողանալու կամ փոխանակելու արժանի գաղտնիքներ չունեն, բայց որոնք, այնուհանդերձ, ծաղկում են՝ շնորհիվ իրենց շուրջ պտտվող օգտակարության կանխակալության՝ վերածվելով առասպելական տարեգրության:

բրյուտի՝ «անմշակ», «կոպիտ» արվեստի հիմնադիր, ինչն առավելագույնս մոտ է երեխաների, ինքնուսների, հոգեկան հիվանդություն ունեցողների ու ձեռքի տակ եղած նյութերով աշխատողների սիրողական նկարչությանը (թարգմ.):

Ժան Բոդրիարն ու «Իշխանության հարցը» 1977-ին[138]

«Սպառման հասարակությունը» (1970), այնուհետև «Նշանների սպառումը» (1976[139]) գրքերի սենսացիոն հեղինակ Ժան Բոդրիարը Հուբերտ Տոնկայի հետ ստեղծեց ճշմարտությունը բարձրաձայնող Ուտոպիա (**Utopie**[140]) ամսագիրը: 2001 թվից սկսած՝ Պատաֆիզիկայի Կոլեժի (**Collège de Pataphysique**) սատրապ (**Satrape**) Ժան Բոդրիարը շարունակեց, իր աշխատություններով ու հոդվածներով խանդավառված, մտածել բախումների մասին: Չե՞ն խոսում, որ «Սիմուլյակրեր ու սիմուլյացիա»

---

[138] Աղբյուրը՝ http://www.larevuedesressources.org/jean-baudrillard-et-la-question-du-pouvoir-en-1977,1739.html, այցելվել է 20.04.2017 (թարգմ.):

[139] Սույն հոդվածը թարմացվել է 1976 թվականի տարբերակում Դանիել Գոնտիերի հրատարակմամբ *«Իրերի համակարգ»*-ից *(Gallimard* հրատարակություն*, 1968), «Օբյեկտների համակարգ. նշանների սպառումը»* վերնագրի ներքո՝ վերախմբավորված երեք այլ աշխատանքների հետ միասին:

[140] «Ուտոպիա» ամսագիրն իրենից ներկայացնում է Կացարանի մասին 65-66 պրակերի ընդլայնված արմատականացում, Թոնի Գարնիերի ուրբանիզմի խմբի աշխատանոցի սեմինարի նյութերը (Հուբերտ Տոնկայի խորհրդով, Ժան Օբերի ու Անտուան Ստնիկոյի հետ համատեղ և Ռենե Լոռոյի մասնակցությամբ)՝ ներշնչված ռադիկալ սոցիոլոգ Անրի Լըֆեվրի առօրյա կյանքի քննադատության տեսությունից, ով մեկը մյուսի հետևից բացահայտեց ինքնատիպ ու ըմբոստ մտածողների (այդ թվում և սեփական տեսությունում)՝ Գի Դեբոր (ում Միշել Բերնշտեյնը ծանոթացրեց նրա հետ), նաև Բոդրիար, ու նա հանդիպեց կոմունիստական կուսակցության շարքերում, «սոցիալական մոտեցում որդեգրած հրատարակություններում», այդպիսով, այդ հրատարակչի համար, Ժիլբեր Բաղիայի հետ միասին Ժան Բոդրիարն օժանդակում էր Մարքսի թարգմանություններին: Բացի Ժան Բոդրիարից ու Հուբերտ Տոնկայից՝ հրատարակման տնօրենից, «Ուտոպիայի» (Anthropos հրատարակություն, մայիս, 1967) առաջին համարի խմբագրական կազմի անդամներն էին Ժան Օբերը, Իզաբել Օրիկոստը, Քեթրին Քոթը, Ժան-Պոլ Յունգմանը, Ռենե Լոռոն, Անտուան Ստինկոն: Կարելի է ընդհանուր պատկերացում կազմել 11/12 գրքույկում տեղ գտած www.criticalsecret.com կայքի համանուն ամսագրի սկանավորված շարքի վերաբերյալ: Ուտոպիա ամսագրի արխիվային ամբողջական տարբերակն ու առանձին օրինակները հասանելի են Galerie Mercier et associés արվեստասրահում, հասցեն՝ 3 rue Dupont de l'Eure, 75020 Paris.

գործից (1981) սկսած՝ իր տեսություններն ազդեցին Մատրիցա[141] եռամաս ֆիլմի ռեժիսորների վրա: Ժան Բոդրիարի և Լիոնել Էրհարդի, Բերնար Նոյի, Ֆրանսուա և Թերեզ Ռիշարդների միջև կայացած այս հարցազրույցը լույս տեսավ «Իշխանության հարցը» վերնագրով 1977 թ. մայիսի 1-ին հրատարակված «Դերիվե» («*Dérive*») ամսագրի 5/6 համարում: Հարցազրույցը տեղի ունեցավ 1976 թ. Միշել Ֆուկոյի[142] «Սեքսուալության պատմության»

---

[141] Խոսքը գնում է «*Մատրիցա*» ֆիլմի մասին, որի հեղինակները նշում էին, որ ֆիլմի ոգեշնչման աղբյուր է հանդիսացել Բոդրիարի աշխատության («*Սիմուլյակրներ և Սիմուլյացիա*») անգլերեն տարբերակը. Ժան Բոդրիարը նպատակահարմար գտավ հստակորեն տեղեկացնել, միևնույն ժամանակ չծգտելով ստեղծել կոնֆլիկտային իրավիճակ, որ չկա որևէ կապ՝ բացառությամբ իր տեսության ու ֆիլմում ներկայացված մեկնաբանման միջև առկա մի կարևոր բյուրիմացության (տե՛ս 2003 թ. հունիսի 19-25, «Le Nouvel Observateur» շաբաթաթերթում տպագրված Օդ Լանսելինի «Հեղինակի հարցազրույցը» նյութը): Ինչպես նախկինում, Սիմուլյասիոնիստների արտիստական շարժման վերաբերյալ, ինչը պահանջվում էր նրանից, Նյու Յորքում:

[142] 1976 թվին վերագրելու մի տարածված եվրոպական կոնտեքստ («*Սիմվոլիկ փոխանակումն ու մահը*» աշխատության հրատարակման ժամանակ) և տպագրված 1977 թ. մայիսին, որոնք էին՝ Պորտուգալիայում Մեխակների հեղափոխությունը (1974) և հատկապես Իսպանիայում, մոռացության մատնելով գեներալ Ֆրանկոյին (1975), գալիս են արգելելու Եվրոպայում Երկրորդ համաշխարհային պատերազմին գոյություն ունեցող վերջին բռնապետությունները: Չախակողմյանների միության ֆրանսիական դեպքը ստեղծեց կառավարման իր ընդհանուր ծրագիրը՝ սկսած 1974 թ. մինչև 1981 թ. Նախագահական ընտրություններ: Ընդհակառակը, անկման հետ համեմատելով՝ Կապարային տարիների Իտալիան խրվում է քաղաքացիական պառակտման մեջ, մինչդեռ իր հեղափոխական և հետհեղափոխական պոստմոդեռնն իր ազդեցությունն է տարածում կիրառական արվեստի ոլորտների (դիզայն, ճարտարապետություն, կինո, նորաձևություն), գրականության ու մտքի վրա. մասնավորապես Ուրբինոյի սեմիոտիկայի և լեզվի միջազգային կենտրոնը, հիմնադրված հենց ֆրանսիական ու իտալական դպրոցների միջոցով (1970), ամեն ամառ տրամադրում է հանդիպումների հարթակ, որոնք զգացնել են տալիս տասնամյակի թևակոխումը, և որոնց Ժան Բոդրիարն անդամակցեց: 1977 թ. «Ուտոպիայի» առաջին համարի հրատարակումից ուղիղ տասը տարի անց Պոլ Վիրիլիոյի հավաքածուում («Քննադատական տարածությունը») Galilée հրատարակությունը լույս ընծայեց «*Մոռանալ Ֆուկոյին*» գիրքը, որը մարտահրավերի ու խզման եզրույթներով համապատասխանում է Միշել Ֆուկոյի «*Կամք առ գիտելիք*» հատորին: Ֆուկոյի աշխատությունը տպագրվեց միայն հարցազրույցի ձայնագրությունից հետո, ինչպես ասվում է համաձայնության ներկայացման

առաջին հատորի՝ *«Կամք առ գիտելիքի»* հրատարակումից քիչ առաջ: Խոսքը գնում է 2010 թ. սեպտեմբերի 17-ին և 18-ին Բրանլիի ափին գտնվող թանգարանում անցկացվող Ժան Բոդրիար Խոչընդոտներ (*Jean Baudrillard/ Traverses*)[143] միջազգային հանդիպման առիթով ունեցած նշանակալի ներդրման մասին:

Գի Դարոլ

NdLaRdR[144]. 2013 թ. դեկտեմբերի 4-ին տեղի ունեցածի թարմացումը՝ կապված Վալերի Գիյոմի *«Մի հնդեվրոպական կենսագրություն. Ժան Բոդրիարն ու Պոմպիդու կենտրոնը»* գործի հրատարակման շրջանակներում, “Le bord de l’eau, INA” հրա-

---

մեջ. իր հիմքում և ձևով Ժան Բոդրիարի համար սա հաշիվ է տալիս ինտելեկտուալ ներըմբռնմանը և գաղափարների սիմվոլիկ նպատակին (որոնց համապատասխան «Dérive»-ում տեղ գտած հրատարակումը տարբերվում էր մինչև 1977 թիվը, կարողացավ վերստին իր ողջ արդիականությամբ հանդես գալ երկու հեղինակների մոտ ու քաղաքական միջավայրում): 1977-ը նաև Բոբուրգ թանգարանի հանդիսավոր բացման տարեթիվն է, Արդյունաբերական ստեղծագործության կենտրոնի «Traverses» ամսագրի հուզումնալից երևան գալը, ինչին նպաստեց Ժան Բոդրիարը, ով, միևնույն ժամանակ, հանդիսանում էր խմբագրության առաջին անդամներից մեկը: Քանի որ Gallimard հրատարակությունում տպված *«Իրերի համակարգ»* գրքի տպագրության նախաձեռնությունը ծնունդ առավ պոստմողեռն դիզայնի ու սոցիոլոգիայի քննադատության միջավայրում, միջազգային հետաքրքրություն առաջացրեց իր աշխատանքի նկատմամբ: Առաջին հրատարակումները եղան թանգարանի կառուցման հենց սկզբից՝ 1975 թ.: No. 1 «Մահվան վայրերն ու առարկաները», Մ. Դ. Սերտո, Ժ. Բոդրիար, Ռ. Ժոլին, Ժ. Լասկո, Ռ. Մյուզիլ, Մ. Վերնե, Փիլիսոփայություն, 01/09/1975: No. 2, «Դիզայնը», Մարկ Լը Բո, Ժ. Բոդրիար, Գեղեցիկ արվեստներ, 01/11/1975 և այլն… հաջորդ տարի խմբագրական կազմին միացավ Պոլ Վիրիլիոն: Սակայն «Ուտոպիա» ամսագրում շարունակվող ռադիկալ քննադատությունը հանդես էր գալիս «Ուտոպիայի պրակ» ձևով, փոքր պրակներ, որտեղ, ի թիվս այլոց էսսեների, հայտնվեց Բոդրիարի «Լռակյաց փոքրամասնության ստվերում կամ սոցիալականի վերջը» էսսեն՝ որպես 1978 թ. տպագրված առաջին էսսեներից մեկը (քանի դեռ այդ տեքստը գրքի տեսքով չի տպագրվել, ավելի հայտնի է որպես Denoël հրատարակության կողմից հրատարակված):

[143] Բրանլիի առափնյա թանգարանում տեղի ունեցած մեծ համաժողովից հետո… Բոդրիարի վերադարձը, Օդ Լանսելին (հիշատակի միջոցառում ու Ֆրանսուա Լիվոնետի հարցազրույցը), Nouvel Observateur, Փարիզ, 2010 թ., սեպտեմբերի 24-ի շաբաթը:

[144] NdLaRdR (Note de La Revue des Ressources) (թարգմ.).

տարակություն, Պոմպիդու կենտրոն. հղում է կատարվել «*Մի հնարկելուալ կենսագրության վերաբերյալ. Ժան Բողրիարն ու Պոմպիդու կենտրոնը… Սա դեռ մեզ շատ բան ունի ասելու*» հոդվածին: Ավելին, *Ուտոպիա* ամսագրի վերաբերյալ ունեցած տեղեկության հետ միասին, փաստաթղթերի վրա հիմնված այս հարցազրույցի հրատարակումից ի վեր Սիլվեր Լոթրինջերը թարգմանեց Ժան Բողրիարի այն բոլոր տեքստերը, որոնք նա այնտեղից դուրս բերեց Հուբերտ Տոնկայի և Իզաբել Օրիկոստի համաձայնությամբ, Semiotext(e) հրատարակության շնորհիվ դրանք լույս ընծայելու նպատակով, “Utopia Deferred: Writings from Utopie (1967-1978). Jean Baudrillard”, թարգմանությունը՝ Ստյուրտ Քենդելի (հոկտեմբեր, 2010), ուղեկցված Քրեյգ Բաքլիի և Ժան-Լուի Վիոլոյի “Utopie, Texts and Projects, 1967-1978” գործով, Ժան-Մարի Կլարկի թարգմանությամբ (փետրվար, 2011):

Քեռնար Նո. Սկզբի համար մի այսպիսի հարց: Ինչ-որ առիթով ասել ես. «Իշխանություն այլևս չկա, այն նույնպես գտնվում է անկումային վիճակում»: Իշխանության զավթման դասական գաղափարում, այսինքն՝ ներգործություն ինստիտուցիոնալ մարմինների ու հանրային/ դիտարժան մեխանիզմների (պառլամենտարիզմ, նախարարություններ, ՋԼՄ...) վրա, ի՞նչ կարելի է մտածել կոմունիստների իշխանության բազմապիսի «ռազմավարությունների» մասին: Նրանք իսկապե՞ս հավատում են «իշխանության» գաղափարներին: Կամ էլ, ըստ քեզ, նրանք չե՞ն գործառնում քիչ վերին օղակներում:

Ժան Բողրիար. Գիտես, կարծում եմ՝ նրանք իշխանություն չեն ուզում: Նրանք իրենց մտահոգությունն ունեն, համենայն դեպս կուսակցությունների մակարդակում, որոնք այն վերցնելու իրական հնարավորություն ունեն, ինչպես, օրինակ, իտալերենը կամ ֆրանսերենը: Ստալինի օրոք նրանք վստահաբար իշխանության ծարավ էին, ամեն դեպքում՝ բյուրոկրատական, ավելին, քան քաղաքականության, բառիս դասական իմաստով: Ուստի,

նրանց տպավորիչ և երկարաձգված ստալինյան ռեժիմի ավարտից սկսած՝ իրենց մոտ քաղաքական ուժը թուլացավ այն պահին, երբ, կարծեք հանկարծակի, փորձեցին դառնալ ինքնավար (եվրոկոմունիզմի ռազմավարություն և այլն…), նրանք ջանադրաբար խուսափեցին հարցից, ու դա չէր կարող լինել պատահական: Պատահական չէ անխոս PCF-ի[145] բռնած դիրքը 68 թ. տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ, կամ ինչպես վերջերս PCI-ի[146] զբաղեցրած դիրքը Իտալիայում: Նրանց անհրաժեշտ էր հարցնել՝ ինչու կորցրեցին քաղաքական այդ ուժը: Փաստացի յուրաքանչյուրն էլ դրանից քիչ կորցրեց: Այս ամենից հետո այլևս շատ լավ չեն պատկերացնում, թե ուր է իշխանությունը: Ամեն դեպքում, սա խորանալու տեղ ունեցող, կարևորագույն հարց է: Պետք կլիներ հարցնել՝ ինչու կոմունիստներն ու մարքսիստներն ընդհանուր առմամբ այլևս իշխանության չեն ձգտում, ինչու այդ հռչակավոր ուժը բեկանվեց՝ հավանաբար ողջ քաղաքական ուժի կամքի վատնման պես մի բանի միջոցով: Այժմ, ինձ թվում է, իրենք իրենց ասում են, որ ինչ-որ տեղ պետք է լինի քաղաքականություն, իշխանության պես մի բան... վերցնելու կամ թողնելու: Սակայն այս վերլուծությունը հանդես է գալիս գաղափարի հակառակ կողմում, համաձայն որի՝ իշխանություն այլևս գոյություն չունի: Այնպիսի տպավորություն է, որ իրենց ռազմավարական դատողությունն ամբողջովին ներգծվում է այս պարադոքսի շրջանակներում, որը նրանք պարզորեն կգիտակցեն կամ էլ ոչ: Մտաբերում եմ Բերլինգուերին[147], ով իտալական նախընտրական քարոզարշավի ժամանակ հայտարարում էր. «Չպետք է վախենալ՝ տեսնելով, թե ինչպես են կոմունիստներն

[145] PCF (Parti Communiste Français) - Ֆրանսիայի կոմունիստական կուսակցություն (թարգմ.):
[146] PCI (Partito Comunista Italiano) - Իտալիայի կոմունիստական կուսակցություն (թարգմ.):
[147] Բերլինգուեր Էնրիկո (1922-1984) - իտալացի քաղաքական գործիչ, 1972 թ. մինչ մահը Իտալիայի կոմունիստական կուսակցության քարտուղար:

անցնում իշխանության»: Զարմանալի արտահայտություն: Սա ամեն բան կարող է նշանակել: Չպետք է վախենալ, որովհետև եթե մենք անցնենք իշխանության, ապա դա ոչինչ չի փոխի կապիտալիստական ռեժիմում, ու համենայնդեպս, դրան անցնելով՝ մենք ռիսկի չենք դիմում: Անցնելու դրան, վերցնել այն: Կամ էլ ես՝ Բերլինգերս, չեմ վախենում իշխանության անցնել: Կամ էլ լրիվ հակառակ տարբերակը. «Վախենում եմ տեսնել Իտալիայում կոմունիստներին իշխանության գլուխ անցած»: Տեսնում ենք, որ կոմունիստի համար կան վախենալու բոլոր հնարավոր պատճառները:

Քեռնար Նո. Արդյո՞ք նրանք չեն մնա գերիներ խելամիտ առասպելների համակարգի ներքո, այսինքն՝ մի աստվածաբանական հայեցակարգի իշխանության, այդ կապիտալիզմի տեսակի, որն այսօր իր ինքնազարգացմամբ և խաղով իր հակասությունների փուլում գրանցում է մշակույթի պարտադիր արդյունք:

Ժան Բոդրիար. Սա նույնպես հակասական է: Դու չես կարող իշխանության անցնել, որովհետև Կապիտալը ճգնաժամի մեջ է, ու որ չես ցանկանում արգելակել այդ ճգնաժամը: Եթե պետք է սպասել, որպեսզի Կապիտալն այլևս ճգնաժամի մեջ չլինի այն ժառանգություն վերցնելու նպատակով, ե՞րբ են ուրեմն նրանք իշխանության անցնելու: Բարի, միանշանակ է, որ Կապիտալով նրանք հետամուտ են իշխանության համաձայնագրի կնքմանը և որ հրաժեշտ են տվել հեղափոխությամբ իշխանությունը զավթելու մտքին: Փաստորեն չեն դադարում հուսալ, որ իշխանությունը նրանց կշնորհվի ինքնիշխան մարմնի կողմից, տվյալ դեպքում՝ Կապիտալի: Սակայն եթե դու սպասում ես, որ Կապիտալը կդադարեցնի իր ճգնաժամը, ապա այլևս չի լինի իշխանություն, որին հնարավոր լինի անցնել, քանի որ այդ դեպքում Կապիտալն է այն իսկում: Մի կողմից՝ Կապիտալն անփոփոխ ճգնաժամի մեջ է, մյուս կողմից՝ ինչի՞ն են սպասում կոմունիստները՝ ճգնաժամի վերջի՞ն: Եվ նրանք առաջին ասողներից

էին, որ կապիտալիզմի զարգացումը կարող է հետևել մի ճգնաժամից մյուսը: Դա զառանցող տրամաբանություն է:

Նայեք Ջանֆրանկո Սանգինետտիի[148] (ամեն դեպքում Ցեն-զոր մակագրությամբ) *«Ճշմարիտ զեկույց Իտալիայի կապիտալիզմի փրկման վերջին հնարավորությունների մասին»*[149] աշխատությունը: Ցանկացած դեպքում առաջադրված թեզն անհիմն չէ, եթե անգամ այն ինչ-որ մեծ բանի չի համապատասխանում: Կապիտալը սաղացնում է Կոմունիստական կուսակցության աղմինիստրատիվ կամ քաղաքական իշխանությունը, երբ շատ լավ զգում է, որ դրանից ազատվել այլևս չի կարող: Հետևաբար երկուսից մեկը: Կամ կապիտալը դուրս է գալիս այդտեղից ու այն կոմունիստներին իշխանություն չի տալիս, կամ էլ, եթե

---

[148] Ջանֆրանկո Սանգինետտին ծագումով գյուղացի իտալացի հեղափոխական է, Միլանի «Սիտուացիոնիստների» Միջազգային թևի անդամ (հիմնադրվել է 1969 թ.), ով միանգամից դատապարտեց դեկտեմբերի 12-ին տեղի ունեցած Պիացա Ֆոնտանայի հարձակումը (12 մահացած և 88 վիրավոր)՝ որակելով այն որպես պետական հանցագործություն, որը բխում էր Իտալիայում ծայրահեղ ձախակողմյանների ռազմականացված անվտանգությունից: Նա շարունակ սերտ հարաբերությունների մեջ է եղել Գի Դեբորի հետ, ում հետ միասին 1972 թ. ատանձնել է Միջազգային սիտուացիոնիստների լուծարումը, սակայն բաժանվել են 1978-ին գաղափարների անհամաձայնության պատճառով, հատկապես Ալդո Մորոյի գործի շուրջ: 1980 թ. Ջանֆրանկո Սանգինետտին իր *«Ահաբեկչությունը և պետությունը. առաջին անգամ հրապարակված ահաբեկչության տեսությունն ու պրակտիկան»* աշխատության մեջ (Le fin mot de l'Histoire հրատ.) երևան հանեց իտալական գաղտնի ծառայությունների դերը Կարմիր բրիգադների գործունեության ներթափանցման գործում: 1976 թ., երբ Ժան Բողրիարի հետ հարցազրույցը գրի առնվեց, Champ Libre հրատարակությունը հրատարակեց *«Ճշմարիտ զեկույց Իտալիայի կապիտալիզմի փրկման վերջին հնարավորությունների մասին»*՝ ստորագրված «Censor» մականվամբ և Գի Դեբորի կողմից թարգմանված. մի տեքստ, որը Ջանֆրանկո Սանգինետտիի կողմից, վերը նշված մականվամբ, 1975 թ. իր օրիգինալ լեզվով ուղարկվեց շուրջ 520 իտալացի ազդեցիկ մարդկանց:

[149] Debordania.com կայքում հնարավոր է անվճար գտնել Censor մականվամբ ստորագրված հեղինակի ամբողջական տեքստը: Նույն կայքում հնարավոր է ընթերցել նաև Ջանֆրանկո Սանգինետտիի ուղեկցող տեքստը, որը նա գրել է 1975 թ., ապացույցներ Censor-ի չգոյության վերաբերյալ իր իսկ հեղինակի կողմից (թարգմանությունը՝ Գի Դեբորի և հրատարակված Champ Libre հրատարակության կողմից 1976 թ.):

այդտեղից դուրս չի գալիս, Կոմունիստական կուսակցությունը շատ լավ զգուշանում է այն վերցնելուց, քանզի այն վերցնելու համար ոչ մի պայման չկա: Դա մի անհավատալի արատավոր շրջան է, որը, սակայն, Կոմունիստական կուսակցության համար սահմանում է պաշտպանության մի համակարգ, որը նրան հետ է պահում իշխանության փորձությունից: Ուրեմն, գոյությո՞ւն ունի իսկապես մի իշխանություն, որը պետք է վերցնել: Հարցը մնում է դեռևս չլուծված:

Թերեզ Ռիշար. Արդյո՞ք այս աղճատված տրամաբանության ավարտին չէր առաջանա այն միտքը, որ կառավարիչը նա չէ, ով ունի իրական իշխանություն, և որ իշխանության փոխհաջորդող խաղում նա, ով պարտվում ու մնում է ընդդիմության դաշտում, հաղթում է ի՞ր ձևով:

Ժան Բոդրիար. Գուցե, բայց նա դրանով ի՞նչ է շահում: Բացի դրանից՝ եթե այդ տեսանկյունով նայենք, ապա Իտալիայում կոմունիստները ղեկավարում են գրեթե ամբողջ երկիրը: Իմ կարծիքով՝ կառավարումը քաղաքականության ճախողումների ընդհատակյա քարն է:

Ֆրանսուա Ռիշար. Կցանկանայի քեզ մի հարց ուղղել այն կապի շուրջ, որը դու անվանում ես կողեքս, որն էլ իր հերթին կտեղավորվեր գոյություն ունեցող իշխանական ապարատից վեր, և գլխավորապես պետության ապարատից ու Կապիտալի կողեքսից, որն իր գործառմամբ ընդգրկում է իշխանության բոլոր ապարատները: Ինչպե՞ս ես հաստատում կապն ապարատի պատժողական ուժի, շահագործման ու քո տեսության միջև: Կապիտալը որպես կողե՞քս, որը միշտ գերազանցում է այդ ապարատներին:

Ժան Բոդրիար. Հմմ… Ես երբեք չեմ հաջողել քննության առնել այս մեքենան: Այդտեղ իսկապես ոչինչ չեմ տեսնում: Ես դրանից ալերգիա ունեմ:

Բեռնար Նո. Ինձ թվում է՝ այս մակարդակում միայն երկու ձև կա իշխանության շուրջ առկա մեկ կամ մի քանի հարցեր վերլուծելու համար. մեկը՝ ազատել ստեղծված այդ բարակ մազաոթքային ցանցը նուրբ միկրոռազմավարություններից, որոնք ավելի ու ավելի են աշխատում խուլ անկյուններում և սոցիալական ֆրագմենտացիայում, կարճ ասած՝ «առօրյայի» ոչ պարզ տարածությունում, որտեղ կենտրոնացած է, դիտարժան ու ֆալլոսային ձևի այս ամենակարող և այնուամենայնիվ ամենաբարենպաստ ձևով գոյություն ունեցող մեքենան՝ պետությունը քաղաքացիական հասարակությունում:

Մյուսը, օրինակ՝ Անրի Լըֆեվրը, մնում է դրան դեռ նվիրված, ըստ իս, մարքսիզմի թերությունն է՝ գերազանցապես քաղաքական իշխանության բարձրագույն ձևը տեսնել պետության մեջ: Ուստի երևում է, որ Միշել Ֆուկոն տասն անգամ ավելի արդյունավետ աշխատելով, առաջին հիպոթեզի վրա, բոլոր դեպքերում շատ ավելի հեռուն է գնում, քան պետության վերաբերյալ մարքսիստների վերլուծության բոլոր փորձերը: Քանի որ վերջիններիս մոտ, անվիճելիորեն, արգելակում է…

Ժան Բոդրիար. Այո… Լըֆեվրը հոյակապ վեր բարձրացավ: Գրողը տանի, նա ընդդիմանում էր մի բանի, ինչը կունենար կենտրոնացում, ռացիոնալ պլանավորման և կազմակերպված լիազորությունների հնարավորություն…

Ֆրանսուա Ռիշար. … Բայց մի՞թե դու կողեքսի հասկացությունից կենտրոնական նպատակ չես ստեղծում, որը մարքսիզմի տեսության շրջանակներում կլիներ մի քիչ համազոր պետությանը:

Ժան Բոդրիար. Ոչ: Այդ կողեքսն իր հետ վերցնում է մնացածը: Այն թույլ չի տալիս հստակ որոշել ատյանը, և այն իր զարգացման մեջ հանդես է գալիս որպես բոլոր ատյանների կործանիչ: Կապիտալը, կոչենք այդպես, կապված չէ բացահայտ ատյանների հետ: Այն հավերժորեն տրված չէ, այնպես, ինչպես

ինքն իրեն, այդպես չէ՞, և այն չէր կարող փոխվել: Այն կարողացավ ունենալ իր շրջանը, ասենք՝ աքսիոմային, կենտրոնացած, մրցակցային… պետական կարգավորմամբ, սակայն, դա չի հանդիսանում նրա իսկական սահմանումը: Դա ավելի շատ մի մեքենաշինություն է, որը չունի սկզբունքներ, աքսիոմներ և նպատակամիտություններ, ու ինչն այսօր իսկապես որպես այդպիսին տարածվելու ճանապարհին է: Այս մեքենաշինությունն անցնում է բոլոր ինստիտուտներով, բախվում վերջիններիս կամ լայնորեն տարածվում, այդ թվում և հատկապես պետության ինստիտուտի վրա: Եթե դա նրան պետք է, ապա կարող է թույլ տալ ինքն իրեն պառակտել, անգամ ապակենտրոնացնել, եթե պետք է, և առկա է մի հարմար պահ այդպես գործելու համար: Հեղափոխության հարցում արդեն հապաղում ենք…

Ֆրանսուա Ռիշար. Փաստորեն, ձշանակում է, որ իր հետևանքներում իշխանության այս անկայուն ու զավթող պատկերացումն ավելի՞ վնասակար է, քան պետության առավել սահմանափակող և ընկալելի պատկերացումը:

Ժան Բոդրիար. Այստեղ վերադառնում ենք Ֆուկոյին: Վերջինիս մոտ խնդրի վերլուծման դասական իմաստով պետություն այլևս չկա: Նա այլևս չի փնտրում ո՛չ պատճառականություն, ո՛չ էլ նպատակամիտություն: Այս տեսանկյունից նա գերազանցեց մարքսիստական վերլուծությունը ու բոլոր նրանց, ովքեր իրեն նախորդել են: Անժխտելիորեն, Ֆուկոն վերջ դրեց վերլուծականի շարունակականության հետ էապես կապված պատմական դետերմինիզմին, որը միգուցե նախկինում ճշմարիտ էր, բայց որն այսօր շատ քիչ վերցնելու բան ունի: Ընդհակառակը, նա համարում է իշխանությունը միջանկյալ, մոլեկուլյար, բեկյալ երևույթ, բայց նա դեռևս դրան կոչում է իշխանություն, և իշխանության ձևակերպումն առայժմ սա է՝ մշտապես կենտրոնական դիրքում գտնվող:

Բեռնար Նո. Արդյո՞ք նրա մոտ սա չափազանց դասանիշային, մինչև վերջ լցված խորդանոցային էություն չէ, հանդես չի գալիս որպես ճնշման բոլոր ձևերի մի բացատրական: Արդյո՞ք սա վերջին «խոնարհումը» չէ, որը կթաքցներ գերակայության ողջ տրամաբանությունը, ոչ թե հայեցակարգ, այլ մի բաց մետաֆորա, տարբեր ինստիտուտներում պառակտված ու քամուն տված բոլոր «վատ ուժերի» շոշափելի բյուրեղացման մի կետ:

Ժան Բոդրիար. Իրոք, կարո՞ղ են դեռևս իշխանություն անվանել նրան, ինչն այդ պահին բեկված է: Կարող ենք ասել, որ իշխանության հասկացությունը վերջին սուտն է, որ հանդիպում ենք Ֆուկոյի մոտ: Դա մի տերմին է, որն իր վերլուծական դաշտում մնում է տրանսցենդենտ վիճակում, չնայած ամեն ինչի՝ հանդես գալով որպես ֆունդամենտալ կառուցվածք: Եվ վերջինս զուր է փորձում լինել խոսափող. դա միշտ նշանակում է, որ գոյություն ունեն մանիպուլյացվածներ ու մանիպուլյացնողներ, տիրապետողներ և նրանց, որոնց տիրապետում են և այլն: Որպես հասկացություն՝ իշխանության կառուցվածքը մնում է գեղեցիկ և լավը: Փոխանակ ինչ-որ չափով կենտրոնացված լինելու այն պարզապես անցավ տարօրինակ կետագծով: Միանշանակ այստեղ առկա է մարքսիստական վերլուծության հաջողությունը, բայց և վերլուծություն բառեզրի արմատական իմաստով, այսինքն՝ վերլուծել, քանդել իշխանության հասկացությունը, որն արված չէ Ֆուկոյի մոտ: Իշխանության գաղափարը ենթակա չէ այն նույն ծագումնաբանությանը, ինչ մնացածը: Դա վերջին շքերթն է, բայց որն այնուհանդերձ վերարտադրում է կառուցվածքը, կամ էլ իշխանության առասպելաբանությունը, անգամ ամենաանուրբ, մոլեկուլային մակարդակում: Եվ այստեղ, ցանկության պլանի առումով միևնույն գործընթացը կարող էին վերագրել Դելյոզին կամ Լիոտարին: Ցանկություն-գաղափարախոսությունը, որը, համապատասխանեցված, ամբողջական ձևով իր կապերը գտնում է հոգեվերլուծության մեջ, անգամ եթե նա

դրանից շեղված է, հասունանում է դելյոզյան հակահոգեվերլուծության մեջ՝ բեկված, շիզոֆրենիայի ենթարկված, քոչվորի տեսքով բալլադում ցանկությունների ներքո… Ցանկությունը մշտապես մնում է որպես մի ամբողջական իմաստ: Եվ Ֆուկոյի մոտ իշխանությունն իրենից միևնույն գործունեությունն է ներկայացնում: Այն, ինչը մյուսների մոտ վերլուծված էր, ամբողջական, դառնում է ամբողջովին ցրված, ջախջախված, բայց այնուամենայնիվ մնում որպես իշխանության կառուցվածքային կոնցեպցիա: Ճիշտ է, որ նա փոշիացնում է իշխանությունը, բայց ըստ իս՝ Ֆուկոն չէր չափում այն, ինչ այնտեղ կարող էր լինել, ոչ միայն ջախջախումը, այլև փխրունությունը, սոսկալիությունը: Կամ այլևս չկա, կամ էլ ինչ-որ բան է տեղի ունենում մահվան ու իշխանության միջև, ինչը նա չի կարողանում վերլուծել ավելին, քան այս տերմիններով:

Ֆրանսուա Ռիշար. Իշխանության գերազանցումը մահվան մեջ. չե՞նք կարող ասել, որ հատկապես իշխանության ուտոպիան իրենից ներկայացնում է անդրսահմանայինը: Ներկայումս ճգնաժամի հասկացությունը միգուցե կարող էր հանդերձյալ կյանքում ներկայացնել իշխանությունը, իր ամբողջական լուծարումը, մինչև իսկ իշխանության գաղափարի վերացումը, որը, մինչդեռ, միգուցե իսկապես գոյություն կունենա՞ր կոնկրետ ապարատներում:

Ժան Բոդրիար. Դուք վերադառնում եք իշխանության դավադրությանը, իշխանության ռազմավարությանը: Եթե անգամ դա գիտակից ռազմավարություն է, ապա այն դեռևս ընդհանրացված մարտավարություն է:

Բեռնար Նո. Կանգ առնենք Ֆուկոյի վրա: Ինքս ինձ հարց եմ տալիս՝ չկա արդյոք նրա մոտ, իր ծագումնաբանության աշխատանքի միջով իշխանության կախարդական կողի պես մի բան, ինչը մարմինների արձանագրությունում նշմարելի կլիներ: Արդյոք այս իշխանությունը չէր լինի վերջին աստիճանը, օրի-

նակ՝ ինքնին իր, չկատեգորիզացվող մի բան, ինչը թույլ կտար դիսկուրսի շրջանակներում հետևել իրեն (արխիվագետի աշխատանք), բայց և որը փաստացի կտեղավորվեր լիովին այլ վայրում: Գուցե իսկապես բախումների ճակատում… Կամ էլ արդյոք իշխանությունը չէր ունենա իր արտասովոր հերմենևտիկ փոքրիկ առանձնահատկությունը: Ուզում եմ ասել, որ նա թույլ չէր տա իրեն ընթերցել, այլ հետազոտող/դասախոսին թույլ կտար միայն վերծանել, ընդ որում, ավելի ու ավելի շատ փաստաթղթերում, քան հենց այդ նույն մարմիններում: Կարճ ասած՝ վերծանելու համար այն, ինչ մարմինների շուրջ կամ միջոցով իսկապես տեղի է ունենում, պետք է գնալ ու տեսնել պատմության կողմից կուտակված դիսկուրսի նստվածքային շերտերում, հավանաբար ավելի շատ գրադարաններում, քան բանտերում կամ անկողնախոսքերում: Այստեղ ինձ համար կա մի բան, որը կաղում է…

Ժան Բոդրիար. Միգուցե… Ամեն դեպքում, Ֆուկոյի մոտ դետերմինացված աստիճանակարգից երբեք շատ հեռու չեն գնում. չկան ստորջրյա խութեր, քանի որ տեսնում ենք միայն այն, որ նա չի առաջադրում հարցեր իշխանության ո՛չ ծագման և ո՛չ էլ վերջնական նպատակի մասին... Բայց իշխանությունն այդտեղ է՝ որպես մշտապես տրված կառուցվածք: Ինքներս մեզ հարցնում ենք, թե ի՞նչ է դեռ անում այնտեղ այդ հնարքը: Դե այդ կառուցվածքը չի կարող նրան վերցնել հակառակ կողմից, որովհետև այն կենտրոնացված էր, հետո՝ ջախջախված: Ու բացի դրանից՝ միշտ առկա է այն միտքը, որ այս Իշխանությունն այնուամենայնիվ պետք էր անհետանար: Ավելին, այն հանդիսանում է հենց Իշխանության մտադրության մասը: Բայց և այնպես Ֆուկոյի մոտ չկա մի բան, որը թույլ կտար մտածել Իշխանության որևէ դարձավոխման մասին: ...Այս կառուցվածքը մնում է ու կարող է մնալ միայն կառուցվածքային: Նույնը, թե ուզում ես, Դելյոզի մոտ ցանկությունը մնում է առանցքային գաղափար:

Այն տեղավորվում է ինտենսիվության ու եռանդի տերմիններում: Ծայրահեղ դեպքում Ֆուկոն գոնե ցանկության տնտեսմանն է դիմում: Նա դրա կարիքը չունի, ևս մեկ անգամ ձշեմ՝ Իշխանությունը համառորեն շարունակում է լինել որպես կառուցվածքային մի հատված:

Քեռնար Նո. Դելյոզի ու Լիոտարի նման մարդկանց մոտ, որոնց դիսկուրսի ռազմավարությունները (դուրս չենք գալիս դիսկուրսի և ռազմավարության շրջանակներից), ինձ թվում են, բավական տարբերվում են, իշխանությունը չէ՞ր լինի մի մեծ ուրվական, որն այնուհետև նրանց մոտ է շտապում: Դա նկատելի է քոչվորության, շեղման, ընդհանուր շիզոֆրենիայի և այլ տիպի գաղափարների շուկայի վերաբերյալ մեծ ծնծղաների հարվածներով նետված գունագեղ առասպելների մակարդակում: Ինչո՞ւ են այս տեսությունները համարվում անհետացող կետեր: Վերջապես միասին նրանք չէի՞ն ունենա փոխհատուցման որոշակի մասնակցություն:

Ժան Բոդրիար. Այո… Մի խոսքով, չգիտեմ: Կարող ենք ընդունել, որ որոշակի պահից սկսած՝ նրանք փոխհատուցեցին, երբ ստեղծում են Իշխանության և Ցանկության հիպոթեզները: Այս առումով ես համաձայն եմ: Համոզված եմ՝ բոլոր դեպքերում Ֆուկոն խուսափում է հատուցումից, սայրի վրա լինելով՝ նետվում է այնտեղ, որտեղ դա չկա՝ ո՛չ այս, ո՛չ էլ այն կողմում: Նա ընդամենն ասում է՝ ես նկարագրում եմ աշխատանքը: Եվ ինչ-որ իմաստով, եթե անգամ կարողանում ենք քննարկել օրինակները, որոնք ինքն առաջադրում է և որոնք, կարծում եմ, հաստատում են նրա վերլուծությունների իսկությունը, այն, ինչի մասին որ խոսում է, անառարկելի է: Վերջապես, այժմ ծագումնաբանությունը, չնայած ամենի, վերլուծություն է… միևնույն հարթության վրա: Այո, առկա է անգամ ձգձգվող լուծման մի փոքր դրսևորում, սակայն, այնուամենայնիվ, եթե այն նկարագրում է իշխանության միկրոմեխանիզմը, ապա դա ուղղված է ահազանգելու, որ

հենց այդ մակարդակում է անհրաժեշտ քաղաքական միջամտությունը: Հիմա մնում է հասկանալ, թե գոյություն ունի՞ արդյոք փաստացի կապ կոնկրետ բախմանն ուղղված աշխատանքի միջև, չեմ կարող ասել: Թվում է, թե գոյություն ունի: Երևի:

Ֆրանսուա Ռիշար. Երբ նկարագրում ես որոշ շարժումներ նշանների, անձերի, աշխատանքի մերժման վերաբերյալ, որոնք «Արտադրության հայելին» (“Le miroir de la porduction”)[150] գրքում կլինեին իշխանության դարձափոխում…

Ժան Բոդրիար. …Ես դրան այլևս չեմ հավատում: Ինձ համար, խոստովանում եմ, դա քիչ մտացածին է…

Լիոնել Էրհարդ. Մնալ չիշխանությունում (non-pouvoir) նույնպես իշխանության բռնած դիրք չէ՞: Հակված եմ հավատալ դրան: Իշխանության տեսողական բեկման սահմաններում հետաքրքիր կլիներ վերլուծել բոլոր տեսակ անզորությունները, որոնք, փաստորեն, լիովին կարող էին լինել իշխանության «դժբախտ պատահարներ» բառիս բոլոր իմաստներով:

Ժան Բոդրիար. Եթե կրկին Ֆուկոյին նկատի ունես, ապա կասեմ, որ իշխանության դեմ պայքարին նա հակադրում է մարմինը, հսկումը, կարգապահությունը և այլնը… Նրա մոտ դիմադրում են քառակուսի ճաղավանդակին: «Չիշխանության» հարցն այլ է: Այստեղ այն առաջ չի քաշվում: Իր ծրագրում չիշխանություն չկա, այն ներսում է, այո, միկրո մակարդակում է հանդես գալիս, սակայն ուժերի հարաբերակցության առումով հակառակ պայքարելու հեռանկար էլ գոյություն ունի: Այնպես որ չկա Ֆուկոյի քաղաքականություն ասվածը, կամ էլ, ամեն դեպքում, այն իր վերլուծության չափով չէ: Բայց ուրեմն ի՞նչ է

[150] 1973 թ. լույս տեսած Ժան Բոդրիարի գրքերից մեկը, որն իրենից ներկայացնում է մարքսիզմի համակարգային քննադատություն (թարգմ.):

«անկարողությունը»: Խոսո՞ւմ ենք արդյոք այդ հնարքի՝ անկարողության մասին...

Լիոնել Էրհարդ ....(!)

Ֆրանսուա Ռիշար. Բայց երբ խոսում ես ծայրահեղական քննադատության կամ նշանային փոխանակության մասին, ստեղծվո՞ւմ է տպավորություն, որ դա իշխանության պրոբլեմատիկայի այս կամ այն կողմում է:

Ժան Բոդրիար. Եթե ունենայի վերոնշյալ կարծիքը, ապա դա կլիներ Ֆուկոյին լրիվ հակառակ՝ ամբողջովին վկայակոչելով նրա ահռելի ծրագրին: Ըստ իս՝ դրանում իշխանություն չկա: Ի՞նչ կլիներ անկարողության հետ, եթե այն հակադրվեր իշխանությանը: Այնտեղ, ուր առկա է իշխանության կառուցվածքը, հետադարձորեն ու նույն պահին ջախջախում է ինքն իրեն: Ողջ կուտակումը վերսկսում և իսկույն դատարկվում է, և իշխանության ցանկացած կառուցվածք անմիջապես ականապատված է: Ըստ էության, ողջ կառուցվածքը որոնում է իր սեփական մահը, այդ թվում և իշխանության մահը: Ամենուրեք, և ոչ միայն յուրահատուկ խմբերում, փոքրամասնություններում: Այլ կերպ ասած՝ իշխանությունը երբեք միակողմանի կառուցվածք չէ, ինչպես դեռևս հնարավոր է դուրս բերել Ֆուկոյից: Իշխանությունը փոխանակվում է: Այն կատարում է մի շրջան, որտեղ կարող է «հետադարձ» քայլ կատարել, այսինքն՝ անցնել մի անհավանական և գայթակղման մի բարդ գործընթացի միջով, որը, փաստորեն, ցույց է տալիս, որ մի կողմից՝ գերակայողներ ու մյուս կողմից էլ՝ իշխողներ չկան: Քիչ նման զոհի ու իր դահճի կարգավիճակին:

Մշտապես գոյություն ունի իշխանության շրջանառություն ասվածը, որը փոփոխվում է: Եվ այն միայն այդպես գոյություն ունի: Ինչպես նաև այն դեպքում, երբ այլևս նվազագույն շրջանառություն չկա, անգամ իշխանություն չենք ենթադրում: Եվ այսօր, այս նվազագույն խորհրդանշական շրջանառության բացակայության մեջ, իշխանությունն անհետանում է: Ավելին: Իշ-

խաՆությունը նույնպես, սակայն կատարելապես գիտակից ներկայացմամբ որպես մի բևեռային կառուցվածք, ինչ-որ բան, որը խորհրդանշական կերպով փոփոխվում է՝ անում մի շրջան, որտեղ ամեն ինչ վերցված է, ու որտեղ գրավչությունը մի քանի անգամ ավելի զորեղ է, քան ուժերի փոխհարաբերությունները:

Քեռնար Նո. Միանշանակ այս առումով է, որ ասում ես. «Խորհրդանշականը մշտապես դուրս է քաղաքականության սահմաններից»:

Ժան Բոդրիար. Իրականում, որպես կառուցվածք՝ իշխանությունը երբեք այդտեղ հանդես չի գալիս, ինչպես որ այն կարող էր նրան նկարագրել. այն նշմարելի չէ մարդկանց կամ խմբերի, անգամ ինստիտուտների շրջանում:

Քեռնար Նո. Ուրեմն, ըստ քեզ՝ հետևապես «դասակարգերի պայքարը» չէ՞ր լինի նկարագրելի, կամ ավելի ճիշտ՝ այն չէ՞ր լինի նկարագրելի ուժերի հարաբերակցության իմաստով:

Ժան Բոդրիար. Դա պարզեցված հիպոթեզ է, որը քեզ թույլ է տալիս ընտրել ուժերի հարաբերակցության կողմը: Այս կամ մյուս կողմին մոտ գտնվելը ոչինչ չի փոխում: «Ուժերի հարաբերակցություն», ես ցանկանում եմ, բայց լավ, եթե կուզես, անշուշտ այն առկա է, սակայն պե՞տք է փոխարինել մեկ ուրիշով, ցանկանալ մյուս կողմը, եթե կա ուրիշի կողմից ճամբարի գրավում. ոչ, դա այդպես չի գործառնում: Սա նշանակում է մոռանալ, որ մշտապես ինչ-որ տեղ առկա է դարձափոխում: Դրանից սկսած՝ կարելի է միայն ստանալ իշխանության արդյունքները:

Ֆրանսուա Ռիշար. Հետևաբար չենք կարող խոսել խորհրդանշականի ճնշման մասին: Խորհրդանշային մակարդակում ուժերի հարաբերակցությունն ու պետության ապարատները կճնշե՞ն իշխանության շրջապտույտը:

Ժան Բոդրիար. Այնտեղ հնարավոր է իշխանության արդյունքի հասնել այն պահից սկսած, երբ այն առերեսվում է այդ շրջապտույտի ընդհատմանը: Ամեն ինչ կարող է միայն դարձու-

նակ լինել՝ իր սեփական մահվան շրջանի որոնումը, սեփական վերացումն այդ շրջանում: Վերջին հաշվով ինձ համար դա է խորհրդանշականը: Եթե ընտրում ես պարզեցված դիրքորոշում, որը, մի կողմից, քեզ թույլ է տալիս հրահրող դիրք բռնել՝ մնացած ամբողջը վերադարձնելով մյուս կողմին, ապա դա ոչ մի կերպ չի բացառի դարձունակության գործընթացը: Փաստացի, ցանկացած միակողմանի ռացիոնալություն նախապես դատապարտված է:

Քեռնար Նո. Հետևապես, եթե քեզ հավատանք, գոյություն ունի մեր խորհրդանշական աշխարհի ընդհանուր անթափանցելիությո՞ւն:

Ժան Բոդրիար. Այո, ամենը նպաստում է այն քողարկելուն:

Ֆրանսուա Ռիշար. Չէի՞ք կարող ասել, որ արտադրությունը կարող է «լճանալ», և որ իշխանության շրջապտույտը տրոհվելով կառաջացներ, չնայած կոմպակտ, բայցևայնպես այդ «լճացումը»:

Ժան Բոդրիար. Միշտ իշխանությունից ինչ-որ անդարձելի բան են սարքում: Սկզբունքորեն այն անմահ է (ինչպես արտադրությունը), այն կառուցվածքային է, միակուռ, վերարտադրվում է և կուտակվում... Երբեք բաց չեն թողնում անդարձելին միավորել իշխանությանը՝ արտադրությունը, հավատքը և այլն: Բայց և մեր բոլոր ինստիտուտներում ներարկելով դարձելիության նվազագույն չափաբաժին, և ամեն ինչ դառնում է անտանելի:

Ֆրանսուա Ռիշար. Հենց մեռած աշխատանքն է հիմնվում կենդանի աշխատանքի վրա: Իսկապես, քննադատությունը կտեղավորվեր կենդանի աշխատանքի կողքին, որն անդադար հոշոտված էր մեռած աշխատանքի կողմից: Մարքսի մոտ նրանց միջև ծայրահեղ անջրպետ է առկա:

Ժան Բոդրիար. Բայց մի՞թե, ինչպես դու ես նշում, չկան լճացման արդյունավետ մեթոդներ: Արդյոք տվյալ պահին հնարքի ընդհատումը, արտադրանքը, արժեքը կամ իշխանությունը

չե՞ն կարող կանգնեցնել անդարձելին արարող մեքենան: Դրանում նրանք մշտապես, ըստ երևույթին, հաջողություններ են արձանագրում: Եթե վերցնում ես տնտեսական կուտակումը, ապա այն տպավորիչ է, քանակապես սահմանելի, հետևապես մի քանի տարի է՝ նաև արժանահավատ. ներկա ենք գտնվում կուտակման՝ հետևապես և անդարձելի գործընթացին: Բայց կա՞ արդյոք իրական հաջողություն դարձունակության գործընթացի ընդհատման ու ինչ-որ ուղղությամբ անդարձելիի մեկնարկի միջև: Այդ դեպքում գտնվում ենք ցնորական համակարգում: Կամ էլ կարող եք նկարագրել տնտեսական կուտակման ֆենոմենները, մի արդյունավետ խաբեություն, իհարկե, ինչի ուղղությամբ որ այն գործառնում է: Կարող ենք տատանվել այս երկու հիպոթեզների միջև: Ամեն դեպքում, ես սա որպես անլուծելի բան եմ պատկերացնում: Անշուշտ, ամեն բան կախված է վերլուծության կանխակալությունից, սակայն եթե արտահայտվում ենք հօգուտ ցանկացած խորհրդանշականի արմատական վերլուծության, ապա դա արդեն ոչ թե հանդես է գալիս որպես կուտակում, այլ սիմուլյակր: Նաև եթե հավատում ես խորհրդանշականի անդարձելի կորստին, ուրեմն ընդունում ես մի համակարգ, որին հաջողեց նրա վրա իշխանություն ունենալ, և այսօր ամեն կերպ փաստում ենք, որ կարծելով, թե իշխանություն ենք ձեռք բերում, իրականում այդ կուտակումը շրջվում է հենց իր իսկ դեմ: Ուստի վերադառնում ենք միևնույն կետին, միայն թե հիպոթեզն է փոխվում:

Ֆրանսուա Ռիշար. Չե՞նք կարող ասել, որ արժեքի ու իշխանության ողջ կուտակումը վերջիվերջո արվում է միայն գրանցման, հաշվապահության համար: Կլիներ մի աքսիոմ, կող, որը կկոչեր իշխանության արտադրանքը, կուտակումը, յուրաքանչյուր ներկայացումն արդեն իսկ դետերմինացված կողի համեմատությամբ, ինչն էլ դիրքորոշման պես բան կունենար ողջ գործունեության վերաբերյալ. այդպիսով՝ հասարակությանը հե-

տապնդող այդ պատասխանատու գործունեությունը չէր լինի ինչպես Ֆուկոյի մոտ, իշխանության կուտակման a posteriori (հետփորձնական) շարժում: Այն անջատվում է իշխանություն ստեղծող կուտակվող ուժից, որը, հետագայում, հաշվողական գործունեության, արժեքի, հավատքի ճանաչելի դիսկո՞ւրս կապահովեր:

Ժան Բոդրիար. Ինչպե՞ս քեզ պատասխանեմ: Այն կձգտե՞ր որոնել իշխանության ծագումը, պատկերացնել մի պահ, երբ ոչինչ չի եղել, կամ եղել է՝ քիչ կամ էլ շատ: Դելյոզի մոտ նույնպես լավ է զգացվում իշխանության ծագման որոնումը: Ցանկության գաղափարը իշխանության փաթաթման պես մի բանի միջոցով: Իշխանության պես մի բանով անցնող ցանկության գաղափարը:

Բեռնար Նո. Հատկապես երբ ենթադրում ենք, նրա և էլի մի քանիսի մոտ, որ մեծ հաշվով պետք է խուսափել արժեքների կարգում ցանկացած տեսակ տեղորոշումից: Որտեղից էլ և հետապնդումը, թվային քոչվորությունը… Որովհետև այդ ամենը սկիզբ է առնում չտեղորոշվածության ցանկությունից. բանն այն է, որ պարտավորված կերպով նրանք կանխաենթադրում են այդ արժեքների ստեղծումը, բայց նախևառաջ մի հենակետ: Կարող ենք ինքներս մեզ հարցնել՝ չի՞ լինի արդյոք, մշտապես, արժեքների ճակատագրական նույնականացումը….

Ֆրանսուա Ռիշար. Սահմանին հենց հասարակության հասկացությունն է, որը վտանգի տակ է գտնվում, կարծեք թե, վերարտադրման համար հասարակությունն իշխանությունը ձեռքբերողի առասպելի հիմնադրի կարիքն ուներ (կեղծ-օրիգինալ էթնիկի միջոցով կամ այն ամենն, ինչ կցանկանանք), առանց որի այլևս չէին կարողանա լեգիտիմություն տալ որևէ տիպի հասարակությանը, մշակույթին, քաղաքակրթությանը…

Ժան Բոդրիար. Եկենք խոսենք հասարակության հասկացության մասին: Սոցիալականը մնացորդայինն է: Բայց ամեն

բան կարող է տեղի ունենալ ու ավարտվել համընդհանուր սոցիալիզացիայով: Փաստորեն, այդ թվում և նախնադարյան կոչվող հասարակությունները, որոնք, միևնույն ժամանակ, ոչ հասարակություններ են, ոչ էլ, իհարկե, պրիմիտիվներ: Սոցիալականն իսկապես մի աստիճան է, որը զարգանում է, ինչպես փափուկ շանկրը (խոց), այն արդեն իսկ ցույց է տալիս մի քարացում: Հետևաբար, եթե դու դարձունակ, շարունակական փոխանակության մեջ ես, այլևս սոցիալականի այդ «վերցնումը» գոյություն չունի:

Ֆրանսուա Ռիշար. Սա իշխանության հասկացության ցնորապատկեր մնացուկն է, և սրանից սկսած փորձել հիմնել որպես իրական իշխանություն…

Ժան Բոդրիար. Հենց այստեղ է, որ իշխանություն են ձեռք բերում… Որոշ հասարակություններում, երբ միևնույն խմբին պատկանող անհատներ խուսափում են խորհրդանշական փոխանակումից, սոցիալական մանիպուլյացիայի համար դառնում են մնացորդային ու անհասանելի: Այդպիսով՝ նրանք լիկվիդացված էին այն փաստով, որ մարգարեների պես հայտնվում էին, ովքեր նրանց տանում էին այլուր՝ ինքնասպանությամբ կյանքին վերջ տալուն: Այնուհետև մնացուկն աստիճանաբար ոչնչացվում էր. մի պահից սկսած՝ այն այլևս չկար: Հանդիպում է ուրեմն իշխանության, առաջնորդի բյուրեղացման հնարավորություն: Այսօր սոցիալականն այնտեղ է, քիչ ինչպես Ժակ Լականի լեզուն՝ դա մի կառուցվածք է, որի հետ դու նախապես մասնակիորեն կապված ես, կարծես որևէ այլ հնարավոր այլընտրանք չկա:

Քեռնար Նո. Արդյո՞ք մնացորդայինը նախևառաջ չէր մեկնաբանվի խորհրդանշական ծրագրում, և ինչ վերաբերում է մերօրյա հասարակություններին, ապա, ինչպես ասում էր Նիցշեն, նրանք ներքաշվեցին լեզվի ու արժեքների թակարդ, ու զարգացվեց մի այնպիսի գերքննադատություն, ինչը յուրաքանչյուր հաս-

կացության, արժեքի յուրաքանչյուր կետի արժեքի բարձրացման վերաբերյալ առաջացրեց մի համակարգային տարակուսանք:

Դրանից սկսած՝ արժեքի բարձրացումն այլևս անհնար է: Գալիս է մի պահ, երբ բոլոր դաշտերը լիովին մաքրված են, ուրեմն, ամեն գնով պետք է ստեղծել նորը, անհնարին նորը, ինչին վաղանցիկ, ծիծաղաշարժ կերպով հազվադեպ ենք հավատում ու ճանաչում:

Կարծեք այլևս հագեցած լեզվից, սիմվոլիզացումից հնարավոր ելքեր չկան, ինչը, ի վերջո, թվում է, երբեք չի դադարել մահանալուց:

Երևի այս էնտրոպիայից է ծագում տեսությունների ու «նոր» փիլիսոփայական դրսևորումների տարածումը, որոնք բոլորը, ուզեն, թե չուզեն վերաբերական են այդ հոգելեզվաբանական ճակատագրապաշտությանը, որը մեզ կառավարում է… փչացնում:

Բայց այդտեղից բխեցնել, որ արժեքները մեռել, անցել են… Չեր մեջքի ետևում նրանք ճգվում են ու լողում և հոտում, ինչպես Աստծո դիակը: Կարճ ասած՝ ՀԱՎԱՏՔԻՑ չենք ելնում, սակայն, անշուշտ, դրա մասին չափազանց շատ գիտենք… Միգուցե հենց ԱՅՍՏԵՂ է, որ ձախողվում է իշխանությունից բխող/իշխանության վերաբերյալ տեղի ունեցող ցանկացած դիսկուրսի հնարավորություն…

Ժան Բոդրիար. Դա ևս հույժ կարևոր է… Ըստ քեզ՝ այն ամենն, ինչ այստեղ կարողացանք ասել, հղո՞ւմ է մեկ այլ բանի ևս, քան լեզվի: Սրանում է խնդիրը… ինձ համար՝ խորհրդանշական, մեկ ուրիշի համար՝ մեկ այլ տերմինաբանություն: Արդյո՞ք սա նույնպես չի հանդիսանում լեզվական արդյունք: Անկեղծորեն, ոչինչ չգիտեմ: Շատ ավելի լավ, եթե դա կեղծ մոդել է, ու եթե դրանում խաղում ես որպես այդպիսին: Ինչպե՞ս դուրս պրծնել անգամ լեզվի թողած հետևանքներից և մանավանդ ճշգրտորեն նշված տեսությամբ: Ինձ չի թվում, որ հնարավոր է գտնել կեղծ-

ման մոդելից բացի որևէ այլ մեկը, շատ ավելի իրական սուբստանցիա, քան մնացածը…. Որտեղից էլ և իմ թերահավատությունը տեսության նկատմամբ: Չէի ասի, որ դրան այլևս չեմ հավատում, կարծում եմ, գոնե, որ այն պետք է լինի մի գերկեղծում, և խոսքը գնում է այն մասին, որպեսզի այն դառնա ավելի ավերիչ: Չենք կարող այդտեղից դուրս պրծնել: Տեսությունը լոկ միջոց է: Կողմնորոշված են մի քանի դասանիշային տերմինների ուղղությամբ՝ խորհրդանշային, դարձուածակություն… Վերջնականապես պետք է փորձել անցնել կեղծման հնարավորինս առավել պակաս ահաբեկչական կեղծ մոդելներով:

Բեռնար Նո. Եթե ճիշտ հասկացա, այն մարդկանց համար գիտական ողջ պատրանքը կանխելու նպատակով, ովքեր այն դեռևս ունեն, մեկնաբանումը մշտապես դուրս կգար քննադատության «իսկության» ցանկացած կարելիության սահմաններից. այն մշտապես կլիներ սիմուլյացիայի մեկնաբանումն ու ինքնին սիմուլյացիան, մեկնաբանումը…

Ֆրանսուա Ռիշար. Կավելացնեի հետևյալը՝ արդյոք «նիհիլիստական» դիսկուրսից այն կողմ, որն ամենը կվերլուծեր սիմուլյացիայի տերմիններով, չէինք հանդիպի մի ծրագրի, որը նիցշեյան տիպի այս ողջ կազմաքանդման (դեկոնստրուկցիայի) միջով կլիներ հենց ինքը հաստատական գերազանցման շարժումը:

Ժան Բոդրիար. Այո, ես դա լավ եմ հասկանում: Հավանաբար որովհետև գլուխներս չենք կարող ազատել նվազագույն վկայակոչումից: Իհարկե կան նման տիպի շարժումներ, սակայն չընկնելով պատրանքի գիրկը՝ ձեր կառուցած մոդելը ենթարկվում է իր իսկ օրենքին, որպեսզի պատկերած սիմուլյացիայի մեջ այն լինի դարձելի:

Այս հեռու գնացող ակտուալ տեսություններում, որոնց մասին ակնարկում էինք, և որոնք ծայրահեղական են, միանշանակ է՝ կա մի տերմին, որը մշտապես մնում է որպես տերմին, երբեք

չի ոչնչացվում, այլ մնում է այդտեղ իր ողջ ծավալով: Դա միանգամից տեսանք Ֆուկոյի և Դելյոզի առումով, օրինակ…

Ֆրանսուա Ռիշար. Միևնույն է, *«Խորհրդանշային փոխանակումը և մահը»* գրքում, երբ խոսում ես արարումից, նկարագրում ես ճգնաժամն ու աշխատանքից հրաժարումը և ներկայացնում ես հնարավորինս այն, ինչը կարող ենք քննադատորեն անվանել վարձու աշխատանք, անգամ գերազանցում…

Ժան Բոդրիար. Սա ինչպես շարժումներին (կանանց և այլն…) առնչվող ընդգրկվածության հարց է, այնպես էլ հայեցակարգերի, որը տեսական տեքստում իր տեղն է գտնում: Կարճաժամկետ կամ երկարաժամկետ կտրվածքով առկա է այս կամ այն հատվածի դարձափոխության էֆեկտ:

Դա երևում է հակաիշխանական շարժումներում, բայց համակարգն էլ ունի իր դարձափոխումը, և այն քեզ ներքաշում է իր շրջանը: Սա խաղ է, որը պետք է ընդունել: Դա մի մարտավարական հնարք է: Եվ դրանից ելնելով՝ որոշակի հատվածում կարող ենք ուղիղ նշանակետին բախվել:

Լիոնել Էրհարդ. Նույնը քո ուժերի փոխհարաբերությունների վերլուծության համար. գրավչության մեջ մշտապես գոյություն ունի ուժերի հարաբերակցությունը…

Ժան Բոդրիար. …Չեմ կարծում: Ամենուրեք հրապուրանքն ընդդիմանում է արարմանը ու ուժերի փոխհարաբերությանը, այսինքն՝ գայթակղությունը դարձունակ է, մինչդեռ նույն ինքն արարումը հետևում է անդարձելի մի գծի, ուր ուժը, ուժերի փոխհարաբերությունները և այլն հստակ տերմիններով են ի հայտ գալիս…

Լիոնել Էրհարդ. Գայթակղությունը նույնպես զենք է, ինչպես և մնացածը, ու նույնիսկ երբեմն ավելի արդյունավետ, քան մյուսները, հետևապես կրկնակի բնութագրված…

Ժան Բոդրիար. Գայթակղության այնքան հնարավոր սահմանումներ կան: Ասենք՝ ողջախոհության սահմաններում գայ-

թակղությունն անցնում է գաղափարախոսության միջով, ընդ որում, այնպիսի, որը դիտարկվում է, ըստ էության, որպես ուժերի փոխհարաբերության քողարկման գաղափարախոսական սկզբունք: Այսինքն՝ իշխանությունը կվերարտադրվի գրավչության միջոցով: Ամեն դեպքում չեն կարող դրան հոգեվերլուծական բացատրություն տալ, քանի որ գայթակղությանն այն ոչինչ չի անում: Դա բացատրվում է տնտեսագիտական տերմիններով, ներդրմամբ, լիբիդոյով, էներգետիկ հարաբերություններով: Իմ կարծիքով՝ դա այն վայրն է, որտեղ անհնար կլիներ որոշակիացնել նպատակն ու թեման, ակտիվ և պասիվ բևեռը: Այո, դա ուժ է, որը, սակայն, բացառում է ցանկացած միակողմանի մանիպուլյացիա:

Լիոնել Էրիարդ. Քո երևակայական տեղն ուրեմն…. (ծիծաղում է):

Ժան Բոդրիար. OK, դիտարկենք այն իշխանության փոխհարաբերությունների մակարդակում և չխոսենք անհատական, սիրահարված տիպի գայթակղության մասին (չնայած որ նա նույն կերպ է խաղում): Գայթակղությունը միայն հաճույքի և ցանկության արդյունք չէ: Այնտեղ, որտեղով այն անցնում է, առկա է իշխանության միակողմանի չեղարկում: Այդ իմաստով, եթե ուզում ես, ապա ողջ սեքսուալ գայթակղումը ոչնչացնում է գայթակղությունը: Այդ դեպքում խոսքը գնում է կուտակման, պոտենցիալ հաճույքի ստեղծման մասին… ինչն այլևս գայթակղություն չէ. պետք կլիներ վերականգնել հիերարխիկ կամ խորհրդանշային տիպի հասարակությունների պայմանական վերլուծությունները: Քանի որ նրանց մոտ, այն հասարակությունների միջև, որոնք հավանաբար խաղում են տիրապետողների և տիրապետվածների դերերը, ենթադրում եմ, որ արձանագրվում են գայթակղման փոխհարաբերություններ, ու այս չափով այլևս չկա տիրապետողների և տիրապետվածների խնդիրը: Մեր տրամաբանությունում այնտեղ տեսնում ենք իշխողին և ենթակային,

բայց փաստացի այն, ինչ տեղի է ունենում, այլ է: Ֆեոդալական վարչակարգում տեսնում ենք տիրակալին, ով ակնհայտ պաշտպանական փոխհարաբերությունների ներքո մեկ ուրիշից է շահ ստանում, բայց, ըստ իս, դա լրիվ այլ խաղ է:

Ֆրանսուա Ռիշար. Մտածում եմ *«Սալո կամ Սոդոմի 120 օրերը»* ֆիլմի մասին: Պազոլինին իշխանությունը վերագրում է պետությանը՝ որպես, իր ճողկալի ձևով, ճշմարտություն, որը չեն կարող (կամ էլ չե՞ն ուզում) առերես տեսնել, ինչպես Կապիտալի դեպքում:

Ժան Բոդրիար. Այսինքն՝ այդ ֆիլմում, ողջախոհության շրջանակներում, դու ունես իշխանության կրկնակի փորձառություն: Գուցե այդ պատճառով է այն անտանելի… Ինչ վերաբերում է ինձ, ես այն տեսա ու վատ տարա, որպես մի վատ առարկա: Ինչը ձշանակում է, որ դա ուժեղ ֆիլմ է: Վերջինս որոշներին դուր եկավ, որովհետև կարողացավ վերագտնել իրենց երազները: Այն պատճառով, որ իրավիճակն, ընդհանուր առմամբ, միևնույն կողմից է ներկայացվում, այս ֆիլմում գոյություն չունի այլևս հնարավոր դարձունակության նվազագույնը, իմանալ, որ այս կամ այն մարդկանց մահն այլևս չի կարող շարունակել իր ընթացքը, քանի որ մի մասին ասում ենք՝ ինչ էլ որ անելու լինեք, ինչ էլ որ ասեք, կմահանաք, ինչ վերաբերում է մյուսներին (չորս տղային), նրանք արդեն մահացել են: Հենց դարձունակության այս համայն բացակայությունն է անհանդուրժելի: Ինձ համար այս ֆիլմում չենք կարող երազներին տրվել: «Սալո»-ում հրապուրանքն ու դարձափոխումը վերացված են: Եվ այդ ֆիլմի շուրջ ես ինքս ինձ հարցրի արականի և իգականի պատմության վերաբերյալ, որն այդքան կապված է իշխանության հարցերին: Ասում են՝ իշխանությունը բացառապես տղամարդկային է՝ իրենց թույլ չտալով ծուղակը գցել իրական սեռի տերմիններով պայմանավորված արականի ու իգականի հասկացություննե-

րում: Այս ֆիլմում նոր թափ է հաղորդված տղամարդկային իշխանության հաստատմանը:

Հավանաբար որովհետև նա սոդոմիստ/սադիական է, հետևապես օրգանական իմաստով ոչ իգական, այնուամենայնիվ նա շատ ավելի հեռուն է գնում, որովհետև ցույց է տալիս, որ այս տիպի իշխանությունում իգականը (ինչը բնականաբար երբեք որևէ առնչություն չի ունեցել իրական կնոջ հետ) համակարգի դարձափոխման միակ սկզբունքն է:

Քեռնար Նո. Բայց և այնպես, «Սալո»-ում գլխավոր միտքն այն է, որ հաճույքը կարող է փոխանակվել միայն տղամարդկանց միջև: Հաճույքի շրջանառման գործում, որը փոխանցվում է նաև տարբերանշանների միջոցով, կինը միայն լրացուցիչ դեր է կատարում… Հաճույքի ամենասովորական առարկան հնարավոր է, որ (ընդ որում, ոչ թե խոսքում), ամեն դեպքում, արհամարհանքի առարկա է:

Ժան Բոդրիար. Այսինքն՝ ստացվում է, որ միայն տղամարդիկ կարող են հաճույք ստանալ. կարող են լինել կանայք, որոնք փոխարինում են առնականին:

Քեռնար Նո. Միևնույն է, ինձ թվում է, որ իսկապես դժվար է դուրս հանել արու լեզուն…

Լիոնել Էրիարդ. Ընդհանուր առմամբ, կանայք էկարտեն[151] միանգամից են գործի դնում, որը բացատրվում է ձեռքերում խաղաքարտերի գոյությամբ. միևնույն ժամանակ մատնաչափ տրամաբանություն և «անտրամաբանություն»:

Ժան Բոդրիար. Չգիտեմ: Քիչ կանանց չենք ճանաչում, որոնք կարող են այդ հաճույքը ստանալ այն պայմանով, որ դու ինձ կասես դառնալ տղամարդ: Բայց դա էլ խոսելու ձև է, եթե լիներ այն իրականացնելու այլընտրանք՝ մնալով կին, այն, ինչն

[151] Երկու հոգու միջև խաղացվող շատ հին (1810 թ.) ֆրանսիական թղթախաղի տեսակ (թարգմ.):

իսկական չէ: Եթե վերցնում ես սահմանումը որպես այդպիսին, ապա չես կարող ունենալ միայն գերակայող տղամարդկային գործունեություն և իգականի կողմից կարող ես ունենալ միայն այդ գործունեության ավերումը… Այս երկու ուտոպիաների միախառնումն անհնար է առանց տարակուսանքի: Հնարավոր չէ ունենալ մեկ ուրիշի իշխանության չարաշահմանը դեմ պատերազմ գնացող, ռացիոնալ տիպի «կնոջ ազատականացում» ասվածը:

Լիոնել Էրհարդ. Ճիշտ է: Եթե չեն տեսնում նման «խառնուրդի» առաջին փորձերը, եթե դեռ անտեսում են, թե ինչպես այն կիրականացվի, ի՞նչն է մեզ թույլ տալիս համարել այն անհնարին:

Ժան Բոդրիար. Ապացույցը, ինչ-որ ձևով, «Սալո»-ում, անտանելի է բոլոր տղամարդկանց համար, որոնք կնայեն այդ ֆիլմը: Եվ իմ կարծիքով՝ դա հենց իգականի այն չափն է, որն ունենք մեր մեջ, ու որն էլ իր հերթին մերժում է ֆիլմը: Այս ֆիլմի տեսլականում կին/տղամարդ ոչ մի տարբերություն չկա, այն չափով, ինչ չափով որ դա մի բան չէ, որը կպչում է յուրաքանչյուրի միակողմանի, բացառիկ սեռին… Դա էական է, քանի որ այն տեղափոխում է իշխանության պատմությունները՝ իմանալով, թե ինչ է նրան ասվում որպես կառույց, որպես սեռ, ֆալոս, նշանակիչ և այլն… Մի խոսքով՝ այն ամենը, ինչ տեղավորվում է նույն կողմում:

Լիոնել Էրհարդ. Եվ իսկապես թվում է, թե արևմտյան քաղաքակրթությունը, փաստորեն, պայթում է նրանից, որ իր խոսքը խլացվում է իր իսկ ֆալոսով:

Ժան Բոդրիար. Այո, հնարավոր է, որ դա լինի այնտեղ, որտեղ այն խցանվում է (ծիծաղում է): Բայց միևնույն է, ճիշտ է, որ այլ տեսակի մշակույթներում (հնդկականում, օրինակ, կամ էլ ճապոնականում, ֆեոդալական կոչվող ժամանակաշրջանում կարգավորվում են սեռերի միջև հարաբերությունները) դու չունես

ֆալոսային այս բևեռայնացումը: Տեսե՞լ եք *«Իմաստների կայքը»* ֆիլմը: Այն լիովին ընդդիմանում է «Սալո»-ին նրանով, որ մի պահ ֆիլմում տեղի է ունենում իրավիճակի կտրուկ փոփոխություն, որը մեզ տանում է ընդհուպ անեկամտաբեր մահվան: Չգիտեմ՝ արդյոք դրանից կարելի է եզրակացություն անել, բայց տեղի է ունենում մի բան, որը երբեք չեն տեսնի «Սալո»-ում, և ինչը ստեղծվում է կնոջ միջոցով:

Ֆրանսուա Ռիշար. Այդ ֆիլմում գերակայությունն այնքան տղամարդկային է, որ այն դառնում է իշխանության գաղափարի տիրապետողը: Իշխանությունը դառնում է զուտ վոլյունտարիստական «գաղափար», ցանկացած բանի ու մասնավորապես երկու սեռերի նկատմամբ կործանարար գերիշխանության դիմածռությունը:

Ժան Բոդրիար. Նրանք երբեք վերջին չեն հասնի, ինչը լավ գիտեն. դա գոնե Հեգելի պես հին է... Կարող են միայն ստիպել նրանց քանդել տիրապետման այդ հին սխեմաները: Սակայն դու իրավացի ես՝ գաղափարում մշտապես առկա է այն, որ իշխանությունը կարող է բացարձականացվել: Հետևաբար նա դա չի կարող. պարզապես պատրանք է, որ իշխանության բացարձականացման հնարավորությունը հանդես կգա միայն մի կողմում: Բայց ակներև է, որ մի միտք ստիպում է երազել Գիտակցությանը: Դա գիտակցության պատրանքն է, ինչը մեզ առաջարկում է որպես իշխանության գաղափար՝ միակողմանի, անմահ, կուտակիչ…

Լիոնել Էրհարդ. Ինչ-որ չափով սա, մենք ու բացարձակ իշխանությունը գործառնում են որպես կրոն:

Ժան Բոդրիար. Այսինքն՝ որպես Աստվա՞ծ:

Լիոնել Էրհարդ. Ես ինքս ինձ եմ հարցնում... Ինչ էլ որ լինի, դա միևնույն ապրիորիզմին դատապարտված տրանսցենդենտությունն է: Ամեն դեպքում կա մի զարգացող շարժում, որի գագաթին ի հայտ կգար առասպելական ինչ-որ բան: Ինձ համար

դա համաձայնության գործընթաց է, եթե անգամ ես քիչ ջանք եմ թափում: Դրանից ելնելով՝ ենթադրում եմ, որ այն, ինչ վերաբերում է բանականությանը, չափից դուրս մոտ դրսևորվում է կրոնասիրության շրջանակներում:

Ժան Բոդրիար. Միայն թե Աստված՝ որպես բացարձակ էություն, ի վերջո, բավական հաճախ է հանդիպում մեր քաղաքակրթությունում:

Լիոնել Էրիարդ. Չափազանց հաճախ, իրեն վերագրելով գիտականություն. կրոնասիրության որոշ դրսևորումներում Բանականությունը դառնում է ալիբի: Բանականությունը նույնպես փոփոխական է: Բավական է շրջվել, որպեսզի այնտեղ գտնես հավատք:

Ժան Բոդրիար. Արդյո՞ք իշխանությունն իսկապես ինչ-որ բանի ռացիոնալիզացման, նյութականացման, բացարձականացման ձևն է: Ավելի շուտ հակված եմ ասելու, որ քաղաքական իշխանությունը շրջանառվում էր խորհրդանշայինի նվազագույն փոխանակմամբ, բայց այսօր այն կձգտեր վերանալ:

Թերեզ Ռիշար. Ինքնին իշխանություն հասկացությունը միջնորդ չէ՞ր լինի, երբ սկսեցին հավատալ առաջընթացին:

Ժան Բոդրիար. Կարող ենք ասել, որ «ձեռքբերումն» առկա է այնտեղ, ուր իսկապես կա առաջնային կուտակման հնարավորություն: Բայց որտե՞ղ է այն սկսվում: Հիմա վերադառնանք գործող հավատքի ֆունդամենտալ նվաճումներին, պատմական շղթայի վերջի գերազանցման հնարավորությանը: Կարող ենք ենթադրել, որ եղել են առաջընթաց, իշխանություն, բայց ինչպիսի՞ն էին դրանց առաջացման իրական պայմանները: Կազմելով իշխանության «նախապատմությունը»՝ տեսնում ենք, որ այն իրականում չի եղել, այլ եղել է ազգակցության, պարտավորությունների համակարգ… Բայց այժմ դժվար է խոսել քաղաքական իշխանության մասին այն իմաստով, ինչպես որ լսում ենք դրա մասին... Կարող ենք համաձայնել, որ արևմտյան պայմա-

նական հասարակությունը ներմուծեց մի ամբողջ կողեքս, որի իշխանության եզրույթով ներկայիս ընդունումը կարող էր հաշվի առնել, բայց դա մի ժամանակաշրջանի համար, որը կտևի համեմատաբար կարճ, քանի որ արդեն մի փուլում ենք, երբ իշխանության ոսկե տարիքն ավարտված է: Հետևապես չենք կարող իրականացնել իշխանության աստիճանական ծագումնաբանություն և ասել, որ դա գոյություն է ունեցել, բայց որն այլևս չկա ու, չգործել հակառակ նրան, ինչը սովորաբար փորձում ենք՝ իմանալով քաղաքականության գոյաբանությունը:

Քեռնար Նո. Տեսնում եք ինձ ետ վերադառնալիս: Կրկնեմ ևս մեկ անգամ, որ մարդիկ համակված են նրանով, որ լեզուն ստեղծում է անփոփոխ, մեղմ արժեքներ: Ծիծաղելի է տեսնել Արևմուտքի այս տեսական ինֆլյացիան, մի գերտեսություն, որը, նախասահմանված մոդելից սկսելով, օրենքի ուժ ունենալով, պատրաստվում է նախասահմանել ընդդեմ կամ ինչպես պատահի՝ իրականացնելով մեկնաբանությունների մեկնաբանությունների մեկնաբանություններ… Գոյություն ունի խոսքի ֆունդամենտալ ճշմարտություն, ինչը քննադատական դրույթներով հաստատում կամ կազմաքանդում են, կամ էլ որից արմատապես հրաժարվում ենք (նիհիլիզմը մշտապես գործառնում է որպես բացասական աստվածաբանություն): Եվ այդ քաղաքակրթությունը, նախասկզբնական լոգոսով, որում կգրվեր իշխանության բոլոր հնարավոր դրսևորումների կողը, հավանաբար սա է Արևմուտքի միակ հնարավոր սահմանումը: Քանի որ այն իսկապես միակն է, որի իշխանության շուրջ առկա դիսկուրսներն էականորեն ավելի շատ գործառնում են այդ շարժիչ ցանկության, քան թե, իսկն ասած, իմացության: Սեքսի, քաղաքական տնտեսագիտության, իրավունքի, արվեստի շուրջ ճշմարիտ արտահայտվելու ցանկություն: Եվ սրան հետևում է մարքսիստական ծագումնաբանությունը, որն իրեն է վերագրում «ունիվերսալության» իրավունքը, նորից սերտորեն աչքի զարնեց մետաֆիզիկական մեխանիզմի ծայրաստիճան ճիշտ և բացարձակ լոգոսի միջոցով: Այդ քաղա-

քակրթության սոցիոհասարակական վերաբերմունքը (որը հիմքում ենթադրում է քաղաքականության ֆունդամենտալ ծագումնաբանություն) լոկ (վերա) ճանաչում է այն, որ ամենը լեզվի մեջ ու լեզուն Ամենն է՝ բայց և, այնուհանդերձ, հաստատելով վերջին ավելորդաբանությունը, որ ոչ որոշակիորեն, նպատակներն այլուր են, որ բոլորը խաղացվում են ու նորից ամրապնդվում են «լեզվի սահմաններից դուրս»:

Ֆրանսուա Ռիշար. Դա առկա է *«Ուրոպիայում»,* որն ասում է՝ եթե գնում ենք մինչև վերլուծության վերջը, ապա բառացիորեն պետք է վերցնել փայլատակող մակերեսը, հանդիսանքի ամբողջությունը: Սիմուլյակրը պետք է լիովին լուրջ ընդունվի: Մտածում եմ բեմականացումների մասին, որոնք մեզ ներկայացնում են Գիսկարը, Շիրակը և այլոք, ու պետության ապարատի ներսում տեղի ունեցող ճգնաժամերի բոլոր պատմությունները: Արդյո՞ք այդ բեմականացումը թաքցնելու համար չէր իշխանությունը կամ ուժը կամ, հակառակը, չպե՞տք է տեսնել, որ փաստացի միայն ձևացումներ են առկա:

Ժան Բոդրիար. Սիմուլյակրի սահմանումը, թվում է, թե պետք չէ բացարձակականացնել: Տվյալ պահին հենց հասկացությունը կարող է իմաստ ձեռք բերել: Օրինակ՝ կինոն համակված է պատմությամբ՝ մի նոստալգիկ հարության ձևի ներքո: Անգամ եթե պատմական նեոուրվագծումը դեռևս իր իմաստով մնում է սիմուլյակր, որտեղ պատմությունն այն է, ինչ կորսված է որպես վերաբերական, ու պետք է լցնել այդ բացը բոլոր հնարավոր վերաբերականների բոլոր ազիմուտների ոգեկոչմամբ, լինեն դրանք ֆաշիստական կամ էլ թե հեղափոխական: Ամեն ինչ բարենպաստ է պատմության այդ վերջին մասը թաքցնելու համար: Այն, ինչն այսօր առկա է քաղաքականությունում, գերազանցում է: Իրական քաղաքականությունը, եթե այն տեղ ունենար, հանդես կգար որպես հակասական խաղով մի ներկայացում: Միտումը դեպի ընդհանրացված մոդելավորումն է գնում: Այդպիսով՝ կամ ստեղծվում է սիմուլյակրի պատաֆիզիկա, կամ էլ են-

թաղրում ենք, որ աղետի տեսքով համակարգը գնում է դեպի դարձունակություն: Դրանից կգանք դեպի համակարգի տեսլականը, որը, շնորհիվ նրա, որ ցանկանում էր կուտակել, մաքսիմալացնել իշխանությունը, արժեքը և այլն, քանդվում է իր իսկ ծանրությունից: Դա ցնո՞րք է: Կամ էլ կլինե՞ր այն արդյոք հեղափոխական ուտոպիայի վերջին ցնորքը:

Ֆրանսուա Ռիշար. Արդյո՞ք սա հղում չէ աշխարհիկ իշխանությանը: Քաղաքականի, խորհրդանշայինի մահը, պատմությունից, վերջիվերջո, մեզ դեմ հանդիման է հանում իշխանության բացարձակապես պարզունակ ապարատների առաջ: Եվ մարդիկ շատ լավ գիտեն, որ միայն այդպես կարող է լինել:

Ժան Բոդրիար. Այս առումով տեսե՞լ եք *«Նախագահի մարդիկ»* ֆիլմը: Դա ձախակողմյան գաղափարի արտակարգ օրինակ է, որը հանգեցնում է սկանդալի անվավեր հայտարարմանը: …Ոչ, Watergate[152]-ը սկանդալ չէ: Գործում երբեք չի երևում, որ ճշմարտության Կապիտալը հենց Watergate-ն է ու հենց մյուսները, ընդդիմադիրները, ձախակողմյանը, որոնք ճանապարհին են բարոյապես վերականգնելու բոլոր հնարքները՝ սկանդալում գոռալով: Կապիտալիզմն իրենից միշտ էլ դա է ներկայացրել: Այն ավելի խելացի է, քան իր մատնիչները: Վիճակագրության համաձայն՝ ամերիկացիների 2/3-ը չգիտի, թե ինչ ասել է Watergate: Եվ նվազագույն չափով քաղաքականացվածների համար սա նշանակում է, որ նրանք շատ լավ գիտեն, թե ինչպիսին է գերիշխող համակարգը: Խոսքը չի գնում Ֆորդի տեղը Նիքսոնին կամ Կարտերին դնելու մասին: Փաստաթղթերի պատճենները հավաքում են ամերիկացիները, ովքեր շատ էլ լավ գիտեն, որ այլընտրանք չկա՝ համենայն դեպս այս ծրագրի վերաբերյալ և հատկապես չբարոյախոսելով Կապիտալը…

---

[152] Watergate scandal - պաշտոնական տվյալներով՝ ԱՄՆ 1972-1974 թթ. քաղաքական սկանդալ, ինչը հանգեցրեց Ռիչարդ Նիքսոնի պաշտոնաթողության (թարգմ.):

Քեռնար Նո. Թվում է, թե բուժուազիան, Կապիտալն այլևս բարոյական գիտակցում չունեն, իսկ ինչ վերաբերում է Ձախակողմյան թևին, ապա այն պարտավորվում է նրանց փոխարեն դա իր վրա վերցնել:

Ժան Բոդրիար. Պարզ է, որ Կապիտալը միշտ էլ անբարո է: Եվ նրա վրա հարձակվելու կամ այն հասկանալու համար պետք է գոնե նրա պես անբարո լինել:

Թերեզ Ռիշար. Մարդկանց ապշեցրեց ոչ թե Watergate-ի սկանդալը, այլ իշխանությունը, որով այն դատապարտվեց:

Ժան Բոդրիար. Այո, այն չափով, որ այն միևնույն միֆի մասն էր կազմում:

Քեռնար Նո. Դա բացատրվում է, հավանաբար, նաև պուրիտանական գիտակցությանը խուտուտ տալով: Պարդին՝ մի մարդ, ով երդվել է Աստվածաշնչով, ով ամեն կիրակի գնում է եկեղեցի, և ով, բացի դրանից, ԱՄՆ-ի օրենքում դավաճանում է ֆիդելիզմը[153]:

Թերեզ Ռիշար. Այս դեպքում դա միգուցե «մշակութային հեղափոխության» մոդելն է՝ կիրառված արևմտյան երկրներում իշխանության վերագոյացման տեսակի միջոցով և համար…

Ժան Բոդրիար. Ուրեմն որտե՞ղ է միտքը, համաձայն որի՝ մշտապես հնարավոր կլիներ իշխանության համակարգում սպանել իշխանությունը, այն, ինչը վերադարձվում է դարձելիությանը, անգամ եթե դա անցնում է ամերիկյան անհատի միֆով: Այդ դեպքում վերադառնում ենք համակարգ, որտեղ իշխանությունն այն է, ինչ այսօր-վաղը, պետք է սպանված լինի: Այստեղ մենք գտնվում ենք մի համակարգում, որտեղ իշխանությունն այլևս չի կարող սպանվել:

Ֆրանսուա Ռիշար. Կարող ենք ասել, որ հենց պետությունն է ստեղծում այդ միֆերը:

---

[153] Բանականության նկատմամբ հավատի առավելության պնդումը բնորոշ է կրոնական աշխարհայացքին, որը հենվում է հայտնության վրա: Հատուկ է իդեալիստական փիլիսոփայության շատ ուղղությունների (թարգմ.):

Ժան Բոդրիար. Մտածում եմ “Deep Throat”[154] խմբի մարդու մասին: Չգիտենք՝ ով է նա… Ասում են՝ խոսքը գնում է Հանրապետական կուսակցությունից մեկի մասին… Հանրապետական կուսակցությունը որոշելու էր ազատվել Նիքսոնից, ով դարձել էր չափազանց հաստամարմին, ու հենց նրանք էին մանիպուլյացիայի ենթարկելու “Washington post”-ի լրագրողներին: Ամերիկայի նախագահները պարտավոր են երկու կամ երեք անգամ մահափորձի զոհ դառնալ կամ էլ դրանք բեմադրել: Փորդը՝ երկու անգամ, Նիքսոնը՝ նույնպես: Կեղծ մահափորձերը հավանաբար, ուղղված են պահպանելու իշխանության այդ խորը լեգիտիմությունը:

Լիոնել Էրհարդ. Պահանջում ենք նրանց խաբված էության գոյնեղ կուսությունը, բոլորի առաջ հակասական ու կարծեք կախարդանքով վերականգնվող վերը նշված կուսությունը: Ցանկացած սպանում, քանի դեռ այն կլինի ծաղրանմանական, գրեթե ծիսակարգային կամ պատահական և կազատի միայն այն, ինչը գերազանցում է, այսինքն՝ վերարտադրման համար անհրաժեշտ նվազագույն կորուստ, ինչ-որ տեղ, ուր առկա է թերություն հանգստացված պահանջի և ցանկության կատարման միջև:

Ժան Բոդրիար. Պահանջն այստեղ է՝ բավարարված ու մեկուսացված մոդելավորում՝ սահմանափակված մոդելավորմամբ: Վերջին տեղում հաշվով՝ Watergate-ը ներկայացնում է մի հմայիչ մոդելավորում, որը եկել է չեղարկելու դարձուածակությունից խելագարված հույսը: Բայց գոյություն ունեն սիմուլյակրի տարբեր տեսակներ: 1968-ին մոդելավորումը մի սիմուլյացիա էր, որն այնուամենայնիվ կարողանում է ներդնել իշխանության դեզինտեգրման իրական ընթացքը: Ճիշտ է, որ իշխանությունները Watergate-ից էլ խորը մարտահրավեր են նետում, որտեղ նա բե-

[154] Watergate-ի գործում անվանված գաղտնի գործակալ, տե՛ս en. wikipedia կայքում, ինչպես նաև Ալան Ջ. Պակուլայի, ով նրան նկարագրում է «Նախագահի մարդիկ» ֆիլմում (1976)՝ հղված Ժան Բոդրիարի կողմից հարցազրույցի ընթացքում:

մաղրում է սեփական մահը, որպեսզի հետո վերարտադրի, սակայն չգիտենք, թե ինչ կարող էր վերարտադրվել 68 թ. մայիսից հետո:

Լիոնել Էրհարդ. Հավանաբար մնում է միայն իշխանության պատրանքին ուղղված էֆեկտը, որը երբեք չէր թվում վերահսկելի, որ ղեկավարվում է միայն գիտակից առաջնորդների կամ էլ գոնե շարժումը հակակրողների կողմից:

Ժան Բոդրիար. Ահա միգուցե հենց սրանում էլ կայանում է գաղտնիքը՝ իմանալ, որ իշխանություն գոյություն չունի: Դա խոսում է ծայրահեղ անբարոյականության ու արդյունավետության մասին: Այդ մասին ասում էին Պապերի համար, որոնք գիտեն, որ Աստված գոյություն չուներ՝ չնայած ողջ քրիստոնեական թռչնաձոցի: Նույնը ևան բանկիրների համար, որոնք գիտեն, որ փող գոյություն չունի, որ փողն իրեն այլևս չի տիրապետում: Ընդհատակյա քարը կնոյնականացվեր տարրի հետ. դրանից ուենեալ մենաշնորհ և հավատալ, որ իշխանությունը վերևում է: Բնավ: Իրական քաղաքական գործիչները պետք է իմանան, որ հակառակն է: Հենց դատարկության, կենտրոնական իջվածքում է ձևավորվում իշխանությունը: Քաղաքականությունը, երբ այն ունի իսկական արժեք, խորհրդանշական կերպով դա է դատարկության գոյությունը: Այն դեպքում, երբ մնացած բոլորը լողում են ուժերի ներածին չափով, ուժերի հարաբերակցությունը… Դա միամտություն է: Ինքս ինձ այսօր հարցնում եմ՝ կա՞ արդյոք հնարավորություն հասկանալու դատարկության ռազմավարական նշանակությունը, ու արդյոք Նիքսոնը, Կարտերը, Գիսկարը ունա՞կ են դիմել կրակի բացակայման ռազմավարությանը, որի շուրջ պտտվում է ողջ մնացուկը…

Լիոնել Էրհարդ. Պատմական կերպարներ այլևս չե՞ն լինի:

Ժան Բոդրիար. Դա այլևս չի կարող լինել, և կնշանակի, որ այս հասկացություն-սահմանը, իշխանության արմատականը, մեր համակարգում ավելի ու ավելի պակաս են հնարավոր: Հետևապես, սա, լավագույն իմաստով, քաղաքականության վերջն է:

Ահաբեկչության ոգին[155]

Մշտապես բախվում ենք համաշխարհային իրադարձությունների՝ արքայադուստր Դիանայի մահից մինչև ֆուտբոլի աշխարհի առաջնություն, կամ էլ իրական և դաժան իրադարձությունների, ինչպիսիք են պատերազմը և ցեղասպանությունը: Սակայն համաշխարհային մասշտաբի այնպիսի խորհրդանշական իրադարձություն, ոչ միայն ամբողջ աշխարհով տարածում գտած մեկը, որը, նաև, պարտության է մատնում ինքնին համաշխարհայնացմանը՝ ոչ մի:

1990-ական թվականներին ձգվող լճացումն իսկապես «իրադարձությունների գործադուլ» էր (արգենտինացի գրող Մակեդոնիո Ֆերնանդեսի բնորոշմամբ): Դե ինչ, գործադուլն ավարտված է: Իրադարձությունները դադարեցին հանդես գալ որպես գործադուլ: Նյու Յորքի և Առևտրի համաշխարհային կենտրոնի վրա իրականացրած ահաբեկչությամբ հանդերձ՝ գործ ունենք բացարձակ իրադարձության հետ, իրադարձությունների «մոր» հետ, որն իր մեջ կենտրոնացնում է երբևէ տեղի ունեցած բոլոր եղելությունները:

Մինչդեռ պատմության և իշխանության ողջ խաղը, ինչպես նաև վերլուծման պայմանները տակնուվրա են եղել: Պետք է ժամանակ շահել: Քանզի որքան իրադարձությունները լճանում էին, այնքան անհրաժեշտ էր դրանք կանխել ու գործել դրանցից ավելի արագ: Երբ այս փուլում ածապարում են, պետք է ավելի դանդաղ գործել, բայց և այնպես չթողնել ինքդ քեզ թաքցնել խոսքի խառնաշփոթության ու պատերազմի ամպի ներքո՝ պահպանելով անկրկնելի պատկերի փայլատակման անձեռնմխելիությունը: Բոլոր դիսկուսներն ու մեկնաբանությունները բացահայ-

[155] http://www.lemonde.fr/disparitions/article/2007/03/06/l-esprit-du-terrorisme-par-jean-baudrillard_879920_3382.html, այցելվել է 11.04.2017 (թարգմ.):

տում են ահռելի աբրեակցիա (abreaction)[156], ուղղված հենց նույն իրադարձությանն ու հմայմանը, որն այն իրականացնում է: Բարոյական դատապարտումը ահաբեկչության դեմ սուրբ դաշինքի հետ միասին համեմատելի է խելագար խանդավառությանը՝ տեսնելով, թե ինչպես են կործանում համաշխարհային այս գերտերությունը, ավելի շուտ տեսնել, ինչ-որ իմաստով, ինքնաոչնչացումը, ինքնասպանություն գեղեցկության գրկում:

Որովհետև աշխարհով մեկ իր անտանելի ուժով հենց նա առաջացրեց այս բնածին բռնությունը, ուստի և այդ ահաբեկչական երևակայությունը (դա չիմանալով), որն ապրում է բոլորիս մեջ: Թող որ երազենք այդ իրադարձության մասին, թող որ ամբողջ աշխարհն էլ առանց բացառության դրա մասին երազի, որովհետև ոչ ոք չի կարող երազել նման գերիշխանություն ունեցող տերության կործանման մասին. արևելյան բարոյագիտական գիտակցության համար դա անթույլատրելի է, և ինչը չափվում է բոլոր դիսկուսների պաթետիկ բռնությամբ, որոնք ցանկանում են նրան ջնջել: Վերջապես, հենց նրանք դա արեցին, բայց մենք այն ցանկացանք: Եթե դա հաշվի չեն առնում, իրադարձությունը կորցնում է իր ողջ խորհրդանշական չափումը, այն զուտ մի պատահար է, կամայական արարք, մի քանի մոլեռանդների մահացու ցնդաբանություն, որն, այդպիսով, բավարար կլիներ պարզապես վերասնել: Ուստի մենք լավ գիտենք, որ դա այդպես չէ: Այնտեղից էլ ֆոբիայով տառապող չար ոգիների նզովման ողջ զառանցանքը, այն, ինչն այստեղ է, ամենուր, ցանկության մի աղոտ օբյեկտ: Առանց այդ բարդ հանցակցության իրադարձությունը չէր ունենա այն ազդեցությունը, որը հաջողվեց ունենալ, և, անշուշտ, իրենց սիմվոլիկ ռազմավարությունում ահաբեկիչները գիտեն, որ կարող են հույսները դնել այդ ամոթալի հան-

[156] Աբրեակցիա (հականերգործել, լիցքաթափում) - հոգեվերլուծության մեջ օգտագործվող տերմին, որը նշանակում է տրավմատիկ իրադարձության վերապրում՝ զսպված զգացմունքներին ելք տալու նպատակով (թարգմ.):

ցակցության վրա: Սա, գերիշխող իշխանության նկատմամբ, շահագործվածների ու ժառանգությունից զրկվածների մոտ առաջացած ատելությունից էլ հեռու է գնում, նրանց մոտ, ովքեր հաստատված կարգից տանուլ տվեցին: Այդ չարմատի ցանկությունն անգամ այն մարդկանց սրտերում է, ովքեր ցանկանում են կիսել օգուտները: Ալերգիան ամեն կայուն կարգի, ամեն կայուն ուժի նկատմամբ բարեբախտաբար համընդհանուր է, և Առևտրի համաշխարհային կենտրոնի երկնաքերերը իրենց իսկ երկվորյակության մեջ լիովին մարմնավորում են ավարտուն կարգը: Մահվան կամ էլ կործանման խթանի կարիք չկա, ոչ էլ անգամ կործանարար ազդեցությունների: Շատ տրամաբանական ու անդրդվելի է, որ իշխանության պոտենցիալ աճը սրում է կործանման ցանկությունը: Եվ նա մեղսակից է իր սեփական կործանման համար: Երբ այդ երկու երկնաքերերը քանդեցին, այնպիսի տպավորություն էր, որ նրանք ինքնասպան եղան որպես պատասխան մահապատժի ինքնաթիռների ինքնաոչնչացմանը: Նշեցին. «Անգամ Աստված ինքն իրեն չի կարող հայտարարել պատերազմ»: Բայց ախր այո, կարող է: Արևելքը, Աստծո դիրքորոշումից ելնելով (ամբողջ աստվածային զորության ու բացարձակ բարոյական լեգիտիմության), դարձել է ինքնակործան և իրենից է սկիզբ առնում պատերազմը: Կործանում պատկերող անթիվ ֆիլմերը վկայում են այդ ցնորապատկերների մասին, որոնք, հատուկ էֆեկտներով թաքցնելով, ակնհայտորեն, պատկերով կանխում են այդ ամենը: Սակայն այն համաշխարհային գրավչությունը, որը նրանք պոռնոգրաֆիային հավասար զարգացնում են, ցույց է տալիս, որ անցումն առ գործողություն միշտ մոտ է, ողջ համակարգի նկատմամբ ունեցած մերժման հակումն այնքան ուժեղ է, որ այն մոտեցնում է կատարելությանը կամ ամենազորությանը: Բացի դրանից՝ ճշմարտանման է, որ ահաբեկիչները (ոչ ավելի քան փորձագետները) չէին կանխատեսում երկվորյակ երկնաքերերի կործանումը՝ ի տարբերություն Պեն-

տագոնի, շատ ավելի ուժեղ սիմվոլիկ շոկ կառաջացներ: Ամբողջ համակարգի սիմվոլիկ կործանումն իրականացվում է անտեսանելի հանցակցության միջոցով, կարծեք թե իրենք իրենց քանդելով, ինքնասպան լինելով՝ երկնաքերերը մտել էին խաղի մեջ՝ ավարտին հասցնելու իրադարձությունը: Մի կողմից ամբողջ համակարգը, իր ներքին փխրունությամբ, աջակցություն է ցուցաբերում սկզբնական գործողության համար:

Որքան համաշխարհային մակարդակով համակարգն ավելի շատ է կենտրոնացված լինում՝ սահմանին ստեղծելով միայն մեկ ցանց, այնքան տվյալ համակարգը տվյալ կետում դառնում է խոցելի (արդեն իսկ մի համեստ ֆիլիպինցի հակեր հաջողեցնում էր իր նոթբուքից գցել «Ես քեզ սիրում եմ» («I love you») վիրուսը, որն աշխարհով մեկ պտտվեց՝ ավերելով ամբողջ ցանցը): Ահաբեկչության դեպքում կա տասնութ մահապարտ, որոնք բացարձակ մահացու զենքի շնորհիվ, տեխնոլոգիական արդյունավետությամբ բազմապատկված, գործի են դնում համաշխարհային կործանման մի ամբողջ գործընթաց: Երբ համաշխարհային իշխանության կողմից իրավիճակն այսպիսի մենաշնորհային վիճակում է գտնվում, երբ գործ ունենք եզակի մտքի ու տեխնոկրատական մեքենայական սարքավորումների միջոցով պայմանավորված գործառույթների այս հրաշալի խտացման հետ, էլ ի՞նչ այլընտրանքային ճանապարհ կա, քան ընդամենը մի վայրից մյուսը տեղափոխել տվյալ իրավիճակի համար պատասխանատու ահաբեկչին: Նույն ինքը՝ համակարգն է, որն այս կոպիտ միջոցներով ստեղծեց պատասխանելու օբյեկտիվ պայմանները: Բոլոր խաղաթղթերն իր կողմը քաշելու համար հակառակ կողմին նա պարտադրում է իր խաղի կանոնները: Իսկ նոր կանոնները վայրի են, որովհետև խաղն ինքնին վայրի է: Մի համակարգում, որի ուժի ավելցուկն անգամ առաջ է քաշում անլուծելի մարտահրավեր, ահաբեկիչները պատասխանում են որոշիչ հակահարվածով, որի ինքնին վոխանակությունն անհնար է: Ահա-

բեկչությունը մի ակտ է, որը ընդհանրացված փոխանակման կենտրոնում վերադարձնում է անբացառելի յուրօրինակությունը: Բոլոր առանձնահատկությունները (տեսակները, անհատները, մշակույթները), որոնք իրենց կյանքի գնով վճարեցին միայն մեկ տերության կողմից ղեկավարվող համաշխարհային շրջանառության հաստատման համար, այսօր վրեժխնդիր են լինում տվյալ իրադարձության համար պատասխանատու ահաբեկիչի տեղափոխմամբ: Ահաբեկչությունն ահաբեկության դեմ, այս ամենի ետևում այլևս որևէ այլ գաղափարախոսություն չի երևում: Այսուհետև ավելի հեռու ենք հայտնվում գաղափարախոսությունից ու քաղաքականությունից: Էներգիան սնում է սարսափը, ոչ մի գաղափարախոսություն, ոչ մի շարժառիթ, ոչ մի պատճառ, ոչ էլ անգամ իսլամական, չի կարող հաշիվ տալ այդ ահաբեկչությանը: Աշխարհը ձևափոխելու հարցում դա նույն նպատակը չի հետապնդում, այլ (ինչպես ժամանակին հերետիկոսները) ինքնազոհաբերմամբ ավելի արմատական դարձնել, մինչդեռ համակարգը նպատակադրված է այն կյանքի կոչել ուժով:

Ահաբեկչությունը, ինչպես վիրուս, ամենուր է: Առկա է ահաբեկչության համաշխարհային կաթիլային ներարկում, որը, ինչպես ցանկացած տեսակ տիրապետությանը վերագրվող մի ուրվական, պատրաստ է ամենուր ուշքի գալ որպես կրկնակի գործակալ: Չկա այլևս մի սահմանազատիչ, որը թույլ կտա այն եզրագծել, դա անգամ այդ մարտնչող մշակույթների հոգում է, ու ակնհայտ ճաքը (և ատելությունը), որը դեմ է հանդես գալիս նրանց շահագործելու համաշխարհային պլանին, ու արևելյան աշխարհի թերզարգացածները գաղտնի կերպով միանում են գերիշխող համակարգի ներքին ճաքին: Այն կարող է հակազդել ցանկացած տեսանելի անտագոնիզմին: Սակայն մյուս՝ վիրուսային կառուցվածքի կողմից կարծես թե տիրապետման ամբողջ ապարատն արտազատեր իր հակակառուցվածքային՝ սեփական վերացման ֆերմենտը, ընդդեմ սեփական իշխանության

այդ գրեթե ավտոմատ ռեվերսիայի համակարգը ոչինչ անել չի կարող: Ու ահաբեկչությունն այդ լուռ ռեվերսիայի բախման ալիքն էր: Հետևաբար դա ո՛չ քաղաքականությունների, ո՛չ էլ կրոնի բախումն է և իսլամից ու Ամերիկայից էլ առաջ է անցնում (որը թերևս էպիկենտրոնն է, բայց բացարձակապես ոչ ինքն իրենով պայմանավորված համաշխարհայնացման մարմնավորումը) և իսլամի ասպեկտի միջով (որը նույնպես բացարձակապես ահաբեկչության մարմնացումը չէ). ցնծացող համաշխարհայնացումն ինքն իր հետ բախման մեջ: Այդ իմաստով կարող ենք ասել, որ դա միակ համաշխարհային պատերազմն է, ոչ թե երրորդը, այլ չորրորդը ու միակ իսկական համաշխարհայինը, որովհետև որպես հպատակ՝ այն ունի համաշխարհայնացումն ինքնին: Առաջին երկու համաշխարհային պատերազմները պատասխան էին պատերազմի դասական պատկերի: Առաջինը վերջ դրեց Եվրոպայի գերիշխանությանն ու գաղութատիրական շրջանին: Երկրորդը վերջ դրեց նացիզմին: Երրորդը, որն արդեն իսկ տեղի ունեցավ Սառը պատերազմի և ահաբեկման ձևով, վերջ դրեց կոմունիզմին: Ամեն անգամ, մեկից մյուսն անցնելով, շատ հեռուն գնացինք՝ դեպի միաբևեռ աշխարհը: Այսօր այդ մեկը, սկզբունքորեն իր սահմանին հասած, անտագոնիստական ուժերի հետ միասին հայտնվում է բախումների մեջ, ամենուր տարածում գտած ուժերի շրջանում, անգամ հենց համաշխարհային հոգում, խորքում, էպիկենտրոնում, արդի բոլոր ջղաձգություններում: Բոլոր առանձնահատկությունների, բոլոր բջիջների կործանիչ պատերազմ, որոնք հակամարմինների ձևով ընդվզում են: Նման աննկատելի բախում, որին պետք է ժամանակ առ ժամանակ դիտարժան բեմադրություններով ազատել պատերազմի մտքից, ինչպես այսօր Պարսից ծոցի կամ Աֆղանստանի պարագայում: Բայց չորրորդ համաշխարհային պատերազմն այլ վայրում է տեղի ունենում: Այն հետապնդում է համաշխարհային ողջ կարգին, ողջ գերիշխանությանը, եթե անգամ իսլամը տիրի աշ-

խարհին, ապա ահաբեկչությունը ոտքի կկանգնի հենց իսլամի դեմ: Քանզի հենց ինքը՝ աշխարհն է, որ դիմադրում է համաշխարհայնացմանը: Բարոյազուրկ ահաբեկչություն: Առևտրի համաշխարհային կենտրոնում տեղի ունեցածը, այդ սիմվոլիկ մարտահրավերը, բարոյազուրկ է, և այն պատասխանն է համաշխարհայնացման, որն ինքն անբարո է: Ուրեմն եկեք մենք էլ լինենք անբարո ու եթե ցանկանում ենք որևէ բան հասկանալ, փորձենք նայել բարու ու չարի քիչ հակառակ կողմին: Այս դեպքում, երբ տեղի է ունեցել մի իրադարձություն, որը մարտահրավեր է նետում ոչ միայն բարոյականությանը, այլև մեկնության ամբողջ ձևերին, մենք ջանում ենք որդեգրել Չարի բանականությունը: Վճռորոշ պահը հենց արևմտյան փիլիսոփայության մեջ Բարու ու Չարի նկատմամբ ընդունված լինելով՝ հակառակ ուղղվածության մեջ է ի դեմս Լուսավորչականության դարաշրջանի ներկայացուցիչների: Միամտորեն հավատում ենք Բարու զարգացմանը, բոլոր բնագավառներում իր վերելքի ներուժը (գիտություն, տեխնիկա, ժողովրդավարություն, մարդու իրավունքներ) համապատասխանում է Չարի պարտությանը: Կարծեք թե որևէ մեկը չի ձգտում հասկանալ, որ Բարին ու Չարը միևնույն ժամանակ, ըստ իրենց գործունեության ներուժի, ընթացքին զուգահեռ թափ են հավաքում: Մեկի հաղթանակը մյուսի համեստ պահվածքի հետևանք չէ, նույնը և հակառակը: Չարը մետաֆիզիկորեն դիտարկում ենք որպես վրիպակ, բայց այս աքսիոմը, որտեղից բխում են Բարին ընդդեմ Չարի պայքարի մանիքեական կրոնի բոլոր եղանակները խաբուսիկ է: Բարին չի սահմանափակում չարը, ոչ էլ մյուս կողմից՝ հակադրում, բայց և միաժամանակ մեկը մյուսի հանդեպ անհաշտ են ու խճճված: Ըստ էության, Բարին չի կարող պարտության մատնել չարին, երբ հայտարարում են Բարի, որովհետև յուրացնելով համաշխարհային իշխանության մոնոպոլիան՝ նա անգամ դրա միջոցով հանգեցնում է համեմատական ուժի կատաղի վերադարձին: Ավանդական աշ-

խարհում ղեռ պահպանվում էր Բարու ու Չարի հավասարակշռությունը՝ համաճայն դիալեկտիկական հարաբերակցության, որը վստահեցնում էր՝ ինչ լինելու է, թող լինի. համաշխարհային բարոյականության լարվածությունն ու հավասարակշռությունը՝ քիչ նման Սառը պատերազմի շրջանին, երբ երկու տերություններ, դեմ առ դեմ հայտնվելով, երաշխավորում էին ահաբեկչությունը: Հետևաբար՝ ոչ մեկը մյուսի նկատմամբ գերակայությամբ: Այս հավասարակշռությունը խախտված է այն պահից ի վեր, երբ կա Բարու լիակատար արտարկում (դրականի գերիշխանությունը կարևոր չէ, թե ինչ տեսակ բացասականության վրա, մահվան բացառում, ցանկացած տեսակ թշնամական ուժերի բացառում. ողջ ճակատով Բարու հաղթանակ): Այստեղից սկսած՝ հավասարակշռությունը խախտվեց, և, այսպես, Չարն անցնում է անտեսանելի ինքնավարության՝ հետագայում ցուցադրական կերպով զարգանալով: Համանման պայմաններում, դա միայն չնչին մասն է, որ տեղի է ունենում քաղաքական կարգում համաշխարհային լիբերալ իշխանության հաղթանակի և կոմունիզմի վերացման հետ միասին. ահա թե ինչպես է առաջանում մի թաքնված թշնամի՝ ներարկելով աշխարհով մեկ, վիրուսի պես ամեն ինչի ուղղությամբ ներթափանցելով ամենուր, երևան հանելով հզորության ինտերվալները, դատարկ ինտերվալները: Իսլամը: Վերջինս միայն անկայուն ճակատ է այս անտագոնիզմի բյուրեղացման գործում: Այդ հակամարտությունն ամենուր է, և այն մեզանից յուրաքանչյուրիս մեջ է:

Այսպիսով՝ ահաբեկչությունն ահաբեկչության դեմ: Սակայն անհամաչափ ահաբեկչություն: Եվ այդ անհամաչափությունն է, որ ողջ համաշխարհային հզորությանը լիովին զինաթափ է թողնում: Դրա հետ միասին այդ հզորությունը կարող է միայն մխրճվել ուժերի հարաբերակցության իր սեփական տրամաբանության մեջ՝ չկարողանալով խաղալ մահվան և սիմվոլիկ մարտահրավերի դաշտում, հետևապես նա չի կարող ունենալ որևէ

այլ միտք, քան այն, որը դուրս թողեց իր սեփական մշակույթից: Առ այսօր այդ բաղկացուցիչ ուժը միանգամայն հաջողացրեց կլանել ու ներծծել ամբողջ ճգնաժամը՝ ողջ ժխտողականությամբ՝ որով բնականից ստեղծելով անգամ մի անհուսալի իրավիճակ (ոչ միայն երկրի նզովյալները, այլև ունևորներն ու արտոնյալները նույնպես իրենց ծայրահեղ հարմարավետության մեջ): Հիմնական դեպքն այն է, որ ահաբեկիչները դադարեցին ինքնասպան լինել իզուր տեղը, անսպասելի ու արդյունավետ ձևով նրանք գործի են դնում իրենց սեփական մահը՝ ըստ ռազմավարական բնազդի, որը պարզապես թշնամու ահռելի փխրունությունն է կիսակատարյալ համակարգից, այդ իսկ պատճառով խոցելի ամենաքիչ կայծից: Նրանք հաջողեցին իրենց սեփական մահից բացարձակ զենք ստեղծել ընդդեմ մի համակարգի, որը տեսավ մահվան բացառումը, որի իդեալն է «ոչ մի մահ» (zero mort) ասվածը: Ողջ «ոչ մի մահ» համակարգն իրենց ներկայացնում է զրո համակարգ: Եվ ահաբեկման ու կործանման բոլոր միջոցներն անզոր են մի թշնամու դեմ, որն արդեն հակագրոհային զենքով իր մահկանացուն կնքել է: «Ի՞նչ կարևոր են Ամերիկայի ռմբակոծությունները: Մեր մարդիկ այնչափ մահանալու ցանկություն ունեն, որչափ և ամերիկացիները՝ ապրելու»: Որտեղի՞ց 7000 ռմբակոծման արդյունքում մահացածների համարժեքությունը միանգամից «ոչ մի մահ» համակարգի նկատմամբ: Ուստի, այստեղ ծաղրում են մահվանը վերաբերող ամեն բան՝ ոչ միայն իրական ժամանակում ուղղակի, վայրագ ներխուժմամբ, այլև վրա հասնող մահը, որն ավելի իրական է, խորհրդանշական ու անճնազոհ, այսինքն՝ մի բացարձակ և կատեգորիկ իրադարձություն: Այսպիսին է ահաբեկչության ոգին:

Երբեք չզոհել համակարգն ուժերի հարաբերակցությունը բնութագրող տերմիններով: Դա երևակայական է (հեղափոխական), որը պարտադրում է ինքնին համակարգը, որն էլ իր հերթին, միայն, անդադար հանկարծակիի է բերում նրանց, որոնք

մշտապես իրեն են պատկանում, սակայն տեղափոխել կռիվը սիմվոլիկ դաշտ, ուր կանոնը մարտահրավեր է, ռեվերսիա, ուռճացում: Այնպիսին, ինչպիսին մահվան դեպքում այն կարող է պատասխանել միայն համարժեք ինչ-որ բանով՝ մահով կամ ավելին: Համակարգին պատասխանել ընծայով, որին նա չի կարող արձագանքել որևէ այլ ձև, քան եթե ոչ իր սեփական մահով ու սեփական կործանմամբ:

Ահաբեկչական հիպոթեզ, որի համաձայն՝ նույն ինքը՝ համակարգն ինքնասպան է լինում՝ որպես պատասխան մահվան, ինքնապաշտպանության ու բազմաթիվ այլ մարտահրավերների: Որովհետև ո՛չ համակարգը, ո՛չ իշխանությունը չեն կարող խուսափել սիմվոլիկ պարտավորությունից, ու հենց այդ թակարդի ընդհատակյա քարի վրա է հիմնվում նրանց աղետի միակ հնարավորությունը: Այդ փոխանակության գլխապտույտ մահվան անհնարինության շրջանում ահաբեկչի շրջանը հենց այն փոքր կետն է, որն առաջացնում է ներշնչում, դատարկություն, մի ահռելի կոնվեկցիա: Այդ նվազագույն կետի շուրջ իրականի և ուժի ամբողջ համակարգը կարծրանում է, պարալիզացվում, կուտակվում ինքն իր վրա ու ընկղմվում սեփական գերարդյունավետության մեջ: Ահաբեկչական մոդելի մարտավարությունն է հրահրել իրականության ավելցուկ ու ստիպել քանդվել համակարգին նույն այդ իրականության ավելցուկի պատճառով: Իրավիճակի ամբողջ աննշանակալիությունը և իշխանության կողմից մոբիլիզացված բնակչությունը շրջվում են իրենց իսկ դեմ, քանի որ, միաժամանակ, ահաբեկչական գործողությունները ծառայում են որպես սեփական բռնության ու սիմվոլիկ բռնության մոդելի խոշորացուցիչ, որոնք իրենց արգելված են, որպեսզի չկարողանան իրագործել սեփական մահը:

Ահա թե ինչու ամբողջ տեսանելի իշխանությունը ոչինչ չի կարող անել չնչին մահվան դեմ, այլ միայն սիմվոլիկ կերպով, որոշ անհատների նկատմամբ: Պետք է խոստովանել, որ ծնվեց նոր ահաբեկչություն, նոր գործողության ձև, որը խաղում ու իրեն

է վերագրում խաղի կանոնները՝ դրանք ավելի լավ խախտելու համար: Այդ մարդիկ ոչ միայն հավասար զենքով չեն մարտնչում, քանի որ գործի են դնում իրենց սեփական մահը, որին հնարավոր պատասխան չկա (վախկոտների մեկն են), այլև իրենց են վերագրում դոմինանտ ուժի բոլոր զենքերը: Փողն ու բորսայական շահարկումը, տեղեկատվական ու օդագնացական տեխնոլոգիաները, ցուցաղրական չափումներն ու լրատվական ցանցերը՝ այս ամբողջը նմանեցված է մողեռնին ու համաշխարհայինին՝ չփոխելով ուղղությունը, ասել է թե՝ կործանումը:

Խորամանկության գագաթնակետ, որպես դիմակ ու երկակի խաղ նրանք անգամ օգտագործեցին ամերիկյան առօրեականությունն ու պարզունակությունը: Քնելով քաղաքի ծայրամասի փոողոցներում, կարդալով ու սովորելով ընտանիքում՝ մի օր, կարծեք, կարթնանային ռմբակոծությունից: Որևէ թերություն չունեցող այս գաղտնի գործունեության արհեստավարժությունը նույնպես գրեթե ահաբեկչական է, ինչպես և սեպտեմբերի 11-ի ցուցաղրական գործողությունը: Քանի որ կարևոր չէ, թե որ մեկի շուրջ է այլ կասկած առաջացնում, կարևոր չէ, թե որ գոյն է անվտանգ, մի՞թե նա իշխանություն ունեցող ահաբեկիչ չէ: Եթե այդ ահաբեկիչները կարողացան աննկատ անցնել, ուրեմն մեզանից յուրաքանչյուրս աննկատ հանցագործ ենք (յուրաքանչյուր ինքնաթիռ այնքան կասկածելի է դառնում), ու իրականում հենց այդպես էլ կա: Սա, թերևս, համապատասխանում է պոտենցիալ հանցագործության անգիտակից ձևին՝ քողարկված ու մանրակրկիտ կերպով ետին պլան մղված, սակայն մշտապես ազդվող, եթե ոչ վերստին հայտնվող, գոնե սրբորեն անհանգստության մեջ պահելով Չարի ցուցաղրությունը: Այսպիսով՝ իրադարձությունը մանրամասնորեն ճյուղավորվում է որպես ղեռևս շատ անորսալի մտավոր ահաբեկչության աղբյուր: Արմատական տարբերությունն այն է, որ ահաբեկիչներն ունեն զենք, որը համակարգայնացված է, ավելին, իրենց տիրապետության տակ ունեն ճակա-

տագրական զենք՝ իրենց սեփական մահը: Եթե բավարարվեին սեփական զենքով պայքարել համակարգի դեմ, ապա անմիջապես կոչնչացվեին: Եթե նրանց հակադրում էին միայն իրենց սեփական մահը, ապա նույնքան արագ անօգուտ անձնազոհության մեջ անհետ կորչում էին, այնինչ ահաբեկչությունը գրեթե միշտ մինչ այդ պահն էր գործում (ինչպես պաղեստինյան ահաբեկիչ գրոհայինները), և ահա թե ինչու էր նա անհաջողության մատնվում: Ամեն բան փոխվում է ճիշտ այն պահից, երբ բոլոր ժամանակակից հասանելի միջոցները նրանք փոխարինում են բարձրագույն սիմվոլիկ զենքով: Հենց դա էլ մի քանի անգամ, անսահմանորեն բազմապատկում է պոտենցիալ կործանիչին: Այդ գործոնների բազմապատկումն է (որոնք մեզ թվում են անհամատեղելի) նրանց տալիս նման գերակայություն: «Ոչ մի մահ» ռազմավարությունը, ընդհակառակը, այդ «բնորոշ» պատերազմը, տեխնոլոգիականը ճիշտ և ճիշտ սիմվոլիկ իշխանության փոխակերպման կողքով:

Նման հարձակման անսովոր հաջողությունը ստեղծում է դժվարություններ, և ինչ-որ բան հասկանալու համար պետք է հանել մեր արևմտյան ակնոցները՝ տեսնելու, թե ինչ է կատարվում իրենց խմբավորումներում և ահաբեկիչների գլուխներում: Նման տիպի արդյունավետությունը մեզ ենթադրել կտար իրականացնելու առավելագույնս ռացիոնալ հաշվարկ, որը մենք հազիվ թե կարողանում ենք պատկերացնել մյուսների դեպքում: Եվ անգամ այս պարագայում միշտ էլ կլինեին, ինչպես և այլ ցանկացած ռացիոնալ կամ հետախուզական կազմակերպություններում, ինֆորմացիայի արտահոսք և վրիպումներ: Ուստի նման հաջողության գաղտնիքն այլ վայրում է: Տարբերությունը միայն այն է, որ նրանց մոտ խոսքը չի գնում աշխատանքային պայմանագրի մասին, այլ՝ համաձայնության և սուրբ պարտականության: Նման պարտավորությունն աղբյուրն է ամեն տեսակ դա-

վաճառության և կաշառակերության: Հրաշք նշանակում է հարմարված լինել համաշխարհային ցանցին, տեխնիկական կարգ ու կանոնին՝ ոչինչ չկորցնելով այդ կյանքի ու մահվան մասնակցության մեջ: Պայմանագրին հակառակ՝ համաձայնությունն անհատներին չի կապում, անգամ իրենց «ինքնասպանությունը» անհատական հերոսություն չէ, դա գերակա իդեալով դրոշմված կոլեկտիվ սրբացված գործողություն է: Եվ սա երկու խմբավորումների օպերացիոնալ գործողությանը չափազանց մեծ ծավալ հաղորդեց:

Սիմվոլիկ հաշվարկի շուրջ այլևս որևէ միտք չունենք, ինչպես պոկերում կամ պոտլաչում՝ քիչ խաղ, առավելագույն արդյունք: Ճիշտ այն, ինչին հասան ահաբեկիչները՝ գրոհելով Մանհեթենը, որը շատ լավ կպատկերեր քաոսի տեսությունը, մի նախնական շոկ՝ հրահրելով անհաշվելի հետևանքներ, մինչդեռ ամերիկացիների ահռելի ծավալումը («Անապատի մրրիկը»[157]) միայն ծիծաղաշարժ արդյունքի էր հանգեցնում. մի ավարտվող փոթորիկ, այսպես ասած, քիթեռի թևերի թափահարմամբ:

Ինքնակործան ահաբեկչությունը խեղճերին հատուկ ահաբեկչություն է, իսկ հակառակը՝ ունևորներին: Եվ հենց սա է մեզ հատկապես վախեցնում. այն, որ նրանք դարձան հարուստ (ունեն դրա բոլոր միջոցները)՝ չդադարելով ցանկանալ մեզ կորցնել: Միանշանակ, մեր արժեհամակարգի համաձայն՝ խարդախում են, դա սեփական մահվան վրա խաղադրույք կատարել չէ: Բայց նրանք դրան ուշադրություն չեն դարձնում, և խաղի նոր կանոնները նրանց այլևս վայել չեն՝ ամեն ինչ տրամադրում է վարկաբեկելու իրենց գործողությունները: Այդպիսով նրանց համարելով «ինքնասպաններ» և «նահատակներ»: Միանգամից ավելացնեմ, որ նահատակը ոչինչ չի ապացուցում, նա ոչ մի ընդ-

[157] 1990-1991 թթ. Պարսից ծոցի պատերազմի մի մասը՝ օպերացիան, որն ուղղված էր բազմազգ ուժերի կողմից Քուվեյթի ազատագրմանն ու իրաքյան բանակի ջախջախմանը (թարգմ.):

հանուր բան չունի ճշմարտության հետ, և որ նա անգամ (հղում կատարելով Նիցշեին) ճշմարտության համար առաջին թշնամին է: Անշուշտ, նրանց մահը ոչինչ չի ապացուցում, սակայն ապացուցելու բան էլ չկա մի համակարգում, որտեղ ինքը՝ ճշմարտությունը, անորսալի է. կամ էլ մի՞թե մենք ենք, որ ձևացնում ենք, թե տնօրինում ենք այն: Մյուս կողմից՝ այս վերին աստիճանի բարոյական փաստարկը հերքվում է: Եթե կամավոր ինքնասպան ահաբեկիչը ոչինչ չի ապացուցում իր մահով, ապա ոչ կամովին մահափորձ կատարող նահատակը նույնպես ոչինչ չի ապացուցում, և մի անտեղի ու անվայել բան կա դրանից բարոյական փաստ դուրս բերելու մեջ (դա որևէ կերպ չի կանխաենթադրում նրանց տառապանքն ու մահը): Մեկ այլ խելամիտ փաստարկի համաձայն՝ ահաբեկիչներն իրենց մահը փոխանակում են դրախտում տեղ ունենալու համար: Իրենց գործողությունն անվճար չէ, և հատկապես՝ ոչ օրինական:

Անվճար կլիներ միայն այն, որ իրենք չէին հավատում Աստծուն, որ եթե մահը լինի անհույս, ինչպես որ մեր պարագայում է (քրիստոնյա նահատակների շրջանում ոչ մի այլ բանի չեն սպասում, քան այդ բարձրագույն համարժեքությանը): Ուստի, այստեղ նույնպես չեն մարտնչում հավասար զենքերով, որովհետև փրկությանն են պարտական, հետևապես մենք անգամ չենք կարող հույս փայփայել: Այսպիսով՝ սգանք մեր մահը, մինչդեռ նրանք դրանից կարող են շատ բարձր որոշակիություն ունեցող նպատակ սահմանել:

Ըստ էության, այս ամենը՝ շարժառիթը, ապացույցը, ճշմարտությունը, պարգևատրումը, ավարտն ու միջոցները, տիպիկ արևմտյան ոճին հատուկ հաշվարկ է: Անգամ մահը մենք գնահատում ենք տոկոսադրույքով, որակ-գին հարաբերակցության տերմիններով:

Տնտեսագիտական հաշվարկը հատուկ է թշվառներին և նրանց, ովքեր համարձակություն չունեն մահվանը տալ տնտե-

սական գնահատական: Ի՞նչ կարող է տեղի ունենալ պատերազմից դուրս, որը զուտ պայմանական պաշտպանության պատվար է հանդիսանում: Խոսում են կենսաբանական ահաբեկչությունից, մանրէաբանական կամ էլ ատոմային: Սակայն այս ամենից և ոչ մեկը սիմվոլիկ պաշտպանության կարգադրություն չէ, այլ բնաջնջում՝ առանց խոսքի, առանց փառքի, առանց ռիսկի, վերջնական լուծման կանոնի: Կամ էլ, հակառակ կողմից, ահաբեկիչ գործողության մեջ տեսնել զուտ կործանարար տրամաբանություն: Ինձ թվում է, որ իրենց սեփական մահն անքակտելի է իրենց գործողությունից (դա ճիշտ այն է, ինչից որ սիմվոլիկ ակտն է սերում) և բացարձակապես ոչ ուրիշ մեկի անկողմնակալ մերժումը: Ամենը պաշտպանության և մենամարտի մեջ է, այսինքն՝ դեռևս հակադիր ուժով մենամարտային, անձնային հարաբերությունների մեջ: Նա է, որ ձեզ նվաստացրեց, նա է, որ պետք է ստորացված լինի: Եվ ոչ թե պարզապես բնաջնջված: Նրան պետք է խայտառակվել: Եվ դա երբեք լոկ ուժով և մեկ ուրիշին ոչնչացնելով ձեռք չի բերվում: Դա պետք է լինի չարաբախտությամբ լի նպատակ: Ահաբեկիչներին միավորող պայմանագրից դուրս կա չարաբախտության հետ կապված մենամարտի համաձայնագիր: Դա ստորության ճիշտ հակառակ դրսևորումն է, ինչում իրենց մեղադրում են, ու հենց օրինակ՝ ամերիկացիները Պարսից ծոցի պատերազմում այդ հակադրությունն են գործառնում (և ովքեր նույն Աֆղանստանում վերսկսելու ճանապարհին են), անտեսանելի թիրախ, օպերատիվ լիկվիդացիա: Այս բոլոր հանկարծական փոփոխությունները մենք պահպանում ենք մտապատկերի ձևով: Եվ պետք է հսկենք այդ մտապատկերների բովանդակությունը, վերջիններիս գայթակղում, քանզի նրանք են, ուզենք-չուզենք, մեր պարզունակ թատրոնը: Եվ Նյու Յորքի իրադարձությունները, որոնք միևնույն ժամանակ ծայրահեղացրին համաշխարհային իրավիճակը, իրականության պատկերի հաղորդման մեջ դարձան ավելի արմատական:

Այն ժամանակ, երբ գործ ունեին անվերջ պարզունակ պատկերների առատության և անընդմեջ կեղծ իրադարձության ալիքի հետ, Նյու Յորքում տեղի ունեցածը վերականգնեց միանգամից պատկերներն ու իրադարձությունը:

Համակարգային զենքերից բացի, որոնք իր իսկ դեմ ուղղվեցին, ահաբեկիչներն օգտագործեցին պատկերի իրական ժամանակը, նրանց համաշխարհային ակնթարթային դիֆուզիան: Նրանք դա յուրացրին ճիշտ նույն անվան տակ, ինչ և թոշակառուի հետ իրականացվող խարդավանքը, էլեկտրոնային տեղեկատվությունը ու օդի շրջապտույտը: Պատկերի դերը բացահայտորեն երկակի է: Իրադարձությունը զորեղացնելու հետ միաժամանակ նա վերջինիս պատանդ է վերցնում: Պատկերն անվերջության բազմապատկման և միևնույն ժամանակ վնասագործողի ու չեզոքացնողի դեր է խաղում (արդեն իսկ այդպես էր 1968 թ. դեպքերի ժամանակ): Միշտ մոռանում են, երբ խոսում են ԶԼՄ-ների վտանգավորության մասին: Պատկերն իրադարձությանը սպառում է կախված նրանից, թե որտեղ է նրան հափշտակում ու ստիպում ավարտին հասցնել: Վատահորեն պատկերը իրադարձությանը տալիս է մի նորահայտ ազդեցություն, ինչպես և հակառակը:

Ուրեմն որտե՞ղ է իրական իրադարձությունը, եթե ամենուր պատկերը, կեղծիքը, վիրտուալը գերակայում են իրականության մեջ: Թվացյալ վիրտուալ աշխարհում, տվյալ դեպքի համար մտածեցին տեսնել (երևի թե որոշակի մխիթարանքով) իրականի վերածնունդը և իրականության դաժանությունը: «Ավարտենք վիրտուալ իրականության հետ կապված բոլոր պատմություններըը, իրականը հենց դա է»: Այնուհանդերձ, իր հայտարարված վերջից այն կողմ կարողացան այնտեղ տեսնել պատմության հարությունը: Սակայն իրականությունն իսկապե՞ս առաջ է անցնում պատրանքից: Եթե այդպես է, ապա հենց իրականությունն է, որ կլանում է էներգիան, ու ինքն էլ վերածվում հորինվածքի:

Կարող էին ասել, որ իրականությունը հորինվածքի խաղն է, որ իրականը մշտապես պատկերի նախանձն է: Դա նրանց միջև տեղի ունեցող մենամարտի պես մի բան է, որը կլինի ամենաանհերևակայելին:

Համաշխարհային աշտարակների փլվելն անհերևակայելի է, բայց բավարար չէ իրաղարձությունն իրական դարձնելու համար: Դաժանության աճը բավարար չէ իրականության առջև բացվելուն: Քանի որ իրականությունը մի սկզբունք է, և հենց այդ սկզբունքն է կորած: Իրականն ու հորինածը խճճված են, ու մահափորձի հմայքն առաջին հերթին պատկերի հիպնոսն է (հոբելյանական, բայց և միևնույն ժամանակ հիպնոսացնող հետևանքներն ինքնին լայնորեն երևակայելի են):

Ուստի այդ դեպքում իրականը գումարվում է պատկերին՝ որպես սարսափի պարգև, ավելի՝ լրացուցիչ սարսուռ: Սա ոչ միայն զարհուրելի է, այլև՝ իրական: Թող որ իրականության դաժանությունն ավելի շուտ այդտեղ լինի, և դրան էլ գումարվի պատկերի սարսուռը: Պատկերն ի սկզբանե այդտեղ է, ու դրան էլ ավելանում է իրականի սարսուռը:

Ինչ-որ բան պատրանքից ավելի առաջ է անցնում: Բալլարդը[158] (Բորխեսից հետո) այդպես էր ասում՝ վերաբացահայտել իրականը՝ որպես վերջին ու մի ավելի կասկածելի հորինվածք: Այսպիսով, բնավ, ահաբեկչական այդ դաժանությունը չի ենթադրում վերադարձ իրականության մոխիրներից, ոչ ավելին, քան պատմության դեպքում: Այս ահաբեկչական դաժանությունը «իրական չէ»: Այլ ինչ-որ իմաստով ավելի վատը. այն սիմվոլիկ է: Ինքնին բռնությունը կարող է լինել կատարելապես պարզունակ և ոչ հարձակվողական: Միայն սիմվոլիկ բռնությունն է եզակիության առաջացման պատճառ հանդիսացողը: Եվ այդ առանձնահատուկ իրաղարձության մեջ, Մանհեթենի աղետալի

[158] Բալլարդ Ջեյմս (1930-2009) - բրիտանացի գրող, 20-րդ դարի երկրորդ կեսի բրիտանական գրականության խոշորագույն դեմքերից մեկը (թարգմ.):

ֆիլմում միախառնվում են 20-րդ դարի պատրանքին բնորոշ երկու էլեմենտների ավելի քան ութը կետ, կինոյի սպիտակ կախարդանքն ու ահաբեկչության սև մոգությունը: Պատկերի սպիտակ լույսն ու ահաբեկչության սև լույսը: Մի քանի վայրկյան անց փորձում են նրան տալ կարևոր չէ, թե ինչ իմաստ, գտնել նրա համար կարևոր չէ, թե ինչ մեկնաբանություն: Բայց դա չկա, և սրանով է պայմանավորված ներկայացման ռադիկալ լինելը, վերջինիս կոպտությունը, որը միայն օրիգինալ է և անսասան: Ահաբեկչության ներկայացումը պարտադրում է ներկայացման ահաբեկչություն: Եվ հակառակ այդ անբարոյական հրապուրանքին (անգամ եթե այն ծավալում է մի համընդհանուր բարոյական արձագանք)՝ քաղաքական կարգն անզոր է: Սա մեր իսկ վայրագության թատրոնն է, միակ բանը, ինչը մեզ մնում է, ծայրահեղական նրանում, ինչը միավորում է ներկայացման ու մարտահրավերի ամենաբարձր կետում:

Միաժամանակ դա իրական բռնության միջուկի առկայծող միկրոմոդելն է՝ մաքսիմալ արձագանքմամբ, այսինքն՝ հնարավորինս մաքրամաքուր բեմականացված մի կառուցվածք և մի զոհաբերման մոդել, որը մարտահրավերների առավել կատարյալ սիմվոլիկ ձևը հակադրում է պատմական կամ քաղաքական կարգին:

Կարևոր չէ, թե որ մի ջարդի համար նրանց ներում կշնորհվեր, եթե իմաստ ունենար, եթե կարողանար մեկնաբանել, որպես պատմական դաժանություն՝ այդպիսին է հաջող բռնության բարոյական աքսիոմը: Կարևոր չէ, թե ինչ դաժանություն նրանց կներվեր, եթե ՋԼՄ-ներով այն չվոխարինվեր («Ահաբեկչությունը ոչինչ կլիներ առանց ՋԼՄ-ների»): Սակայն այս ամենը խաբուսիկ է: ՋԼՄ-ներից օգուտ չկա, դրանք ստիպված են մասնակցել տվյալ իրադարձությանը, ահաբեկչությանը ու խաղում են այս կամ այն ուղղությամբ:

Պատժիչ գործողությունն անցնում է միևնույն չկանխատեսված պարույրով, ինչպես և ահաբեկչության գործողությունը, ոչ ոք չգիտի՝ որտեղ այն կկանգնի և շրջադարձները, որոնք կհաջորդեն: Ոչ մի հնարավոր զանազանում պատկերների և ինֆորմացիայի մակարդակի, ցուցադրականի և սիմվոլիկի միջև, ոչ մի հնարավոր տարբերակում «ոճրագործության» և ճնշման միջև: Եվ հենց սա է այդ անկառավարելի բարձիթողի վիճակի հակառակ կողմը, որն ահաբեկչության իրական հաղթանակն է: Իրադարձության ընդհատակյա ճյուղավորման ու թափանցման տեսանելի հաղթանակը ոչ միայն համակարգի հետ միասին ուղիղ տնտեսական, քաղաքական, բորսայական ու ֆինանսական անկում է, այլև որպես վերջինիս արդյունք՝ բարոյականի ու հոգեբանականի անկում, արժեհամակարգի, ազատության ամբողջ գաղափարախոսության, ազատ շրջանառության և այլնի անկում… այն ամենի, ինչն արևմտյան աշխարհի հպարտությունն էր, ու այդպիսով պարծենում, որպեսզի գերիշխող դիրք գրավի աշխարհի մնացած երկրների վրա:

Անկախության գաղափարի տեսանկյունից՝ նոր և վերջին ժամանակների գաղափարի տեսանկյունից, բարքերն ու գիտակցություններն արդեն իսկ մաքրվելու ճանապարհին են: Այս մեկը ոստիկանական համաշխարհայնացում է՝ համատարած ղեկավարում, անվտանգային ահաբեկչություն: Ապակառավարումն ավարտում է առավելագույնս հակաղրության և սահմանափակումների մեջ, որոնք հավասարվում են ֆունդամենտալ հասարակության ապակառավարմանը: Առկա է արտադրության, սպառման, շահարկման, զարգացման անկումը (բայց ոչ վստահորեն կոռուպցիայի). այս ամենը տեղի է ունենում այնպես, իբր համաշխարհային համակարգը դիմում է ռազմավարական նահանջի, իր արժեքների սրտաճմլիկ վերանայման: Պաշտպանողական ռեակցիայի դեպքում թվում է, թե տվյալ համակարգն ահաբեկչական հարվածի տակ է գտնվում՝ սակայն պատասխա-

նելով, ըստ էության, իրենց գաղտնի հրահանգներին: Բացարձակ անկարգության պայմաններից ստեղծված ստիպողական կարգավորում, որը, սակայն ստիպում է ինքն իրեն ընդունել, այսպես ասած, խորապես ներքնասեռելով սեփական պարտությունը:

Ահաբեկիչների հաղթանակի մեկ այլ ասպեկտն էլ այն է, որ բռնության և անկարգության մյուս բոլոր ձևերն ի հեճուկս իրենց են գործում՝ տեղեկատվական ահաբեկչություն, կենսաբանական ահաբեկչություն, սիբիրյան խոցի ու բողոքի ահաբեկչություն, ամենը վերագրվում է Բեն Լադենին: Կարող էին անգամ ի շահ իրենց պահանջել բնական աղետներ: Նրան կազմալուծման ոչ բոլոր կազմակերպված և շրջանառության տեսակներն են շահեկան: Անգամ համաշխարհային փոխանակման կառուցվածքը վերարտադրում է դա՝ ի հեճուկս անհնարին փոխառության: Սա ինչպես ահաբեկչության վերաբերյալ մի ավտոմատ արձանագրում՝ վերստին ապահովված ահաբեկչության մասին ակամա տեղեկատվությամբ: Այս բոլոր հետևանքների արդյունքն է խուճապը, սիբիրյան խոցի այս ողջ պատմության մեջ թունավորումն ինքնին վայրկենական բյուրեղացման դեր է խաղում, ինչպես մոլեկուլի սովորական կապի արդյունքում ստեղծված քիմիական լուծույթ. բանն այն է, որ ամբողջ համակարգը հասավ մի կրիտիկական ծավալի, որը խոցելի կերպով նրան պատասխանեց կարևոր չէ, թե ինչ տեսակ ագրեսիայով:

Նման ծայրահեղ իրավիճակում լուծում չկա, հատկապես ոչ պատերազմը, որը միայն դեժավյուի իրավիճակ է ներկայացնում՝ ռազմական ուժերի միևնույն հեղեղով, թյուր տեղեկատվությամբ, անօգուտ մահակներով, խարդախ և պաթետիկ դիսկուրսներով, տեխնոլոգիական մասնատմամբ և թունավորմամբ: Կարճ ասած՝ ինչպես Ծոցի պատերազմը՝ ՋԼՄ-ների կողմից ուռճացված նշանակություն հաղորդած, բայց իրականում աննշան անկարևոր մի իրադարձություն, որն իրականում տեղի չունեցավ:

Բայց և սա է նրա այնտեղ լինելու դրդապատճառը, փոխարինել մի հրաշալի և հավաստի իրադարձությամբ՝ եզակի և անկանխատեսելի, կրկնված ու արդեն տեսակ երևույթի կեղծ եղելությամբ: Ահաբեկչական հարձակումը համապատասխանում է մի եղելության հավաստիությանն առնչվող մեկնաբանման բոլոր մոդելներին, մինչդեռ այս ռազմական ու տեխնոլոգիական հիմար պատերազմը համապատասխանում է իրադարձությանը վերաբերող առաջընթացության մոդելին, հետևաբար՝ մի արհեստական և ոչ տեղին խաղադրույքի:

Պատերազմը՝ որպես այլ միջոցներով քաղաքականության բացակայության շարունակություն:

Կույրերի թագավորությունում[159]

Ներկա ենք լինելու կատակերգական օպերային կամ էլ քաղաքական բարքերի ամենաերևելի կոմեդիաներից մեկին, և այս անգամ ընտրությունները փայլուն կերպով վաստակեցին «թակարդ հիմարների համար» անվանումը:

Բացի այդ թակարդն ընկածներից՝ ողջ նախընտրական համակարգը, հետևապես և «ժողովրդավարական» համակարգի ներկայացումն ընկավ իր սեփական թակարդը:

Ամենի պատճառը քաղաքականության նկատմամբ աճող անտարբերությունն է (չեմ խոսում պրոֆեսիոնալների մասին) և դրան գումարած հավելյալ անտարբերությունը, քանի որ անտարբերությունն ինքնին դարձավ ստուգիչ վերաբերություն, անտարբերության մի մշակույթ, որը հեռու չէ որպես հասարակության միակ կապող օղակ հանդես գալուց:

Շեղման առաջին հնարքը. «Մարդիկ անտարբեր չեն քաղաքականության նկատմամբ, այլ վերջինիս կողմից մատուցած հանդիսանքի ու իր ընդհանուր կոռումպացվածության նկատմամբ»: Առկա է վրիպակ՝ քաղաքականության անկումը պատկերող ներկայացումը հմայում է նրանց և մեզ, բայց դրա փոխարեն քաղաքականության ու ժողովրդավարական սկզբունքի ներկայացուցչության նկատմամբ մարդիկ իրոք դարձան անտարբեր: Ու այդ անտարբերությունը, որն անկասկած համընկնում է իրենց սեփական կյանքին, ուստի մի երևույթ է, որը ո՛չ մակերեսային է, ո՛չ էլ պատահական: Սա է հավանաբար թուլացման կենսական արձագանքը՝ դեմ հանդիման համընդհանուր հետապնդմանը, որը բոլոր կողմերից ճգտում է մեզ պատասխանատվության ենթարկել:

---

[159] Տպագրվել է 2002 թ. մայիսի 13-ին «Լիբերասիոն» («Liberation») թերթում: Աղբյուրը՝ http://www.liberation.fr/tribune/2002/05/13/au-royaume-des-aveugles_403304, այցելվել է 20.04.2017 թ. (թարգմ.):

Մոնտեսքյոն ասում էր. «Կգան ժամանակներ, երբ մարդիկ այնքան լուսավորված կլինեն, որ այլևս անտարբեր չեն լինի որևէ բանի նկատմամբ»: Դե ինչ, թվում է, թե մարդիկ արդեն իսկապես բավականաչափ լուսավորվել են՝ ընտրելու լինել անտարբեր որոշակի բաների նկատմամբ ու չընկնել կարևոր չէ, թե ինչին վերաբերող մահացու վտանգավորության մեջ:

Տրամադրվելով վտարել Ազգային ճակատը ցանկացած ներկայացուցչական մարմիններից՝ ամբողջովին կուրացած քաղաքական իշխող դասը (և դա տևում է արդեն 20 տարի) ռիսկի է գնում, որ այդ բացառումը կրկին կդառնա զենք և վիրուսի պես կմտնի հասարակության մեջ: Աջակողմյաններն ու ձախակողմյաններն իրար են խառնվել: Չկա որևէ աղոտ լույս Լը Պենին քշելու փորձում, իր գոյություն ունենալու իրավունքի մերժման մեջ, ինչպես և չկա ոչ մի շող, որ թալիբներին ոչնչացնելով՝ արմատախիլ կարվի ահաբեկչությունը: Լը Պենն ապրում է ներկայացուցչական համակարգից դուրս, և ցանկացած պարտադրված բացառում ամրապնդում է նրա դիրքերը, ինչպես և ցանկացած արգելված նկար ավտոմատ կերպով դառնում է էրոտիկ:

Հակաժողովրդավար գաղափարախոսություններին հեշտ է հաղթել ու որակազրկել, բայց խոսքը դրա մասին չէ, այլ ներկայացման հիվանդության, որն ամենուր է՝ և՛ դեմոկրատների, և՛ հակաֆաշիստների մոտ: Բացառելով Ազգային ճակատը՝ նրան ենք փոխանցում այդ հիվանդության ողջ կործանարար պոտենցիալը, արդյունքում առաջանում է լատենտ անտարբերության հաստատման թարախապալարը և ավարտում՝ մարմնավորելով մի ամբողջ հասարակության քաղաքական բռնի փոխանցումը նույն այդ հասարակության նկատմամբ: Լինելով խաղից դուրս վիճակում՝ Լը Պենը դառնում է ոչ միայն այն բանի խորհրդանիշը, ինչը համակարգում ներկայացված չէ ու ոչ էլ ներկայանալի է, այլև այն բանի, որն այլևս չի պահանջում որևէ ներկայացուցչություն: Այս ամենն իր մեջ պարունակում է ահռելի, անորսալի պոտենցիալ, որը կարող է բյուրեղանալ, կարևոր չէ, թե որտեղ ու

երբ, իսկ քաղաքական դասը, ըստ սահմանման, չի կարող ու չի ցանկանում իրեն հաշիվ տալ: Ժամանակ առ ժամանակ քաղաքական դասակարգը կարող է միայն ցնցվել, ինչպես վերջին ընտրություններում: Սակայն դրանից նա ոչ մի դաս չի քաղի, որովհետև կշարունակի կարծել, որ ամեն ինչ պայմանավորված է բնակչության մի մասի միամտությամբ կամ հիմարությամբ, որին անհրաժեշտ է ժողովրդավարական եղանակով ճնշել, խավարի մեջ պահել:

Միակ խելացի (քաղաքական իմաստով) ռազմավարական քայլը կլիներ Ազգային ճակատը բացահայտորեն ներառել ներկայացուցչական համակարգում, բայց անգամ դա էլ ոչնչի չի ծառայի, քանի որ Լը Պենը մարմնավորում է այլ բան, քան զուտ քաղաքական գաղափարներ և կատեգորիալ հիշաչարություն. ինչ-որ անըմբռնելի ու կարծր, քաղաքական դրդապատճառներին չենթարկվող մի բան, որը անընդհատ վերածնվում է: Փաստացի շատ լավ տեսնում ենք, որ բոլորն իրեն դեմ լինելով՝ առանց դիմադրության նա իր կողմն է քաշում ողջ խաղադրույքը: Ահա թե ինչով են պայմանավորված նրա վստահությունն ու ցնծությունը. նա ոչ մեկի վստահության կարիքը չունի, որովհետև նա իրենից ոչինչ չի ներկայացնում, նա ոչինչ է, բայց և այդ ամենով հանդերձ՝ կատարելապես վերականգնվում է, մինչդեռ մյուսները տխրում ու կրում են իրենց ներկայացուցչական սուգը: Սա բացարձակ ծաղր է ու միևնույն ժամանակ ներկայացնում է իրավիճակի ճշմարտությունը: Նա նման է Հայր Ուբյուին (Père Ubu[160]), ով շատ նուրբ ձևով, դաժան հեգնանքի միջոցով կարողանում է լարել ձախակողմյան թևին՝ քվեարկելու Շիրակի օգտին՝ հասցնելով նրան այդ ևվաստացուցիչ վիճակին, «տաբատակալներով» հանդերձ: Միևնույն ժամանակ, իր հակառակորդների շնորհիվ պարտադրելով ընտրել աջակողմյան թևը՝ վերջինիս զրկելով իրական ողջ լեգիտիմությունից, այդպիսով ստիպե-

[160] Ֆրանսիացի գրող Ալֆրեդ Ժարիի կողմից ստեղծված գրական կերպար, Ֆրանսուա Ուբյու կամ Հայր Ուբյու (թարգմ.):

լով դառնալ պատանդ ու փոխադարձաբար որակազրկել երկու հակառակ կուսակցությունները: Նա պարզապես շահագործեց ներկայացուցչական համակարգի տրամաբանությունը: Երկրորդ փուլում ձախակողմյան թևը կարող էր քվեարկել միայն ինքն իր դեմ, և Շիրակը կարող էր իշխել միայն դատարկությունում, որովհետև այլևս չգիտի, թե ում է ներկայացնում:

Իրավամբ, սեպտեմբերի 11-ի կազմակերպիչների պես Լը Պենն իսկական ահաբեկիչ է: Նա համակարգի դեմ շրջեց բացառման զենքը, ճիշտ ինչպես ահաբեկիչները Բոինգները դարձրեցին աշտարակների վրա ներած ռումբեր: Դա իսկական մահափորձ էր երկվորյակ աշտարակների՝ ձախ և աջ կուսակցությունների նկատմամբ: Եվ ինչպես նրանք իրենց մահը բացարձակ զենք դարձրեցին, այդպես էլ այն վիրտուալ բեկում մտցրեց ներկայացվողների ու ներկայացվածների միջև, մտցրեց բացառում անգամ ժամանակակից ժողովրդավարության կառուցվածքի սրտում. ցնցման զենք ընդդեմ ողջ քաղաքական դասակարգի: Եվ ընտրությունները կծառայեն վերականգնելու մի սուրբ միություն և շեղելու այդ ծանր հարվածը, ճիշտ ինչպես Աֆղանստանի պատերազմը կծառայեր կանխելուն սեպտեմբերի 11-ի հարձակումը և վերականգնելուն համաշխարհային կարգը:

Լը Պենի հետ կապված բոլոր դիսկուրսները առաքելական (apotro païques) բնույթ են կրում: Դրանք ուղղված են անեծքի կանխմանը, գոյության վերացմանը ու հատկապես հավաստիացնելու ինքն իրեն, որ վերջինս ոչինչ է (ինչը, ցավալիորեն, ճշմարիտ է, որովհետև այդտեղ է նրա ուժը, լինել Գիդույի

(Gidouille[161]) պարույրը, կոռուպցիայի ու ծաղրի այդ պատաֆիզիկ[162] ուրվականը):

Հիշենք այն համընդհանուր թեթևացումը, երբ Ճակատը, կարծեք հրաշքով, 1998 թ. հանկարծ մասնատվեց: Չէ որ մենք ձեզ ասում էինք, որ Ազգային ճակատը ոչինչ է, նույնիսկ ոչինչ պետք չեղավ անել, որպեսզի ինքն իրենց մեկուսացնի: Բայց ավաղ, այսօր լրիվ հակառակն է: Չախակողմյան ու աջակողմյան թևերն են ինքնամեկուսացված՝ ավիերելով իրենց նկատմամբ առկա վստահությունը ու ոչնչացնելով երևակայական թշնամուն, որն անհրաժեշտ էր իրենց ժողովրդավար կարգավիճակը հաստատելու համար:

Մշտապես միևնույն փտած վերլուծությունը, օբյեկտիվ պատճառների նեխած մարտահրավերները (աճող վտանգավորությունը, անբարենպաստ պայմաններում հայտնված անհաջող քվեարկողները, քաղաքական դասի անկարողությունը, անպատասխանատու խուսափումը և այլն), իսկ առաջին տեղում ամոթը, ժողովրդավար տխրությունը: «Մենք ամաչո՛ւմ ենք» ասում են արվարձաններում ապրող միևնույն երիտասարդները, ովքեր անցյալում գոռում էին. «Մենք ատո՛ւմ ենք»:

Փոխանակ քաղաքական դասն ինքն իրեն շնորհավորեր ճշմարտացիության փորձությունը հաղթահարելու համար, որը նրան ապրելու կամ հարություն առնելու հնարավորություն տվեց... Իսկ առայժմ նա ամեն ինչ արեց ինքն իրեն կործանելու համար: Ավելի վատ՝ հենց նա իր թշվառության ու վշտի մեջ ներքաշեց ողջ բնակչությանը, որը մեխանիկորեն առաջ նետվեց փրկելու քաղաքական դասը, որին նա այլևս չի հավատում:

---

[161] Ֆրանսիացի պոետ, արձակագիր, դրամատուրգ, աբսուրդիզմի նախակապետներից մեկի՝ Ալֆրեդ Ժարիի (1873-1907) թատրոնին բնորոշ տերմին, որը մասնավորապես վերաբերում է Հայր Ուբյուի որովայնի վրա պատկերված պարույրին (թարգմ.):

[162] Ալֆրեդ Ժարիի հորինած տերմինը, որն առաջին անգամ կիրառեց իր «Գինյոլ» պիեսում (1893), որը մեկնաբանում էր որպես «մետաֆիզիկային լրացնող գիտություն առարկայի մասին»: Այսինքն՝ ֆիզիկայից ու մետաֆիզիկայից էլ ավելի լայն, «պոեզիան ու գիտությունը կապող» հասկացություն (թարգմ.):

Հանդիսանքի ինքնասպանությունը[163]

Սոցիալական տարվա ծիսակարգը ցանկանում էր, որպեսզի գարնանային գործադուլներն անցկացվեին ամառային փառատոներին զուգահեռ: Սա է մշակույթի, փառատոնի և տեսարժան հանդիսությունների միջոցով սոցիալականի մաքրման քաղաքականությունը, որն այս տարի մեկնարկեց սեզոնային աշխատողների շարժմամբ, և դրա հետ միասին սկսվեց նաև զորացրման (դեմոբիլիզացիայի) ռազմավարությունը, որը դեռ անցած գարնանն այդքան լավ էր աշխատում: Գործադուլը ճեղքեց արձակուրդների պատը, և անկախ այդ գործադուլների բովանդակությունից ու գործելու ձևից՝ այն իրավամբ իրադարձություն է:

Նույնն է թե իրադարձությունը լինի մի անօգուտ միավոր, ապարդյուն նշաններ արտադրող մասնիկ, և ոչ թե երկաթուղու աշխատողները կամ դասավանդողները, կամ էլ թե դերասանը: Գործադուլի «զոհերը» նրանց նույնպես փոխեցին. սա այլևս մետրոյի կամ SNCF[164]-ի ուղևորները չեն, այլ՝ ավելցուկի ու սպառման ոչ նյութական բարիքներ օգտագործողները: Ու քաղաքականապես դա շատ ավելի վատ է, քանի որ շոշափում է հասարակական դաշինքն ու սիմվոլիկ նկարագիրը: Հետաքրքիր է տեսնել, թե ինչպես է հանկարծակի անիծված կողմում, որից չգիտեն ինչպես ազատվել, մշակութային արժեքն անկում ապրում:

Եվ չափազանց երախտապարտ չէին լինի իշխանությանն իրենց անհաջող նախաձեռնությամբ այս իրավիճակում հայտնվելու համար՝ չցանկանալով, ստիպված լինելով խզել այդ համատարած ոչխարացումը, «ստեղծման» շվայտությունն ու մշակութային սպառումը, որի պատանդն ու հանցակիցն ենք

---

[163] Աղբյուրը՝ http://www.liberation.fr/tribune/2003/07/16/les-suicides-du-spectacle_439816, այցելվել է 02.05.2017 թ. (թարգմ.):

[164] SNCF (Société nationale des chemins de fer français) - Ֆրանսիական երկաթգծերի ազգային ընկերություն (թարգմ.):

հանդիսանում բոլորս (մինչդեռ Ստոկհոլմյան համախտանիշով «պատանդ վերցված» ականատեսները երբեմն բավարարվում են բռնել գործադուլավորների կողմը): Կարող ենք միայն ուրախանալ իշխանության այս կուրությամբ, որը հաստատապես չհասկացավ մշակույթի և ազատ ժամանակի միջոցով կոնֆլիկտների ուղղության շեղման հսկայական արդյունքը (արդեն իսկ 80-ականներին, մեզ մոտ տոնակատարություններ կազմակերպելով, Նիկոլլինիին հաջողվեց Հռոմում կանխել ահաբեկչությունները. գլխավոր ահաբեկիչը հենց Ջեք Լանգն էր):

Ամեն դեպքում, կարող ենք միայն գնահատել, թեկուզ և ոչ երկարատև, թունավորման այդ բուժումը:

Հետևապես, սեփական շահերի չիմացությամբ, հենց պետության տեսանկյունից կարող էինք խոսել ինքնասպանությունից: Ուստի, սեզոնային աշխատողներն էին, որ իրենց մեղադրեցին «ինքնասպանության հակված» լինելու մեջ: Եվ ինչ-որ չափով այդպես էլ կար, բայց դիտավորյալ, ու այստեղ խոսքն այլ բանի մասին է գնում, քան պարզապես ոտքի մեջ գնդակ բաց թողնելը: Ցանկացած կարևոր գործողություն իր մեջ ներառում է ինքնակործան չափում և իր սեփական արտոնությունների մարտահրավեր:

Արդեն իսկ 68 թ. մայիսին տեղի ունեցած իրադարձությունները[165] մշակույթի, գիտելիքի և համալսարանական արտոնության ինքնակործանման գործողություններ էին: Այդ գիտելիքը, որի փոխանցումն անհնար եղավ, ինչպես տնտեսական ու պրոֆեսիոնալ (ավելի շատ աշխատանք գտնելու հեռանկարներ), այնպես էլ իմացության ու նրա նպատակաուղղվածության առումով: Հենց նա կործանվեց 68 թվականին[166]: Դա այն սկզբնական

[165] Ֆրանսիայում 1968 թ. մայիս-հունիս ամիսներին տեղի ունեցան ցույցեր, գործադուլներ, զանգվածային անկարգություններ: Շարժումը սկսվեց ուսանողների նախաձեռնությամբ, որին հետո միացան բանվորները (թարգմ.):

[166] Աշխարհի տարբեր երկրներում 1968 թ. տեղի ունեցող ուսանողական բողոքներն առաջին հերթին ուղղված էին ընդդեմ Վիետնամի պատերազմին ԱՄՆ

իրադարձությունն էր, որը եկավ չեզոքացնելու համընդհանուր, «օգտակար» գործադուլը, ինչը սոցիալական խզումից անդին հաջողացրեց ստեղծել մի խորհրդանշական խզում: Այն, ինչը քաղաքականապես դրա հետ տեղի ունեցավ, վճռորոշ չէ. նման իրադարձությունը մենք չենք դատում իր «օգտակարության» արդյունքով: Բայց երբ այդպիսին չէ նպատակը, ինչը որակազրկում ենք վիրավորիչ «ինքնասպան» տերմինով, ապա այլևս իրադարձություն չկա, ու ամենը խաղի է վերածվում:

Ստացվում է, որ, իրապես, մշակույթի վրա հարձակման փաստը շատ հազվադեպ է հանդիպում: Ուրեմն ներկայացման մեր գերիշխող մշակույթը հանդիսանքի հասարակությունն է (ինքնին դառնալով մշակութային կրեմով տորթ): Այս «ինքնասպան» հարձակումը հարձակում է ընդդեմ հանդիսանքի հասարակության: Հենց նույն հանդիսանքի մարդկանց միջոցով արդարացի պատասխան ընդդեմ դիտարժանի: Սա դիտարժան դարձած հանդիսանքի աշխարհի մի մասն է, որը խորտակվելով մի պահ դադարեցնում է այդ դանդաղ ոչնչացումը: Մշակույթը, որին սպառնում են ծրագրավորված և անհագուրդ մշակութայնությամբ, շրջվում է իր իսկ դեմ:

Հայտնի է, որ մշակույթը, «իսկական» մշակույթը, ոչնչի համար պարտական չէ: Այն անգին է, միևնույն ժամանակ (դիսկուրսում) և ավելորդ, առանց որևէ հետաքրքրության: Ի՞նչ է իրեն մնում անել տվյալ պահին, եթե ոչ դառնալ ոչինչ ու ինքնասպան լինել՝ ապացուցելու իր ոչնչացումը: Ջոհաբերելով անփոխանակելի այդ մնացուկը՝ մշակույթը, որն իշխանությանը նետում է մարտահրավեր, միակն է, որ կարողացանք նրան առաջադրել, որովհետև իշխանությունն իրականում վախենում է միայն մահից:

մասնակցությանը, ինչպես նաև նրանք պայքարում էին մարդու իրավունքների, ռասիզմի դեմ, հանդես գալիս ֆեմինիզմի ու բնապահպանության սատարմանն ուղղված կոչերով: Բողոքի գաղափարախոսները նոր ձախակողմյաններն էին (թարգմ.):

Ակնհայտորեն, կարող ենք հակադրվել, որ հանդիսանքի հասարակությունից իրենց մերժանն ընդդիմացողները, դարձյալ, հանդիսանքի շրջանակներում են տեղավորվում, Դեբորի համաձայն՝ ներգրավված դիտարժան մասում: Ճիշտ այնպես, ինչպես կարողացան հակառակվել սեպտեմբերի 11-ի ահաբեկիչներին, որոնք չցանկանալով միայն դա էին անում՝ խաղում համակարգի խաղը: Այս հեռանկարում չկա որևէ այլ հնարավոր առարկություն, որևէ գնահատական՝ ուղղված մշակույթի հակառակ կողմին կամ գերիշխող ուժին, քան հանցակցություն երկրորդ մակարդակում, ուր հակառակ կողմն ու հակառակ երեսը ձգվում են Մյոբիուսի մատանու[167] դժոխային շերտով, ինչպիսին էլ որ լինի հանդիսանքի հասարակությունը կամ էլ համաշխարհայնացման հասարակությունը:

Առարկումն անխուսափելի է, ու նմանատիպ ցանկացած իրավիճակ՝ այսօր անլուծելի: Միևնույն ժամանակ՝ հազիվ հանդուրժելի: Յուրաքանչյուրին տրված է ընտրել ու իր նշումներն անել ինչպես գործողության, այնպես էլ տեսության մեջ:

[167] Հեղինակը զուգահեռ է տանում 2008 թ. լույս տեսած Ֆրանկ Թիլիեի «Մյոբիուսի մատանին» վեպի հետ (Éditions du Passage և Pocket հրատարակություն) (թարգմ.):

Պատերազմի պոռնոգրաֆիան[168]

Առևտրի համաշխարհային կենտրոն՝ արտաքինից իշխանությանը հասցված ցնցում, նվաստացուցիչ մի հարված: Բաղդադի բանտերի լուսանկարները վատթարագույնն են. դա այն կործանիչ ստորացման խորհրդանիշն է, ինչին ինքն իրեն ենթարկում է համաշխարհային ուժը, տվյալ դեպքում՝ ամերիկացիները, ու այդ լուսանկարները դարձան ամոթի ու անմաքուր խղճի ցնցում: Ահա, թե ինչով են այդ երկու իրադարձությունները փոխկապակցված:

Երկուսն էլ ամբողջ աշխարհում առաջացնում են բուռն արձագանք. առաջինի դեպքում՝ հրաշքի զգացում, երկրորդի՝ նողկալիության:

Սեպտեմբերի 11-ի դեպքում՝ վիթխարի իրադարձության հուզիչ պատկերներ, երկրորդի դեպքում՝ ինչ-որ բանով գռեհկացված պատկերներ, ինչը, ըստ էության, հակասում է ինքնին «իրադարձություն» հասկացությանը: Դա պարզապես անպարկեշտ ստորության չիրադարձություն (non-événement) է, ոչ միայն զոհերի, այլև բռնության նմանակման սիրողական մակարդակի վրա գտնվող սցենարիստների դաժան ու անհարիր այլասերումն է: Քանի որ ամենավատն այն է, որ խոսքը գնում է հենց բռնության, պատերազմի, պոռնոգրաֆիայի նմանակման մասին, որոնք դարձան պատերազմի ստորության ծայրահեղ ձևը: Այնպիսի պատերազմի, որն ունակ չէ լինել ուղղակի սովորական պատերազմ, որտեղ իրար են սպանում, և որն արդեն ուժասպառ է եղել՝ դառնալով զավեշտալի դաժան ու ինֆանտիլ reality-show և հզորության անհույս պատրանք:

Այս տեսարանները դարձան գագաթնակետի հասած իշխանության պատկերումը, բայց որն այլևս չգիտի ինչ անել ինքն իր

[168] Աղբյուրը՝ http://www.liberation.fr/tribune/2004/05/19/pornographie-de-la-guerre_480052, այցելվել է 30.05.2017 թ. (թարգմ.):

հետ՝ ունենալով առանց օբյեկտի, առանց վերջնական նպատակի իշխանություն, չտեսնելով իր առջև իրական թշնամուն ու գիտակցելով սեփական բացարձակ անպատժելիությունը: Եվ այդ իշխանությունը կարող է միայն առիթ ու անառիթ նվաստացնել, իսկ ուրիշների նկատմամբ կիրառվող բռնությունը, ինչպես հայտնի է, ոչ այլ ինչ է, քան ինքդ քո նկատմամբ կիրառվող բռնություն: Այն կարող է միայն մի հարվածով ստորանալ, բարոյալքվել ու այլանդակված կատաղության մեջ ինքն իրենից հրաժարվել: Անարգանքն ու ապականությունն այն տերության վերջին նախանշաններն են, որն այլևս չգիտի ինչ անել ինքն իր հետ:

Սեպտեմբերի 11-ին տեղի ունեցածն այն ամենի արձագանքի մարմնավորումն էր, որն այլևս չգիտեր, թե ինչ անել այդ համաշխարհային իշխանության հետ և այլևս չէր կարող այն հանդուրժել: Իրաքցի բանտարկյալների նկատմամբ դաժան վերաբերմունքի առումով վատթարագույնը հենց ինքը՝ ազդու իշխանությունը, չգիտի ինքն իր հետ ինչ անել ու այլևս իրեն չի հանդուրժում՝ հասնելով անմարդկային նմանակման մակարդակի:

Այդ լուսանկարները նույնքան վտանգավոր են Ամերիկայի համար, ինչպես կրակի մեջ բոցավառվող Առևտրի համաշխարհային կենտրոնինը: Միևչդեռ դա միայն Ամերիկային չի վերաբերում: Անօգուտ է ողջ մեղքը բարդել ամերիկացիների վրա. դժոխային մեքենան, ինքն իրենով, ինչպես պետք է, հափշտակվում է ինքնասպան գործողություններում: Իրականում, ամերիկացիները գերազանցեցին իրենց իսկ սեփական հզորությունը: Նրանք այն կառավարելու ոչ մի միջոց չունեն: Բայց չէ որ մենք էլ ենք հանդիսանում այդ հզորության անբաժան մասը: Որովհետև այդ լուսանկարներում բյուրեղացված է ողջ Արևմուտքի անմաքուր խիղճը, որովհետև ամերիկացի զինվորների սադիստական ծիծաղի պոռթկման մեջ, ինչպես նաև իսրայելական պատի կառուցման ետևում նորից նույն Արևմուտքն է կանգնած: Անսահ-

ման հզորություն, որն ինքն իրեն պիտակում է որպես զազրելի ու պոռնոգրաֆիկ. հենց այստեղ է թաքնված լուսանկարների ճշմարտությունը: Ճշմարտությունը և ոչ թե արժանահավատությունը: Այժմ արդեն կարևոր չէ՝ իրական են, թե կեղծ: Հետայսու մենք մշտապես կկասկածենք դրանց իսկության վրա: Կարևոր է միայն դրանց ազդեցությունը՝ այն չափով, ինչ չափով որ դրանք դարձան պատերազմի մի մասը: Այլևս «ներգրավված» (embedded) լրագրողների կարիք չկա. իրենք՝ զինվորականներն են լուսանկարում, ու թվային ֆոտոխցիկի շնորհիվ դրանք կդառնան այդ պատերազմի անբաժան մասը: Լուսանկարներն այլևս պատերազմը չեն պատկերում. նրանց համար գոյություն չունի ո՛չ տարածություն, ո՛չ ընկալում, ո՛չ կարծիք: Դրանք այլևս պատկերման միջոց չեն ու չեն էլ կրում տեղեկատվություն բառիս բուն իմաստով, ու այն հանկարծական հարցը՝ արժի լուսանկարել, պատճենել, տարածել, արգելել կամ էլ թե «ամենակարևորը»՝ իսկական են, թե կեղծ, թվում է «անտեղի»:

Որպեսզի լուսանկարները հաղորդեն իսկական տեղեկատվություն, դրանք պետք է տարբերվեն պատերազմից: Մինչդեռ այսօր դրանք դարձան պատերազմի պես վիրտուալ և հետևապես դրանց յուրահատուկ դաժանությունն ավելանում է պատերազմի յուրահատուկ դաժանությանը: Դրան գումարած, շնորհիվ իրենց ամենուր լինելուն ու այսօրվա «ամենատեսանելիության» համաշխարհային իմպերատիվին՝ լուսանկարները, ըստ էության, դարձան պոռնոգրաֆիկ ու պատերազմի պոռնոգրաֆիկ բնույթի մի մասը:

Այս ամենում, և հատկապես իրաքյան պատերազմի վերջին էպիզոդում, առկա է այդ լուսանկարներին հատուկ արդարություն. շոու անողը նույն այդ շուտից էլ կզոհվի: Ցանկանո՞ւմ եք լուսանկարների միջոցով իշխանություն ձեռք բերել: Ուրեմն դրանց հակառակ կողմը ձեզ համար մահաբեր կլինի:

Ամերիկացիներն ունեն այդ դառը փորձը ու դեռ կունենան: Ու սա չնայած ամեն տեսակ «ժողովրդավարական» խորամանկությունների ու թափանցիկության անհուսալի նմանակման վոխկապակցված ռազմական օգնության անհուսալի տեսանելիության: Ո՞վ իրականացրեց այս ամենը, և ո՞վ է իրականում պատասխանատու դրա համար: Ռազմական վերնախա՞վը: Մարդկային բնությո՞ւնը՝ մնալով անասնական, «անգամ ժողովրդավարության պայմաններում»: Իրական սկանդալը ոչ թե տանջանքների ենթարկման փաստն է, այլ այն մարդկանց դավաճանությունը, որոնք գիտեին դա ու ոչինչ չասացին (կամ էլ թե նրանց, որոնք այն բացահայտեցի՞ն): Ամեն դեպքում, բռնությունն իսկապես շոշափեց ժողովրդավարության թափանցիկությունը, որը ձգտում է ետ բերել իր բարի համբավը սեփական արատների ցուցադրման ճանապարհով:

Այս ամենից զատ՝ էլ ի՞նչ է թաքցնում այս զազրելի տեսլագրությունը (scénographie): Առաջին հերթին նրանք պատասխանն են բոլոր տեսակի ռազմավարական ու քաղաքական խորամանկությունների, սեպտեմբերի 11-ի ապրածի նվաստացման՝ ցանկանալով վրեժխնդիր լինել էլ ավելի ուժեղ նվաստացմամբ, քան մահը: Չհաշված գլխներին հագցրած սև փիլոնները, որոնցով գլխատվածի տեսք են ստանում (որն աղոտ կերպով համապատասխանում է ամերիկացու գլխատմանը), չհաշված մարդկային կուտակումներն ու շները. հարկադրված մերկություն արդեն իսկ բռնաբարում է: Տեսանք և ամերիկացի զինվորներին, որոնք մերկ ու շղթայված իրաքցիներին ման էին տալիս քաղաքով, իսկ Պատրիկ Դեկաերկի (Patrick Dekaerke) «Ալլահ Ակբար» պատմվածքում տեսնում ենք Ֆրենկին՝ ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության գործակալին, ով ստիպում է արաբին հանվել, բռնի ուժով ստիպել հագնել սեղմիրան և ցանցավոր զուգագուլպա, ու, վերջապես, տեսնում արաբի, ով անասնապղծությամբ է զբաղվում խոզի հետ, ու այդ

ամենը գործակալը լուսանկարում է, որպեսզի ուղարկի գյուղ իր բոլոր բարեկամներին: Այդպես մարդ կարող է ոչնչացվել: Ահա այստեղ ենք տեսնում, որ այս պատերազմի նպատակը ոչ թե մարդկանց սպանությունն է կամ էլ հաղթանակը, այլ թշնամու ոչնչացումը, ձգտել զրկել նրան (կարծեմ ըստ Կանետիի) երկնային լույսից:

Փաստորեն ի՞նչ են ստիպում այդ մարդկանց խոստովանել, ո՞րն է այն գաղտնիքը, որը ցանկանում են նրանցից կորզել: Ամեն բան պարզից էլ պարզ է՝ նրանք ցանկանում են իմանալ՝ հանուն ինչի՞, ի բարօրություն ինչի՞ նրանք մահից չեն վախենում: Այստեղ առկա են խորը նախանձ ու «զրոյական մահ» (“zéro mort”) ասվածի վրեժը՝ ուղղված այն մարդկանց, ովքեր նրանից չեն վախենում, դրա համար էլ նրանց պատիժը կլինի ավելի վատը, քան մահը… Անամոթության գագաթնակետ, մերկության անարգանք, ամենի քողազերծում. մշտապես թափանցիկության միևնույն խնդիրն է՝ հանել կանանց գլխաշորը կամ հագցնել տղամարդկանց փիլոններ, որպեսզի իրենց զգան ավելի մերկ, ավելի ստորացված… Այս ողջ դիմակահանդեսը, որը պսակում է պատերազմի խայտառակությունը՝ հասցնելով ընդհուպ այլակերպման, այս ամենից վայրագ պատկերում (ամենից վայրագ Ամերիկայի համար), որովհետև այն ամենապատրանքայինն ու «դարձուկն» էր՝ պարկը գլխին բանտարկյալը, որին սպառնում է մահ էլեկտրական աթոռի վրա և ամբողջությամբ դառնալով գլխապարկ, Կու-Կլուս-Կլանի (Ku Klux Klan)[169] անդամ դարձած, իր նմանների պես խաչված: Տվյալ դեպքում, Ամերիկան ինքն իրեն դատապարտեց էլեկտրական աթոռին:

[169] Ուլտրաաջակողմյան կազմակերպություն, որը պայքարում է սպիտակամորթների գերիշխանության համար, սպիտակամորթների նացիոնալիզմ: 20-րդ դարի կեսին այն հանդես եկավ նաև ընդդեմ կոմունիզմի (թարգմ.):

Անիծվես դու[170]

Պետք կլինի մեկ գիշերվա մեջ այրել 1500 մեքենա, հետո նվազման կարգով՝ 900, 500, 200, մինչև այն հասնի առօրեական «նորմալին», որպեսզի նկատենք, որ մի գիշերում մեր քնքուշ Ֆրանսիայում անհայտ ներգաղթյալի պատվին միջինում 90 մեքենա է այրվում, ինչպես անընդմեջ բոցավառվող Հաղթական կամարի կրակ: Այսօր հայտնի է հուզիչ, սակայն լիովին խաբկանք հանդիսացող վերանայման ժամանակը:

Մի բան հաստատ է՝ Չեռնոբիլի վթարի հետ սկսված ֆրանսիական այդ բացառումն ավարտված է: Մեր սահմանը շատ լավ խախտվեց ռադիոակտիվ ամպով, և այսօր «ֆրանսիական մոդելը» քանդվում է մեր իսկ աչքի առաջ: Բայց եկեք ցայտնոտի մեջ չընկնենք, սա միայն ֆրանսիական քանդվող մոդելը չէ, այլ ողջ արևմտյան մոդելն է, որը մասնատվում է ոչ միայն արտաքին բռնության ազդեցության ներքո (ահաբեկչության ձևով կամ աֆրիկացիների կողմից Մելիլիայի փշալարերը[171] գրոհելով), այլև ներքին:

Առաջին եզրահանգումը, ու սա չեղյալ է դարձնում բոլոր քարոզներն ու ներկայիս դիսկուրսները, այն է, որ ինքնին մասնատման փուլում գտնվող հասարակությունը որևէ հնարավորություն, կարողություն չունի ինտեգրելու իր ներգաղթյալներին, որովհետև նրանք միաժամանակ հանդիսանում են այդ մասնատման արդյունքն ու անօրինական անալիզատորը: Դաժան իրականությունն այն է, որ եթե տեսականորեն ներգաղթյալները գտնվում են խաղից դուրս վիճակում, ապա մենք խորապես անժառանգ

[170] Տպագրվել է նոյեմբերի 18, 2005 թ., «Libération» օրաթերթում: Աղբյուրը՝ http://www.liberation.fr/tribune/2005/11/18/nique-ta-mere_539377, այցելվել է 20.04.2017 թ. (թարգմ.):

[171] Մելիլիա՝ Աֆրիկայի հյուսիսում, Մարոկկոյի հետ սահմանը կիսող, իսպանական ինքնավար քաղաք: Մարոկկո-Իսպանիա սահմանը կառուցվել է Իսպանիայի կողմից՝ նպատակ ունենալով կանխել անօրինական ներգաղթը ու մաքսանենգությունը (թարգմ.):

ենք ու գտնվում ենք չարի նույնականացման մեջ: Ներգաղթն ու վերջինիս խնդիրներն ընդամենը մեր հասարակության ինքն իր հետ պայքարում արտացոլվող բաժանման նախանշանների արտացոլումներն են: Ավելին, ներգաղթի սոցիալական հարցն ընդամենն ավելի ակնառու, ավելի ուռճացված ձևով իր իսկ սեփական հասարակությունից եվրոպացու արտաքսման պատկերումն է (Հելե Բեժի[172]): Անընդունելի ճշմարտություն է, որ մենք այլևս դադարել ենք ինտեգրել անգամ մեր իսկ սեփական արժեքները, և հանկարծ դրանց կրողների պակասի պատճառով մեզ մնում է միայն, ուզած-չուզած, նրանց վրա սաղացնել:

Մենք այլևս ի զորու չենք առաջարկել, ինչ ուզում է լինի, ինտեգրման տերմինի հետ կապված որևէ բան, բայց ի՞նչ է ինտեգրացումը: Մենք «հաջողված» ինտեգրացման տխուր օրինակ ենք՝ լիովին զրկված ինքնատիպությունից, կյանքի տեխնիկական ու հարմարավետ մոդել, որի մասին հոգում ենք, որպեսզի իրար այլևս հարցուփորձ չանենք: Հետևաբար, հազվադեպ հանդիպող տերմինով խոսել Ֆրանսիայում ինտեգրացման մասին պարզապես նշանակում է ֆրանսիացիների համար անհույս երազել իրենց իսկ սեփական ինտեգրացիայի մասին: Եվ նրանք մի գծով առաջ կշարժվեն՝առանց գիտակցելու, որ հենց դա է մեր հասարակությունը, որը, նույնիսկ իր սոցիալիզացիայի լատենտ գործընթացներով հանդերձ, շարունակում է ամեն օր գաղտնի պահել այդ դաժան խտրականությունը, որտեղ ներգաղթյալները միակ մատնանշված զոհերը չեն: Դա է «ժողովրդավարության» անհավասար փոխանակման գինը: Այս հասարակությունը պետք է առճակատվի շատ ավելի ահավոր փորձության հետ, քան այդ հակաղիր ուժերն են՝ իր սեփական բացակայությունը, իրականության կորուստը, այնպես որ շուտով նա այլևս չի ունենա որևէ այլ սահմանում, քան օտար մարմինները, որոնք իրեն հետապնդում են, այն մարմինները, որոնց նա վտարեց, ու որոնք

[172] Թունիսցի գրող (ծնվ. 1948 թ.) (թարգմ.):

այժմ հենց իրենք են նրան դուրս հանում՝ միաժամանակ բացահայտելով այն սաստիկ պահանջը, որը նրա մեջ կործանվում ու արթնացնում է գիտակցման պես մի բան: Եթե այս հասարակությունը հաջողեցներ նրանց ինտեգրել, ապա վերջնականապես կդադարեր գոյություն ունենալ վերջիններիս աչքերում:

Եվս մեկ անգամ հիշեցնեմ՝ այդ ֆրանսիական ոճին հատուկ խտրականությունը միայն համաշխարհային բեկման միկրոմոդելն է, որը շարունակում է համաշխարհայնացման նշանի ներքո դեմ առ դեմ տեղավորել երկու անհամատեղելի աշխարհներ: Եվ այն նույն վերլուծությունը, որն իրականացնում ենք՝ մեր իրավիճակից ելնելով, հնարավոր է արտացոլվի համաշխարհային մակարդակում: Իմանալու համար, որ իր իսկ դեմ ուղղված բախումներով պայմանավորված, ինքնին միջազգային ահաբեկչությունը լոկ համաշխարհային իշխանության բաժանման համախտանիշն է: Ինչ վերաբերում է լուծում գտնելուն, ապա տարբեր մակարդակներում միևնույն սխալն է ի հայտ գալիս՝ լինի մեր քաղաքի ծայրամասերում կամ թե մուսուլմանական երկրներում: Լիակատար պատրանք է այն համոզմունքը, որ աշխարհի մյուս մասի համար արևմտյան կենսամակարդակ ապահովելով՝ հարցը կլուծվի: Ուստի խզումը շատ ավելի խորն է, և, իսկապես, կցանկանայի՞ն արևմտյան բոլոր միավորված ուժերը նվազեցնել այդ խզումը (ուրեմն սա է կասկածելու հիմքեր տալիս), ինչն այլևս չեն կարողանում: Հենց սա է նրանց պահպանման ու գերակայության մեխանիզմը, որը նրանց խանգարում է, մեխանիզմ, որը բոլոր համապարփակ արժեքների բարեպաշտական ճառերի միջոցով միայն հզորացնում է այդ իշխանությունը և հրահրում հակամարտ կոալիցիոն ուժերի վտանգ, որոնք նրան կկործանեն կամ երազում են կործանել:

Բարեբախտաբար կամ դժբախտաբար իրադարձությունների նախաձեռնությունն այլևս մեր ձեռքում չէ, ինչպես և դարեր շարունակ չի եղել իրադարձությունների ղեկավարումը, և մեր

գլխի վերևում կախված է անկանխատեսելի հետաղարձ բռնկումների հաջորդականությունը: Հետահայաց կարելի է ափսոսալ արևմտյան աշխարհի այդ սնանկության համար, սակայն «Աստված ժպտում է նրանց, որոնք բացահայտում են սուտը, որի պատճառն իրենք են»:

Քաղաքի ծայրամասերում բռնկումների այդ վերսկսումն ուղղակիորեն կապված է համաշխարհային իրավիճակի հետ, բայց այստեղ նույնպես, տարօրինակաբար, մեր պատմության մեջ մինչև վերջին ժամանակներս այն երբեք հարցի ձևով չի ձևակերպվել՝ լինելով խնամքով քողարկված, ինչպես անգիտության վերաբերյալ, այնպես էլ քաղաքի ծայրամասերում հանրաքվեին (ռեֆերենդումին) «ոչ» ասելու դեպքից ի վեր: Քանի որ շատ չիմանալով, թե ինչու են «ոչ» քվեարկել, մարդիկ պարզապես չէին ցանկանում խաղալ այդ խաղը, որով այդքան տոգորված էին, քանի որ նրանք մերժում էին նաև այդ հիասքանչ «այո»-ն «պատրաստի» Եվրոպայում ներգրավված լինելը, իսկ «ոչ»-ը համակարգի պահանջարկ չունեցող ապրանքների վերարտադրման իրական արտահայտումն էր, ներգաղթյալների վերարտադրումը նույն իրենց՝ ներգաղթյալների՝ սոցիալիզացիայի համակարգից աքսորվածների պատկերով: Եվրոպան շրջելու գործում կրկնվում են այդ նույն անզգուշությունը, միևնույն անպատասխանատվությունը. ներգաղթյալ երիտասարդներն այրում են սեփական թաղամասերը, իրենց իսկ դպրոցները, ինչպես 60-ականներին Լոս Անջելեսի Ուոթս թաղամասի ու Դեթրոյթի սևամորթները:

Քաղաքականապես ու մշակութապես բնակչության զգալի մասն իրեն տեսնում էր ներգաղթյալ իր իսկ սեփական երկրում, որն անգամ չի կարող նրանց ազգային պատկանելիության որևէ սահմանման մեջ ներառել: Ըստ Ռոբերտ Կաստելի եզրույթի՝ բոլոր զատվածները: Ուստի կազմից դուրս առ հանումը (au desafio), մարտահրավերը հեռու չեն: Այդ բոլոր բացառությունները, զա-

տումները, ովքեր էլ որ լինեն ծայրամասից՝ աֆրիկացիներ կամ թե ծագումով ֆրանսիացի, իրենց դուրս գալուց մարտահրավեր են նետում ու այս կամ այն պահին անցնում գործի: Դա նրանց միակ հարձակողական ձևն է՝ չլինել այլևս նվաստացած և ոչ էլ մարգինալացված վիճակում, ոչ էլ անգամ խնամված: Քանի որ ես վստահ չեմ, և դա խնդրի մյուս կողմն է, թաքնված քաղաքական սոցիոլոգիան՝ «ինչպես մեզ մոտ», ներառյալ զբաղվածության, անվտանգության առումով, ես վստահ չեմ, որ նրանք ունեին, ինչպես մենք ենք հույս տածում, վերահաստատված և խնամված լինելու ցանկություն: Անկասկած, ըստ էության նրանք դիտարկում են մեր կենսակերպը միևնույն բարյացակամությամբ կամ միևնույն անտարբերությամբ, ինչպես մենք՝ իրենց չքավորությունը: Գուցե նախընտրում են անգամ այրել մեքենաները, քան թե իրենց հաճույքի համար քշել դրանք: Վստահ չեմ, որ նրանց ուղղված շատ լավ հաշվարկված հոգատարությունը բնազդորեն նույն արձագանքը չի ունենա, ինչ բացառության ու պատժի դեպքում:

Արևմտյան մշակույթը պահպանվում է միայն նրա շնորհիվ, որ աշխարհի մյուս մասը դրան հավանություն է տալիս: Երբ երևան է գալիս մերժման ամենաթույլ նշույլն անգամ, ամենաչնչին ցանկությունը, ապա այն ոչ միայն կորցնում է իր ողջ գերակայությունը, այլև սեփական աչքերում՝ ողջ գրավչությունը: Ուստի, դա հենց այն ամենն է, ինչ նա պետք է «լավագույնս» առաջարկի՝ մեքենաներ, դպրոցներ, առևտրի կենտրոններ, որոնք հրկիզված են ու խառնված: Մանկապարտեզնե՛ր: Ահա այն ամբողջը, ինչի միջոցով կցանկանային նրանց ինտեգրել, մայրություն անել... «Անիծվես դու», սա է ըստ էության նրանց կարգախոսը: Եվ որքան ավելի շատ փորձեն նրանց մայրաբար վերաբերվել, այնքան ավելի կարհամարհեն իրենց մորը: Մենք իրապես կստիպեինք վերանայել մեր մարդկային հոգեբանությունը:

Ոչինչ մեր լուսավորյալ քաղաքական գործիչներին ու մտավորականներին չի խանգարի քննել այդ իրադարձությունները՝ որպես մշակույթների ժողովրդավար հաշտեցման ճանապարհին հանդիպած փոքր միջադեպեր: Ընդհակառակը, ամենը տանում է այն բանին, որպեսզի ենթադրենք, որ դրանք խռովության հաջորդական շրջաններ են, որոնց վերջը չի երևում:

Կցանկանայի շատ ավելի զվարթ վերջաբան ունենալ, բայց ինչպիսի՞:

Աստվածային Եվրոպան[173]

Ամեն դեպքում խաղաղրույքներն արված են, և եթե նույնիսկ այս անգամ ոչ ոք չհաղթեց, միևնույն է, մեզ կստիպեն վերաքվեարկել մինչև «այո»-ն հաղթանակի, ինչպես արեցին Դանիայի ու Իռլանդիայի դեպքում (ուստի եկեք միանգամից քվեարկենք այո…):

Սա մեզ լիակատար ազատություն է տալիս ուսումնասիրելու ապրիլին «ոչ»-ի շուրջ բորբոքված կրքերի և լռակյաց ու համառ տարաձայնության պատճառները, քանի որ միայն սա էր գտնվում իրադարձության կենտրոնում: «Այո»-ի հետ գալն անողոք կարգավորում է, իսկ «ոչ»-ը՝ խորհրդավոր. «ոչ», որը բացարձակապես իր պաշտոնական պաշտպանյալների «ոչ»-ը չէ, որոնց քաղաքական փաստարկները նույնպես անհեթեթ են, ինչպես «այո»-ի դեպքում: Բացի դրանից՝ քաղաքական ոգեշնչման «ոչ»-ը երբեք չէր բավարարի ստիպելու հարցումներ անցկացնել, և հենց նա է, որ «այո»-ի ճնշման տակ դանդաղորեն նահանջում է…

Այս հանրաքվեում ամենահետաքրքիրը, աչքի համար պատրանք հանդիսացող միակ ամենագրավիչ կողմն այդ «ոչ»-ն է, որը թաքնվում է պաշտոնական «ոչ»-ի ետևում, դա քաղաքական դրդապատճառից այն կողմ գտնվող «ոչ»-ի է, քանի որ վերջինս դիմադրում է, ու բոլոր շփոթված իշխանական մարմինների «այո»-ի պաշտպանման համար պետք է, որպեսզի այնտեղ լինի մի շատ վտանգավոր բան, որն այդպիսով կմոբիլիզացնի ողջ էներգիան: Այդ տագնապալի դավադրությունն արդեն նշան է, որ այստեղ մի գաղտնիք կա:

---

[173] Լույս է տեսել «Libération» օրաթերթում 17 մայիսի, 2005 թ.: Աղբյուրը՝ http://www.liberation.fr/tribune/2005/05/17/l-europe-divine_520090, այցելվել է 20.04.2017 թ. (թարգմ.):

Այս «ոչ»-ը, ակնհայտորեն, վերջնագրի ավտոմատ, անմիջական արձագանքն է, որն առկա էր հանրաքվեի հենց սկզբից: Արձագանք՝ ուղղված մաքուր խղճի միավորմանը, Աստվածային Եվրոպային, որը ձգտում է համապարփակին և պարտադիր ակնհայտությանը, արձագանք «այո»-ի այդ կատեգորիկ իմպերատիվին, որոնց նախաձեռնողները չէին կարող անգամ մի պահ ենթադրել, որ հնարավոր էր ստեղծել մարտահրավեր, և, հետևապես, այդ մարտահրավերը պետք է ընդունել:

Ոչ ոք չի հանդուրժում հաղթանակի ապրիորի ամբարտավանությունը, ինչպիսին էլ որ լինեն դրա դրդապատճառները (որոնք հենց Եվրոպայի դեպքում պակաս վիրտուալ չեն): Խաղը նախօրոք փակված է, և այն ամենը, ինչը թախանձագին խնդրում են, համաձայնություն է: «Այո»-ն «այո»-ում, այս սովորական, պարզունակ դարձած սահմանման ետևում թաքցված է մի սարսափելի մոլորեցում: «Այո»-ն այլևս չի հանդիսանում իսկական այո՝ ուղղված Եվրոպային, ոչ էլ անգամ Շիրակին կամ ազատական միությանը: Համաձայնության կարգով այն դարձավ «այո»-ին ուղղված այո, որն այլևս պատասխան չէ, այլ ինքնին հարցի բովանդակությունը:

Ենթարկվում ենք իսկական եվրոդրականացման թեստի: Եվ այդ անվերապահ ինքնաբուխ «այո»-ն առաջացնում է միաժամանակ այնպիսի հպարտության և ինքնապաշտպանության վերջնական հակազդեցություն, ինչպես անվերապահ «ոչ»-ը: Իմ հերթին կնշեի՝ իրական առեղծվածն այն է, որ ընդդեմ «ոչ»-ի ու «այոականացման»[174] չկա ավելի, շատ ավելի մեծամասնական, ուժեղ հակազդեցություն:

Այդ հակազդումն ունենալու համար նույնիսկ քաղաքական գիտակցության կարիք չկա: Դա հակադարձ ավտոմատ բռնկումն է ընդդեմ այն բոլոր տեսակ միավորումների, որոնք համաշխարհայինի նպաստավոր կողմում են, իսկ մյուսներն

[174] “Oui-trification” - հեղինակային նորաբանություն (թարգմ.):

ուղարկված են Պատմության խավար: Բարու գերակայության անկանխատեսելի հետևանքները ու նման տեսակի անգիտակցական պարզությունը մեզ հուշում են երբեք առիթ չտալ նրանց, որոնք դա արդեն ունեն, ահա թե որտեղ «այո»-ի ու Բարու ուժերը վրիպեցին: Արդեն իսկ Մասստրիխտի և ապրիլի 22-ի ընթացքում քաղաքականապես ճիշտ դիրքորոշում բռնած աջակողմյան կամ ձախակողմյան ուժերը չցանկացան ոչինչ իմանալ լռության պառակտման մասին:

Քանի որ իր էությամբ դա բացարձակապես «բացասականի աշխատանքի» կամ էլ քննադատական մտածողության արդյունքը չէ: Սա բացարձակ ու պարզ մարտահրավերով ի հայտ եկող պատասխան է՝ ուղղված վերևից եկող գերիշխանական սկզբունքին, և որի համար մարդկանց կամքն ընդամենը հետաքրքրություն չներկայացնող չափանիշ է, նույնիսկ մի խոչընդոտ, որը պետք է հաղթահարել: Այս մրցակցային Եվրոպայի համար ակնհայտ է, որ ըստ սիմուլյացիայի մոդելի, ինչն իրականությունում պետք է ամեն գնով ցույց տրված լինի, և ինչին յուրաքանչյուրը պարտավորված է հարմարվել, այդ վիրտուալ Եվրոպայի համաշխարհային իշխանության ճիշտ պատճենի համար բնակչությունը լոկ կառավարելի զանգված է, որին պետք է ցանկությամբ կամ ուժով բռնակցել ծրագրին, որպեսզի վերջինս նրա համար ծառայի որպես ալիբի: Ու իշխանության մարմիններն ունեն լուրջ պատճառ ամենուր չվստահելու հանրաքվեի արդյունքներին և քաղաքական կամքի ուղիղ արտահայտմանը, որը ճշմարիտ ներկայացման դեպքում կպարունակի իրենց դեմ շրջվելու վտանգ: Ուրեմն հենց այդ խորհրդարաններն էլ մեծամասամբ պատասխանատու կլինեն արդարացնելու հատուկ գործողությունն ու գաղտնի կերպով տեր կանգնելու Եվրոպային:

Սակայն մենք սովոր ենք հասարակական կարծիքի ու քաղաքական կամքի այս յուրացմանը: Ոչ վաղ անցյալում Իրաքի պատերազմը տեղի ունեցավ բոլոր միջազգային ուժերի միաս-

նության շնորհիվ, որն ուղղված էր ընդդեմ ողջ բնակչության միաձայն ու ազդու արտահայտած կամքի: Եվրոպան ճիշտ միևնույն մոդելով գործելու ճանապարհին է: Մյուս կողմից էլ զարմանում եմ, որ «ոչ»-ի կողմնակիցները չօգտագործեցին այս վառ օրինակը, չօգտվեցին ժողովրդի ձայների լիակատար անտեսման արհամարհանքի այդ մեծ պրեմիերայից:

Այս ամբողջը շատ հեռուն է գնում հանրաքվեի դրվագի գերազանցման շրջանակներից: Սա նշանակում է անգամ ներկայացման սկզբունքի ճախողում այն չափով, որ «ժողովրդավար» իմաստով ներկայացուցչական ինստիտուտներն այլևս չեն գործում, այսինքն՝ ժողովրդից և քաղաքացիներից դեպի իշխանություն, իսկ ավելի ճիշտ հակառակը՝ իշխանությունից վար, խորհրդատվության թակարդով և հարց/պատասխան կլոր խաղով, որտեղ հարցը միանշանակ «այո» պատասխանն է ստանում:

Սա է, նույնիսկ քաղաքականություն սրտում, ժողովրդավարության ճախողումը: Եվ եթե արդեն իսկ ձեռնպահությամբ ականապատված ընտրական համակարգը պետք է ամեն գնով փրկել (նախքան այո պատասխանելը կտրուկ հրամայական է դառնում ամեն գնով քվեարկելը), սա հենց այն է, ինչ գործառնում է իսկական ներկայացուցչությանը հակառակ, «ժողովրդի անունից» ընդունվող որոշումների հարկադրական ինդուկցիայում, եթե անգամ, գաղտնաբար, վերջինս հակառակն է մտածում:

Այսպիսով՝ անմիջական աբրեակցիայի (abreaction[175]) հետևում Եվրոպայի «եզակի գաղափարն» է, լիբերալ Եվրոպան մարմնավորած «այո»-ի միտքը, որը խաղի այլ կանոն հորինելու պակասի պատճառով չունի որևէ այլ լուծում, քան հաջորդական բռնակցումներով ընդարձակվել ու մեծանալ (համաշխարհային

[175] Աբրեակցիա (հականերգործում, լիցքաթափում) - հոգեվերլուծության տերմին, նշանակում է տրավմատիկ իրադարձության վերապրում՝ զսպված զգացմունքներին ելք տալու նպատակով (թարգմ.):

իշխանության կերպարով). ուստի հենց «ոչ»-ում ու Եվրոպայի մերժման մեջ այն է, ինչի մասին խոսում ենք, առկա է լուծարման մի շատ ավելի կարևոր կանխազգացում, քան շուկայի գերակայությունն ու վերազգային ընկերությունները, ցանկացած իրական ներկայացման լուծարում, ինչի վերջում մարդիկ վերջնականապես կերպարանավորման դեր կստանձնեն, որին, ժամանակ առ ժամանակ, կձգտեն ձևական անդամակցել:

Ինչ վերաբերում է վերջնական արդյունքին, ապա այստեղ առկա է որոշակի լարվածություն, համաձայն որի՝ եթե, ամենայն հավանականությամբ, լավ է «այո»-ի լկտի գերիշխանությունը, որը բավարար է առաջ բերելու «ոչ»-ի նկատմամբ աճող նողկանքը, ուրեմն «այո»-ի օգտին տարվող քարոզարշավը տրամաբանորեն պետք է առաջացներ «ոչ»-ի ուժեղացումը: Բայց միանշանակ չէ, որ խորքերից եկած «ոչ»-ը, որին երբեմն կոչում են լռակյաց մեծամասնություն, դիմադրում է զանգվածային թունավորմանը: Պետք է գրազ գալ, որ բոլոր ուժերի հոգևոր առաջնորդության ներքո մենք կրկին պատրաստվում ենք գնալ դեպի միաձայն կարգավորում:

Ինչպիսին էլ որ լինի արդյունքը, այս հանրաքվեն, «այո»-ի և «ոչ»-ի երկու քարի արանքում, ինչպես 0-ի և 1-ի թվային հաշվման դեպքում, միայն հանկարծական փոփոխություն է: Նույն ինքը՝ Եվրոպան, մի շատ ավելի կարևոր հանկարծական փոփոխության ճանապարհին է՝ հորիզոնում նշմարվում է կոլեկտիվ ինքնիշխանության կորուստ, որի շուրջ պասիվ կամ մանիպուլյացված քաղաքացու լիովին այլ պատկեր է ուրվագծվում՝ քաղաքացի-պատանդի, իշխանության կողմից պատանդ վերցված քաղաքացի, այսինքն՝ ահաբեկչության պատկերը լինելով՝ պատանդի զավթումն այսօր հանդես է գալիս որպես պետական ահաբեկչության ժողովրդավար մի ձև:

Խաղեր[176]

Կցանկանայի սկսել Պալերմո քաղաքի օրինակից, ավելի ճիշտ՝ այնտեղի մեքենաների վարման հակաօրինակից: Պալերմո քաղաքում ճանապարհային խցանումը զգայախաբության պես մի բան է: Այն ամբողջապես մահացու է, մահաբեր ու սպանիչ: Գործնականում որևէ մեքենա անվտանգության կանոններին չի հետևում: Մեկը մյուսի վրայից անցնելով՝ մեքենաները սլանում են՝ միմյանցից զավթելով առաջնայնությունը: Սա մի դիմակահանդես է, փառատոն, տոնի պես մի բան: Եվ այս ամենը տեղի է ունենում՝ նույնիսկ խաղի կանոնները պահպանելով, որոնցից վարորդները օգտվում են շատ մեծ ճարպկությամբ: Ինքնաշարժի գործում նրանք մեծ վարպետ են: Ոչ մի այլ տեղ չեն լինում ավելի շատ ճանապարհատրանսպորտային պատահարներ, քան Պալերմոյում: Այս ամենի ականատեսը լինելով՝ կբացականչեք. «Սա մարդասպանությո՞ւն է»: Ամենևին, սա խաղ է, հակառակ և ի նպաստ անվտանգության բոլոր կանոնների, իսկ սկզբնական կանոնների ուսումնասիրման տեսանկյունից դրանք, միևնույն է, արհամարհվում և ծաղրի առարկա են դառնում:

Այս պարագայում դա կոլեկտիվ գործողություն է, և այստեղ խոսքը գնում է մեքենայի օգտագործման մասին՝ որպես մահվան հետ խաղի. դա իսկապես որ մահվան խաղ է: Վարորդները խաղում են այդ խաղն այնպես, ինչպես ասպետները միջնադարում: Սա ասպետության խաղ է, անշուշտ, նրանք մեկ ուրիշի մահը չեն որոնում և ոչ էլ իրենց սեփականը, սակայն նրանք միշտ խաղի մեջ են, նրանք այդ օգտագործում են վիրտուոզ կերպով:

Գոյություն ունի ոգեհարցի (մեդիումի), տեխնիկայի հնարավոր օգտագործման ևս մեկ օրինակ, և սա գրեթե փոխաբերու-

[176] Աղբյուրը՝ http://www.mediologie.org/cahiers-de-mediologie/12_automobile/baudrillard.pdf, այցելվել է 04.05.2017 թ. (թարգմ.):

թյուն (մետաֆորա) է, լիովին տարբեր այն հարցերից, որ մենք առաջ ենք քաշում այստեղ՝ անվտանգության տերմինների շրջանակներում:

Այս դեպքում դա խելացնորության, ինքնասիրահարվածության, մահվան ազդակ հանդիսացող հարց չէ, ոչ, գոյություն ունի խաղի կանոն, որը հակականոնն է: Այն բնավ կործանարար չէ, այլ ստեղծում է կոլեկտիվ գործողություն ու միմյանց ճանաչելու ձև: Դա գործի է դրվում, և, ի վերջո, հետևանքները բացարձակապես ավելի դրամատիկ չեն դառնում, քան կարող էր լինել այլուր:

Այս ամենն արդեն իսկ խոսում է այն մասին, որ անհրաժեշտաբար առկա է, ի դեպ յուրաքանչյուր տեխնիկայի համար, մեքենայի մարդաբանական գործունեություն, կամ, թե կցանկանաք՝ զոհաբերական, բայց ոչ ստորացուցիչ իմաստով, որը հանգում է «զոհ» եզրույթին: Նրանք բացարձակապես իրական, ֆիզիկական մահ չեն որոնում ու ոչ էլ անվտանգություն: Նրանք անվտանգության ու մահվան խնդիրներից այն կողմ են, որոնց մասին խոսում են: Ապացույցն ակներև է, ցանկացած տեխնիկա նորից կարող է ընդգրկվել վարքում, որը ոչ մի ընդհանուր բան չունի մեր արժեհամակարգի համաձայն ստեղծված սահմանների հետ:

Մեզ համար, մեր հասարակությունում կա անվտանգության պաթոս ասվածը: Բոլորը առաջնորդվում են պաթոսով և այսպես կոչված ինքնապահպանման բնազդով, որը դառնում է անհատական միջոց:

Առկա անվտանգության պաթոսին հակառակ՝ կա ռիսկի մոլուցք. չգիտեմ՝ կարող ենք ասել, որ դա հենց մահվան մոլուցքն է, չեմ կարծում, բայց դա մոլուցք է: Պաթոսի ու մոլուցքի միջև տարբերությունը նշանակալի է, և մահվան ազդակով պայմանավորված ցանկացած մեկնաբանություն ինձ թվում է չափազանց դյուրին: Կարող ենք դիմել խթանիչ մարդաբանությանը (anthropologie pulsionnelle), ինչը հավանական հիպոթեզ է:

Սա *կոլեկտիվ վարք է*, բացասական հակափոխանցման պես մի բան: Կարիք չկա, որպեսզի այն տեղի ունենա՝ հաշվի առնելով անհատական գիտակցումը: Կարող է պատահել անգամ հակառակը, ինչը տեղի կունենա *անվտանգության գերգիտակցմամբ*, և ներքոհիշյալ մոտեցումները ճիշտ և ճիշտ հակառակն են դարձել, *դրանք քերում են անվտանգության աշխատանքի խաթարմանը:*

Ավելի շատ կգերադասեի մեջբերել մարդաբանական տիպի մեկ այլ հիպոթեզ (անդրադառնալու համար Մոսսին[177]), որը պարզն և հակապարգևն է: Մենք այնպիսի հասարակության անդամ ենք, որ ամեն տեսակ հովանավորչականության միջոցով *մեզ տրված* և մեզ պարտադրված անվտանգությունն ինչ-որ տեղ նույնիսկ գերազանցում է անհրաժեշտ սահմանը: Չափից դուրս շատ են պաշտպանության, պահպանության, պաշտպանվածության և այլնի միջոցները: Պետք է խոստովանել, որ հենց սա է *սիմվոլիկ խաղի* իրական կանոնը, ինչը տարբեր է անվտանգության կանոններից և մասնավորապես այն կանոններից, որոնք ղեկավարում են անհատական պահպանման բնազդը: Արդյունքում՝ *հիմնային, սիմվոլիկ խաղի կանոնը հենց ինքը հակապարգևն է*: Պետք է կարողանալ փոխադարձ արդյունք ստանալ, և դա տեղի է ունենում մի հասարակությունում, որտեղ մեզ դրանից չափազանց շատ է տրված, այն մեզ պոտենցիալ կերպով լիովին տրված է, ու արագությամբ, ամենահասությամբ, փոխադրմամբ և այլնով զինված մեքենան այդ *պարգևներից* մեկն է: Եվ, եթե այս կամ այն կերպ չենք կարողանում սահմանել մեզ տրված աշխարհը, ապա կընկնենք խորը մելամաղձոտության մեջ: Դա պարզ է, մյուս կողմից՝ այն առատորեն առկա է, ու տպավորություն թողնելու միջոցների բացակայությունը դրա պատճառն է:

[177] Մոսս Մարսել (1872-1950) - ֆրանսիացի ականավոր ազգագրագետ և սոցիոլոգ, Էմիլ Դյուրկհեյմի ազգականն ու աշակերտը (թարգմ.):

Իր նախասկզբնական ձևով ո՞ւմ կողմից է այս աշխարհը մեզ տրվել: Աստծո կամ որևէ այլ տրանսցենդենտալի կողմից: Նախկինում կար թողություն շնորհելու հնարավորություն, այսօր այլևս մարդ չկա, ում թողություն շնորհես: Պետք է հաշվի առնել, որ անհրաժեշտ է մի բան, մի իրական զոհաբերություն, որը կդիմակայի հակապարգևին, սիմվոլիկ կանոնին, ինչը բացարձակապես մահվան ազդակ չէ, այլ դրամատիկ, բայցև դրական մի բան, այսինքն, այսպես ասած, ճակատագրի ռազմավարություն, սակայն, այդուհանդերձ, Ճակատագիրը վերագտնելու պես մի բան, որը մեր կողքին կլինի և չի կարող «պաշտպանել մահից», որովհետև դա մեր այսօրվա ճակատագիրն է: Դե ինչ, մնում է միայն խաղալ այդ մահվան հետ, պետք է վերջապես շրջանցել անվտանգության այս ձևը...

Բռնության կառավարման մեջ կան *բռնության տարբեր տեսակներ*: Նկատի չունեմ պատմական, հեղափոխական և այլ տեսակ բռնությունները, այլ պարզապես մեխանիկական և հետո վիտուալ բռնությունը, որն իրականացվում է հակաբռնությունից բռնություն մեղմման միջոցով, ինչն էլ հենց ձեզ զրկում է մահանալու հնարավորությունից: Որովհետև մահանալը մնում է այնքան, քանի դեռ կենդանի ենք, հակառակը ճիշտ չէր լինի, ու այս դեպքում պետք է այն կարողանալ խաղալ: Եթե անվտանգությունից ելնելով՝ նրանք ձեզ զրկում են դրանից, ուրեմն զրկված եք հակապարգևից, այլևս չեք կարող վերադարձնել որևէ բան, և այն հիմնավորապես հավասարակշռությունից հանել՝ կոլեկտիվ կամ անհատապես, ելնելով իրավիճակից:

Կրկնեմ ևս մեկ անգամ, որ չեմ ցանկանում խուսափել հոգեվերլուծական չափումից, այս ամենը իրենից ինչ-որ բացառիկ բան չի ներկայացնում, սակայն սա, այնուամենայնիվ, հանդես է գալիս որպես սիմվոլիկ պրոբլեմների ամբողջություն: Ինքս իսկական ավտոմոբիլիստ եմ: Սիրում եմ արագությունն ու բավականաչափ խաղացել եմ դրա հետ: Սիրում եմ տարածությունն ու

միևնույն ժամանակ ցնցված եմ տարածության մեջ հանդիպող բռնությունից, մեքենայի միջոցով քաղաքում տեղի ունեցող բռնությունից: Եթե մեքենան է այն ոգեհարցը, որն ինչ-որ բան է նշանակում, ուրեմն պետք է վճարել դրա գինը: Դա է խաղի կանոնը, համարժեքության մի կանոն, որը կարող է մահացու լինել: Բացի դրանից՝ եթե բռնությունը մեքենայի միջոցով է հասցվել մարդուն, ապա կա բռնության մեկ այլ տեսակ ևս, որը միշտ թերագնահատվում է. դա մարդու միջոցով մեքենային հասցված վնասն է:

Մեքենայի լեզվով ասած՝ գոյություն ունի շատ մեծ տարբերություն *մեխանիկական ոլուփով* աշխատող ու նորագույն տեխնոլոգիաներով աշխատողների մեքենաների միջև: Համակարգչի դեպքում ասում են. «Կարծես գրամեքենա լինի», բայց ոչ, այդպես չէ: Տարբերությունն ընդհանուր է: Գրամեքենան այստեղ է, ես նրանից տարբեր եմ, գիտեմ, որ նա մեքենա է, և նա էլ իր հերթին գիտի, որ կոնկրետ տեսակի պատկանող մեքենա է: *Այն հեռավորության վրա է*: Կա մեխանիկական մանիպուլյացիա, և կարող է լինել մեքենաների ռևանշ, տեխնիկական ինտերակտիվություն, որը վերածվում է բռնության: Կարող է լինել այդ մեխանիկական մեքենայի՝ ինքնաշարժի ռևանշ: Սակայն այդ մեքենայից ես օտարված չեմ, պահպանում եմ փոխադարձ ինքնավարությունը, մեքենան՝ նույնպես:

Այն միանգամայն տարբեր է համակարգչից, որով դուք տարված եք և այլն: Սա մի հզոր ինտերակտիվության տեսակ է, որտեղ դուք այլևս չեք տիրապետում այդ հեռավորությանը, նույնն է թե՝ ինքնավարությանը: *Սովորական հեռախոսի* ու *բջջային* հեռախոսի միջև տարբերությունն ուշագրավ է, միևնույն համընդհանուր տարբերությունն առկա է արագության փոխանցման տուփով *դասական ավտոմեքենայի* և *խելացի վիրտուալ ավտոմոբիլի* միջև, ինչն էլ հենց կնշանավորեր այդ հակամարտության ավարտը: Մեքենայի հետ փոխհարաբերությու-

նը միշտ մենամարտ է՝ կոնտեքստի, շրջակա միջավայրի, այլոց հետ: Այս ամենին անհրաժեշտ է նայել *տերմինների երկակիության, սիմվոլիկ կապի* և ոչ թե ինտերակտիվության և այլնի տեսանկյունից: Դիսկուրսների միջոցով այդ պայմանական արժեքների վրա հիմնված մեր վերաբերմունքը գերիշխեց, սակայն մեր ենթագիտակցության և *պարգևի ու հակապարգևի կանոնը* նույն չափով շարունակում է մնալ այժմեական, ինչպես հինգ հազար կամ հինգ միլիոն տարի առաջ: Այն մշտապես ընդունելի է: Անխոս, գոյություն ունի իռացիոնալ վարքի տեսակների սահման, որը համապատասխանում է անձնային հոգեբանությանը, մյուսների հետ կապին: Վարքագծի այն սահմանը, որը նկարագրում էր Բարտը[178] մեքենա/նշանի համար, հեղինակության վարքն արդեն իսկ մի տեսակ *իռացիոնալ* վարք է մեքենայի՝ որպես օգտագործման ենթակա արժեքի նկատմամբ: Սակայն եթե դրանք լինեին իռացիոնալ վարքի դրսևորումներ, ապա ցանկացած հնարավորություն կտրամադրվեր իրերի ընթացքը կարգավորելու, դրանք տեխնիկայի միջոցով որոշակի եղանակով ռացիոնալիզացնելու համար, տեխնիկական ծայրաստիճան բարդացմամբ, ռացիոնալիզացնելու իրերի ընթացքն ու կանխելով դրանց իռացիոնալ դառնալը: Եթե դա մի երևակայական վարք էր, ապա կարող էին այն շտկել: Բայց վստահ չեմ, որ եթե այն լիներ երևակայական, պետք կլիներ շտկել, ու անգամ համոզված եմ, որ դա շտկելու ցանկությունն ուտոպիա է, որովհետև ինչ-որ տեղ, քիկունքում գոյություն ունի սիմվոլիկ վարք, դրա ուղիղ իմաստով՝ անհաղթահարելի, անդարձելի և այս դեպքում՝ չշտկվող: Չնայած ցանկացած տեխնիկական դրսևորման (բարեբախտաբար մյուս կողմից էլ մեզ համար)՝ պետք կլիներ այլ բան, քան պարզապես որևէ օգտագործման արժեք, այլ բան, քան աշխարհի ռացիոնալիզացումը: Սրանք նպատակներ են,

[178] Բարտ Ռոլան (1915-1980) - ֆրանսիացի պոստստրուկտուրալիստ, փիլիսոփա, նշանագետ (թարգմ.):

խաղ, մենամարտ, և տեխնիկական օբյեկտների գնահատականներում մշտապես առկա են բոլոր չափումները, որոնք Կայուաև նկարագրում էր խաղի համար՝ գաղափարի չափում: Իրոք, մեքնաև նշան է, իրերի կույտի արտահայտման ձև, բեմ, թատրոն: Ինքնաշարժը որպես այդպիսին խաղացված է՝ կերպարանավորված, պատկերում կա «ագոնի»[179] չափում, մարտահրավերների չափում: Բարտը գրում էր, որ դա մարտահրավեր է, հեղինակության հարց, բայց այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ այդ ասպեկտն այսօր մեղմացվել է: Կա նաև գլխապտույտի չափում, ինչպես ասում էր Կայուաև, այսինքն՝ այն փաստը, համաձայն որի՝ յուրաքանչյուր տեխնիկայում գոյություն ունի հնարավորություն հասնելու կամայական օբյեկտի ցուցչային սահմանին, տեխնիկական օբյեկտի, և ճիշտ է, որ մեքենան՝ որպես այդպիսին, պահանջում է, այսպես ասած, որպեսզի հասնեն իրենց հնարավորությունների սահմանին, որպեսզի այն ճշգրտորեն տնօրինեն ընդհուպ արագության սահմանը: Միանգամայն միամտություն ու հնազանդություն է ցանկանալ սահմանափակել արագությունը՝ մեզ տալով 260 կմ/ժ արագությամբ ընթացող մեքենաներ. ոչ մի պատճառ չկա չվարել 260 կմ/ժ արագությամբ: Սա ինչպես զինված ուժերի դեպքում՝ գիտեն վերջինիս գոյության մասին, և մի օր այս կամ այն կերպ նրանց աշխատանքը տեսանելի կդառնա:

[179] Ագոն բառը ծագում է հին հռոմեական դիցաբանության մեջ մուտքի ու ելքի, դռների և ամեն ինչի սկզբի, ծագման աստծու՝ Յանուսի (Agonius) անունից: Նրան էին նվիրվում Հին Հռոմում տարին մի քանի անգամ անցկացվող խաղերն ու մրցույթները: Ագոն են անվանել նաև հին հույների ու հռոմեացիների մոտ հանդիպող ինչպես սպորտի, այնպես էլ արվեստի (իսկ հետագայում նաև գիտության) տարբեր բնագավառների ներկայացուցիչների միջև անցկացվող մրցումները: Գրականության մեջ ագոնը հանդիպում է հին ատտիկյան կատակերգության մեջ խոսքի մրցակցության ձևով (թարգմ.):

Չգիտեմ՝ ով էր սա օգտագործում լուսանկարչական սարքը նկարագրելու համար, կարծեմ Վիլեմ Ֆլյուսերն[180] էր: Ըստ նրա՝ տվյալ պահին լուսանկարչական սարքի հետ դուք միմիայն օպերատոր եք, սահմանին դուք կնկարեք ամբողջ աշխարհը, որովհետև դա ցանկանում է սարքը, դուք ընդամենը նկարահանող սարքի տեխնիկական օպերատորն եք: Ասել է թե՝ դուք չեք կառավարում տեխնիկան, այլ գտնվում եք վերջինիս տրամադրության տակ: Ու դա ճիշտ է, բայց ոչ թե օտարման իմաստով, ոչ, բնավ, այն մի գլխապտույտ է: Կրկին հիշեցնեմ, որ ես փորձում եմ տեսնել այն, ինչն այս ամենում հանդես է գալիս որպես գործողություն և ոչ թե պասիվություն օտարման իմաստով, զոհի իմաստով, այլ նույնիսկ մի գիտակից գործողություն, եթե անգամ որպես ներկայացում (acting out) այն կանխամտածված չէ, ինչը ձեզ ստիպում է հասնել հնարավորությունների սահմանին: Ինչպես մեքենայի, այնպես էլ համակարգչի ու նման այլ բաների համար գլխապտույտ հնարավորությունն իրենից յուրօրինակ երևույթ է ներկայացնում, այն երևան է գալիս դրական լույսի ներքո, կամ ավելի ճիշտ՝ դրականից ու բացասականից անդին է: Խնդիրը պետք է առաջ քաշել անվտանգության ու ռիսկից այն կողմ, դրականից ու բացասականից և, բնականաբար, լավից ու վատից այն կողմ նույնպես: Կա մի պահ, երբ հակապարգևի իմաստով յուրաքանչյուրը պահանջված է իր երեսը պարզ պահել, այսինքն՝ գործի դնել բավականաչափ իրեր նպատակը հավասարակշռելու համար: Հարցն այն է, որ մենք ծանրաբեռնված ենք տեխնիկական քաղաքակրթությամբ, հնարավորություններով, աշխարհի ամեն տեսակ կարողություններով ու այլևս որևէ միջոց չունենք այս ամենին պատասխանելու համար: Չկա այլևս որևէ հնարավոր պատասխան, հետևաբար և ոչ մի պատասխանատվություն:

[180] Ֆլյուսեր Վիլեմ (1920-1991) - ծագումով չեխ, գերմանացի փիլիսոփա, լրագրող և գրող (թարգմ.):

Պատասխանատվության հարցն ակնհայտորեն դժվար լուծելի է: Պատասխանատվության հետ կապված հարցերը տեխնիկական խնդիրներում ցրելու միջոցով դառնում են անլուծելի կամ էլ այնպես են բարդանում, որ հայտնվում են իրապես աստվածաբանական սոփեստության մեջ և այլևս այնտեղից դուրս չգալով՝ մնում այնտեղ:

Սակայն, քանի որ էական խնդիրն առաջ քաշված չէ, որը իրավաբանական տերմիններով պայմանավորված, պատասխանատվությունից այն կողմ է, վերջինիս պատասխանը հակապարգևի արտահայտման մեջ է, այսինքն՝ հաջող մարտահրավերի: Ուստի մեզ տրված յուրաքանչյուր օբյեկտ մարտահրավեր է, մի պարգև, հետևաբար մի մարտահրավեր, որին պետք է պատասխանել: Եվ վերջինիս պատասխանելու համար բացի ռիսկի, խաղի միջոցից, որևէ այլ տարբերակ չկա, սա է խաղի պրոբլեմատիկան, որը գերիշխում է, և կարող է գերակայել միայն խաղի կանոնը, դրանք որոշիչ օրենքները չեն. նպատակի այս սիմվոլիկ խորությանը հասնելու համար օրենքը չափազանց տրանսցենդենտ է, աբստրակտ: Այդպիսով՝ դա կարող է լինել խաղի միայն մի կանոն:

Դրանից ձեզ առաջարկելու բան չունեմ: Բոլորս այստեղ ենք, ու յուրաքանչյուրս վստահորեն ետ ենք մնում տեխնիկայից, բայց խնդիրն այն է, որ որքան տեխնոլոգիան ու անվտանգությունն առաջ են գնում, այնքան մեզ համար մարտահրավերը դառնում է սպանիչ, որովհետև մեզնից պահանջվում է պատասխանել այնպիսի միջոցներով, որոնք մենք այլևս չունենք: Որքան հեռու գնանք անվտանգության հարցում, այնքան այն կիրահրի մահաբեր կամ ինքնամահաբեր վարքագիծ: Սրա մասին, սովորաբար, բացասականորեն են արտահայտվում, իսկ ես ձգտում եմ ամփոփ կերպով ներկայացնել միտքս, այն է՝ սա դրամա է, ու ինչ-որ տեղ կա մի պարտավորություն, ինչը *վերջիվերջո կհանգեցնի ճակատագրական ընդհարման, որովհետև պետք է կարո-*

դանալ սիմվոլիկ եղանակով հավասարակշռել իրերը: Եվ սա բնավ անձնական բարոյականության հարց չէ, այլ կյանքի կամ մահվան սիմվոլիկ նպատակ:

Վերջերս ինձ պատմեցին, որ Իտալիայի մի շարք եկեղեցիներում՝ հիվանդների կամ հաշմանդամների օգնության համար մարմարե հանգանակատուփի վրա, կարելի էր տեսնել հետևյալ գրությունը. «Շնորհակալ եմ, Տե՛ր Աստված, ինձ բժշկելու համար»: Հիմա այն ծածկված է ավտովթարների լուսանկարներով ու գրված. «Շնորհակալ եմ, Տե՛ր Աստված, ինձ փրկելու համար»: Մարդիկ անընդհատ գալիս են ու ոտքի վրա աղոթում՝ հաշվելով սեփական վիրտուալ մահվան դրվագների դիմաց իրենց թողած հանգանակությունը: Չեմ կարծում, իհարկե, որ սա ցանկալի մահվան խնդիր է, այն, ինչը գործի է դրված, ինչը մեզ սպառնում է, բայց անհրաժեշտ է նաև հաշվի առնել ընդհանրացված հոգածության պաշտպանությունը, տեսակը… Չնայած հայտնի են այս ողջ գերպաշտպանված համակարգերը, այնուամենայնիվ, ո՞րն է դրա գաղտնիքը: Դա վիրուսների, վիրուսայնություն գաղտնիքն է, ու կրկին վերադառնում ենք դեպի բռնության խնդիրը: Այլևս աներևակայելի չունենք ճակատային բռնության, աչքիդ առաջ տեսած մահվան դեմ, ուր անվտանգությունը կարող է խաղալ, որովհետև մենք նրան ճանաչում ենք, ռացիոնալիզացնում և պետք է գործենք սարքավորումներով գերհագեցած, պաճուճազարդ, կատարյալ համակարգերում: Նման կատարելության հասած ցանկացած համակարգ ծնում է մի ներքին սրընթացություն (vitalité), ինչն ինքնակործանում է: Մեզ համար ռիսկը հենց սա է, հենց այս սրընթացությունը, որի հետ մեզ համեմատելու համար ավելի հստակ միջոցներ չունենք: Ահա թե ինչու եմ վախենում, որ ամեն անգամ սահմանին գտնվելով, հագեցած համակարգով շարժվելու դեպքում, այդ աստիճան բարդության հասած տեխնիկայի, կատարելապես խելացի մեքենայի կամ տան (հարց է առաջանում՝ ով կապրի, մարդ չի լինի, որ ապրի) միջոցով մենք

վտարված կլինենք մեր իսկ սեփական դերից: Մենք կհեռացվենք, և այդ պահին մեզ տիրացողը, օգտատերերի շրջանում դա կլինի կոնտենտի տարածման սրընթացության պես մի բան, որն ինձ համար *ինֆորմացիայի* կամ *ընդհանրապես ինֆորմատիկայի հոմանիշն* է:

Կնշանակի, որ ինֆորմատիկան կարծեք աշխարհի վիրուսային արհեստը լինի: Հակառակ դեպքում վիրուսները զարգանում են նաև ներսում, սակայն երբ խոսում են ինֆորմատիկ վիրուսներինց, ես պնդում էի, որ նույն ինքը՝ ինֆորմատիկան, վիրուս է: Իսկապես, նրանք մեզ ստիպում են ապրել դրա հետ կողք կողքի: Պարզապես այս համայն աշխարհում, որտեղ ապագայի խելացի կատարելապես հանգստացած մեքենան կարող է լինել բազում օրինակներից մեկը, այս աշխարհում մենք նույնիսկ սիմվոլիկ կարգուկանոն խաղալու հնարավորություն չէինք ունենա, կորուստը բոլորինս կլինի: Մինչ այս պահը նպատակը մահն է կամ ոչ մահը, բայց, այնուամենայնիվ, դա նպատակ է: Երբ կլինենք պրոֆիլակտիկ բնաջնջման համակարգում, նույնիսկ հնարավորություն չի լինի խաղալու սեփական մահը: Սա արդեն համակենտրոնացման ճամբարների օրինակն է, այնտեղ գտնվող մարդիկ նույնիսկ հնարավորություն չունեին խաղալու սեփական մահը, նրանք վերացված էին, ոչնչացված: Նրանք չէին մահանում, այլ բնաջնջվում էին: Եվ, անկասկած, փափուկ համակարգում (“soft-system”) դա փոքրագույնն է, ինչն ակնկալելու ենք ամբողջովին վիրուսով վարակված կոնտեքստում, որի շրջանակներում մենք պետք է միևնույն ժամանակ գործ ունենանք դրական ու բացասական էլեմենտների հետ, քանի որ, վերջապես, վիրուսները տեղեկատվություն են. վիրուսը միևնույն ժամանակ և՛ տեղեկույթ է, և՛ վիրուս, այսինքն՝ նրան տեղեկույթ հաղորդող օրգանիզմի կործանիչ: Սա այն պարադոքսն է, որի հետ կառերեսվեն, ու դա նաև անվտանգության պարադոքսն է:

Անվտանգությունը վիրուս է, այն և՛ դրական, և՛ բացասական ինֆորմացիա է: Այն տեղեկացնում ու պաշտպանում է օրգանիզմին կամ խմբին, միևնույն ժամանակ թուլացնում ու պաշարում: Նա ամեն գնով ապահովում է անհատի կյանքի պահպանումը և մյուս կողմից էլ վերացնում իր սեփական գոյությամբ ու ինքնիշխանությամբ: Երկարաժամկետ կտրվածքով անվտանգությունը թուլացնում է խմբի կամ օրգանիզմի իմունիտետը և դրսից պաշտպանվելով՝ անհատին դեմ հանդիման կանգնեցնում ներսից եկողների բոլոր վիրուսային հարձակումներին: Այսպիսով՝ իր կարգադրությունը միշտ պարադոքսալ է. պաշտպանելով մեզ ավտովթարից ու ճակատագրից՝ անվտանգությունը դարձել է մեր իսկ դառը ճակատագիրը:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԻԵՌ ԲՈՒՐԴԻԵ, ԺԱՆ ԲՈԴՐԻԱՐ

ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ, ԷՍՍԵՆԵՐ


Ֆրանսերենից թարգմանել է Հռիփսիմե Դայանը

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Հ. Ասլանյանի

Տպագրված է Time to Print օպերատիվ տպագրությունների սրահում:
ք. Երևան, Խանջյան 15/55

Ստորագրված է տպագրության՝ 20.07.2018:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 20,125:
Տպաքանակը՝ 200:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am



Ծնվել է Երևանում: 2010 թվականին ավարտել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի զբոսաշրջության և սպասարկման նոր տեխնոլոգիաների ֆակուլտետի բակալավրիատը: Նույն տարում ընդունվել և 2012 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրատուրան: Թարգմանչական գործունեությունն ընդգրկում է 20-րդ դարի երկրորդ կեսի ֆրանսալեզու այնպիսի հեղինակների աշխատություններ, ինչպիսիք են Պիեռ Բուրդիեն, Ժան Բողրիարը, Ժակ Դերիդան, Ռոլան Բարտը, Ալեն Բադյուն և այլք:

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2018
publishing.ysu.am